

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՀԵՏ Է

Դպրոցական փոքր տարիքի մանուկներու
Քրիստոնէական Դաստիարակութեան Դասընթացք

12 տարեկան
Ա. Մաս, Դաս 1-18

ԱՆԹԻԼԻԱՍ
2007



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂՆԵՐ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐ,

Եկեղեցւոյ մէջ յաճախ կը լսենք «Աստուած մեզի հետ է» արտայայտութիւնը: Անհկա շատ կարեւոր է, որովհետեւ մեզի կը յիշեցնէ որ մեր կեանքին ընթացքին միշտ Աստուծոյ հետ պետք է ըլլանք: Այս գիրքին դասերը մեզի կ'օգնեն, որպէս-
զի կարենանք ըմբռնել Աստուածաշունչին մէջ գրուածները: Առաջին դասերուն
մէջ պիտի ծանօթանանք Սուրբ Գիրքին, որ **Աստուածաշունչ** կը կոչուի: Ան կը
բաղկանայ երկու գիրքերէ՝ **Հին Կտակարան** եւ **Նոր Կտակարան**: Հին Կտակա-
րանը մեզի կը պատմէ թէ Աստուած ինչպէ՞ս ստեղծեց աշխարհը որուն մէջ
կ'ապրինք եւ թէ ինչպէ՞ս անհկա ապականեցաւ մեղքի պատճառով: Պիտի ծա-
նօթանանք Հին Կտակարանին մէջ յիշուած նահապետներուն՝ այն արդար մար-
դոց, որոնց հետ Աստուած ուխտ կնքեց: Պիտի տրվինք նաեւ, թէ Աստուած ին-
չո՞ւ ուխտ կնքեց նահապետներուն հետ, անոնց ցոյց տալով իրենց ժողովուրդին
ապագան:

Սուրբ Գիրքին երկրորդ մասն է Նոր Կտակարանը, որ մեզի կու տայ այն Բարի
Լուրը, ըստ որուն՝ Աստուած իր Միածին Որդին՝ Յիսուս Քրիստոսը աշխարհ
դրկեց, որպէսզի մեզի հետ ապրի: Աստուծոյ Որդին եկաւ, որպէսզի պատմէ
Աստուծոյ մասին եւ իր կեանքին օրինակով ցոյց տայ, թէ մենք ինչպէ՞ս պետք է
ապրինք Աստուծոյ պատուիրաններուն համաձայն: Աստուած իր Միածին Որ-
դին՝ Յիսուս Քրիստոսի առաքումով յայտնեց թէ ինչքա՞ն կը սիրէ մեզ: Միածին
Որդին չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ եւ յարութիւն առաւ, որպէսզի
մեզի յաւիտենական կեանք շնորհէ: Այս է Նոր Կտակարանին փոխանցած գըլ-
խաւոր պատգամը:

Կրթական տարեշրջանի առաջին կեսին պիտի տրվինք Աստուածաշունչին մէջ

ներկայացուած երկրին եւ անոր բնակիչներուն մասին: Թելադրելի է այս գիրքին մէջ դրուած քարտէսներուն կողքին նաեւ ունենալ Պաղեստինի, Եգիպտոսի եւ շրջակայ երկիրներու ժամանակակից քարտէսները, որոնք այս կամ այն ձեւով կապ ունին Աստուծոյ ընտրեալ ժողովուրդի կեանքին հետ:

Աստուած իր ընտրեալ նահապետներուն՝ Աբրահամին, Իսահակին, Յակոբին եւ Մովսէսին խոստացաւ որ պիտի փրկէ իր ժողովուրդը: Աստուած իր Ուխտը կատարեց եւ մարդոց դրկեց իր Մեսիան՝ Փրկիչը, որ մահուան ու մեղքի ստրկութենէն դուրս բերաւ ամբողջ մարդկութիւնը, ապստոլութիւն եւ նոր կեանք պարգեւելով անոնց Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Այս Գիրքին մէջի իւրաքանչիւր դասը կը բովանդակէ Աստուածաշնչական պատմութիւններ, պարտականութիւններ եւ փորձեր, ինչպէս նաեւ մեր եկեղեցական կեանքի, ժամերգութիւններու, տօներու եւ աւանդութիւններու մասին տեղեկութիւններ: Իւրաքանչիւր դաս կը բովանդակէ՝

- Դասի բուն նիւթը լուսաբանող սրբանկարներով ներածական էջ մը, որուն ձախ կողմը գրուած է նիւթին վերնագիրը:
- Ս. Գիրքէն պատմութիւններ կամ Աստուածաշնչական պատումներ նշանաւոր մարդոց մասին:
- Պարտականութիւններ եւ փորձեր, որոնք դպրոցին կամ տան մէջ պէտք է կատարուին. կան աշխատանքներ քարտէսներու վրայ կատարուելիք, կան տակաին կարճ հարցումներ կամ փորձեր, որոնք կ'օգնեն Աստուածաշունչը աւելի լաւ հասկնալու:
- Նիւթեր՝ եկեղեցական օրացույցին ու տօներուն, սուրբերու կեանքին, աղօթքներուն եւ շարականներուն եւ եկեղեցական պատմութեան անցուղարձերուն մասին:
- «Մեր հաւատքի գործերը» վերնագիրով բաժինը տան մէջ պէտք է կատարուի, ծնողներուն եւ ընտանիքի անդամներուն հետ: Այս բաժինը օգտակար կ'ըլլայ, որ Սուրբ Գիրքէն մեր սորվածները առօրեայ կեանքի ընթացքին՝ դպրոցին մէջ թէ ժողովուրդին մօտ, կիրարկենք: Ան օգտակար կ'ըլլայ մեզի լաւ հասկնալու սրբապան խորհուրդները եւ մեր կեանքին մէջ անոնց ունեցած կարեւոր դերակատարութիւնը: Ան կ'օգնէ նաեւ մտածել, թէ մենք ինչպէ՞ս կրնանք ուրիշներուն օգնել, որպէսզի քրիստոնէական սիրով լեցուն կեանք մը ապրինք՝ Աստուծոյ կամքին հնազանդութեամբ:

Կը յուսանք, որ այս բառերը կ'օգնեն մեզի, որպէսզի կարենանք «Աստուած մեզի հետ է» բացատրութեան ճշգրիտ իմաստը արտայայտել, որ մեր կեանքին պիտի տայ իրական եւ բարոյական իմաստ:

Դաս 1

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ԵՐԿԻՐԸ

Աստուածաշունչը կը պատմէ մեզի Աստուծոյ ու Անոր ժողովուրդին մասին: Անոր միջոցաւ կը ճանցնանք մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս՝ Աստուծոյ Որդին: Միասնաբար կը կարդանք Անոր կեանքին եւ ուսուցումներուն մասին, կը ծանօթանանք այն երկրին, ուր ապրած է Ան եւ ուր գրուած է Աստուածաշունչը: Կը փորձենք աւելի լաւ հասկնալ, թէ Աստուած ի՞նչ կ'ըսէ մեզի եւ ի՞նչ կը սպասէ մեզմէ:

Սուրբ Գիրքին մէջէն ինչպէ՞ս գտնել մեր փնտռած համարը

Աստուածաշունչին մէջէն երբ մասնաւոր հատուած մը ուզենք ցոյց տալ, նախ տեղը կը նշենք կրճատումով, որ այսպէս կը գրուի.— Ծն 12.1-3:

Առաջին կրճատումը ցոյց կու տայ Աստուածաշունչի այն գիրքը, ուր կը գտնուի այդ հատուածը: Առաջին թիւը ցոյց կու տայ այդ գիրքին գլուխը, իսկ միւս թիւերը՝ այդ գլխուն համարները:

Քանի մը հատուածներ ալ դուք գտէք եւ գրեցէք անոնց էջը նշող կրճատումները.

Ծն 2.4-14

Ծն 11.31-32

Ծն 12.4-10

Ծն 21.1-3

Աստուածաշունչը շատ ընդարձակ գիրք է, անոր մէջ կը գտնուին 31-ն եւ Նոր Կտակարանները, որոնք շատ մը ուրիշ սրբագան գիրքերէ կը բաղկանան: Պէտք եղած գիրքը կարելի է գտնել ցանկին վրայ: 31-ն եւ Նոր Կտակարաններու գիրքերուն ցանկը կրնաք գտնել Աստուածաշունչի առաջին էջերուն մէջ:




Աստուած Աբրահամը կը դրկէ հեռու երկիր, ուր ան պահապան կը կանգնէ Տիրոջ համար

ՄԵԻՋԲ ԵՒ ՈՒՆՏ

«Չեռացի՛ր քու երկրէդ, քու ցեղէդ ու քու հօրդ տունէն եւ գնա՛ այն երկիրը, որ ցոյց պիտի տամ քեզի»: «Քեզ մեծ ցեղի մը նախահայրը պիտի դարձնեն, պիտի օրհնեն քեզ ու փառաւորեն քու անունդ եւ դուն օրհնեալ պիտի ըլլաս... Քեզմով պիտի օրհնուին աշխարհի բոլոր ժողովուրդները».— Այսպէս ըսաւ Աստուած այն մարդուն, որուն անունը Աբրամ էր: Կարճ ժամանակ յետոյ Աստուած զինք պիտի կոչէր մոր անունով՝ Աբրահամ, որ կը նշանակէ «Բազմաթիւ ժողովուրդներու հայր»: Աստուած ընտրեց Աբրահամը՝ իր ժողովուրդին նախահայր եւ առաջնորդ ըլլալու համար: Աբրահամին ուղղուած Աստուծոյ խօսքերը կըրճանք կարդալ 31-ն Կտակարանի առաջին գիրքին մէջ: Բացէք այդ գիրքը եւ այստեղ գրեցէք անոր անունը^(*):

(*) «Ծննդոց» այս գիրքը յունարէն լեզուով կը կոչուի *Ծննեսիս* եւ կը նշանակէ «ծնունդ», կամ «ծագում»: Անոր մէջ կը պատմուի, թէ Աստուած ինչպէ՞ս ստեղծեց առաջին մարդը եւ ի՞նչ պատահեցաւ անոնց: Կրնա՞ք ուրիշ բառեր ալ տալ, որոնք «սկիզբ» իմաստը ունին: Բառարանին մէջ շատ մը բառեր կրնաք գտնել, որոնց արձատը յունարէն այս բառն է՝ ճեն, ճենեաթէօր, ծննդաբերութիւն (ծագում, տոհմ, ազգաբանութիւն): Այս բոլորը իրար միացնողը ո՞ր գաղափարն է:

Միջին Արեւելքը Արրահամի ժամանակաշրջանին



Յոյց տուէ՛ք Արրահամի վերադարձի ճամբան դէպի Քանանի երկիր, ուր ան մեռաւ եւ Սառայի կողքին թաղուեցաւ, Քէտի որդիներուն կողմէ տրուած ագարակին՝ Մամբրէի կաղնիին դիմաց գտնուող քարայրին մէջ:

1. Արրահամը ծնած է Միջագետքի Ուր քաղաքին մէջ: Արրահամի հայրը՝ Թարան, իր հետ առնելով Արրահամը, անոր կինը՝ Սարան ու թոռը՝ Ղովտը, հաստատուեցաւ Խառան: Քարտէսին մէջ աջ կողմը գտնւի Ուր քաղաքը եւ դէպի Խառան գիծ մը գծեցէք:
2. Թարայի մահէն ետք, Աստուած Արրահամին կը պատուիրէ երթալ այն երկիրը, զոր Ի՛նք ցոյց պիտի տար: Արրահամը, Սարան եւ Ղովտը դէպի հարաւ՝ Քանան երկիրը կ'երթան: Անգամ մըն ալ նայեցէ՛ք դասին եւ գտէ՛ք այն քաղաքները, ուրկէ անցան ճամբորդները, Խառանէն դէպի Սիւքէմ եւ Բեթէլ գացող ճամբուն վրայ: Քարտէսին վրայ այս ճամբուն գիծը գծեցէ՛ք:
3. Արրահամի ընտանիքը Քանանի մէջ շատ դժուարութիւններու հանդիպեցաւ եւ քաշուեցաւ դէպի հարաւ՝ Նեգէր անապատը եւ կարճ ժամանակ ետք անցաւ Արեւելք՝ Եգիպտոս: Այս ճամբան ալ գծեցէ՛ք քարտէսին վրայ:
4. Ի վերջոյ Արրահամ կը վերադառնայ Նեգէր անապատը: Հոն շատ անասուններու տէր դարձաւ, ինչպէս նաեւ հարստացաւ ոսկիով ու արծաթով: Երկար տարիներ ետք Բեթէլ վերադարձաւ, այն երկիրը՝ զոր Աստուած իրեն տուած էր: Ան Քեբրոնի մէջ հաստատուեցաւ:

Տիրոջ խոստումը իր ժողովուրդին

Արրահամի կեանքը իրապէս սկիզբ կը համարուի: Աստուած զայն կոչեց իսրայէլացիներուն նահապետը կամ «ժողովուրդներու հայր»: Արրահամէն ետք անոր որդիին՝ Իսահակի եւ թոռան՝ Յակոբի (Իսրայէլ) միջոցաւ բազմաթիւ սերունդներ արժանացան Աստուծոյ խոստումին, թէ՛ Ան իր ժողովուրդը պիտի փրկէ երկրաւոր կեանքը թունաւորող մեղքէն ու մահէն: Հարկաւոր տարիներ յետոյ, Աստուծոյ Որդին՝ Իսրայէլի նահապետը՝ Արրահամի սերունդէն սերած Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ, որպէսզի երկրի վրայ ծնի իբրեւ մեր Տէրը եւ Փրկիչը: Ան բոլորին պարգեւեց նոր եւ նորոգող կեանք:

Արրահամ ինքզինք Աստուծոյ կը վստահի

Ի՞նչ կ'ընէք, երբ մէկը յանկարծ ձեզի ըսէ, որ շուտով պէտք է հաւաքէք ձեր իրերը եւ ուղղուիք ձեր չգիտցած տեղը: Աստուած հրամայեց Արրահամին ձգել ամէն ինչ եւ նոր երկիր մը երթալ, բան մը՝ որ դժուար էր Արրահամին եւ անոր հարազատներուն համար: Ինչպիսի՞ տեղ մըն էր արդեօք այդ նոր բնակավայրը: Որո՞նք իրենց դիմացը պիտի ելլէին այնտեղ:

Արրահամ նոյնիսկ զաղափար չուներ, թէ Աստուած ո՞ր կը դրկէ զինք, սակայն ան ամբողջութեամբ վստահեցաւ Աստուծոյ եւ պատրաստ էր կատարելու Անոր կամքը: Իր կնոջ՝ Սառային հետ ան հաւաքեց բոլոր առարկաները, հօտերը եւ Խառանէն ուղղուեցաւ Քանան երկիրը:

Անոնք իրենց ճամբուն ընթացքին հովիւներու եւ վաճառականներու մեծ կարաւաններու հանդիպեցան, որոնք անապատէն անցած էին, որպէսզի զանազան ապրանքներ տանէին դրացի մեծ թագաւորութիւններուն: Վաճառականները Կիլիկիայէն արծաթ կը բերէին, Լիբանանի Մայրի ծառերէն՝ գերաններ, արաբական անապատներէն՝ խուճկ, եգիպտացիներուն կողմէ պատրաստուած պապիրոս, որուն վրայ տարիներ ետք Սուրբ Գիրքը պիտի գրուէր՝ իբրեւ թուղթ օգտագործելով զայն: Մեծ կարաւան մը կրնար բաղկանալ մինչեւ 60 կանգուն բեռնուած քանի մը հարիւր էշերէ: Լաւ օրերուն, անոնք անապատի օձապտոյտ ճամբաներէն կրնային կտրել մինչեւ 30 քլմ.:

Քաղաքի կեանքէն դէպի անապատ

Ճամբորդութեան ընթացքին, միւս վաճառականներուն եւ հովիւներուն նման, Արրահամ վրաններու տակ կ'ապրէր իր ընտանիքով: Ան բնաւ վարձ չէր այսպիսի կեանքի: Արրահամ ծնած ու մեծցած էր Միջագետքի տարածքին զարգացող Ուր քաղաքին մէջ, ուր կային

բազմաթիւ տուներ եւ շատ մը վաճառականական խանութներ: Ուրէն դէպի Խառան տանող ճամբան կ'անցներ Եփրատի ափին գտնուող Բաբելոնէն: Ճամբու ընթացքին ան պէտք է անցներ շատ մը հին քաղաքներէ, ինչպէս՝ Հալէպէն, Կադէսէն եւ Դամասկոսէն: Եւ Արրահամ հասաւ մինչեւ Քանանի Սիւքէմ կոչուած շրջանը: Աստուած երեւցաւ Արրահամին ու ըսաւ. «Քու սերունդիդ պիտի տամ այս երկիրը»: Ճիշդ այդ վայրին մէջ, իրեն երեւցող Աստուծոյ համար քարերով զոհասեղան մը շինեց Արրահամ եւ իր վրանները լարեց Բեթէլէն դէպի արեւելք, ուր դարձեալ զոհասեղան մը կանգնեց: Արրահամ կը զանազանուէր իր դրացի քանանացիներէն: Ան Աստուծոյ կը հաւատար եւ կը վստահէր Աստուծոյ իրեն տուած խոստումին: Քանան շատ ժխտական կեցուածք ցոյց տուաւ Արրահամի նկատմամբ, որուն հետեւանքով Արրահամ ստիպուեցաւ իր ճամբան շարունակել դէպի հարաւ: Ան անցաւ Նեգէր անապատէն, եւ ապա՝ Եգիպտոս: Սակայն երկար թափառումներէ ետք ան կրկին Բեթէլ վերադարձաւ եւ Քեբրոնի մէջ հաստատուեցաւ:

Արրահամ՝ Աստուծոյ բարեկամը

Աստուած Արրահամի նկատմամբ իր սէրը զանազան կերպերով արտայայտեց: Ան Արրահամին եւ Սառային խոստացաւ զաւակ տալ: Որպէս նշան ապագայ մեծ ազգի մը «նախահայրերը» ըլլալու իրողութեան, Աստուած անոնց անունները փոխեց՝ Արրամը վերակոչեց Արրահամ, իսկ Սարան՝ Սառա: Անոնք շատ կը փափաքէին զաւակ մը ունենալ, սակայն արդէն ծերացած էին: Աստուծոյ խոստումը լսելով՝ Սառան չկրցաւ իր խնդուքը պահել եւ իր մտքէն ըսաւ. «Մինչեւ հիմա զաւակ չունեցայ, հիմա՞՞ պիտի ունենամ: Ամուսինս ալ արդէն ծերացած է»: Այդ պատճառով ալ, երբ զաւակ ունեցաւ, անոր անունը Իսահակ (իմ խնդութս) դրաւ: Իսահակ իր ծնողներուն ուրախութիւնը եղաւ: Աստուած ըսաւ, որ Իր եւ Արրահամին միջեւ ուխտ մը պիտի կնքէ: Այս ուխտը այն խոստումին համար էր, որ Աստուած Արրահամի, Իսահակի եւ անոնց ժառանգորդներուն միջոցաւ իր փրկագործութիւնը պիտի շարունակէ:

Հաւատքը կը փորձուի

Աստուած Արրահամին հրամայեց իր միակ որդին՝ Իսահակը բարձր լեռ մը տանիլ եւ այնտեղ զոհել: Արրահամ շատ տխրեցաւ, բայց ան միշտ Աստուծոյ կը վստահէր, այդ պատճառով ալ պատրաստ էր Անոր կամքը կատարելու: Սակայն ան երբ իր սիրելի որդին կապեց ու զայն դրաւ զոհասեղանի վրայ եւ կը պատրաստուէր զոհել, Աստուած բռնեց անոր ձեռքը եւ ցոյց

Աստուածային խոստում

Ես () ուխտ պիտի կնքեմ իմ եւ քու () միջեւ, քեզմէ ետք եկող սերունդներուդ ու անոնց տոհմերուն միջեւ, իբրեւ յաւիտենական ուխտ, որովհետեւ ես պիտի ըլլամ քու եւ քեզմէ ետք գալիք քու սերունդներուդ Աստուածը (ԾՆ 17.7):

- Գրեցէ՛ք, թէ ո՛վ ինք իր մասին կը խօսի եւ «ԵՍ» կ'ըսէ եւ ուխտ կը կնքէ: Շրջանակի մէջ առէք այն բառը, որ ցոյց կու տայ, թէ այդ ուխտը ինչքան երկար պիտի շարունակուի:
- Գրեցէ՛ք, թէ ո՛վ է «ԴՈՒՆ»ը, որուն հետ ուխտ կը կնքուի:
- Ուղղանկիւն քառանկիւնի մէջ առէք այն բառը, որ ցոյց կու տայ թէ նաեւ որո՞նց հետ ուխտ կը կնքուի:
- Ընդգծեցէ՛ք այն արտայայտութիւնը, որ ցոյց կու տայ թէ Աստուած ի՞նչ պիտի ընէ:

Սուրբ Պօղոս առաքեալի Գաղատացիներուն գրած նամակին մէջէն (Գղ 3.29) գտէք, թէ ներկայիս որո՞նք են Աբրահամի իսկական ժառանգորդները եւ այդ խօսքերը այստեղ գրեցէ՛ք:

տուաւ թուփերուն մէջ իր եղջիրներէն բռնուած խոյ մը ու հրամայեց որդիին փոխարէն զայն զոհել Իրեն: Աստուած գիտէր, որ Աբրահամին հաւատքը եւ Աստուծոյ վրայ դրած յոյսը անկեղծ է: Ուստի խոստացաւ, որ Աբրահամէն պիտի սերի մեծ եւ զօրաւոր ժողովուրդ մը եւ անով պիտի օրհնուին աշխարհի բոլոր ազգերը: Աստուած կը սիրէր Աբրահամն ու Սառան: Ան գիտէր որ Աբրահամ հաւատարիմ է Իրեն եւ այդ պատճառով չձգեց որ ան իր զաւակը զոհէ: Բազմաթիւ սերունդներ յետոյ սակայն, Աստուած Իր Միածին Որդին զոհեց մեզի համար: Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, կամաւոր կերպով մահացաւ խաչին վրայ, որպէսզի մենք փրկուինք եւ յա-

ւիտենական կեանքի արժանանանք: Աստուած ի՞նչ կատարեց այն ինչ որ Աբրահամին չպարտադրեց ընել:

Աստուծոյ տուած խոստումը մեզի եւ մեր զաւակներուն Աբրահամէն ետք ապրած մարդիկ՝ անոր ժառանգորդները, միշտ կը պատմէին մարդոց նկատմամբ Աստուծոյ ունեցած սիրոյն մասին: Մենք ալ եկեղեցւոյ մէջ միշտ կը պատմենք ու կը վերյիշենք այդ պատմութիւնները, որովհետեւ գիտենք, որ Աստուծոյ խոստումը յաւիտենական է: Գիտենք նաեւ որ Աստուծոյ տուած խոստումը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ իրականացաւ:

Մարդիկ բուսական եւ կենդանական աշխարհի արդիւնքներով կը սնանին, այդ իսկ պատճառով կախեալ են բնութենէն, եղանակէն, հողէն, երկրաւոր բարիքներէն, եւ այլն: Թէեւ անոնք բոլորիս կը վերաբերին, սակայն անկասկած բնութենէն կախեալ ըլլալը առաւելապէս այն մարդոց կը վերաբերի, որոնք գիւղերու մէջ կ'ապրին, մինչ այսօր մարդիկ մեծ մասամբ քաղաքներու մէջ կ'ապրին:

Ձեր ընտանիքի անդամներուն հետ մտածեցէ՛ք մարդկային կեանքի այն բնագաւառներուն մասին, որոնք անմիջական կապ ունին բնութեան հետ: Օրինակ՝ կաթ, կաշի եւ այլ նիւթեր ստանալու համար կենդանիներ պահել, հողագործութիւն, մրգեղէնի եւ սունկի պահածոներ պատրաստել, այգիի ու բանջարանոցի աշխատանք, եւ այլն:

Կարդացիմք Աբրահամի մասին, իմացանք որ անոր հարազատները եւ ժառանգորդները ինչքան մեծ կարեւորութիւն տուած են հողին: Յաջորդ դասերուն մէջ այլ մարդոց ալ պիտի հանդիպինք, որոնք նոյն սիրով ու գուրգուրանքով մօտեցած են հողին: Աբրահամի ծոռը՝ Յովսէփ, շատ բան սորված էր ցորենի մշակման մասին եւ կրցաւ օգտակար դառնալ աշխարհի ամենէն նշանաւոր թագաւորներէն մէկուն: Մովսէս երբ հօտը կ'արածէր, սքանչելի հանդիպում մը ունեցաւ Աստուծոյ հետ: Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, Յովսէփէն ժառանգեց իր արհեստը: Ան ատաղձագործ էր եւ պիտանի ու գեղեցիկ իրեր կը պատրաստէր փայտերով: Մեր նախահայրերը երկրաւոր բարիքներու մէջ Աստուծոյ մեծ շնորհքը կը տեսնէին: Այդ վերաբերմունքը արտայայտութիւն կը գտնէ նաեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ժամերգութեան եւ աղօթքներուն մէջ, որոնք Աստուծոյ ուղղուած խնդրանքներ են՝ մեր երկրաւոր պահանջներուն ու կարիքներուն գոհացում տալու համար: Կ'աղօթենք ու Աստուծոյ գթասրտութիւնը կը հայցենք: Օրինակ, Տէրունական օրերուն եւ Կիրակամուտի ժա-

մերգութիւններու ընթացքին սարկաւազը «Ասացուք» քարոզը կ'արտասանէ, որուն մէջ խնդրանքներ կը մատուցէ Աստուծոյ ըսելով. «Յաղագս բարեխառնութեան օրոց, անձրեւաց քաղցրութեան եւ պտղոց առատութեան՝ զՏէր աղաչեսցուք» (Օդին բարեխառն ըլլալուն, անվնաս անձրեւներու եւ առատ բերքի համար Տիրոջ աղաչենք): Ժողովուրդն ալ «Տէր Ողորմեա՛» կը պատասխանէ: Նախ այն տպաւորութիւնը կրնանք ստանալ, որ նման խնդրանք միայն կարելոր կրնայ ըլլալ որոշ մարդոց (գիւղացիներուն) համար, որոնց գործը կախեալ է բնութենէն: Սակայն եկէ՛ք միասնաբար մտածենք, թէ այդ խնդրանքը ի՞նչ թելադրականութիւն ունի, ինչպէս նաեւ մտածենք այն բոլորին մասին որոնք անբաժան են մեր կեանքէն: Օրինակ.

- Կենդանական ի՞նչ տեսակի սնունդներու պէտք ունինք: Ի՞նչ կը պատրաստենք ամոնցմով:
- Ի՞նչ բոյսեր կ'օգտագործենք իբրեւ կերակուր, կամ ամոնցմէ որո՞նք կերակուրի պատրաստութեան մէջ կը գործածենք:
- Ի՞նչ տեսակի ջուրի պէտք ունինք խմելու եւ լուացուելու համար:
- Ինչո՞վ կը շինենք մեր տուները: Ձեր ընկերներուն եւ ծնողներուն հետ քննարկեցէ՛ք եւ միասնաբար մտածեցէ՛ք, թէ մեր կեանքին մէջ ի՞նչ բաներ կախեալ են այս խնդրանքին մէջ յիշուած երեւոյթներէն: Եկեղեցւոյ մէջ ջանացէ՛ք ուշադրութեամբ հետեւիլ այս տեսակի աղօթքներուն: Ամբողջ սրտով Աստուծոյ խնդրեցէ՛ք որ ձեզի ողորմի ու ձեր բոլոր կարիքները հոգայ: Ժամանակն է նաեւ որ մտածէք, թէ ինչպէ՞ս պէտք է երախտագիտութիւն յայտնէք Աստուծոյ, մեզի շնորհած այս բնութեան՝ աշխարհին համար: Միասնաբար մտածեցէ՛ք, թէ ի՞նչ լաւ գործ կրնաք ընել եւ այս մասին ձեր բոլոր ընկերներուն գաղափարներ տուէք:

*Գրեցէ՛ք այն բոլոր բարի գործերը, զոր կրնաք ընել:
Գրեցէ՛ք նաեւ չար գործերը, զոր դժբախտաբար միշտ կը կատարենք:*





Բարի գործեր



Չար գործեր

Աստուծոյ խօսքին արձանագրութիւնը Աստուածաշունչին մէջ

Այն մարդիկը որոնք հաւատարիմ էին Աստուծոյ, Անոր խօսքը կը յիշէին եւ ուրիշներուն կը պատմէին Աստուծոյ յայտնութիւնները: Երբ անոնք սկսան արձանագրել Սուրբ Գիրքի խօսքերը, այսինքն գրել Աստուածաշունչը, անոնք օգտագործեցին գրելու համար այդ օրերուն մարդոց յայտնի բոլոր միջոցները եւ նիւթերը: Գիծերով իրարու միացուցէր սկզբները եւ անոնց բացատրութիւնները, որոնք ցոյց կու տան հին ժամանակ գիրք գրելու համար մարդոց օգտագործած միջոցները:



Դաս 2

ԻՆՉՊԷՍ ԳՐՈՒԱԾ Է ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ



անունը

ՎԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԱԿԱԴԵՏՆԵՐ

անեմ,
իմ եւ
ուն մի-
յաւի-

դիմե-
նի ա-
յրձաւ
լուխը

մնա-
ուած
իհամի
ժողո-

դիկը
18.3-4,

ւններ

դրելուն Գիրքը

Աբրահամի մահէն ետք՝ Իսահակ դարձաւ Աստուծոյ ժողովուրդին առաջնորդը: Իբրեւ մեծ ընտանիքի հայր, ան պարտաւոր էր բոլորին համար ջուր ապահովել, իսկ հօտին համար՝ կանաչ արօտավայրեր: Ան իր ժողովուրդը տեղէ տեղ կը փոխադրէր՝ հասած տեղը երկար ժամանակ մնալով, որպէսզի մոր ջրհորներ փորեն, կամ գարի ցանելու համար հողը մշակեն: Երբեմն կը պատահէր, որ Փղշտացիները (Քանանի բնիկ ժողովուրդը) Իսահակի հետ վեճի բռնուէին՝ փորուած ջրհորներուն որո՞ւ պատկանելուն հարցով: Իսահակ կը մախընտրէր չպայքարիլ, այլ՝ հեռանալ եւ ուրիշ շրջան մը երթալ, որովհետեւ խաղաղասէր մարդ էր:

Իսահակի որդիները՝ Յակոբ եւ Եսաւ

Իսահակի կինը՝ Ռեբեկան, երկուորեակներ ծնաւ՝ Եսաւն ու Յակոբը: Եսաւը տան մէջ նստելէն կը ծանծորանար: Ան շատ կը սիրէր որսորդութիւնը եւ անապատին մէջ կը շրջէր: Ան բարձր ծայնով կը խօսէր եւ մախքան խօսիլը բնաւ չէր մտածեր: Եսաւը աւելի առաջ ծնած էր, հետեւաբար ան պէտք է ստանար իր հօր օրհնութիւնը ու ժառանգէր ամոր հարստութեան մեծ մասը: Իսկ Յակոբը աւելի զուսպ էր եւ տունը նստող: Ան ամբողջ օրը տան մէջ կը մնար եւ կ'օգնէր այծի բուրդերէն թել մանելու մօրը աշխատանքին: Ռեբեկան այնպէս կը խորհէր, որ Յակոբը աւելի յարմար պիտի ըլլար տոհմին առաջնորդ ըլլալու, քան թափառական Եսաւը: Յակոբ լուռ կերպով կը հետեւէր դէպքերուն եւ յարմար առիթի մը կը սպասէր խաբելու համար իր մեծ եղբայրը: Օր մը Եսաւ որսորդութենէն յոգնած տուն վերադարձաւ. անօթի էր եւ շատ տկար: Ան Յակոբէն խնդրեց որ պատրաստած ոսպի ապուրէն տայ իրեն, որուն բոյրը շատ անոյշ էր: Եւ այդ ժամանակ Յակոբ առաջարկեց անոր. «Կու տամ, եթէ այսօր ինծի ծախես քու անդրանկութիւնը»: Անօթեցած Եսաւը առանց մտածելու համաձայնեցաւ: Անկէ ետք Յակոբ խաբեց մահել գրեթէ կուրցած իր հայրը՝ ինքզինք Եսաւին տեղ դնելով, որպէսզի ստանայ ամոր օրհնութիւնը: Փոքր եղբոր խաբեբայութիւնը գիտնալով՝ Եսաւ շատ բարկացաւ: Այդ պատճառով ալ Յակոբ ստիպուած էր Իսահակին փախչիլ, Ռեբեկայի եղբոր՝ Լաբանի մօտ:

Յակոբ ինք ալ կը խաբուի

Յակոբ ստիպուած էր անապատը կտրել, այն ճամբով որ Աբրահամ անցած էր, սակայն հակառակ ուղղութեամբ: Լաբանի մօտ հիւրընկալուելու ժամանակ Յակոբ սիրահարուեցաւ անոր երիտասարդ աղջկան՝ Ռաքելին: Ան համաձայնեցաւ 7 տարիներ Լաբանի հօտերը արածել, որպէսզի Լաբան թոյլ տար իրեն ամուսնանալ Ռաքելին հետ: Սակայն երբ Յակոբ աւարտեց իր ծառայութիւնը, խորամանկ Լաբան խաբեց զայն եւ իր մեծ աղջիկը՝ Լիան կնութեան տուաւ անոր: Լաբան այնպէս կը խորհէր, որ մեծ աղջիկը նախ ամուսնացնելը աւելի արդար է: Այնպէս ինչպէս Յակոբ խաբեց Եսաւը, նոյնպէս ալ Յակոբ ինք խաբուեցաւ Լաբանէն: Յակոբ ստիպուած էր 7 տարի

եւս ծառայել Լաբանին, որպէսզի ամուսնանար իր սիրած Ռաքելին հետ: Այսպիսով՝ ան երկու կին ունեցաւ, որ այդ օրերուն սովորական էր:

Յակոբ մոր անուն կը ստանայ

Ամուսնանալէն ետք, Յակոբ որոշեց իր հայրենի Քեբրոնը դառնալ: Գիշեր մը երբ ճամբայ ելած էր արդէն, մարդու մը հանդիպեցաւ, որ Յակոբին հետ կռուեցաւ մինչեւ առտու: Անձանօթը շատ զօրաւոր էր, սակայն չկրցաւ յաղթել Յակոբին: Անոնք մինչեւ լուսաբաց կռուեցան եւ Յակոբ տեսաւ որ իր դիմաց հրեշտակ մը կեցած է եւ խընդրեց որ օրինէ զինք: Հրեշտակը օրինեց զայն եւ Աստուծոյ կամբը ըսաւ անոր. «Ասկէ վերջ քեզ Յակոբ պիտի չկոչեն, այլ քու անունը Իսրայէլ թող ըլլայ, որովհետեւ դիմացար Աստուծոյ հետ կռուած ատենդ, հետեւաբար մարդոց դիմաց ալ զօրաւոր պիտի ըլլաս»: Յակոբ շարունակեց իր ճամբան եւ եղբոր հողերը մտած ատեն կը վախճար: Սակայն Եսաւ եղբայրական սիրով անոր դիմաւորութեան ելաւ, գրկեց զայն եւ համբուրեց: Եղբայրները սկսան զիրար համբուրել եւ լալ: Անոնք երկուքն ալ Քեբրոնի մէջ էին, երբ իրենց հայրը՝ Իսահակ մահացաւ: Չայն թաղեցին նոյն քարայրին մէջ՝ ուր թաղուած էր Աբրահամ: Հետագային՝ Յակոբ ու Եսաւ առանձին ապրեցան, իւրաքանչիւրը իր հողատարածքին մէջ, սակայն մինչեւ իրենց կեանքին վերջը եղբայրական սիրով մնացին իրարու հետ:

Յովսէփ Եգիպտոս կը տեղափոխուի

Յակոբ ունէր 12 զաւակներ, սակայն ամենէն աւելի Յովսէփը կը սիրէր: Առիթով մը Յովսէփ եղբայրներուն իր երազը պատմեց. ան իր երազին մէջ տեսած էր, որ բոլոր եղբայրները իր առջեւ խոնարհութիւն կ'ընէին: Եղբայրները սկսան ատել Յովսէփը, մանաւանդ երբ Յակոբ իր սիրելի զաւկին գոյնզգոյն վերարկու մը նուիրեց: Եղբայրները Յովսէփը անապատի ջրհորին մէջ նետեցին՝ զայն սպաննելու նպատակով: Ապա, եղբայրները այծ մը մորթեցին եւ Յովսէփի գոյնզգոյն վերարկուն պատռտելով այծին արեան մէջ թաթխեցին, որպէսզի իրենց հօրը ցոյց տան: Կեղծ լացուկոծով անոր հագուստը ցոյց տըւին Յակոբին եւ ան հաւատաց, որ վայրի գազանները յօշոտած են իր զաւակը: Յակոբ շատ սգաց իր զաւկին «մահուան» համար: Ան չէր գիտեր որ Յովսէփը ողջ է եւ անոր եղբայրները զայն Եգիպտոս իբրեւ ստրուկ ծախած են: Յովսէփը ինքզինք վերագտաւ այդ մոր կեանքին մէջ: Եգիպտոսի կառավարիչները շատ կը գնահատէին անոր իմաստութիւնը եւ տաղանդը: Եգիպտացիները երազներու կը հաւատային եւ Յովսէփ կը յաջողէր զանոնք մեկնաբանել: Ան նոյնիսկ յաջողեցաւ Եգիպտոսի թագաւորին՝ Փարաօնին երազը մեկնաբանել: Ան Փարաօնին բացատրեց, թէ ի՞նչ պէտք է ընէ, որպէսզի լաւապէս պատրաստուին սովի տարիներուն: Եւ երբ այդ օրերը եկան եւ Յովսէփի ըսածները ճիշդ ելան, ան դարձաւ Եգիպտոսի ամենէն ազդեցիկ անձերէն մէկը:

Հին Կտակարանի ուսումնասիրութեան սկսելով՝ երեք անձերու հանդիպեցանք, որոնց անունները Աստուած փոխեց. Աբրահամ եղաւ Աբրահամ, Սարան՝ Սառա, իսկ Յակոբը՝ Իսրայէլ: Նոր անուն ստանալը կը նշանակէր, որ Աստուած «Նոր կեանք» կը պարգեւէր անոր եւ Աստուծոյ ծառայելու համար մասնաւոր շնորհք: Ձեր ընտանիքի անդամներուն հետ խօսեցէք անուններու իմաստին մասին: Ամէն մէկուն կրնաք հարցնել՝

- Ինչպէ՞ս ընտրուած է իր անունը:
- Իր մեծ ծնողներէն մէկուն ի պատի՞ւ տրուած է այդ անունը:
- Գիտէ՞ք ձեր անուն իմաստը:
- Կը ճանչնա՞ք սուրբ մը, որ այդ անունը ունի: Անոր կեանքը կարդացա՞ծ էք:
- Այդ անունին տիրոջ նկարագրային գիծերը ունի՞ք: (Այս հարցումներէն ոմանք կրնաք մահել հարցնել մականուններու եւ հայրանուններու համար ալ):

Եթէ ուշադրութեամբ նայինք Սուրբ Գիրքին մէջ գտնուող անուններուն, կը տեսնենք որ այդ անունները տըրուած են Աստուծոյ ներկայութիւնը յիշեցնելու եւ Անոր նկատմամբ անսահման երախտագիտութիւն արտա-

յայտելու համար: Օրինակ՝ Յեսու անունը եբրայերէնով կը նշանակէ «Աստուծոյ փրկութիւնը», Մատթէոս՝ «Պարգեւ», «Երգ կենաց»: Իսկ Երեմիա կը նշանակէ «Աստուած կը դրկէ»:

Երբեմն անունները մեզի կը յիշեցնեն, թէ մենք ինչպէ՞ս պէտք է ապրինք: Օրինակ՝ ի՞նչ կ'ըսէ մեզի Յովհաննէս անունը: Ինչպիսի՞ կարեւոր դէպքի մասին յիշեցում կը կատարէ մեզի Սուրբ Գիրքին մէջ յիշուած Եղիսաբէթ անունը: Անունները մահել կրնան մեզ կապել այն մարդոց, որոնք կարեւոր գործեր կատարած են Աստուծոյ անունով: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ այն սուրբն էր, որուն օրով Քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօն հռչակուեցաւ: Հարցուցէ՛ք ձեր դասընկերներուն, թէ իրենք ի՞նչ անուն պիտի ուզէին տալ իրենց մորածին եղբոր կամ քրոջ: Եւ ինչո՞ւ համար այդ անունը պիտի տային: Վերջապէս խօսեցէ՛ք քրիստոնեայ ըլլալու մասին, որ մեզ բոլորս իրարու քով բերած է: Չէ՞ որ ան ալ Աստուծոյ կողմէ տրուած անուն է: Ի՞նչ կը նշանակէ այդ: Ինչպէ՞ս կարելի է ապրիլ, ինչպէ՞ս գործել առօրեայ կեանքի ընթացքին, որպէսզի արժանի ըլլանք քրիստոնեայ կոչուելու:

Մարիամ Աստուածածնի ծնունդը

Հայ Առաքելական Եկեղեցին Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի ծնունդը կը տօնէ Սեպտեմբեր 8-ին: Մանրանկարներուն մէջ Տիրամօր ծնողները՝ Յովակիմն ու Աննան, ներկայացուած են Աստուծոյ աղօթած պահուն:

Սուրբ Յովակիմը եւ Աննան շատ ծեր էին եւ զաւակ չունէին: Անոնք աղքատ էին եւ շատ կարիքաւոր: Անոնք բարեպաշտ էին եւ կը սպասէին խոստացուած Փրկչին: Միշտ կ'աղօթէին Աստուծոյ, որ իրենց զաւակ մը պարգեւէ: Աստուած լսեց անոնց ծայրը. Աննան ծնաւ Մարիամը, որուն բոլոր սերունդները «երանի կու տան» (Ղկ 1.48):

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յովակիմի եւ Աննայի տօնը կը կատարէ Վերափոխման տօնին 9-րդ օրուան յաջորդող օրը: Այդ օրուան շարականը նուիրուած է Ս. Աստուածածնի ծնողներուն՝ Ս. Յովակիմի եւ Աննայի:

Սուրբ Յովակիմի եւ Աննայի անունները կը վկայեն, որ ամէն ժամանակ ալ եղած են Աստուծոյ նուիրուած ու Անոր հաւատարիմ մարդիկ:

Անապական Կոյս Մարիամը Աստուածածին կը դաւանի Եկեղեցին: Անկէ անմահութեան Հաց եւ ուրախութեան բաժակ տրուեցաւ մեզի. օրհնեցէ՛ք մեր Տէր Աստուածը:

Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ նահապետներուն Աստուծոյ կողմէ պարգեւուեցար, Կոյս Մարիամ, դուստրը անոնց, բոլոր ազգերը այսօր երանի կու տան քեզի՝ Աննայէն ծնածին:



Աւետիս կը տրուի Աննային եւ Յովակիմին

ԻՍՐԱՅԷԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Պետք է սորվինք Աստուծաշունչին մեր փնտռած համարները գտնել: Ենթադրենք որ կ'ուզենք գտնել եւ կարդալ Աստուծաշունչի Ել 20.4-17 հատուածը:

Ինչպէ՛ս սկսիլ փնտռողութիւնը

• Նախ պէտք է սորվիլ կրճատումները: Ելք (կամ Գիրք Ելից) Աստուծաշունչի գիրքերէն մէկուն անունն է:

• 20-ը գլխուն թիւն է:
• 4-17, այդ գլխուն համարներն են, զորս կ'ուզենք կարդալ: Կը թելադրուի կարդալ սկսելով 4-րդ համարէն մինչեւ 17-րդ համարը:

1. Նայեցէ՛ք Աստուծաշունչի գիրքերու ցանկին: (Առաջին դասապահի ընթացքին բացատրեցինք, որ ասիկա կարելի է գտնել Աստուծաշունչի առաջին էջերուն վըրայ): Հոն կարելի է գտնել Աստուծաշունչի գիրքերուն կրճատում եւ լրիւ անունները, ինչպէս նաեւ հոն կը տրուին էջաթիւերը: Նայեցէ՛ք թէ ո՞ր էջն է կը սկսի Ելից գիրքը եւ գրեցէ՛ք այստեղ:—

2. Ելից գիրքը կը թերթատենք, մինչեւ որ գտնենք մեծ գիրով գրուած 20 թիւը, որուն ներքեւ դրուած կ'ըլլան 20-րդ գլխու բոլոր էջերը եւ համարները:

3. Ուշադրութեամբ կը նայինք այդ գլխուն, մինչեւ որ գտնենք անոր մէջ փոքր գիրերով գրուած 4 թիւը, որով կը սկսի 4-րդ համարը: Այսպիսով կը գտնենք մեր ուզած տեղը եւ կը սկսինք կարդալ մինչեւ 17-րդ համարին վերջը:

4. Ընդհանրապէս իրարու յաջորդող քանի մը համարները կը կոչուին «մէկ հատուած»: Կարդանք մեր գտած հատուածը: Ինչի՞ մասին է: Պատասխանը գրեցէ՛ք այստեղ:

Մովսէս Մինա լերան վրայ փաստաբանեայ պատուիրանները կը ստանայ

ԵՐԿԱՐ ՃԱՄԲԱՅ ԴԷՊԻ ԱՒԵՏԵԱՅ ԵՐԿԻՐ

«Այն ատեն Մովսէս եւ իսրայէլացիները հետեւեալ օրհներգը ուղղեցին Աստուծոյ՝ Ըսելով. Օրհներգ Տէրը, որ փառքով փառաւորուած է: Ամոնց կառքերն ու ձիերը ծովուն մէջ ընկղմեց»:

Աստուծաշունչի երկրորդ՝ Ելից գիրքը կը պատմէ, որ Եգիպտոսի մէջ գահ բարձրացաւ թագաւոր մը, որ Յովսէփը չէր ճանչնար: Իսկ Յովսէփի եղբայրներուն սերունդները, որոնք անօթութենէ փրկուելու համար Եգիպտոս գացած էին, արդէն բազմացած եւ ժողովուրդ դարձած էին: Ամոնք համերաշխ կ'ապրէին եւ շատ յաջող կեանք մը ունէին: Եգիպտոսի փարաւոնը սկսաւ մտահոգուիլ, տեսնելով որ ամոնց թիւը երթալով արելի կ'ըլլայ քան Եգիպտացիները: Այն ատեն սկսաւ բոլոր օտարները, ինչպէս նաեւ իսրայէլացիները՝ ստրկացնել եւ անոնց պարտադրեց տաճարներ, բուրգեր եւ քարէ մեծ արձաններ շինել: Սակայն մոյմիսկ այդ դժուար կացութեան մէջ, իսրայէլացիներուն թիւը կ'աճէր: Վերջապէս փարաւոնը հրամայեց սպաննել բոլոր նորածին տղաքը: Այսպիսի դժուար օրերու մէջ ծնաւ Մովսէս:



Ելից 15

«Ելք» կը նշանակէ տեղէ մը ելլել եւ ուրիշ տեղ մը ուղղուիլ: Ելից գիրքը Աստուծաշունչի երկրորդ գիրքն է: Այդ գիրքի 15-րդ գլխուն մէջն է գտնել այս համար: Ո՞ր մէկ համարին մէջ է անիկա:

Գրեցէ՛ք այստեղ:

Սինայի թերակղզին




Սուրբ Էկատերինէի վանքը Սինա լերան վրայ

Եթէ քարտէսին վրայ նայինք, Սինայի թերակղզին կը նմանի գլխիվայր շրջուած բուրգի: Ամոր երկայնքը 370 քմ. է, իսկ լայնքը՝ 240 քմ.: Ան կը գտնուի Եգիպտոսէն (Սուէզի ջրանցքէն) դէպի արեւելք եւ Նեգէբ անապատէն դէպի հարաւ-արեւմուտք: Ճիշդ այդ անապատին մէջ Իսրայէլի ժողովուրդը 40 տարի թափառեցաւ, երբ Մովսէս զանոնք դուրս բերաւ Եգիպտոսի գերութենէն: Այս թերակղզին մէջ կը գտնուի Սուրբ Էկատերինէի Ուղղափառ Վանքը, որ հիմնուած է Յ.Ք. շուրջ 250 թրւակամին: Ան կը գտնուի Սինա լերան մօտ, ուր Մովսէս տասնաբանեայ պատուիրանները ստացաւ: Այդ վանքին մէջ 1844 թուականին գտնուեցաւ Նոր Կտակարանի հնագոյն ծեռագիրներէն մին: Այդ վանքը այցելող բազմաթիւ զբօսաշրջիկներ Սինա լեռ կը բարձրանան, որպէսզի աղօթեն այնտեղ գտնուող փոքրիկ մատուռին մէջ:

Երբ լաւապէս սորվիք այս դասը, քարտէսին վրայ գծեցէ՛ք այն ճամբան, ուրկէ իսրայէլացիները անցան Կարմիր Ծովը կտրելէ ետք, մինչեւ Աւետեաց Երկիր՝ Երիթրոփ շրջանները: Քարտէսին վրայ գտէ՛ք եւ նշեցէ՛ք այն բոլոր տեղերը, որոնք յիշուած են այս դասին մէջ:

Իսրայէլի ժողովուրդին ճամբան դէպի Աւետեաց Երկիր



Ստրկութենէն դէպի ազատութիւն՝ Մովսէսի հետ

Երբ Մովսէս ծնաւ, փարաւոն հրամայած էր սպաննել իսրայէլացիներուն բոլոր նորածին արու զաւակները: Մովսէսի մայրը իր զաւակը երեք ամիս պահած էր, սակայն կարելի չէր այդպէս շարունակել, որովհետեւ մանուկը սկսած էր մեծնալ եւ աղմկոտ դառնալ: Այն ատեն մայրը եղեգով զամբիւղ մը պատրաստեց, մանուկը դրաւ անոր մէջ եւ մեծ աղջկան պատուիրեց զամբիւղը տանիլ Նեղոսի ափին գտնուող եղեգնուտին մէջ: Մայրը կ'աղօթէր Աստուծոյ, որ փրկէ իր զաւակը, իսկ անոր քոյրը զամբիւղը ջուրին մէջ դնելէ ետք, հոն կը սպասէր տեսնելու համար թէ ի՞նչ պիտի ըլլայ: Այն ատեն փարաւոնին աղջիկը եկաւ իր նաժիշտներուն հետ՝ լողալու համար: Եղեգնուտին մէջ զամբիւղ մը նկատելով՝ փարաւոնին աղջիկը նաժիշտներէն մին դրկեց զայն բերելու համար: Ջամբիւղը բանալով տեսաւ լացող մանուկը եւ խղճաց: Մանուկին քոյրը մօտեցաւ անոր եւ առաջարկեց իսրայէլացի դայեակ մը բերել երեխային համար: Այսպիսով Մովսէս մինչեւ իր 3 տարեկանը կրցաւ իր ընտանիքին հետ ապրիլ: Սակայն անկէ ետք, անոր կեանքը ամբողջութեամբ փոխուեցաւ. զայն տարին փարաւոնին պալատը եւ Մովսէս հոն մեծցաւ հարցստութեան ու շքեղութեան մէջ:

Սակայն Մովսէս երբեք չմոռցաւ իր եբրայական ծագումը: Օր մը ան տեսաւ թէ ինչպէս եգիպտացի մարդ մը իսրայէլացի ստրուկ մը կը ծեծէ: Մովսէս այնքան բարկացաւ, որ սպաննեց եգիպտացին: Փարաւոնին բարկութենէն վախճալով՝ ան փախաւ դէպի անապատ եւ Մադիամի երկրին մէջ ապաստանեցաւ:

Մադիամացիներուն Յոթոր քուրմը անոր պատուիրեց իր ռէխարները արածել: Մովսէս ամուսնացաւ Յոթորի աղջկան՝ Սեփորայի հետ:

Մովսէս Աստուծոյ հետ կը խօսի

Մովսէս իր աներոջ՝ Յոթորի հօտերը արարած պահուն, Քորեբ լեռան ստորոտին, տեսաւ կրակով այրող սակայն չսպառող մորենի մը: Մօտեցաւ թուփին եւ լսեց իրեն ուղղուած ձայն մը. *«Մովսէս, Մովսէս...: Ես քու հայրերուդ Աստուածն եմ, Աբրահամի, Իսահակի Աստուածը, Յակոբի Աստուածը...: Ես տեսայ Եգիպտոսի մէջ գտնուող իմ ժողովուրդիս կրած տառապանքը, լսեցի վերակացուներուն դաժանութեան պատճառաւ անոնց աղաղակը, գիտեմ թէ ինչքա՜ն վիշտեր ունին: Ես իջայ որպէսզի փրկեմ եգիպտացիներուն ձեռքէն եւ համեմ զանոնք այդ երկրէն ու տանիմ աւելի լաւ եւ ընդարձակ երկիր մը..., ուրկէ կաթ եւ մեղր կը քսի: ...Արդ, քեզ պիտի դրկեմ եգիպտացիներուն փարաւոնին քով, որպէսզի իմ ժողովուրդս եգիպտացիներուն երկրէն դուրս հանես»*: Իսրայէլացիները Աստուծոյ անունը չէին գիտեր տակաւին, բայց Աստուած ինք ըսաւ Մովսէսին. *«Ես այն Աստուածն եմ որ է»* («Ես եմ որ եմ»): Մովսէս շատ վախցաւ Աստուծոյ խօսքերէն: Ան ինչպէ՞ս

կրնար կենալ փարաւոնին ու անոր արքունիքին դիմաց: Չէ՞ որ փախստական էր եւ լեզուն ալ թոթով: Սակայն Աստուած խոստացաւ անոր, որ իր կողքին պիտի ըլլայ նաեւ իր եղբայրը՝ Ահարոնը, որպէսզի ան իր անունով խօսի:

Մովսէս եւ Ահարոն – Դիմում փարաւոնին

«Այն ատեն Մովսէս եւ Ահարոն փարաւոնին մօտ եկան ու անոր ըսին. *«Իսրայէլի Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ. “Արծալէ իմ ժողովուրդս, որպէսզի անապատին մէջ զիս պաշտեն”»*: Սակայն փարաւոն մտիկ չըրաւ Մովսէսի եւ Ահարոնի ըսածին: Ան չձգեց որ իսրայէլացիները երթան: Բայց Աստուած օգտագործեց փարաւոնին կարծրացած սիրտը, որպէսզի մարդոց ցոյց տայ թէ Ինքն է միակ ու ճշմարիտ Աստուածը: Աստուած եգիպտացիներուն վրայ շարք մը փորձանքներ բերաւ եւ աղետներ դրկեց՝ գորտեր, մոծեղներ, շնաճանճեր, կարկուտ, մարախներ, երեք օրեր թանձր խաւար ամբողջ Եգիպտոսի մէջ: Ամէն անգամ փարաւոնը կը խոստանար արծալէլ գերիները, սակայն հազիւ Աստուծոյ պատիժները դադրէին՝ կը դրժէր իր խոստումը: Վերջապէս Աստուած դրկեց ամէնէն դաժան պատիժը՝ Եգիպտոսի բոլոր անդրամիկներուն մահը: Եգիպտացիներու իւրաքանչիւր ընտանիքին անդրամիկը մեռաւ, սակայն Աստուած իսրայէլացիներուն սորվեցուց, թէ ինչպէ՞ս պիտի ազատէին այս պատիժէն: Այդ մասին կարդանք Ել 12.21-42 հատուածը:

Կարմիր ծովէն անցքը

Ի վերջոյ փարաւոնը ստիպուած էր հրաժարիլ իր յամառութենէն: Եւ Աստուած Մովսէսին պատուիրեց իր ժողովուրդը դուրս բերել Եգիպտոսէն: Անոնք իրենց հետ առին ինչ որ կրնային տանիլ եւ ճամբայ ելան դէպի Քանան երկիրը: Երբ հրեաները ծովուն մօտեցան, իրենց ետեւէն լսեցին եգիպտական մարտակառքերուն աղմուկը, որովհետեւ փարաւոնը դարձեալ փոխած էր իր միտքը եւ սկսած էր հալածել հրեաները: Եւ ահա տեղի ունեցաւ Սուրբ Գիրքին մէջ պատմուած մեծ հրաշքներէն մէկը: Աստուած ծովուն ալիքներուն հրամայեց բացուիլ եւ իսրայէլացիները ծովուն յատակէն անցան, այնպէս ինչպէս ցամաքի վրայ կը քալեն: Իսկ երբ փարաւոնին զինուորները մտան նոյն ճամբով՝ ջուրերը դարձեալ միացան եւ եգիպտացիները խեղդուեցան: Աստուծոյ ժողովուրդը գտաւ իր ազատութիւնը:

Երկար եւ դժուար ճամբորդութիւն

Դէպի Աւետեաց Երկիր ճամբան դիւրին չէր: Հրեաները շատ դանդաղ կը քալէին, քիչ ուտելիք ունէին, իսկ ջուրը բնաւ բաւարար չէր: Մարդիկ կը տրտնջային Մովսէսին եւ հետզհետէ Աստուծոյ վրայ ունեցած իրենց

հաւատքը կը կորսնցնէին: Անոնք նոյնիսկ Եգիպտոս վերադառնալ կ'ուզէին եւ Մովսէս կը վախճար անոնց բարկութենէն ու զայրոյթէն: Սակայն Աստուած բնաւ չի՝ լքեր իր ընտրեալները: Ան Մովսէսը կանչեց Սինա լեռ եւ անոր տուաւ Աստուծոյ ժողովուրդին Օրէնքը: Մովսէսի երկար բացակայութիւնը տեսնելով, ժողովուրդը բարկացած, դիմեց Ահարոնին եւ համոզեցին զայն որպէսզի կուռք մը շինեն ու անոր երկրպագեն: Այդ կուռքին՝ ոսկիէ հորթին զոհեր մատուցանելով՝ ժողովուրդը կ'ուտէր, կը խմէր ու կը զուարճանար: Իսկ Մովսէս Սինա լեռնէն իջնելով իր հետ բերաւ Աստուծոյ տուած Տասնաբանեայ Պատուիրանները, որոնք գրուած էին երկու փոքր քարէ տախտակներու վրայ: Ան տեսաւ մարդոց ըրածը եւ շատ տխրեցաւ: Սակայն ան կը սիրէր իր ժողովուրդը եւ այդ պատճառաւ խնդրեց Աստուծոյ Օրէնքին մասին: Աստուած անոնց պատուիրած էր ոսկիէ շինուած տուփին՝ Ուխտի Տապանակին մէջ դնել Օրէնքի այդ տախտակները եւ իրենց հետ տանիլ Աւետեաց Երկիրը: Յետոյ անոնք Վկայութեան Խորանը շինեցին: Անոր մէջը, հոն ուր զոհասեղանը կար, կը գտնուէր նաեւ փոքր վրան մը, որ Սրբութիւն Սրբոցն էր, ուր կը դնէին Ուխտի Տապանակը:

Ելից գիրքը կը վերջանայ Վկայութեան Խորանի պատրաստութեան նկարագրականով:

Աւետեաց Երկիրը

Մովսէս իր կեանքին մեծ մասը՝ 40 տարին զոհաբերեց, որպէսզի իր ժողովուրդը առաջնորդէ դէպի Աւետեաց՝ Քանան երկիրը: Սակայն ինք՝ Մովսէս պիտի չտեսնէր զայն եւ ինք պիտի չամցնէր Յորդանան գետը: Տէրը իրեն ցոյց տուաւ Աւետեաց Երկիրը եւ ըսաւ. *«Այս է այն*

երկիրը, զոր երդումով Աբրահամին, Իսահակին ու Յակոբին խոստացած ու ըսած եմ. “Քու սերունդներուդ պիտի տամ զայն”: Այս երկիրը քեզի ցոյց կու տամ, սակայն դուն հոն պիտի չմտնես»: Տիրոջ խօսքին համաձայն՝ Մովսէս մեռաւ Մովաքի երկրին մէջ: Եգիպտոսէն դուրս եկած մարդոցմ ողջ մնացին միայն՝ Նաւի որդին՝ Յեսուն եւ Քաղէրը: Յեսու Նաւին Աստուած պատուիրեց որ ժողովուրդին առաջնորդը դառնայ (Բ. Օր 31.1-3, 7):

Այս պատմութիւնը գրուած է Նաւի որդի Յեսուի գիրքին մէջ: Այնպէս ինչպէս Աստուած բաժնեց Կարմիր Ծովուն ջուրերը, նոյնպէս ալ Ան բացաւ Յորդանանի ջուրերը, որպէսզի եբրայեցիներ կարենան Օրէնք պարունակող Ուխտի Տապանակը անցընել: Թափառական կեանքը վերջ գտաւ: Յեսու ստիպուած էր կռուիլ տեղացի ժողովուրդին հետ, որպէսզի կարենային այնտեղ հաստատուիլ: Անոնց գրաւած առաջին քաղաքը եղաւ Երիթովը, որ բարձր ու ամուր պարիսպ ունէր: Աստուծոյ հրամանով եօթ օր փող ինչեցուցին ու Ուխտի Տապանակը քաղաքին շուրջը դարձուցին: Ահա եօթնորոր օրը պարիսպին պատերը փուլ եկան եւ քաղաքը գրաւուեցաւ (Յս 6.1-21):

Քանան երկրին մէջ իսրայէլացիները բազմաթիւ փորձութիւններու հանդիպեցան, որովհետեւ զիրենք շրջապատող ժողովուրդները (գետացիները, ամորիացիները, գերգեսացիները եւ ուրիշներ) հեթանոս էին: Դժուար էր մնամ միջավայրի մէջ հեռու մնալ անոնց կենցաղէն: Յեսու ժողովուրդին կոչ կ'ուղղէր հաւատարիմ մնալ Տիրոջ: Աստուած անոր պատուիրեց գրաւած հողերը Իսրայէլի տասներկու ցեղերուն միջեւ բաժնել: (Անոնք Յակոբի 12 զաւակներուն յաջորդներն էին:) Յեսուն շատ երկար ապրեցաւ: Երբ մահացաւ ան, զայն թաղեցին Եփրեմի լեռան վրայ:

Աւետեաց Երկրին մէջ

Աստուած Մովսէսին բացատրեց, թէ ինչպէ՞ս հրեաներ կրնան ազատիլ եգիպտական գերութենէն: Ան օգնեց հրեաներուն, որպէսզի առանց փորձանքի անցնին Կարմիր Ծովէն:

Կարդացէ՛ք այստեղ դրուած հատուածները եւ փորձեցէ՛ք գծել ձեր կարդացածը:

Ել 12.21-28, 13.17-22, 14.5-9, 15.1-2, 19-19, 21:

Քառասուն տարի ետք Տէրը Յեսուին ըսաւ, որ իսրայէլացիները պէտք է Յորդանան գետը անցնին եւ մտնեն Աւետեաց Երկիր: Յորդանան գետը անցնելէ առաջ Աստուած ինչպիսի՞ պատուէրներ տուաւ Իր ժողովուրդին: *Կարդացէ՛ք այստեղ դրուած հատուածները եւ փորձեցէ՛ք գծել ձեր կարդացածը:*
Յս 1.10-11, 3.1-6, 4.1-7, 7-9, 11-17, 15-24:

ՏԻՐՈՋ ՍՈՒՐԲ ԵՒ ԿԵՆԱՐԱՐ ԽԱՉԻ ՏՕՆԸ

Խաչվերացը՝ Սուրբ Խաչի վերացման տօնը, Հայ Առաքելական Եկեղեցւոյ հինգ Տաղաւար եւ Խաչի չորս տօներէն մէկն է: Խաչի տօներէն ամենէն հինն է եւ իր պատմական սկիզբը կարելի է դնել մինչեւ Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը, որովհետեւ Խաչը վերացնելու (բարձրացնելու) եւ փառաւորելու առաջին արարքը կը վերագրուի Յակոբոս Տեառնեղբայր (Տիրոջ եղբայրը) առաքելին: Ան եղած է Երուսաղէմի առաջին եպիսկոպոսը եւ խաչը ժողովուրդին դիմաց բարձրացնելով՝ «*Խաչի քո Քրիստոս, երկրպագանեմք*» շարականը եւ աղօթքը երգած է: Հայ եւ Ընդհանրական Եկեղեցւոյ մէջ այս տօնը հաստատուած է չորրորդ դարուն:



Ս. Խաչի պանծացման երկրորդ հանգրուանը Խաչի Գիւտն է, երբ Բիւզանդիոնի Կոստանդիանոս կայսրին մայրը՝ Յելիմէ թագուհին, զայն կը գտնէ ու կը տեղադրէ Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարին մէջ:

Երրորդ տօնը՝ Ս. Խաչի վերադարձն է: 614 թուականին, պարսկա-բիւզանդական պատերազմի ժամանակ, պարսիկներու Խոսրով Բ. թագաւորը գրաւած է Երուսաղէմը, գրեթէ հիմնայատակ կործանելով զայն: Կողոպտելով Երուսաղէմը, պարսիկներ ճիւղական ու հոգեւոր շատ մը արժէքներու հետ միասին՝ Քրիստոսի խաչափայտը եւս կը գողնան եւ կը տանին Պարսկաստան: 628-ին, Բիւզանդիոնի Յերակլ կայսրը (610-641), յաղթելով Պարսկաստանին եւ գրաւելով Տիգրոնը, վերադարձուցած է գերեվարուած խաչափայտը եւ նոյն թուականի Սեպտեմբեր 14-ը հռչակած է Քրիստոսի խաչափայտի վերադարձի կամ Խաչվերացի տօն:

Հայ Եկեղեցին Խաչի տօնը կը կատարէ Սեպտեմբեր 14-ի մօտիկ Կիրակին: Խաչի տօնին, հայկական եկեղեցիներու մէջ, երեկոյեան ժամերգութեան ընթացքին

3 – Տիրոջ խաչը

հանդիսաւոր թափօր եւ անդաստան կը կատարուի (աշխարհի չորս ծագերը օրհնելու արարողութիւն): Հանդիսաւոր թափօրի ժամանակ, սովորաբար հսկայ խաչ մը ձեւաններով կը զարդարեն եւ այն եկեղեցիները որ խաչի մասունք ունին՝ այդ խաչը զարդարելով թափօր կը դարձնեն: Սահակ Գ. Չորակեցի Կաթողիկոսը (677-703) դասաւորած է Խաչվերացի արարողութիւնը եւ այդ առիթով մաւս գրած երգուող շարականները:

ԽԱՉԻ ՓԱՅՏ

Ելից գիրքին մէջ գրուած է, թէ ինչպէս Աստուած Մովսէսին կը պատուիրէ փայտ նետել Մեռա անունով լեռի ջուր ունեցող աղբիւրին մէջ, որպէսզի անոր ջուրը անուշնայ: Անկա մեզի կը յիշեցնէ մեր Տիրոջ փայտի (խաչի) վրայ մեռնիլը, որպէսզի մեզ բոլորս փրկէ մեղքէն եւ մոր կեանքի ջուրը շնորհէ մեզի: Կարդացէ՛ք Ելից գիրքի պատմութիւնը (Ել 15.22-16.1): Ապա կարդացէ՛ք նոյն գիրքին 17-րդ գլուխը: Մովսէս մարգարէն իր գաւազանով չի՞ յիշեցներ Քրիստոսի խաչելութիւնը եւ Տիրոջ խաչը գտնելու դրուագը: Փորձեցէ՛ք գծել այս պատմութիւնները:

Քու զօրութեան խաչը գաւազան տուիր մեզի Քրիստոս եւ անով պիտի յաղթենք անօրէն թշնամիին:

Ասիկա յաղթութեան զէնք է Աստուծոյ որդիին արիւնով տրուած եւ անով պիտի յաղթենք անօրէն թշնամիին:

Ասիկա տէրունական աթոռ է եւ ասոր վրայ բաղմած է Աստուծոյ Որդին՝ Քրիստոս, եւ անով պիտի յաղթենք անօրէն թշնամիին:

ԽԱՉԻ ՔՈՒ ՔՐԻՍՏՈՍ

Քու խաչիդ կ'երկրպագենք, Քրիստոս, եւ խաչելութիւնդ կը մեծարենք. քու չարչարանքդ կը փառաւորենք. եկէ՛ք Հաւատացեալներ, երկրպագենք Քրիստոսին՝ մեր Աստուծոյն, որ իր խաչով մեծ պարգեւ մը տուաւ աշխարհին. սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ որ խաչուեցար մեզի համար, ողորմէ՛՛ մեզի:

ԽԱՉԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՃ

Այս շաբթուան ընթացքին ձեր առօրեայ աղօթքներուն վերջաւորութեան աւելցուցէ՛ք «*Խաչի քո Քրիստոս*» շարականը: Գոց սորվեցէ՛ք անոր բառերը, եւ երկրպագեցէ՛ք զանոնք արտասանած ժամանակ: Խորհեցէ՛ք Քրիստոսի սիրոյն ու զոհաբերութեան մասին: Մտածեցէ՛ք, թէ դուք ի՞նչ կրնաք ընել ուրիշներուն եւ փորձեցէ՛ք ընել այդ բարիքը:

ՅԱԿՈԲԻ 12 ԶԱՄԱԿՆԵՐՈՒՆ ՄԵՐՈՒՆՂՆԵՐԸ

Քարտեղ ցոյց կու տայ, որ Աւետեաց երկիրը ինչպէ՞ս բաժնուեցաւ Յակոբի սերունդներուն միջեւ: Իւրաքանչիւր բաժին կէտերով սահմանազօնուած է: Իսրայէլացի տուեալ ցեղին անունը գրուած է մեծ տառերով:

ա) Բաց գոյնով ներկեցէ՛ք Իսրայէլի ցեղերուն շրջանները (որպէսզի անունները երեւին): Ասիկա կատարելէ առաջ ուշադիր եղէ՛ք հետեւեալին.

1. Գտէ՛ք այն ցեղը որ ունի երկու փոքր հողամասեր: Գրեցէ՛ք անոր անունը _____

Այդ հողամասերը նոյն գոյնով պէտք է ներկուին:

2. Յովսէփի անունը քարտէսին վրայ պիտի չգտնէք: Ահա թէ ինչո՞ւ Յակոբ Յովսէփին երկու գաւակները իր գաւակները նկատեց: Գտէ՛ք անոնց անունները ԾՆ 48.1, 20 հատուածներուն մէջ եւ այստեղ գրեցէ՛ք.


Նշենք, որ երկրորդ գաւակն ալ երկու հողամաս ունէր: Իւրաքանչիւր գաւակի հողամասը տարբեր գոյնով ներկեցէ՛ք:

բ) Ուշադրութեամբ կարդացէ՛ք ԾՆ՝ դոց գիրքի 49-րդ գլուխը եւ գտէ՛ք Յակոբի (Իսրայէլի) մնացած տասը գաւակներուն անունները: Անոնցմէ իւրաքանչիւրին հողամասը տարբեր գոյնով ներկեցէ՛ք:

1. Ծանօթութիւն: Անոր գաւակներէն միայն մէկը հողամաս չստացաւ: Ասիկա քահանաներու տոհմն էր եւ որ պէտք է միայն Աստուծոյ զօհաբերութիւն կատարելով զբաղէր: Կարդա՛՛ Բ. Օր 10.8-9, Յս 13.33:

Գրեցէ՛ք այդ տոհմին անունը _____

2. Կարդա՛՛ Ա. ՄՆ 23.1-6, 24-32, որպէսզի ծանօթանաս քահանաներու պարտականութիւններուն եւ գիտնաս թէ անոնք ինչպէ՞ս կ'ապրէին:



Պատմական կարեւոր վայրեր

Քարտէսին վրայ գտէ՛ք հետեւեալ աշխարհագրական տեղանունները եւ անոնց քով շրջանակի մը մէջ գրեցէ՛ք համապատասխան թիւերը.

1. Յորդանան գետ (ասիկա իրարու կը միացնէ ջուրի երկու աւազաններ):
2. Միջերկրական ծով:
3. Մեռեալ ծով (Հարաւային Պաղեստինի ջրային ամենէն մեծ տարածութիւնը):
4. Գալիլիոյ լիճ (ջուրի փոքրիկ աւազան Յորդանանի հիւսիսային մասին մէջ):
5. Գտէ՛ք հետեւեալ քաղաքները եւ ընդգծեցէ՛ք անոնց անունները. Երուսաղէմ, Երիքով, Քերթոն, Կաղես, Սիւքէմ, Բեթէլ, Սեւով: Այլ անցուցէ՛ք ձեր կարդացած նիւթերը: Ի՞նչ գիտէք այդ քաղաքներուն մասին: Քարտէսին վրայ մշտեցէ՛ք Քանանի այն տեղերը, ուր Սուրբ Գիրքէն ձեզի ծանօթ դէպք մը պատահած է:

ԻՍՐԱՅԷԼԻ ԴԱՏԱԴՈՐՆԵՐԸ ԵՒ ԹԱԳԱԴՈՐՆԵՐԸ

Աստուածաշունչի բովանդակութեան երբ մայիք, պիտի տեսնէք որ Աստուածաշունչը երկու մասերու բաժնուած է՝ Զին եւ Նոր Կտակարաններ: «Կտակարան» բառը կը նշանակէ ուխտ, համաձայնութիւն Աստուծոյ եւ մարդուն միջեւ:

Օրէնքի գիրքեր եւ պատմական գիրքեր

Օրէնքի եւ պատմական գիրքերը Զին Կտակարանի առաջին երկու մասերն են: Զին Կտակարանի առաջին հինգ գիրքերը կը կոչուին Զնգամատեան, կամ՝ Օրէնքի Գիրքեր: Այս գիրքերը մեզի կը պատմեն աշխարհի ստեղծագործութեան, Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին, ինչպէս նաեւ Տիրոջ կողմէ տրուած այն Օրէնքներուն մասին, որոնց անառարկելի կերպով պէտք է հետեւէր Իսրայէլի ժողովուրդը: Այս գիրքերը նաեւ Մովսիսական կը կոչուին, որովհետեւ զանոնք կազմողը Մովսէս, այդ գիրքերուն մէջի կեդրոնական դէմքն է: Պատմական գիրքերը կը ներկայացնեն Աստուծոյ ժողովուրդին պատմութիւնը, Աւետեաց երկիր մտնելէ յետոյ: Երբեմն մարդիկ կը մոռնային Աստուծոյ կատարած բարիքները: Աստուած դատաւորներ նշանակեց՝ Գեղէոնը, Սամսոնը եւ Սամուէլը, որպէսզի անոնք առաջնորդեն Աստուծոյ ժողովուրդը: Սակայն մարդիկ փափաքեցան թագաւոր ունենալ եւ Տէրը ժամանակի ընթացքին անոնց թագաւորներ ալ տուաւ՝ Սաւուղը, Դաւիթը եւ Սողոմոնը: Զետագայ թագաւորներէն ոմանք իրենց հպատակներուն հետ միասին հեռացան Աստուծմէ ու Անոր խօսքերէն եւ շատ մը չարիքներ բերին իրենց զբոստում: Անոնք նոյնիսկ կորսնցուցին Զնգամատեանի ձեռագիրը, զոր վերջստին գտաւ Յովսէփ թագաւորը, որ նաեւ որոշեց վերականգնել Տաճարը:

Աստուածաշունչէն գտէ՛ք Զնգամատեանը եւ պատմական գիրքերը: Փոքրիկ քարտերու վրայ գրեցէ՛ք անոնց անունները:



Դաւիթ թագը եւ Տաճարին նախագիծը կը փոխանայէ իր պառակին Սողոմոնին

ԱՍՏՈՒԾՈՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ, ԴԱՏԱԴՈՐՆԵՐԸ ԵՒ ԹԱԳԱԴՈՐՆԵՐԸ

Աստուած Դաւիթին խոստացաւ. «Քեզ պիտի ազատենք քու թշնամիներէ եւ Տէրը քեզի պիտի ըսէ, որ իրեն համար տուն մը չիմես: Երբ քու կեանքիդ օրերը վերջանան ու նախահայրերուդ գիրկը դառնաս, քեզմէ ետք քու սերունդէդ նկատուող զաւակդ պիտի բարձրացնեն եւ անոր թագաւորութիւնը պիտի հաստատեն: Ան իմ անուան համար տուն պիտի չիմէ եւ ես անոր աթոռը յաւիտեան կանգուն պիտի պահենմ»:

Յորդանանը անցնելէ ետք, Նաւի որդին Յեսու, Իսրայէլի 12 ցեղերը առաջնորդեց Աւետեաց երկիր, իբրեւ Աստուծոյ եւ Իսրայէլացիներու ուխտի նորոգում: Անոնք իրենց մէջ բաժնեցին Քանանը եւ հաստատուեցան այնտեղ ու անոր շրջակայքը: Յովսէփի զաւակներուն՝ Եփրեմի եւ Մանասէի ցեղերը վիճակահանութեամբ հողամասեր ստացան երկրի կեդրոնական մասին եւ հիւսիսային շրջաններուն մէջ: Անոնք անջատուած էին միւսներէն: Աստուածաշունչը երբեմն 10 ցեղերու թագաւորութիւնը կ'անուանէ «Եփրեմ», որուն մայրաքաղաքը Սամարիան էր, որ կը գտնուէր Եփրեմի ցեղի հողամասին վրայ: Ռութէնի եւ Յուդայի ցեղերուն ժառանգ ինկան Քանանի հարաւային կողմերը: Դաւիթ թագաւոր Յուդայի ցեղէն կը սերել: Ան միացուց հարաւային ու հիւսիսային թագաւորութիւնները եւ մեծագոյն թագաւորներէն մին էր: Ան իր միացեալ թագաւորութեան մայրաքաղաքը դարձուց Երուսաղէմը, իսկ անոր զաւակը՝ Սողոմոն, Տաճար կառուցեց այնտեղ:

Իսրայէլի ցեղերուն տեղերը գիտնալու համար, տես՝ նախորդ էջի քարտերը:

Իսրայէլի ցեղերը երբ մուտք կը գործէին Աւետեաց երկիր, Աստուած ցոյց տուաւ, թէ ինչպէ՞ս կ'ուզէ որ ըլլայ անոնց կեանքը: Ան հրեաներուն պատուիրած էր որ գրաւեն երկիրը, սակայն չամուսնանան քանանացի աղջիկներու հետ եւ չխառնուին սուտ աստուածներ պաշտող տեղացիներուն հետ: Իսրայէլացիները խոստացան ենթարկուիլ եւ Աստուծոյ ծառայել, սակայն երբեմն կը թերանային իրենց խոստումին մէջ: Անոնք կ'ամուսնանային օտար կիներու հետ, որոնք սուտ աստուածներ կը պաշտէին:

Իսրայէլի զաւակները երբ հեռացան Աստուծմէ, Աստուած դադրեցաւ զիրենք պաշտպանելէ եւ այդ միջոցին էր որ թշնամիներ իրենց յաղթանակը կը տօնէին: Երբ իրենք դարձի կու գային իրենց մեղքերէն ու զԱստուած օգնութեան կը կանչէին, Ան միշտ կ'օգնէր անոնց եւ առաջնորդներ կու տար անոնց, որպէսզի պարտութեան մատնեն իրենց թշնամիները: Այդ առաջնորդները կը կոչուէին Դատաւորներ:

Դատաւորները Աստուծոյ ժողովուրդը կ'առաջնորդէն

Դատաւորները կը նմանէին հին շրջանի նահապետներուն կամ անոնցմէ ետք կառավարող թագաւորներուն: Անոնք խորհուրդ կու տային եւ կ'առաջնորդէին ճակատամարտերը: Անոնք կ'ոգեւորէին ու կը մխիթարէին նեղութեան մէջ եղողները: Դատաւորներէն ոմանք հողամշակ էին, ուրիշներ՝ զինուորական, կային նաեւ դատաւորներ որոնք հովիւ էին: Դատաւորները յաջողեցան Իսրայէլի ցեղերուն միասնութիւնը վերականգնել, միացնելով զանոնք թշնամիներուն դէմ:

Նշանաւոր դատաւորներ եղան Դեփորան, Գեղէոնը, Սամսոնը եւ Սամուէլը: Դատաւորները ժողովուրդին կը յիշեցնէին, որ իրենց յաջողութիւնն ու յառաջդիմութիւնը կախեալ էին Աստուծոյ Օրէնքներուն հետեւելէն: Եւ երբ ժողովուրդը մոռնայ այս՝ թշնամիները կը տիրեն իրենց վրայ:

Սամուէլ եւ Սաւուղ

Սամուէլ վերջին դատաւորներէն մէկն էր, որ Տաճարին մէջ մեծցած էր Զեղի քահանային ձեռքերուն մէջ: Սամուէլ Աստուծոյ ծառան ըլլալուն, միշտ կը յաջողէր յաղթել Իսրայէլի թշնամի եղող փղշտացիներուն: Ծերացած ըլլալով՝ ան իր բոլոր պարտականութիւնները յանձնեց Յովել եւ Աբիա զաւակներուն, սակայն անոնք իրենց պարտականութիւններուն մէջ թերացան եւ ազահութեան գիրկը իյնալով՝ միայն մուկներ կը ստանային եւ անարդարութեամբ կը վարուէին ժողովուրդին հետ: Ժողովուրդը հրաժարեցաւ իրենց ենթարկելէ եւ Սամուէլէն խնդրեցին թագաւոր մը օծել իրենց համար, որպէսզի շրջակայ ժողովուրդներուն պէս իրենք ալ ունենային իրենց թագաւորը:

Սամուէլ չէր ուզեր թագաւոր մը նշանակել: Ան լաւ կը ճանչնար ժողովուրդը եւ գիտէր որ անոնք շուտով պիտի մոռնան թէ ունին միայն մէկ Թագաւոր, որ Աստուած ինքն է: Բայց Աստուած, Սամուէլին ըսաւ, որ թագաւոր մը նշանակէ: Օր մը, երիտասարդ մը քաղաք եկաւ, որ-

պէսզի իր հօր կորստած էշերը գտնէ: Պատանին օգնութիւն խնդրեց ծերունի դատաւորէն: Աստուած Սամուէլին ըսաւ, որ ճիշդ այդ պատանին պէտք է թագաւոր կարգէ: Սամուէլ սուրբ իւղին շիշը առաւ եւ պատանին գլխուն վրայ թափեց եւ օրհնեց զայն (այս արարողութիւնը հետագային «Օծում» սկսաւ կոչուիլ): Ապա դատաւորը կանգնեց Իսրայէլի ցեղին բոլոր ներկայացուցիչները եւ անոնց ցոյց տուաւ իրենց մօր թագաւորը՝ Սաւուղը:

Սաւուղ եւ Դաւիթ

Սկզբնական շրջանին Սաւուղ լաւ թագաւոր մըն էր: Թշնամիներուն դէմ տարած իր բազմաթիւ յաղթանակներով՝ ժողովուրդին վստահութիւնը շահեցաւ ան: Երբեմն սակայն, ան կը մոռնար Աստուծոյ պատուիրանները եւ չէր կատարեր զանոնք: Ան շատ ինքնավստահ անձ էր: Ան նոյնիսկ չսիրեց պատանի Դաւիթը, լսելով որ ան լաւ պատերազմիկ եղած է: Սաւուղ կ'ուզէր ամեն ինչ առանձին ընել, որովհետեւ մէջը չար ոգի մտած էր եւ նախանձ: Ան այլեւս չէր կրնար պատուով ծառայել Տիրոջ ու ժողովուրդին: Ան երբ մեռաւ Գեղբուս լեռան մօտ՝ թագաւորութիւնը անցաւ Դաւիթին:

Դաւիթ մեծ թագաւոր մը եղաւ: Ան յաճախ Աստուծմէ օգնութիւն կը խնդրէր, Անոր փառք կու տար իր յաղթանակներէն ետք: Դաւիթ Երուսաղէմը մայրաքաղաք դարձուց եւ հոն փոխադրեց Ուխտի Տապանակը, որպէսզի դրուէր Խորանին վրայ, իբրեւ խորհրդանշան Աստուծոյ ներկայութեան: Դաւիթ ինքն ալ միշտ գոհ չէր պահեր զԱստուած: Սակայն մեղքեր գործելէ ետք՝ միշտ կը զղջար ու դարձի կու գար եւ Աստուծմէ ներում կը խնդրէր (կարդացէ՛ք 50-րդ Սաղմոսը, ուր Դաւիթ ներողութիւն կը խնդրէ Աստուծմէ):

Սողոմոն թագաւոր

Դաւիթ իրեն յաջորդ ընտրեց իր Սողոմոն որդին: Սողոմոն Աստուծմէ իմաստութիւն խնդրեց իբրեւ շնորհք եւ շատ հեռուններէն իր մօտ կու գային մարդիկ, որպէսզի իր խրատները լսեն: Անոր պալատը այնքան փառաւոր էր, ինչքան փարաւոնին պալատը Եգիպտոսի փառքի շրջանին: Սողոմոնին ամենէն կարելոր գործը եղաւ Աստուծոյ հոյակապ Տաճարին կառուցումը: Այդ սքանչելի շինութեան մասին կրնաք կարդալ Թագաւորաց Գ. գիրքին մէջ (Գ. Թգ 6.2-36):

Թագաւորը ծանր տուրքեր եւ պարտաւորութիւններ սահմանեց, որպէսզի Իսրայէլի տարածքին շինարարական ծրագիրներ իրագործէ: Ան յարաբերութիւններ մշակեց նաեւ ուրիշ թագաւորներու հետ եւ օտար ազգերէն բազմաթիւ հարձեր ունեցաւ: Անոնք իրենց հետ բերին իրենց սուտ աստուածներուն պաշտամունքը եւ Սողոմոն ինքն եւս, իր յառաջացեալ տարիքին, ինկաւ անոնց ազդեցութեան տակ եւ զոհասեղաններ շինել տուաւ Աստատրէի եւ Մեղքոմի համար: Թագաւորին այս սայթաքումը ունեցաւ իր հետեւանքները: Անոր մահէն ետք թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ: Պէտք էր ուրիշ կերպ մը խորհիլ՝ Աստուծոյ ժողովուրդը ճշմարիտ Աստուծոյ վերադարձնելու համար:

Սաղմոսներ

Սաղմոսները Տաճարին մէջ կատարուող արարողութիւններուն մաս կը կազմէին, որոնցմէ շատերը Դաւիթ թագաւոր ինք գրած էր: Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, յաճախ կ'աղօթէր Տաճարին մէջ եւ գոց գիտէր սաղմոսները: Շատ անգամ իր ուսուցումներուն ընթացքին կը մէջբերէր շատ մը սաղմոսներ: Քրիստոնէութեան առաջին շրջանէն սկսեալ՝ սաղմոսները մաս կազմեցին եկեղեցական արարողութիւններուն: Երբ ներկայ գտնուինք եկեղեցական արարողութիւններուն, շատ մը սաղմոսներ կը լսենք, որոնք կ'ընթերցուին ու կ'երգուին եկեղեցւոյ մէջ: Սուրբ Գրային աւանդութեան մէջ Սաղմոսարանը կը կոչուի նաեւ «Գիրք Սաղմոսաց Դաւթի»:

Մեր անձնական աղօթքներուն ատեն ալ կրնանք օգտագործել սաղմոսները: Պէտք է սաղմոսները կարդալ՝ կրկնելով սաղմոսերգու Դաւիթ թագաւորին գեղեցկահիւս եւ յուզիչ բառերը: Սաղմոսները ընդհանրապէս կը բաժնուին չորս տարբեր խումբերու՝ փառաբանական-պաղատական, վստահութեան եւ գոհութեան, ուսուցողական եւ մեխական: Ինչպիսի ապրումներ ալ ունենանք, միշտ ալ կրնանք Տիրոջ դիմելով սաղմոս մը գտնել, որ կրնայ այդ զգացումը սքանչելի պարզութեամբ արտայայտել: Բազմաթիւ մենակեացներ սաղմոսագիրքը գոց սորված են եւ անոր բառերը կրկնելով աղօթած Աստուծոյ:



Կարդացէ՛ք ծախ կողմը նշուած սաղմոսները: Ապա աջ սիւնակէն ընտրեցէ՛ք անոնց բովանդակութեան ճշգրիտ իմաստը ներկայացնող մախադասութիւնը եւ սաղմոսի թիւին կողքին գրեցէ՛ք անոր համապատասխանող մախադասութեան առաջին տառը:

- Սաղմոս 85** Ա. Դաւիթ այս աղօթքը երգած է խոստովանելով Աստուծոյ Բերսաբէի հետ իր կատարած մեղքը (Բ. Թգ 12.1-5): Ասիկա սքանչելի աղօթք մըն է նաեւ մեզի համար, մանաւանդ երբ Աստուծմէ կը խնդրենք որ մեր մեղքերը ներէ:
- Սաղմոս 8** Բ. Սաղմոս, որ բոլոր արարածներուն կոչ կ'ուղղէ փառաբանել զԱստուած: Կը կարդացուի առաւօտեան ժամերգութեան ընթացքին:
- Սաղմոս 50** Գ. Երեկոյեան ժամերգութեան Սաղմոս, որ մեզի կ'օգնէ դիմում կատարելու Աստուծոյ երբ նեղուած ենք եւ կարիքը ունինք Անոր սիրոյն ու օգնութեան:
- Սաղմոս 103** Դ. Աւետաբեր Սաղմոս: Աստուած մեզի կեդրոնական տեղ տուաւ իր ստեղծագործութեան մէջ: Այս սաղմոսին երկրորդ տունը մանուկներուն կողմէ արտասանուած մարգարէութիւն է, երբ Յիսուս Քրիստոս Երուսաղէմ մտաւ (տե՛ս Մտ 21.15, 16):
- Սաղմոս 148** Ե. Սաղմոս, որ մեզի կը յուշէ մեր յոյսերն ու ձգտումները Աստուծոյ վրայ դնել, որովհետեւ Ան է մեր միակ փրկութիւնը:
- Սաղմոս 67** Զ. Սաղմոս, որ կը շեշտէ թէ Տէրն է մեր օգնականը: Կը կարդացուի երեկոյեան ժամերգութեան Դամբարձի շարականէն առաջ:
- Սաղմոս 3** Է. Սաղմոս, որ կը վստահեցնէ մեզ, թէ միշտ կրնանք մեր յոյսը դնել Աստուծոյ վրայ:
- Սաղմոս 61** Ը. Սաղմոս, որու առաջին համարը Յարութեան ճաշու Ալէլուիան է, ու կը կարդացուի Յարութեան Կիրակիներու ճաշու Աւետարանէն առաջ:

Աստուածաշնչական պատմութիւններ եւ յիշողութիւններ

Պատահա՞ծ է երբեք, որ բան մը չմոռնալու համար թուղթի վրայ գրած էք այդ: Բնաւ օրագրութիւն պահա՞ծ էք: Ուրիշներու օրագրութիւնները տեսա՞ծ էք ոչ միայն ձեռագիր, այլ նաեւ նկարներով, որոնք մշեմ անցեալին կատարուած դէպքեր: Կրնայ ըլլալ նաեւ որ ըսած ըլլաք՝ «Կը յիշե՞ս, երբ...» եւ կը պատմէք այն պատմութիւնը, որ պատահած է: Նախորդ դասի ընթացքին սորված էինք, որ Աբրահամի ժամանակ մարդիկ Աստուծոյ խօսքը կը յիշէին եւ Անոր կատարած գործերը բանաւոր կերպով իրարու կը պատմէին, ինչպէս նաեւ իրենց զաւակներուն: Այսօր ալ մոյմը կ'ընենք: Նկարագարող եւ գրաւոր պատմութիւնները կ'օգնեն որ կարգ մը բաներ աւելի լաւ յիշենք:

Սուրբ Գիրքը կ'օգնէ մեզի զԱստուած յիշել

Եկեղեցին Աստուծոյ տունն է: Մենք միշտ կը յիշենք, որ Աստուած ստեղծած է աշխարհը ու բոլորիս կեանք պարզեւած: Մենք նաեւ գիտենք, որ առաջին մարդիկը անհնազանդ գտնուեցան Աստուծոյ պատուիրամին, որովհետեւ Աստուծոյ պէս կ'ուզէին ըլլալ: Աստուածաշունչը մեզի կը պատմէ Նոյի, Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ անոնց սերունդներուն մասին, որոնք Աստուծոյ կամքը կը փորձէին կատարել: Այստեղ կան նաեւ Հիմ Կտակարանային շարք մը նահապետներու եւ անոնց սերունդներուն պատմութիւնները, որոնք չեն եմքարկուած Աստուծոյ: Աստուածաշնչական պատմութեան ընթացքին մարդիկ միշտ կը յիշէին իրենց մախախայրերը, որոնք հաւատարիմ եղած էին Աստուծոյ: Սուրբ Գիրքի ամէնէն գլխաւոր գաղափարը այն է, որ Աստուած մեզ կը սիրէ եւ կը հոգայ մեր մասին, մոյմիսկ այն միջոցին երբ մենք կը մոռնանք զինք: Աստուածաշունչը օգտակար կ'ըլլայ, որ յիշենք զԱստուած եւ Անոր հաւատարիմ մարդիկը:



Անթիլիասի Մայր Խորանը

Յիշատակութիւն եկեղեցւոյ մէջ

Եկեղեցին միշտ կ'օգնէ մեզի յիշել զԱստուած եւ Անոր հաւատարիմ բոլոր մարդիկը: Եկեղեցւոյ մէջ մենք կը լսենք ընթերցումներ Սուրբ Գիրքէն եւ կը տօնենք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, առաքեալներուն եւ սուրբերու կեանքին բոլոր կարեւոր դէպքերը: Կը յիշենք նաեւ այն անձերը, որոնք հաւատարիմ եղած էին Աստուծոյ, կը հետեւէին Անոր եւ կը փորձէին կատարել Անոր կամքը: Կը յիշենք այն անձերը, որոնք բժախնդրութեամբ կը գործադրէին Աստուծոյ պատուիրանները, մոյմիսկ մահուան գնով: Կը յիշենք բոլոր այն անձերը, որոնք հաւատքով վախճանած են, յոյս ունենալով Յարութեան: Եւ մենք Աստուծմէ կը խնդրենք ու կ'ըսենք. «*Բարերար եւ բազումողորմ Աստուած, քու անմոռաց գիտութեամբդ եւ անբաւ մարդասիրութեամբդ յիշէ բոլոր քեզի հաւատացողները եւ ողորմէ՛:*»

«Յիշեա՛ մեզ, Տէ՛ր...»

Այս խօսքերը կը կարդացուին կամ կ'երգուին ժամերգութեանց ընթացքին: Աստուծմէ կը խնդրենք որ մեզ յիշէ, ինչպէս նաեւ յիշէ մեր ընտանիքի անդամները, մեր ընկերները եւ մոյմիսկ մեր թշնամիները, յիշէ մանաւանդ անոնք, որոնք հիւանդ են եւ կը տառապին, բոլոր անոնք՝ որոնք Տիրոջ կարիքը ունին:

Կարդացէ՛ք հետեւեալ բառերը եւ բաղդատեցէ՛ք զանոնք եկեղեցական արարողութիւններու ժամանակ ձեր լսած երգեցողութիւններուն եւ ընթերցուած աղօթքներուն հետ: Կրնաք օգտագործել նաեւ աղօթագիրքերը:

«Յիշէ՛ երբ արքայութեամբդ զաս Մեծ Օրը. արժանի ըրէ՛ ողորմութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան»:

«Մեզ ալ յիշէ՛ Աստուծոյ Անմահ Գառնուկին առջեւ»:

«Որպէսզի յաւիտեան չսասանի, յիշատակը յաւիտեան մնայ»:

«Տէ՛ր, կը գոհանանք քեզմէ, որ կերակրեցիր մեզ քու անմահական սեղանէն՝ բաշխելով մարմինդ եւ արիւնդ որպէս փրկութիւն աշխարհի ու կեանք՝ մեր հոգիներուն»:

Նմեցեցելոց հոգեհանգստեան պաշտօն

Ս. Պատարագի Խորհուրդի սկզբնաւորութեան ժողովուրդը կը խնդրէ

Սղ 111.8

Գոհաբանական երգ, Ս. Դաղորդութենէն յետոյ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ

Աստուածաշունչին մեջեն երբեմն դժուարութեամբ կը գտնենք մեր փնտռած հատուածները: Կը պատահի նաեւ որ դժուարութեամբ յիշենք այն գիրքին անունը, ուր կը գտնուի այդ հատուածը: Այնքան ժամանակ ալ չենք կրնար տրամադրել ամբողջ Աստուածաշունչը կարդալով մեր փնտռած հատուածը գտնելու համար:

Աստուածաշունչի Համաբարբառ, կամ Համաբարբառ Սուրբ Գրոց

«Համաբարբառ» բառը գործածուած է համապատասխանութիւն, ներդաշնակութիւն իմաստներով: Աստուածաշունչի համաբարբառը, ընդհանուր հասկացողութեամբ, յատուկ կերպով պատրաստուած գիրք է, որուն նպատակն է Աստուածաշունչի տարբեր գիրքերուն միջեւ եղած բնագիրներուն համեմատութիւնը կատարել:

Սուրբ Գրոցի պատմութեան մէջ համաբարբառներուն հնագոյնը Տատիանոս Ասորիի «Համաբարբառ Աւետարան»ն է, որ գրուած է 180 թրւակահին՝ Աւետարաններուն վաւերականութիւնը խնդրոյ առարկայ դարձնող աղանդաւորական տեսակետները մերժելու եւ Սուրբ Գրոց վաւերականութիւնը փաստելու համար: Համաբարբառը կը կազմուի այբբենական կարգով, բառարանի նման: Հոն կը գտնենք կարելորդ նշանակութիւն ունեցող բառեր եւ անուններ: Բառերը ընտրուած են եւ անոնց կողքին կը գտնենք նախադասութիւններ, որոնք Աստուածաշունչի համապատասխան հատուածներէն քաղուած են: Իւրաքանչիւր նախադասութեան մէջ փնտռուած բառը միայն իր առաջին տառով նշուած կ'ըլլայ՝ տեղի խնայողութիւն կատարելու նպատակով: Նախադասութեան աջ կամ ձախ կողմը անոր վերաբերեալ արծանագրութիւն կայ, Աստուածաշունչի տուեալ գիրքին, անոր գլուխներուն եւ համարներուն մասին: Օրինակ. **բերան**

Ծն 4.11 – երաց **գբերան** իւր ընդունիլ զարին 8.1 – ուներ տերեւ ծիթնույ շիղ ի **բե**.

Ել 4.11 – Ո՞վ ետ **բե**, մարդոյ

Թւ 4.27 – արասցեն ըստ **բե**, Ահարոնի

(«Համաբարբառ Հին եւ Նոր Կտակարանաց», Երուսաղէմ, 1895):



Եսայի մարգարէին տեսիլքը եւ լուրը, զոր ան պէտք է փոխանցէր Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին:

ԱՏՏՈՒԾՈՅ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

«Եւ ես լսեցի Տիրոջ ծայմը որ կ'ըսէր. Ո՞վ դրկեն եւ ո՞վ կ'երթայ մեզի համար: Եւ ես ըսի. Ահա եմ, գի՛ն դրկէ»:

Սողոմոնի թագաւորութեան վերջին տարիներուն մեծ թիւով հրեաներ ուրացան իրենց կրօնը: Պալատականներէն մին՝ Յերոբովամ, ապստամբեցաւ Սողոմոնի դէմ եւ Իսրայէլի թագաւորութիւնը սկսաւ կործանիլ: Սողոմոնի մահէն ետք, թագաւորութիւնը երկուքի բաժնուեցաւ, հիւսիսայինը՝ Իսրայէլի՝ Յերոբովամի գլխաւորութեամբ, իսկ հարաւայինը՝ Յուդայի՝ Սողոմոնի զակին՝ Ռոբովամի գլխաւորութեամբ: Մեծ թագաւորներուն «ոսկեդարը» պատմութեան անցաւ: Աստուած մարգարէներուն կոչ ուղղեց, որ մարդոց մօտ երթան ու զանոնք զգուշացնեն, ըսելով որ դատաստանի՝ «Աստուծոյ մեծ օրը» կը մօտենայ: Այդ մարգարէներէն եղան Ամովս, Եղիա, Եղիսէ, Միքէ, Եսայի, Երեմիա եւ Դանիէլ: Անոնցմէ չորսը կը նկատուին մեծ մարգարէներ, իսկ մնացեալ 12-ը՝ փոքր մարգարէներ:

Մարգարէներ

Մարգարէ կը նշանակէ սկիզբէն լուր տուող: Աստուածաշունչին մէջ մարգարէները ապագան տեսնելու աստուածատուր կարողութեամբ օժտուած անհատներ, տեսանողներ եղած են: Մարգարէներուն կոչումն էր մարդոց հաղորդել Աստուծոյ կամքն ու պատուէրները:

Հայ մատենագրութեան մէջ մարգարէներուն նուիր-

ուած շարականներ ու զանազան բանաստեղծութիւններ շատ կան: Մասնաւորաբար ակնյայտ են Մովսէս Խորենացիի, Ս. Ներսէս Շնորհալիի եւ Ներսէս Լամբրոնացիին շարականները:

Մարգարէներու մանրանկարները կարելոր տեղ կը գրաւեն միջնադարեան հայ մանրանկարչութեան մէջ: Մարգարէներուն պատկերները գծուած կը գտնենք յատկապէս Աստուածաշունչի ձեռագիրներուն մէջ, տուեալ մարգարէութեան կցուած:



Դժուար ժամանակաշրջան՝

բաժնուած թագաւորութեան համար

Երբ թագաւորութիւնը բաժնուեցաւ, Իսրայէլի եւ Յուդայի թագաւորներուն մեծ մասը բարեպաշտ անձեր չեղան եւ նոյնիսկ կը ստիպէին ժողովուրդը, որ տարբեր կուռքեր պաշտէ: Երկու թագաւորութիւններն ալ միշտ կը վախճային օտար պետութիւններէն: Անոնց արտայայտած անհաւատարմութեան հետեւանքով, Աստուած այլեւս չէր հովանաւորեր Իսրայէլն ու Յուդան, սակայն կը հետեւէր ամոնց կեանքին: Ան մարգարէներ ուղարկեց, որոնք ժողովուրդը կը յորդորէին դարձի գալ իրենց ընթացքէն, սակայն անոնք չէին լսեր Տիրոջ պատգամը:

Յարձակում՝ Իսրայէլի եւ Յուդայի վրայ

Ասորիները Իսրայէլի վրայ յարձակեցան ու կործանեցին անոր թագաւորութիւնը: Բազմաթիւ արհեստաւորներ բռնի տարուեցան Ասորեստան: Յուդան տակաւին որոշ ժամանակ շարունակեց գոյատեւել, սակայն անոր վրայ ալ ծանր պատահարներ պիտի գային: Բաբելոնի մեծաթիւ բանակները իրարու ետեւէ կործանեցին Յուդայի քաղաքները, մինչեւ իսկ գրաւեցին Երուսաղէմը: Բաբելոնացիները կործանեցին թագաւորական պալատը, Տաճարը եւ նոյնիսկ քաղաքին պարիսպները փլուցոցին: Թշնամին յաջողեցաւ Յուդայի բոլոր քաղաքները գրաւել: Անոնք որոնք ողջ մնացած էին՝ կը ստիպէին Բաբելոն երթալ եւ օտար թագաւորին ծառայել:

Եղիա մարգարէն

Այդ օրերուն Աստուած Եղիա մարգարէն ղրկեց, որպէսզի մարդոց փոխանցէ Իր կամքը: Եղիան պալատ գնաց եւ Աքաաթ թագաւորը մեղադրեց Աստուծոյ դաւաճանելու համար: «Կենդանի է երկնային զօրութիւններու Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը, որուն առջեւ կը կանգնիմ», յայտարարեց մարգարէն եւ աւելցուց Աստուծոյ լսած իր խօսքերը. «...Եթէ այս տարիներուն ցօղ իջնէ կամ անձրեւ գայ, միայն իմ հրամանովս պիտի ըլլայ ատիկա»: Այս ըսելէն ետք՝ Եղիան ստիպուած էր պահուրտած մնալ: Աքաաթի կինը՝ Յեզաբել, Բահաղին կ'երկրպագէր եւ կ'ուզէր Աստուծոյ բոլոր մարգարէները սպաննել, որովհետեւ անոնք կոչ կ'ուղղէին ժողովուրդին չերկրպագել կուռքերուն: Աստուած Եղիան պահեց անապատին մէջ, աղբիւրի մը մօտ: Ագռաւները ամէն օր անոր հաց եւ միս կը բերէին: Ապա, մարգարէն հեռու երկիր մը գնաց եւ աղքատ այրի կին մը իր ունեցած վերջին պատառ կերակուրով կերակրեց զայն: Եւ ահա հրաշք պատահեցաւ. այրի կնոջ ալիւրը բնաւ չչալկսեցաւ եւ իւղի կուծը միշտ լեցուն մնաց, մինչեւ սովի տարիներուն վախճանը: Եղիան այդ այրի կնոջ մահամերձ զաւակը վերակենդանացուց՝ Աստուծոյ օգնութեան դիմելով. «Ո՛վ Տէր, ահա կը տեսնես այս այրի կինը, որուն մօտ կը բնակիմ: Անոր որդին չարչարեցիր եւ մահ պատճառեցիր»: Ան երեք անգամ փչեց անոր վրայ եւ Տիրոջ աղաղակեց

ըսելով. «Տէ՛ր իմ Աստուած, այս երեխային հոգին իրեն վերադարձուր»: Այդպէս ալ եղաւ. ան աղաղակեց, Տէրը լսեց Եղիայի ծայնը, մանուկին շունչը վերադարձաւ անոր մարմնին մէջ ու ան կենդանացաւ (տե՛ս Գ. Թգ. 17.1-24):

Երեք տարի թափառելէ ետք՝ Եղիան վերադարձաւ եւ իսրայէլացիները համախմբելով ըսաւ. «Մինչեւ ե՞րբ կաղ պիտի քալէք երկու ոտքի վրայ: Եթէ Տէրը (մեր) Աստուածն է, Անոր հետեւեցէ՛ք, իսկ եթէ Բահաղն է, անոր ետեւէն գացէ՛ք»: Եւ ան մեծ հրաշք մը գործեց ժողովուրդին եւ Բահաղի մարգարէներուն առջեւ, որպէսզի ցոյց տայ, որ Տէր Աստուածն է ճշմարիտ եւ միակ Աստուածը: Այնուհետեւ վերջ գտաւ երաշտը եւ վերջապէս յորդառատ անձրեւ տեղաց: Կարդացէ՛ք այս հրաշալի պատմութիւնը (Գ. Թգ. 18.22-40):

Անապատին մէջ՝ փախտական

Բաբելացի թագուհին՝ Յեզաբելը, շատ բարկացած էր մարգարէին յաջողութիւնները տեսնելով եւ ամէն տեղ կը փնտռէր զայն՝ սպաննել տալու համար: Եղիան վախճալով՝ պահուրտեցաւ Յուդայի անապատին մէջ: Ան քարայրի մը մէջ կը գիշերէր, Քորեբ լեռան մօտ: Մարգարէն ամբողջութեամբ յուսալքուած էր: Սակայն Աստուած յոյս ներշնչեց անոր, ըսելով. «Վաղը առաւօտուն կ'ելլես ու լեռան վրայ Աստուծոյ դիմաց կը կանգնիս: Տէրը պիտի անցնի, մեծ հով մը պիտի փչէ, սակայն Տէրը այդ հովին մէջ պիտի չըլլայ: Կրակէն յետոյ մեղմ գեփիւռ մը պիտի փչէ»: Եւ Աստուած մարգարէին ըսաւ, թէ ո՞վ պիտի ըլլայ Իսրայէլի յաջորդ թագաւորը, որ իր ձեռքով պիտի օծուէր: Եւ Տէրը Եղիային ըսաւ նաեւ, թէ ո՞վ պիտի ըլլայ յաջորդ մարգարէն եւ աւելցուց. «Իսրայէլի մէջ կը ձգես 7 հազար տղամարդ, այնպիսի անձեր, որոնք չեն ծնրադրած Բահաղին եւ շըրթներով զայն չեն համբուրած»:

Եղիա եւ Եղիս

Վերադառնալով Իսրայէլ՝ Եղիան հանդիպեցաւ Եղիսին, զոր Աստուած ընտրած էր իբրեւ յաջորդ մարգարէ: Օր մը երբ միասնաբար կը քալէին եւ երբ Յորդանան գետին մօտեցան՝ Եղիան ըսաւ. «Խնդրէ՛ եւ ինչ որ կ'ուզես կրնամ ընել, այնքան ատեն որ Տէրը քու մօտեղ դեռ չէ վերցուցած գիս»: Ան գիտէր որ իր երկրաւոր կեանքին վախճանը հասած էր: Եղիսէն պատասխանեց. «Դժուար բան խնդրեցիր, սակայն երբ իմ երկինք բարձրանալու պահուս գիս տեսնես՝ այդպէս թող ըլլայ, այլապէս՝ թող չըլլայ»: Եւ անոնք շարունակեցին իրենց ճամբան: Յանկարծ իրեղէն մօտջգներով, իրեղէն կառք մը երեւցաւ, զանոնք բաժնեց իրարմէ եւ Եղիան դարձող հովի մէջ երկինք բարձրացուց: Եւ Եղիսի ոտքերուն առջեւ ինկաւ Եղիայի կենդանիի մորթէ վերարկուն եւ ան վերցուց զայն: Երբ ան Երիքով վերադարձաւ՝ բոլորը հասկցան որ Եղիայի հոգին իջած է Եղիսի վրայ: Եղիսէն բազմաթիւ հրաշքներ կատարեց ներութեան մէջ գտնուող մարդոց համար (Դ. Թգ. 4.1-37):

ԵՍԱՅԻ

Եսայի մարգարէն ծնած է Երուսաղէմի մէջ Ն.Բ. շուրջ 765 թուականին: Ան հարուստ ընտանիքի զաւակ էր, սակայն ան շատ կը բարկանար իր շուրջ անարդարութիւն տեսնելով: Ան գիտէր, որ Աստուած չէր ուզէր որ ոմանք տառապին աղքատութեան բերումով, իսկ ուրիշներ՝ իրենց ժաւանակը հաճոյանալով ու վայելքներով անցընեն:

Եսային կը կանչուի

Եսային տակաւին շատ երիտասարդ էր, երբ Աստուած անոր հրաշալի տեսիլք մը պարգեւեց. «...Տէրը տեսայ, որ մտած էր բարձր աթոռի մը վրայ, իսկ Տաճարը լեցուն էր Անոր փառքով: Անոր շուրջ Սերովքներ կային, իւրաքանչիւրը վեց թել ունէր. երկու թելով իրենց երեսը ծածկած էին, երկուքով՝ ոտքերը եւ միւս երկուքով՝ կը թռչէին: Իրարու հետ միասնաբար կ'ըսէին. “Սո՛ւրբ, սո՛ւրբ է զօրութիւններու Տէրը եւ ամբողջ երկիրը Անոր փառքով լեցուն է”: Ես լսեցի Տիրոջ ծայնը, որ կ'ըսէր. “Ո՞վ դրկեմ, կամ ո՞վ կ'երթայ այդ ժողովուրդին մօտ”: Եւ ես ըսի. “Ահաւասիկ ես, գի՛ս դրկէ”»:

Եսային կը յորդորէր Յուդայի երեք թագաւորները: Աքազ թագաւորը այնքան կը վախճար հզօր Ասորեստանցիներէն, որ անոնց բոլոր ըսածները կ'ընէր: Ան նոյնիսկ սկսաւ անոնց հեթանոսական աղօթքները կատարել եւ իր զաւակը զոհեց կուռքերուն: Եսային Աքազ թագաւորը կը յորդորէր, որ Աստուծոյ դիմէ ու դադրի վախճալէ: Ան նոյնիսկ Աքազին ցոյց տուաւ Աստուծոյ մշանը, որ կ'ըսէր. «Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչուի»: Սակայն Աքազ կ'անտեսէր զԱստուած ու կը շարունակէր Յուդան Ասորիներուն յանձնել:

ԵՐԵՄԻԱ

Երեմիա մարգարէն ծնած է Մանասէ թագաւորին իշխանութեան վերջին տարիներուն: Անոր հայրը՝ Քեղկիա, քահանայ էր Անաթօթի՝ Բենիամինի երկրին մէջ: Այդ իսկ պատճառով Երեմիան ինք ալ քահանայ էր: Ան Աստուծոյ կը ծառայէր 30 տարիներէ ի վեր՝ Ովսիայի թագաւորութեան ժամանակաշրջանէն սկսեալ մինչեւ Երուսաղէմի անկումը, երբ Աստուծոյ ժողովուրդը գերեվարուեցաւ Բաբելոն:

Երեմիան կը կանչուի

Տէրը իր խօսքը ուղղեց անոր ու ըսաւ. «Դեռ որովայնի մէջ քեզ չստեղծած՝ ընտրեցի քեզ, եւ դեռ արգանդէ դուրս չեկած՝ սրբազործեցի ու հեթանոսներուն վրայ մարգարէ կանգնեցի քեզ»: Եւ Երեմիան ըսաւ. «Տէ՛ր, ո՞վ Տէր, բայց ես խօսիլ անգամ չեմ գիտեր, որովհետեւ երեխայ եմ»: Եւ Տէրը ձեռքը երկնցնելով անոր շրթունքներուն դպաւ ու ըսաւ. «Ահա իմ խօսքս քու բերանդ դրի: Ահա այսօր քեզի իշխանութիւն տըւի ազգերու եւ թագաւորութիւններու վրայ, որպէսզի զանոնք քանդես ու խորտակես, կործանես ու աւերես, կառուցես ու հաստատես»: Աստուած Երեմիային ըսաւ նաեւ, որ անոնք պիտի հետապնդեն զինք եւ անհաւատարիմ Յուդան պիտի տապալի: Տխուր սրտով, սակայն հաստատական, այն համոզմամբ որ Աստուծոյ կամքը պիտի կատարէ՝ մարգարէն ուղղուեցաւ դէպի Երուսաղէմ, որպէսզի հոն ժողովուրդին քարոզէ Աստուծոյ ճշմարտութիւնները: Ովսիա թագաւորը կը փորձէր ժողովուրդին հաւատքը մաքրել հեթանոսական ազդեցութիւններէն, սակայն անոր ազգի զաւակը՝ Յովակիմը, զահ բարձրանալով՝ դարձեալ սկըսաւ հեթանոսութիւն տարածել: Քիչ մնաց որ Երեմիան սպաննէին անոր անկեղծ ու քաջ արտայայտութիւններուն համար, սակայն ան փրկուեցաւ մահէն: Ան շատ չարչարանքներ ու անարգանքներ կրեց, սակայն բնաւ չդադրեցաւ Աստուծոյ պատուէրները փոխանցելէ: Երեմիան միշտ Աստուծոյ խօսքը կը քարոզէր մարդոց, նոյնիսկ այն միջոցին, երբ մարդիկ կը մերժէին ընդունիլ զայն:

ԵԶԵԿԻԷԼ

Եզեկիէլ մարգարէն Յուդայի Բուզի քահանային զաւակն էր: Անոր ընտանիքը առաջին անգամ Բաբելոն աքսորուածներէն էր: Աքսորուածներուն կեանքը Բաբելոնի մէջ այնքան ալ դժուար չէր, սակայն մարդիկ կը տառապէին հայրենիքէն հեռու ըլլալով եւ կը փափաքէին իրենց տունէրը վերադառնալ: Ձիրենք կը տանջէր այն, որ իրենց կեանքի ձեւը ամբողջութեամբ փոխուած էր (կարդացէ՛ք 136-րդ սաղմոսը): Դժուար էր նաեւ նոր դրացիներուն կենցաղին հակադրուիլը: Եզեկիէլ միշտ կոչ կ'ուղղէր մարդոց, որ Մովսէսի Օրէնքները պահեն, ինչպէս նաեւ Շաբաթ եւ միւս սուրբ օրերը:

Եզեկիէլ կը կանչուի

Եզեկիէլ Բաբելոնի մէջ լսեց Աստուծոյ կոչը: Աստուած հրաշալի տեսիլք մը տուաւ անոր (տե՛ս Եզ. 1.4-28): Մարգարէն կը պատմէ, որ տեսիլքը տեսնելով, կ'իյնայ երեսի վրայ եւ ծայն մը կը լսէ, որ իրեն հետ կը խօսի ու կ'ըսէ. «Մարդու որդի, ոտքի ելի՛ր, քեզի հետ պիտի խօսիմ»: Եւ Հոգին եկաւ վրաս, զիս վեր հանեց եւ ոտքերուս վրայ կեցուց: Ու կը լսէի, որ ան հետս կը խօսէր ու կ'ըսէր. «Մարդու որդի, ես քեզ պիտի դրկեմ այդ դառնացող Իսրայէլի տունը: Անոնք, իրենք եւ իրենց հայրերը մեղացուցած են զիս ու անարգած մինչեւ այսօր»: Յետոյ Տէրը Եզեկիէլին ըսաւ. «... Դուն ալ, մարդու որդի, մտիկ քրէ այս խօսքերը զոր քեզի կ'ըսեմ. բա՛ց բերանդ ու կե՛ր այս մագաղաթը»: Եզեկիէլ կերաւ զայն ու մեղրի մման քաղցր էր: Յետոյ Աստուծոյ Հոգին վեր բարձրացուց զինք, եւ Եզեկիէլ երկրաշարժ յիշեցնող ծայն լսեց, կենդանի եակներու թւերուն ծայնը (Եզ. 3.12-15): Հետագային՝ մեռելներու յարութեան յայտնութիւնն ու Երուսաղէմի վերականգնումին տեսիլքն ալ տըրուեցաւ մարգարէին:

Աստուածաշունչն գտէ՛ք այն հատուածները, ուր կը խօսուի՝

- Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի գալուստին,
- Յիսուս Քրիստոսի նախահայրերուն,
- Երկնքի թագաւորութեան,
- Յիսուս Քրիստոսի դատաստանին մասին:

Եկեղեցւոյ մէջ մարգարեական գիրքերէն բազմաթիւ հատուածներ կը կարդացուին տարրուան ընթացքին, Ս. Պատարագի ճաշու ընթերցումներուն մէջ, մանաւանդ Մեծ Պահքի, Աւագ Շաբթուան, Յիսնակի եւ Սուրբ Ծննդեան ճրագալոյցին ընթացքին:

Քանզի մեզի մանուկ մը ծնաւ. որդի մը տրուեցաւ, որու իշխանութիւնը իր ուսերուն վրայ պիտի ըլլայ: Ան պիտի կոչուի մեծ, Խորհուրդի Դրեշտակ, Աքանջելի Խորհրդակից, Դժօր Աստուած, Իշխան, Դայր Խանդերծեալ աշխարհի: Ես խաղաղութիւն կը բերեմ անոր իշխաններուն, իսկ իրեն՝ առողջութիւն: Մեծ է Անոր իշխանութիւնը եւ Անոր խաղաղութիւնը սահման չունի: Ան պիտի նստի Դաւիթի աթոռին վրայ, պիտի առաջնորդէ անոր թագաւորութիւնը, իրաւունքով ու արդարութեամբ պիտի ամրապնդէ զայն, այժմ եւ յաւիտեանս յաւիտենից:

Յեսսէի արմատէն գաւազան մը պիտի ծաղկի, ծաղիկ մը պիտի բուսնի անոր արմատէն: Անոր վրայ պիտի իջնէ Աստուծոյ հոգին, իմաստութեան եւ հանճարի հոգին, խորհուրդի ու զօրութեան հոգին, գիտութեան եւ աստուածապաշտութեան հոգին: Աստուծոյ երկիւղի հոգին պիտի լեցնէ զայն: Կարծիքով պիտի չդատէ ան եւ ոչ ալ խօսքերով պիտի յանդիմանէ: Ան աղքատին իրաւունքը պիտի պաշտպանէ եւ արդարութեամբ պիտի դատէ երկրի տառապեալները: Իր բերնի խօսքով պիտի հարուածէ երկիրը եւ իր շրթներուն շունչով պիտի ոչնչացընէ ամբարիշտները: Այն օրը հեթանոսները իրենց յոյժը պիտի դնեն Յեսսէի արմատին վրայ, որ իշխան պիտի կարգուի հեթանոսներուն եւ անոր տալիք հանգիստը փառայելոյ պիտի ըլլայ:

5 – Մարգարէներուն ծայրը եկեղեցւոյ մէջ

Սուրբ Ծննդեան ճրագալոյցի ընթերցանութիւններէն մեքերուած հատուածները համեմատեցէ՛ք Սուրբ Գիրքի հետեւեալ համարներուն հետ.

- Ես 7.10-17
- Միքէ 5.2-7
- Ես 11.14, 10
- Ես 9.6-7
- Դմ 3.1-7

ԱՅՍՊԷՍ Կ'ԸՍԷ ԱՍՏՈՒԱԾ

Նաբուգոդոնոսոր թագաւորը ոսկեէ արծաւ մը շինեց, անոր բարձրութիւնը 60 կանգուն ու լայնքը 6 կանգուն: Գանիկա Բաբելոնի Դուրա դաշտին մէջ կանգնեցուց: Եւ Նաբուգոդոնոսոր թագաւորը լուր դրկեց կուսակալներուն, նախարարներուն, կառավարիչներուն, դատաւորներուն, գանձապետներուն, խորհրդականներուն, օրէնսդէտներուն ու գաւառներու իշխաններուն գալու: Եւ Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած արծաւին բացման հանդիսութեան ներկայ գտնուելու: Այն ատեն կուսակալները, նախարարները, կառավարիչները, դատաւորները, գանձապետները, խորհրդականները, օրէնսդէտները ու գաւառներու բոլոր իշխանները Նաբուգոդոնոսոր թագաւորի կանգնած արծաւի բացման եկան եւ արծաւին դիմաց կանգնեցան: Եւ մունետիկը զօրաւոր ծայրով կ'ըսէր. Ո՛վ ժողովուրդներ, ազգեր ու լեզուներ, ձեզի կ'ըսուի. Երբ փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին, տիկին ու այլ նուագարաններու ծայրը լսէք, Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած ոսկեայ արծաւին առջեւ պէտք է իյնաք ու երկրպագութիւն ընէք. եւ ով որ չիյնայ ու չերկրպագէ, նոյն պահուն բոլորքս զերկիւր հնոցին մէջ պիտի նետուի: Ուստի բոլոր ժողովուրդները փողին, սրինգին, քնարին, ջութակին, տաւիղին ու ամէն տեսակ նուագարաններու ծայրը երբ լսեցին, բոլոր ժողովուրդները, ազգերն ու լեզուները կ'իյնային ու Նաբուգոդոնոսոր թագաւորին կանգնած ոսկեայ արծաւին կ'երկրպագէին:

Տէրը դարձեալ սկսաւ խօսիլ Աքազի հետ եւ ըսաւ. «Անդունդի մէջ ըլլայ թէ բարձունքներու վրայ, քեզի համար նշան մը խնդրէ Տէր Աստուծմէ»: Իսկ Աքազ պատասխանեց. «Չեմ խնդրեր ու Տէրը չեմ փորձեր»: Եւ ան ըսաւ. «Արդ, լսեցէ՛ք դուք, որ Դաւիթի տունէն էք՝ ձեզի պարզ կը թուի մարդոց նեղութիւն պատճառելը, ինչո՞ւ կ'ուզէք Տիրոջ ալ նեղութիւն պատճառել: Անոր համար ալ Տէրը ինք ձեզի նշան պիտի տայ: Միա կոյսը պիտի յղանայ ու որդի մը ծնի եւ անոր անունը եւ՝ մանուէլ պիտի ըլլայ (որ կը նշանակէ Աստուած մեզի հետ է): Անիկա կաթ ու մեղր պիտի ուտէ, մինչեւ որ գիտնայ չարը մերժել եւ բարին ընտրել: Որովհետեւ տղան չարը մերժելն ու բարին ընտրելը գիտնալէն առաջ պիտի թողուի այն երկիրը, որուն երկու թագաւորներէն դուն կը վախճաս: Տէրը քու վրադ, ու քու ժողովուրդիդ վրայ, եւ քու հօրդ տան վրայ այնպիսի օրեր պիտի բերէ, որ եփրեմի Յուդայէ գատուած օրէն ի վեր չեկան, այսինքն Ասորեստանի թագաւորը:

«Եւ դուն, Բեթզեհէմ, Եփրաթայի սակաւթիւ բնակչութիւն ունեցող տուն, Յուդայի երկրի հազարաւորներուն մէջ պիտի ըլլաս, քեզմէ պիտի ելլէ ինծի համար Իսրայէլի իշխան մը եւ անոր ծագումը աշխարհի սկիզբն է: Անոր համար գանձեմ ձեռք պիտի տայ՝ մինչեւ ծնանողին ծնանելու ժամանակը, եւ անոր եղբայրներուն մնացորդը Իսրայէլի որդիներուն պիտի դառնայ: Ու անիկա պիտի կենայ, ու Տիրոջ զօրութեամբ եւ իր Տէր Աստուծոյ անուան մեծ վայելչութեամբ պիտի հովուէ, ու անոնք պիտի բնակին. որովհետեւ հիմա մինչեւ երկրի ծայրերը պիտի տարածուի: Եւ անիկա խաղաղութիւն պիտի ըլլայ. երբ Ասորեստանցի մեր երկիրը մտնէ, ու մեր պալատներուն մէջ ոտք կոխէ, Անոր դէմ եօթը հովիւ եւ ութ իշխանաւոր մարդիկ պիտի հանենք: Ու անոնք Ասորեստանի երկիրը սրով ու Նեբրովթի երկիրը իր դռներուն մէջ պիտի սպառեն. եւ անիկա մեզ պիտի ազատէ Ասորեստանցիներէն, երբ անոնք մեր երկիրը մտնեն ու մեր սահմաններուն մէջ ոտք կոխեն: Եւ Յակոբի մնացորդացը շատ ժողովուրդներու մէջ ցօղի պէս պիտի ըլլայ, որ Տէրոջմէ կու գայ եւ շաղի պէս որ կանաչ խոտի վրայ կ'իջնէ, զոր մարդէ չսպասեր, ու մարդու որդիներէն չի յուսար»:

Մտորումներ Սուրբ Գիրքի մասին

Մենք ծանօթացանք Աստուածաշունչի առաջին մասին՝ Դին Կտակարանի քանի մը պատմութիւններուն: Դին Կտակարանին մէջ կը պատմուի Աստուծոյ ու անոր ժողովուրդին միջեւ կնքուած Ուխտին մասին: Այդ Ուխտը կարեւոր էր, որովհետեւ Աստուած կ'ուզէր որ Իսրայէլի ժողովուրդը հաւատարիմ ըլլայ Իր նկատմամբ: Ան կ'ուզէր, որ մարդիկ գիտնան թէ ի՞նչ է սէրը, խաղաղութիւնը, ուրախութիւնը եւ ըստ այնմ՝ յաւիտեանական կեանք ունենային: Ի հարկէ, Աստուած պէտք էր մարդոց ստիպէր, որ անոնք իր ուզած ձեւով ապրէին: Բայց Աստուած չի սիրեր ռեւէ մէկուն պարտադրել: Ատիկա սիրալիւր վերաբերմունք չ'ըլլար: Դին Կտակարանին մէջ նկարագրուած իրադարձութիւնները տեղի ունեցած են երկար դարերու ընթացքին: Դրեայ ժողովուրդը

դարձեալ, միշտ սակայն կը փորձէր ինք իր ուզածին պէս ապրիլ եւ ոչ թէ Աստուծոյ կամքին համաձայն: Մարդիկ կը մոռնային զԱստուած, հակառակ անոր որ Տէրը անոնց կը դրկէր քահանաներ, դատաւորներ, թագաւորներ ու մարգարէներ, որպէսզի օգնեն անոնց եւ յիշեցնեն թէ **Մէկ Աստուած կայ**: Դարձեալ եւ միշտ Տէրը իրեն կը կանչէ մարդիկը, երբ անոնք դարձի կու գան ու կը ներէ անոնց:

Դին Կտակարանը մեզ կը նախապատրաստէ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի՝ Փրկչի գալուստին, որ խոստացուած էր մարդոց: Նոր Կտակարանը կը պատմէ Փրկչին գալուստը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքին, բարի լուրին, Անոր քարոզութեան, խաչելութեան ու Յարութեան մասին: Նոր Կտակարանը այնպիսի դէպքեր կը նշէ, որոնք Դին Կտակարանին լրումը եւ ամբողջացումը եղան:

Ո՞վ եմ ես Առաջին սինակի անուններուն առջեւ գրեցէ՛ք համապատասխան ճիշդ տառը: Եթէ կարիք կը զգաք՝ նայեցէ՛ք նախորդ դասերու նիւթերուն:

- | | |
|--|-------------|
| Ա. Նախապէս գիտ Սարա կը կոչէին: Ո՞վ եմ ես: | 1. Յակոբ |
| Բ. Ես կը սիրէի հպարտանալ: Եղբայրներս բարկացան վրաս, բայց ես իմ ընտանիքս փրկեցի սովէն ու անօթութենէն: Ո՞վ եմ ես: | 2. Մովսէս |
| Գ. Ես Յուդայի երկրին թագաւորն էի եւ Դիւսիսային ու Դարաւային թագաւորութիւնները միացուցի: Ո՞վ եմ ես: | 3. Սառա |
| Դ. Յակոբ ստիպուած էր հօրս մօտ երկար տարիներ ծառայել, մինչեւ որ արտօնէին ինծի հետ ամուսնանալ: Ո՞վ եմ ես: | 4. Ռաքել |
| Ե. Ես իրեաները դուրս հանեցի Եգիպտոսէն եւ Աստուծոյ Օրէնքը ստացայ: Ո՞վ եմ ես: | 5. Սողոմոն |
| Զ. Աստուած չձգեց որ իմ միակ որդին զոհեմ: Ո՞վ եմ ես: | 6. Իսահակ |
| Է. Իմ հայրս չկրցաւ կառուցել Աստուծոյ տաճարը, բայց ես Աստուծոյ օգնութեամբ յաջողեցայ այդ ընել: Ո՞վ եմ ես: | 7. Փարաւոն |
| Ը. Յովսէփ իմ երագներս մեկնաբանեց եւ օգնեց ինծի որպէսզի ժողովուրդս փրկեմ սովէն ու տանջանքէն: Ո՞վ եմ ես: | 8. Եղիա |
| Թ. Ես եղբօրս կ'օգնեմ, որպէսզի փարաւոնին հետ խօսի: Ո՞վ եմ ես: | 9. Դաւիթ |
| Ժ. Աստուած ցած ծայրով խօսեցաւ հետս: Ո՞վ եմ ես: | 10. Ռեբեկա |
| ԺԱ. Եղբայրս խաբէբայութեամբ օրինութիւնս ստացաւ եւ անդրանկութեան իրաւունքս խլեց, բայց յետոյ ես ներեցի իրեն: Ո՞վ եմ ես: | 11. Ահարոն |
| ԺԲ. Դրեշտակը ըսաւ, որ իմ մոր անունս Իսրայէլ պիտի ըլլայ: Ո՞վ եմ ես: | 12. Յովսէփ |
| ԺԳ. Իմ երկուորեակներս շատ տարբեր էին իրարմէ: Ես Յակոբը աւելի կը սիրէի, քան՝ անոր եղբայրը: Ո՞վ եմ ես: | 13. Աբրահամ |
| ԺԴ. Իմ հայրս Աբրահամն է, իսկ որդիներս են՝ Եսաւն ու Յակոբը: Ո՞վ եմ ես: | 14. Եսայի |
| ԺԵ. Ես մարգարեացայ, որ Կոյսը Աստուծոյ Որդին պիտի ծնի: Ո՞վ եմ ես: | 15. Եսաւ |

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ

Այս դասն սկսեալ պիտի ծանօթանանք Աստուածաշունչի երկրորդ մասին, որ կը կոչուի Նոր Կտակարան: Անիկա Աստուծոյ ու մարդոց միջեւ Նոր Ուխտի կամ համաձայնութեան կնքումն է: Նոր Կտակարանը ամբողջացումն է Հին Օրենքին եւ սկիզբը՝ նոր կեանքի: Աստուած Իր Միածին Որդին մարդկային կերպարանքով աշխարհի դրկեց: Յիսուս Քրիստոս մեզի պէս մարդ եղաւ, սակայն առանց մեղքի: Աստուած մեզի մօտեցաւ, որպէսզի մեզի հետ ապրի, մեզի սորվեցնէ եւ ի վերջոյ՝ մեզի համար իր կեանքը զոհէ:

Նոր Կտակարան

Նոր Կտակարանին մէջ կան իրարմէ տարբեր չորս գիրքեր, չորս Աւետարաններ՝ **Մատթէոս, Մարկոս, Դուկաս** եւ **Յովհաննէս**, որոնք Փրկչին երկրաւոր կեանքը, կատարած քարոզութիւնն ու վարդապետութիւնը կը ներկայացնեն:

Գործք Առաքելոցը պատմութեան գիրք մըն է, որ կը պատմէ եկեղեցւոյ, այսինքն քրիստոնէական համայնքի կազմաւորման, ինչպէս նաեւ առաքելներու ճամբորդութիւններուն ու քրիստոնէական հաւատքի տարածման մասին:

Ուսուցողական գրութիւններ՝ առաքելներու նամակներ, ուղղուած որոշ անհատներու եւ առաքելներու այցելած եկեղեցիներուն:

Ցայտնութեան Գիրք՝ մարգարեական նրկարագրականը Վերջին Դատաստանին, գրուած Սուրբ Յովհաննէս Առաքելին կողմէ:

Այս չորս մասերուն սկիզբները էջակալներ դրեք: Աւելի փոքր էջակալներ ալ պատրաստեցէք, անոնց վրայ գրեցէք աւետարանիչին անունը եւ իր Աւետարանին սկիզբը դրեք:



Ս. Յովհաննէս Մկրտչի ծնունդը եւ հայրը՝ Զաքարիա, որ անոր անունը կը գրէ տախտակի մը վրայ

ԱՍՏՈՒԾՈՅ ՆԱԽԱՎԿԱՆ (Նախակարապետը)

«Ան մեծ պիտի ըլլայ Տիրոջ առջեւ, զինի եւ օղի պիտի չխմէ եւ մօր որովայնէն Սուրբ Հոգիով պիտի լեցուի եւ Իսրայէլի որդիներէն շատերը դէպի իրենց Տէր Աստուածը պիտի վերադարձնէ»:

Հին Կտակարանի վերջին գիրքերէն է Մաղաքիա մարգարէին գիրքը: Չորս հարիւր տարի անցած էր այն ժամանակէն, երբ Իսրայէլի մէջ մարգարէի ծայն չէր լսուեր: Դուկաս Աւետարանի սկզբը նաւորութեան կը նկարագրուի վերջին մեր մարգարէին՝ Յովհաննէս Նախակարապետի եւ Տիրոջ Մկրտչին՝ Յովհաննէսի ծնունդին մասին: Յովհաննէս աւետեց Տիրոջ գալուստը: Ան ժողովուրդին ցոյց կու տար Յիսուս Քրիստոսը եւ իր աշակերտներուն կը պատուիրէր հետեւիլ Տիրոջ:

Դուկասի Աւետարանին մէջէն գտէք Սուրբ Յովհաննէս Մկրտչի ծննդեան պատմութիւնը (առաջին գլուխ): Երբ Յովհաննէս ծնաւ՝ անոր հայրը օրհներգ երգեց իր որդիին համար: Առաջին գլխուն վերջաւորութեան գտէք այդ օրհներգը եւ այստեղ գրեցէք այդ օրհներգի առաջին եւ վերջին համարները:

Նոր Կտակարանը աւելի լաւ հասկնալու եւ դիրքութեամբ պատկերացնելու համար այն ժամանակաշրջանը երբ Փրկիչը այս երկրի վրայ էր, անհրաժեշտ է որ գէթ քիչ մը ծանօթանանք այն երկրին, ուր կ'ապրէր ան: Ո՛չ միայն Պաղեստինը, այլեւ Միջերկրական ծովու ամբողջ շրջակայքը Հռոմէական կայսրութեան մաս կը կազմէին: Հիմնադիրն էր Օգոստոս կայսրը, զոր հիմնած է Յիսուսի ծնունդէն 27 տարիներ առաջ: Կայսրութիւնը Արեւմուտքէն՝ Սպանիայէն, կը տարածուէր մինչեւ Արեւելք՝ Միջագետք, Հարաւէն՝ Եգիպտոսէն, մինչեւ Հիւսիս՝ Անգլիա: Հռոմէական գաւառները կը կառավարուէին կուսակալներով:

Մենք օրը 24 ժամի կը բաժնենք, իսկ հռոմէացիներու ժամանակ, հռոմէացի զինուորներու պահակութեան եւ հերթապահութեան համապատասխան՝ օրը բաժնը:

Ժամերգութիւն

Գիշերային ժամերգութիւն

Առաւօտեան ժամերգութիւն

Արեւագալ

ճաշու ժամ (միացում 3-րդ, 6-րդ եւ 9-րդ ժամերու)

Երեկոյեան ժամերգութիւն

Խաղաղական ժամ

Հանգստեան ժամ

(Ներկայիս Խաղաղականն ու Հանգստեանը միատեղ կը կատարուին իբրեւ Հսկում):

Գտէք Սուրբ Գիրքին հետեւեալ հատուածները՝

Ա. Յիշուած օրուան ժամը ցոյց տուէք, թէ՛ հռոմէական եւ թէ՛ ներկայ ժամանակի համաձայն:

Բ. Գտէք թէ ո՞ր համարը, ո՞ր մէկ կրճատումին կը համապատասխանէ:

Հռոմէական ժամանակ (Ներկայ ժամանակ)

1. Մր 13. 35-37
2. Մտ 24.46
3. Մր 15.1
4. Մր 15.21-23
5. Գրծ 2.1-4, 14-15
6. Յհ 19.13-16
7. Մտ 27.57-61
8. Մտ 25.1-13
9. Ղկ 22.34, 54-62

Հատուածին համար ի՞նչ եղած է եւ կամ ի՞նչ ըսուած

- Ա. Պիղատոս Քրիստոսը ժողովուրդին դատին յանձնեց
- Բ. Յովսէփ Արեմաթացին Փրկիչը իր գերեզմանին մէջ թաղեց
- Գ. Սուրբ Հոգին առաքելներուն վրայ իջաւ
- Դ. Քահանայապետները Յիսուսը Պիղատոսին դրկեցին
- Ե. Երբ փեսան եկաւ՝ յիմար կոյսերը պատրաստ չէին
- Զ. Տէրը խաչին զամեցին, իսկ զինուորները Անոր հագուստը բաժնեցին իրենց միջեւ
- Է. Պետրոս ուրացաւ իր Տէրը
- Ը. Միշտ պատրաստ եղիր, որովհետեւ չես գիտեր թէ Փրկիչը ե՞րբ կու գայ
- Թ. Քրիստոս իր Հոգին Աստուծոյ ձեռքերուն մէջ աւանդեց եւ խաչին վրայ մեռաւ

Յովհաննէս՝ Բարձրեալն Աստուծոյ մարգարէն

Ձաքարիա եւ Եղիսաբէթ

Ձաքարիա՝ Յովհաննէսի հայրը, բարեպաշտ քահանայ մըն էր: Անոր կնոջ անունը Եղիսաբէթ էր: Անոնք Աստուծոյ բոլոր պատուիրանները կը գործադրէին եւ կ'ապրէին բարի կեանք մը, սակայն զաւակ չունէին: Երկար տարիներէ ի վեր անոնք Աստուծոյ կը խնդրէին որ զաւակ մը պարգեւէ իրենց:

Հրեշտակը կ'աւետ

Օր մը, երբ Ձաքարիան Աստուծոյ Տաճարին մէջ իր քահանայական պաշտօնը կը կատարէր եւ ժողովուրդը հաւաքուած էր աղօթելու համար, յանկարծ Ձաքարիային երեւցաւ հրեշտակ մը եւ խնկարկութեամբ սեղանին աջ կողմը կանգնեցաւ: Ձաքարիան վախցաւ եւ սկսաւ մտահոգուիլ: Սակայն հրեշտակը ըսաւ անոր. «Մի՛ վախճար, Ձաքարիա, որովհետեւ աղօթքդ լսուեցաւ. կ'ինդ՝ Եղիսաբէթը զաւակ մը պիտի ծնի եւ անոր անունը Յովհաննէս պիտի դնես»: Եւ հրեշտակը Ձաքարիային ըսաւ, որ իր զաւակը Տիրոջ առջեւ մեծ մէկը պիտի ըլլայ, երբեք զինի եւ օղի պիտի չխմէ եւ իր ծնունդէն իսկ առաջ Սուրբ Հոգիով լեցուած պիտի ըլլայ: Ան Տիրոջ ճամբուն մէջ պիտի բերէ ժողովուրդէն շատերը: Ձաքարիան զարմացած հարցուց անոր. «Ինչպէ՞ս կրնայ պատահիլ այդ, երբ ես արդէն ծեր եմ եւ կ'ինս ալ յառաջացած տարիքի մէջ կը գտնուի»: Սակայն հրեշտակը անոր պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ, որ Աստուծոյ դիմաց կը կանգնիմ: Ես դրկուեցայ քեզի այս լուրը տալու»:

Աստուծոյ նշանը

Գաբրիէլը բարկացաւ եւ շարունակեց. «Եւ ահա դուն համր պիտի ըլլաս եւ պիտի չկարենաս խօսիլ մինչեւ այն օրը, երբ ըսածս կատարուի, որովհետեւ դուն չի՛ հաւատացիր իմ խօսքերուս, թէ՛ անոնք իրականութիւն պիտի ըլլան իրենց ժամանակին»: Ժողովուրդը կը սպասէր Ձաքարիան, մինչ ան Տաճարին ներքնամասին մէջէն կ'ուշանար դուրս գալու: Երբ ան դուրս եկաւ, չկրցաւ խօսիլ անոնց հետ եւ անոնք հասկցան, որ ան Տաճարին մէջ տեսիլք մը տեսած էր: Անոր ծառայութեան օրերը վերջացան եւ ան տուն դարձաւ: Եղիսաբէթը յղացաւ: Ան հինգ ամիս պահեց իր յղութիւնը եւ կ'ըսէր. «Տէրը ի՛նչ ըրաւ, գթալով ինձի ու մարդոցմէ կրած նախատինքս վերցնելով վրայես» (հին ժամանակ՝ անզաւակ ըլլալը Աստուծոյ կողմէ շրմորիքի չարժանանալ կը նկատուէր):

Յովհաննէս Կարապետի ծնունդը

Երբ Յովհաննէս ծնաւ, Եղիսաբէթի բոլոր ազգականները եւ դրացիները ուրախացան: Այդ օրերուն երեխային անուանակոչութիւնը եւ թւիստումը կը կատարէին ծննդեան 8-րդ օրը: Ամէնքը կը խորհէին, որ իր հօր ի պատիւ՝ Ձաքարիա կը կոչեն Մորածիմը: Սակայն Եղիսաբէթ ըսաւ. «Ո՛չ, Յովհաննէս պիտի կոչուի ան»: Ազգականները զարմացած ըսին. «Սակայն ծեր գերդաստանին մէջ Յովհաննէս անունով մէկը չկայ»: Անոնք գացին ու համրացած Ձաքարիային հարցուցին, թէ ի՞նչ պիտի կոչուի մանուկը: Ձաքարիա գրատախտակ մը ուզեց եւ անոր վրայ Յովհաննէս գրեց: Եւ այդ վայրկեանին անոր լեզուին կապերը քակուեցան եւ ան սկսաւ խօսիլ ու օրհնել զԱստուած: Իրենց շուրջը եղողները բոլորը վախցան. բոլորն ալ զգացին որ հըրաշք տեղի ունեցաւ: Այս լուրը ամբողջ Երուսաղէմի մէջ տարածուեցաւ: Մարդիկ կ'ըսէին. «Արդեօք ո՞վ պիտի դառնայ այս մանուկը»: «Եւ Տիրոջ ձեռքը անոր վրայ էր»: Ձաքարիան Սուրբ Հոգիով լեցուած կը մարգարէանար ու օրհնութիւն կ'երգէր. «Եւ դուն մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, որովհետեւ Տիրոջ առջեւէն պիտի քալես՝ անոր ճամբան պատրաստելու, անոր ժողովուրդին տալու փրկութեան աւետիսը, անոնց մեղքերու թողութեան համար»: Եւ մանուկը կ'աճէր ու կը զօրանար Սուրբ Հոգիով: Մի քանի տարի տան մէջ մնալէ ետք, անապատին մէջ կ'ապրէր ծոմապահութեամբ եւ աղօթքով՝ «մինչեւ Իսրայէլի մէջ անոր երեւնալու օրը»:



ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Ղուկասու Աւետարանը կը սկսի Յովհաննէսի ու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի ծնունդով: Առաջին երկու գլուխներուն մէջ կան քանի մը օրհներգութիւններ: Բոլորին ծանօթ են արդէն Ս. Աստուածածնին ուղղուած Գաբրիէլ հրեշտակապետին ըսած խօսքերը. «Ուրախացի՛ր, շնորհալի կոյս, Տէրը քեզի հետ է»: Գաբրիէլ հրեշտակը նաեւ Ձաքարիային մօտ եկած էր: Ղուկասու Աւետարանէն գտէ՛ք այդ հատուածը: Հոն կան նաեւ Մարիամի, Ձաքարիայի եւ Սիմէոն Ծերունիի օրհներգութիւնները: Այնպէս ինչպէս կը կարդացուին եկեղեցւոյ մէջ՝ գրաբար լեզուով, հոս կը դնենք զանոնք: Համեմատեցէ՛ք զայն աշխարհաբարին հետ:

ԶԱՔԱՐԻԱՅԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ (Ղկ 1.67-79)

Եւ Ձաքարիա հայր նորա լցաւ Հոգւով Սրբով, մարգարէացաւ եւ ասէ, «Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ, եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրում: Եւ յարոյց եղջիւր փրկութեան մեզ ի տանէ Դաւթի ծառայ իւրոյ: Որպէս խօսեցաւ բերանով սրբոց որ յաւիտենից մարգարէքն նորա էին, փրկութիւն ի թշնամեաց մերոց, եւ ի ձեռաց ամենայն ատելեաց մերոց, առնել ողորմութիւն ընդ հարս մեր, եւ յիշել զուխտն իւր սուրբ: Զերգումն զոր երգուաւ աբրահամու հօր մերում՝ տալ մեզ, առանց երկիւղի, ի ձեռաց թշնամեաց մերոց փրկեալս, պաշտել զնա սրբութեամբ եւ արդարութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց մերոց: Եւ դու, մանուկ, մարգարէ Բարձրելոյ կոչեցիր. զի երթիցես առաջի երեսաց Տեառն պատրաստել զճանապարհս նորա, տալ գիտութիւն փրկութեան ժողովրդեան նորա ի թողութիւն մեղաց նոցա: Վասն զթութեանց ողորմութեան Աստուծոյ մերոյ, որովք այց արասցէ մեզ Արեգակն ի բարձանց, երեւել որոց ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէին, ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

ԶԱՔԱՐԻԱՅԻ ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ (Ղկ 1.67-79)

Հայրը՝ Ձաքարիան, Սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարէացաւ, ըսելով. «Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը, որ օգնութեան հասաւ եւ փրկութիւն բերաւ իր ժողովուրդին: Իր ծառային՝ Դաւիթի սերունդէն հզօր Փրկիչ մը տուաւ մեզի: Իր սուրբ մարգարէներուն միջոցաւ կանուխէն մեզի խոստացաւ փրկել մեր թշնամիներէն ու բոլոր մեզ ատողներէն, եւ մեր հայրերուն հանդէպ իր ողորմութիւնը ցոյց տալ՝ իր սուրբ ուխտին հաւատարիմ մնալով, մեզի տալու այն՝ ինչ որ երգումով մեր հօր Աբրահամի խոստացած էր, որպէսզի առանց վախի, այլեւս մեր թշնամիներէն փրկուած՝ զինք պաշտենք մեր կեանքի բոլոր օրերուն, եւ իրեն ներկայանանք որպէս սուրբ եւ արդար մարդիկ: Եւ դուն, զաւակս, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս եւ Տիրոջ առջեւէն պիտի քալես՝ առաջնորդելով ժողովուրդին, թէ պիտի փրկուին՝ իրենց մեղքերուն ներում գտնելով. որովհետեւ Աստուած իր գթառատ ողորմութեամբ իբրեւ Արեգակ՝ երկինքէն պիտի ծագի մեր վրայ եւ յայտնուի մեզի, որ խաւարի մէջ եւ մահուան շուքին տակ կը մնայինք, որպէսզի մեր ոտքերը դէպի խաղաղութեան ճամբան ուղղէ»:

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՍ
ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԻՆ
ԿԸ ՀՆԱԶԱՆԴԻ

Նոր Կտակարանի առաջին չորս գիրքերը «Սուրբ Աւետարան» կը կոչուին, որոնք Յիսուս Քրիստոսի երկնային կեանքի վարդապետութիւնը կը ներկայացնեն: «Աւետարան» բառը յունարէնէ թարգմանուած է եւ կը նշանակէ «բարի լուր»։ Աստուծոյ Որդին մարդեղացումը, Անոր մարդոց հետ ապրելով փրկութեան ճամբան ցոյց տալը եւ զոհաբերութիւնը՝ մարդոց փրկութեան համար։

Չորս Աւետարանները գրուած են մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աշակերտներուն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասի եւ Յովհաննէսի կողմէ։ Անոնց մեծ մասը Յիսուսի աշակերտները ըլլալով՝ ակամատեսներ էին Փրկչին երկրաւոր գործունէութեան։ Անոնք Աւետարանիչներ կը կոչուին, որովհետեւ Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոսի մարդեղացման բարի լուրը փոխանցած են մեզի։ Անոնք իրենց գիրքերուն մէջ արձանագրած են Փրկչին գործերուն ու խօսքերուն մասին իրենց վկայութիւնները։

Աւետարանները նոյն բանը կը պատմեն, սակայն իւրաքանչիւրը՝ առանձին։ Անոնք կը ներկայացնեն Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը եւ այդ պատճառաւ շատ մը տեղեր նոյնութիւն ունին։ Սակայն իւրաքանչիւր Աւետարանիչ, Յիսուսի խօսքերն ու գործերը իր իւրայատուկ տեսանկիւնէն կը ներկայացնէ։ Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կեանքին ու քարոզութեան մասին աւելի մանրամասն ու ամբողջական պատկերացում ունենալու համար պէտք է իրարու հետ համեմատել Աւետարանները։ Մասնաւոր գիրք մը կայ, որ կը կոչուի Աւետարանի Համադրական, որ մեզի կ'օգնէ Աւետարանները համեմատել իրարու հետ։ Իւրաքանչիւր դէպք որ մէկէ աւելի Աւետարաններու մէջ կայ, կողք-կողքի տպուած կ'ըլլայ՝ սիւնակներու մէջ։



Գաբրիէլ հրեշտակապետին ատելիսը Ս. Մարիամին

ԱՒԵՏՈՒՄ

Այսօր քեզմով կատարուեցաւ Ամովսածմին խօսքը, որ բոլոր ազգերուն փրկութեան իբրեւ նշան տրուեցաւ [թէ] ահա Կոյսը պիտի յղանայ եւ որդի մը ծնի՝ մեզի յայտնուած Աստուածը. անոր մօտ կը խնդրենք բարեխօսել՝ անլռելի ծայնով։ (Կանոն Ս. Աստուածածնի Աւետման, Համբարձի ԴԿ. հմմտ Մտ 1.23, Ես 7.14)

Գաբրիէլ հրեշտակապետին աւետումը Ս. Կոյս Մարիամին, պատմական անկիւնադարձ մըն է։ Աստուած ինք աշխարհ եկաւ եւ մարդկային մարմին առաւ, որպէսզի մեզի նման դառնայ։ Ան իր վրայ առաւ բոլորիս մեղքերը, որպէսզի իր մահով եւ մեռելներէն յարութեամբ՝ մեզ ազատէ ադամական մեղքէն։ Աստուած ուզեց մահը կործանել եւ Իր արքայութեան մէջ յաւիտեանական կեանք շնորհեց մեզի, որովհետեւ ինք է միակ աղբիւրը կեանքի։ Փրկագործութեան այս հանգրուանին, անուրանալի է Ս. Կոյս Մարիամին դերը։ Աստուած չէր ուզեր պարտադրել մեզի, որ ընդունինք ու սիրենք զինք։ Ազատ ստեղծուած ենք մենք։ Ան կ'ուզէ որ մենք սիրենք զինք ու սիրենք զիրար, սակայն բնաւ կարելի չէ մէկու մը ստիպել որ սիրէ Աստուած։ Եւ ահա Աստուած դիմեց առաքինի ու խոնարհ կոյսին, որ սիրով լեցուած էր։ Կոյս Մարիամ շատ կը սիրէր զԱստուած եւ կ'ուզէր ծառայել Անոր։ Ան մեր բոլորին անունով «Այո՛» ըսաւ, հնազանդելով Աստուծոյ կամքին։

Հրեշտակներուն այլելութիւնը

Աստուծոյ կողմէ դրկուած Գաբրիէլ հրեշտակապետը պատմութեան ամենէն կարեւոր լուրը հաղորդեց մարդկութեան։ Եթէ բուրգ մը զծննդ, Մարիամի աւետումը անոր զազաթին կը գտնուի, իսկ Ջաքարիային եւ Եղիսաբեթին տրուած աւետիսը՝ ճիշդ ամոր տակը։

Հին Կտակարանի Սրբազան պատմութեան ընթացքին, Աստուած հրեշտակներուն միջոցաւ յաճախ ուղղութիւն տուած է եւ ինքզինք ծանօթացուցած, հետզհետէ մեզ նախապատրաստելով այդ սքանչելի դէպքերուն։ Հին ժամանակաշրջանին, հրեշտակներուն աւետած լուրերը կարելի է դնել բուրգի հիմներուն քով՝ ամենէն յատկապէս։

Բուրգի վերի մասին մէջ զծննդէն առաջ հրեշտակներ, որ Ս. Կոյսին աւետեց։ Իսկ անոր տակը զծննդէն ինչ որ պատահեցաւ։ Ջաքարիայի եւ Եղիսաբեթի, Արախամի եւ Սառայի։ Թերեւս հրեշտակներու այլ երեւումներ ալ յիշէք Ս. Գիրքէն։ Եթէ չէք յիշեր, այստեղ դրուած համարները կ'օգնեն որպէսզի յիշէք. բուրգին տակը քանի մը նկարներ զծննդ, մնացեալ աստուածաշնչական համարներու հիման վրայ։

- 1. Դկ 1.26-38 (Ս. Կոյս Մարիամ)
- 2. Դկ 1.5-25 (Ջաքարիա)
- 3. Ծն 18.1-15 (Արախամ)
- 4. Ծն 28.10-17
- 5. Ել 6.1-10
- 6. Դն 3.1-30

Աստուծոյ աւետիսը Սուրբ Կոյս Մարիամին

Գաբրիէլ հրեշտակապետը Կոյսին կ'այցելէ

Գաբրիէլ հրեշտակին Ջաքարիայի եւ Եղիսաբէթի այցելելէն վեց ամիս յետոյ տեղի ունեցաւ ուրիշ կարեւոր դէպք մը: Ան այցելեց Կոյս Մարիամին եւ ըսաւ. «Ուրախացի՛ր, շնորհալի կոյս, Տէրը քեզի հետ է»: Կոյսը զարմացաւ այդ խօսքերը լսելով եւ մտածեց թէ ի՞նչ կրնայ ըլլալ այդ ողջոյնը: Եւ հրեշտակը ըսաւ անոր. «Մի՛ վախճար, Մարիամ, որովհետեւ Աստուծոյ քով շնորհք գտար»:

Ապա Գաբրիէլ արտասանեց մարդկութեան պատմութեան ամենէն կարեւոր խօսքերը. «Եւ ահա պիտի յղանաս եւ որդի մը պիտի ծնիս ու անոր անունը Յիսուս պիտի դնես: Ան մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալի Որդին պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ անոր հօր՝ Դաւիթի աթոռը եւ ան յաւիտեան պիտի թագաւորէ Յակոբի տան վրայ ու անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ»:

Կոյսը, զարմացած հարցուց. «Ինչպէ՞ս կրնայ պատահիլ այդ, երբ ես այդ մարդ չեմ ճանչցած»: Զրեշտակապետը անոր պատասխանեց. «Սուրբ Զոգին պիտի գայ վրադ եւ Բարձրեալին զօրութիւնը պիտի հովանաւորէ քեզ, որովհետեւ ան որ քեզմէ պիտի ծնի սուրբ է եւ Աստուծոյ որդի պիտի կոչուի»: Ուրիշ հրաշքի մը մասին ալ խօսեցաւ Գաբրիէլը. «Ահաւասիկ քու ազգականդ՝ Եղիսաբէթը, ան ալ յղի է իր ծերութեան մէջ եւ այս՝ յղութեան վեցերորդ ամիսն է անոր, որ ամուլ կոչուած էր, որովհետեւ Աստուծոյ համար անկարելի բան չկայ»:

Կոյս Մարիամ «Այո՛» կը պատասխանէ Աստուծոյ

Ժամանակը հասած էր, որ Կոյսը պատասխան տար: Եւ ան անմիջապէս իր ազատ կամքով ընտրեց այն, ինչ որ իրեն համար որոշած էր Աստուած. «Ահաւասիկ ես Տիրոջ աղախինն եմ, ըսածիդ պէս թող ըլլայ ինձի»: Ան կատարեց ինչ բանի համար որ ընտրուած էր: Եւ Գաբրիէլ հրեշտակապետը հեռացաւ իր մօտէն:

Կոյս Մարիամ կ'այցելէ Եղիսաբէթին

Կոյս Մարիամ շուտով ուզեց Եղիսաբէթը տեսնել: Անմիջապէս ան գնաց Յուդայի լեռնային շրջաններու քաղաքներէն մին: Ջաքարիայի եւ Եղիսաբէթի տունը մըտնելով՝ բարեւեց իր ազգականին:

Եղիսաբէթի մանուկը սկսաւ շարժիլ մօր որովայնին

մէջ: Եւ մայրը Սուրբ Զոգիով լեցուած՝ ըսաւ. «Օրհնեա՛լ ես դուն կիներուն մէջ եւ օրհնեա՛լ է քու որովայնիդ պտուղը, որովհետեւ երբ ողջոյնիդ ծայնը լսեցի, մանուկը ուրախութենէն շարժեցաւ որովայնիս մէջ»:

Երկու կիները զարմացան իրենց պատահածները տեսնելով. եւ Եղիսաբէթ Մարիամին ըսաւ. «Ի՞նչ մեծ ուրախութիւն, որ իմ Տիրոջս մայրը իմ մօտ գայ: Երանի՛ աւոր որ կը հաւատայ, թէ Տիրոջ կողմէ իրենց ըսուածները կը կատարուին»: Եւ կոյսը ուրախ օրհներգութեամբ մը պատասխանեց՝ շնորհակալութիւն յայտնելով Տիրոջ ողորմութեան համար եւ անյոյսներուն՝ յոյս ներշնչելու համար (Ղկ 1.46. 46):

Կոյս Մարիամ՝ մոր եւս

Մենք քիչ թէ շատ սորվեցանք, թէ ի՞նչ պատահեցաւ Եղեմի պարտէզին մէջ, ուր Ադամն ու Եւան կ'ապրէին: Օձը խաբեց զանոնք, որպէսզի հեռանան Աստուծմէ ու անոր պատուիրաններէն: Եւան չարի ու բարիի գիտութեան ծառին պտուղը կերաւ, յետոյ Ադամ ալ իրեն հետեւեցաւ: Եւան «Ո՛չ» ըսաւ Աստուծոյ, մոյմպէս ըրաւ նաեւ Ադամ:

Եկեղեցական աղօթքներու ընթացքին եւ շարականներու մէջ յաճախ Մարիամ կը կոչուի «Նոր Եւա»: Ինչո՞ւ: Որովհետեւ ինչպէս պիտի տեսնենք այս դասին մէջ, Կոյս Մարիամը ամբողջական սրտով ու ազատ կամքով «Այո՛» ըսաւ Աստուծոյ: Ան մեր փրկութեան համար Աստուծային ծրագիրը իրականացուց՝ համաձայն գտնուելով Աստուծոյ կողմէ տրուած պատգամները գործադրելու: Այդ իսկ պատճառով, Ս. Կոյսը մեզ բոլորս՝ մարդկային էակները, առաջնորդեց դէպի Աստուծային փրկութեան ծրագիրը: Ան իր «Այո՛» պատասխանով ջնջեց Եւայի «Ո՛չ»ը: Ս. Կոյսին հնազանդութեամբ մենք բոլորս հնարաւորութիւն ունեցանք փրկուելու:


Եկեղեցին յանուն ամբողջ մարդկութեան կը փառաբանէ ու կ'օրհներգէ Ս. Կոյսը: Բնաւ պէտք չէ մոռնանք որ ան ինքնակամ կերպով Աստուծորդին մայր դարձաւ: Մենք զինք կը փառաբանենք իբրեւ Աստուծոյ իսկական Տաճարը, երբ կ'երգենք. «Աստուծածածին Խորան Լուսոյ անվայրափակ Արփոյն կենաց»:

Իբր Աստուծամայր, Մարիամ նաեւ մայրն է մեր՝ բոլոր անոնց, որոնք մկրտուած են, Քրիստոսի մարմնին՝ այսինքն Եկեղեցւոյ անդամակցելու համար:

ՄԱՏԹԵՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻՉ

Եկեղեցւոյ հնագոյն վկայութիւններուն համաձայն, Նոր Կտակարանի առաջին Աւետարանը գրուած է Մատթէոս Առաքեալին կողմէ: Մինչեւ իր Աւետարանին գրառումը՝ ան իր ժամանակուան Պաղեստինի խօսակցական լեզուով՝ Արամերէնով, Յիսուսի բոլոր խօսքերը: Արամերէն լեզուն հին ժամանակ հառաւորի մէջ եւս խօսակցական լեզու էր, ուր կ'ապրէր Լաբանը՝ Աբրահամի եղբօր՝ Նաքովրի որդին, որուն մօտ ապաստանեցաւ Իսահակի որդին՝ Յակոբ: Երբ Աստուած կանչեց Մատթէոսը՝ ան մաքսատան պաշտօնեայ էր: Տեսնելով մարդոց հետ նստած մաքսաւոր Մատթէոսը, Քրիստոս անոր ըսաւ. «Ինձի՛ հետեւէ՛»: Ապագայ առաքեալը ձգեց իր գործը եւ այդ օրունէ սկսեալ ամէն տեղ Յիսուսի հետ էր: Ան հրեայ էր եւ կը հաւատար որ Յիսուս Իսրայէլի ժողովուրդին խոստացուած Մեսիան էր: Ան Փրկիչը կոչեց Քրիստոս (Օծեալ) եւ Դաւիթի Որդի (Մարիամ Աստուծածածնի նախահայրը), որ իր ժողովուրդը պիտի առաջնորդէ դէպի Աստուծոյ թագաւորութիւնը:

Եկեղեցական մանրանկարչութեան մէջ Մատթէոս Աւետարանիչը «մարդկային հրեշտակ»ի խորհրդապատկերով կը ներկայացուի:



ՄԱՐԿՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻՉ

Մարկոսի Աւետարանը հաւանաբար ամենէն հնագոյն Աւետարանն է: Մարկոս 72 աշակերտներէն մէկն էր: Կոչուած է նաեւ Յովհաննէս (Գրծ 15.37, 39), երբեմն ալ՝ Յովհաննէս-Մարկոս: Անոր մայրը, Մարիամ, բարեպաշտ քրիստոնեայ մըն էր, որուն տան մէջ կը հաւաքուէին Երուսաղէմի քրիստոնեաները աղօթքի համար: Մարկոս Աւետարանիչ Բառնաբասի եղբօր որդին էր, Պետրոս Առաքեալի թարգմանը, ինչպէս նաեւ Քրիստոսի առաքելական խումբին կողքին եղող կիներէն՝ Մարիամի զաւակը: Յիսուսի երկրաւոր կեանքին ժամանակ Մարկոսը զԱյն չէ տեսած, սակայն 45 թուականին անց Պողոս Առաքեալի ու Բառնաբասի ուղեկցած է, անոնց քարոզչական առաջին ճամբորդութեան ընթացքին: Մարկոս գրի առած է ինչ որ լսած է Քրիստոսի մասին, ինչպէս նաեւ մշումներ կատարած է Պետրոսի քարոզներէն քաղելով նիւթերը: Պետրոս Առաքեալ Մարկոսի օժանդակութիւնը վայելած ըլլալով, իր նամակներէն մէկուն մէջ գայն մոյմիսկ «Որդի Մարկոս» կը կոչէ: Մարկոսի Աւետարանը միւսներէն աւելի ամփոփ է: Պատմելու սքանչելի ոճ ունի: Ան

կ'ուզէ որ մարդիկ ճանչնան Յիսուսը իր խօսքերուն ու գործերուն ճամբով: Շատ հաւանաբար Մարկոս իր Աւետարանը գրած է Զոռմի մէջ:

Եկեղեցական մանրանկարչութեան մէջ Մարկոս Աւետարանիչ կը ներկայացուի առիծի խորհրդապատկերով:



ՂՈՒԿԱՍ ԱԵՏԱՐԱՆԻՉ

Ղուկաս Աւետարանիչ ապրած է յունախօս եւ ոչ-հրեայ համայնքի մէջ: Ան իր Աւետարանը գրած է անոնց համար, որոնք չէին ճանչցած Յիսուսը, բայց լսել էին Անոր կեանքին եւ ուսուցումներուն մասին առաքեալներէն: Աւետարանիչը Պօղոս առաքեալի հետեւորդներէն եղած է: Պօղոս առաքեալ իր նամակներուն մէջ շատ անգամ բարեւներ կը դրկէ Ղուկասին: Ղուկաս մէկէ աւելի անգամներ լսած է Պօղոս առաքեալին քարոզները Յիսուս Քրիստոսի մասին իբրեւ Տէր եւ Փրկիչ ամբողջ մարդկութեան: Ղուկաս եւս Փրկչին մասին տեղեկութիւններ կը հաւաքէր եւ հաւանաբար օգտուած էր Մարկոսի Աւետարանէն: Աւետարանի սկզբնաւորութեան Ղուկաս կը գրէ. «Շատեր նախապէս ձեռնարկեցին գրի առնել մեր մօտ պատահած դէպքերը, այնպէս ինչպէս մեզի աւանդեցին անոնք, որոնք սկիզբէն Աստուծոյ խօսքին ականատեսներն ու սպասաւորները եղան» եւ կը բացատրէ թէ ինք այդ բոլոր վկայութիւնները կը գրէ, որպէսզի ուրիշներուն համար աւելի դիւրին ըլլայ հասկնալ ճշմարտութիւնը Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի մասին:

Եկեղեցական մանրանկարչութեան մէջ Ղուկաս աւետարանիչը կը

ներկայացուի եզի խորհրդապատկերով, որովհետեւ իր Աւետարանին մէջ շեշտը կը դրուի Քրիստոսի քահանայական պաշտօնին վրայ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԵՏԱՐԱՆԻՉ

Յովհաննէս Աւետարանիչ Յիսուս Քրիստոսի ամենէն երիտասարդ առաքեալն էր եւ իր աւետարանը ամենէն վերջը գրուած է: Հետագային իր գործունեութեան վայրը դարձաւ՝ Եփեսոս քաղաքը, իր աշակերտին՝ Պրոքորոնի հետ, ուրկէ կը կառավարէր Փոքր Ասիոյ մէջ իր հիմնած եօթ եկեղեցիները: Անոնք բազմաթիւ հրաշքներ կատարած են, սակայն հաւածուած հեթանոսներուն կողմէ: Անոնք արքայութեան են յունական Պաթմոս կղզին, ուր քարայրի մը մէջ բնակած են: Ծերունի առաքեալը իր Աւետարանը Պրոքորոնին ձեռքով գրած է: Քրիստոսի «սիրելի աշակերտը»՝ Յովհաննէսը, յաճախ կը յիշէր, թէ Տէրը զինք որքան կը սիրէր: Երբ ան արդէն շատ ծերացած էր, քարոզած ժամանակ յաճախ կը կրկնէր. «*Ձաւակներս, սիրեցէ՛ք զիրար*»: Երբ իրեն կը հարցնէին թէ ինչո՞ւ այդքան շատ կը կրկնէր այդ բառերը, ան կը պատասխանէր. «*Այս է Տիրոջ պատուիրանը: Եթէ սեր ունենաք, ուրիշ բանի պէտք չէք ունենար*»: Ան կը խօսի նաեւ մեղքի, ապաշխարութեան, մկրտութեան եւ Քրիստոսի հետ հաղորդութեան մասին: Յովհաննէսի Աւետարանին գրութեան պատճառը լաւապէս արտայայտած է ինքը՝ Աւետարանիչը. «*Այսքանը գրուեցաւ, որպէսզի հաւատաք ու Անոր անունով յաւիտեանական կեանքը ժառանգէք*» (20:31): Անոր օգտագործած բազմաթիւ խորհրդանշանները՝ հաց, ջուր, լոյս՝ մեզի պէտք է յիշեցնեն իրական կեանքը, զոր միայն Աստուած կը շնորհէ: Յովհաննէս Առաքեալ Աւետարանէն բացի գրած է նաեւ այլ երեք ընդհանրական նամակներ եւ Յայտնութեան կամ Արքեպիսկոպիի գիրքը, ուր կը խօսուի վերջին ժամանակներու մասին:



ԻՒՔ ՀԱՄԵՏԻ ՊՈՒՇԷԼ

7 – Աստուծոյ Լոյսին աւետումը ուրիշ մարդոց

ԱՍՏՈՒԾՈՑ ՊԱՏՊԱՄԱՐԵՐՆԵՐԸ



Կանչեցէ՛ք ձեր ընտանիքի անդամները եւ անոնց թուրք ու մատիտ տուէ՛ք: Ապա, բոլորէ՛ն խնդրեցէ՛ք քանի մը վայրկեան մտածել հետեւեալին մասին: Եթէ դուք ուզէք լուր մը փոխանցել ամբողջ աշխարհին, ինչի՞ մասին կրնայ ըլլալ ատիկա: Ամէն մէկը կրնայ գրել իր ուզածը, սակայն կանուխ է դեռ քննարկումի տանիլ զանոնք:

Այսօրուան, ինչպէս նաեւ նախորդ դասերէն սորվեցանք, որ հրեշտակները (պատգամաբերներ) մարդոց կը փոխանցէին Աստուծոյ յայտնած լուրերը: Սակայն Աստուծոյ լուրը միայն հրեշտակները չէ որ կրնան յայտնել: Մենք սորվեցանք արդէն, որ Հին



Կտակարանի ժամանակաշրջանին, Աստուծոյ խօսքը մարգարէները եւս կը փոխանցէին:

Բացէ՛ք Ղուկասու Աւետարանին առաջին չորս համարները: Ո՞ր բառերը «լուր փոխանցել» կը յիշեցնեն մեզի: Ի՞նչ կ'ըսէ ան, Բարի Լուրի բովանդակութեան մասին:

Քրիստոսի աշակերտներն ու առաքեալները այդ բարի լուրը աւետողներն էին, այս բառին լայն իմաստով: Անոնք աշխարհի չորս կողմերը գացին, որպէսզի տարածեն մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Բարի Լուրը: «Առաքելահաւասար» կը կոչենք այն մարդիկը, որոնք Քրիստոսի հաւատքի լուրը տարածած են աշխարհի տարբեր ազգերուն: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնեայ դարձուցած է Հայաստանը, Նիւնոն՝ (Նունէ) Վրաստանը, Սուրբ Պատրիկը՝ Իռլանտան, եւ այլն:

Սուրբերէն շատերը Աստուծոյ պատգամաբերներն էին եւ Բարի Լուրը կը տարածէին աշխարհին: Իրենց կեանքին իսկ վկայութեամբ անոնք ցոյց կու տան մեզի, թէ Աստուած ինչպէ՞ս կ'ուզէ որ վերաբերուինք իրեն, ու մարդոց հետ: Հայոց թագաւորները կարելոր հարցերու շուրջ միշտ կը խորհրդակցէին սուրբ եւ իմաստուն հայրապետներու եւ վարդապետներու հետ, իմանալու համար Աստուծոյ կամքը:

Աստուած կ'ուզէ, որ մենք իր պատգամաբերները դառնանք: Կարդացէ՛ք Մատթէոսի Աւետարանին վերջին համարները (28:18-20), ինչպէս նաեւ Սր 16:15-16, Ղկ 24:44-48, Գրծ 1:8 համարները:

1. Մեր Փրկիչը՝ Քրիստոս, ի՞նչ լուր կ'ուզէ որ տարածենք մենք:
2. Որո՞ւ պէտք է փոխանցենք այդ լուրը:
3. Դուք ինչպէ՞ս պիտի հաղորդէք լուրը. խօսքո՞վ, գործերո՞վ, աղօթքո՞վ:
4. Այս պատգամը զոր գրած էիք, արդեօք կը յիշեցնէ՞ք Քրիստոսի լուրը: Հիմա կրնաք քննարկել զայն բոլորին հետ:
5. Ինչո՞ւ ընտրեցիք այդ լուրը: Ի՞նչ կարեւորութիւն կը ներկայացնէ այդ:
6. Լուրը գրած ժամանակ, բնաւ մտածեցի՞ք թէ ինչպէ՞ս պիտի հաղորդէք զայն: Արդեօ՞ք կարելի չէ ձեր միջոցներուն մէկ մասը յատկացնել Քրիստոսի Բարի Լուրի տարածման:

Աստուածաշունչ
Մատեան, Սուրբ
Գիրք, Գիրքերու
Գիրք, Աստուծոյ
Խօսք, Կենաց
Խօսք, Աստուծոյ
Յայտնութիւնը
մարդկութեան, Ա-
նոր խօսքերուն,
պատուիրաննե-
րուն, օրէնքնե-
րուն, իմաստու-
թեան, կանխասա-
ցութեան, երախ-
տիքին, գործե-
րուն եւ փրկագոր-
ծական ծրագրին
ամբողջութիւնը:

Քրիստոնեաներու նուիրական ու սրբազան Գիրքը:
Աստուածաշունչի գիրքերը մարդկութեան շնորհուած

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ



են շուրջ 1500
տարիներու ըն-
թացքին՝ Ս. Հոգիի
ներշնչումով եւ ա-
նոր կողմէ ընտրե-
լած շուրջ քառա-
սուն մարգարէ հե-
ղինակներու, աւե-
տարանիչներու եւ
առաքելներու
ծեռքով: Հին Կը-
տակարանը մա-
խապէս գրուած է
հին եբրայերէնով
եւ հետագային
թարգմանուած է
յունարէնի, 72
թարգմանիչներու

կողմէ, ուրկէ մաւել այդ թարգմանութեան տրուած **եօ-
թանասմից** անունը:

Տպագրական մեքենաներու եւ
շարժական մետաղեայ տառերուն
գիւտը կարելիութիւն ընծայեց
Սուրբ Գիրքը բազմաթիւ օրինակ-
ներով տպելու, որու հետեւանքով
շատերու ձեռքը հասաւ այդ հոգե-
ւոր հարստութիւնը: Նախապէս իւ-
րաքանչիւր Աստուածաշունչ ձե-
ռագիր կը պատրաստուէր: Բազմա-
թիւ վանականներ իրենց ամբողջ
կեանքը կը նուիրէին Աստուածա-
շունչի ընդօրինակութեան: Անոնց
ընդօրինակութիւնները կը գործած-
ուէին եկեղեցիներուն մէջ:

Քրիստոնէութեան պետական կրօն
հռչակումը (301), մէկ դար յետոյ
Գիրքերու Գիւտը եւ Ս. Գիրքի հայե-
րէն թարգմանութիւնը մեծագոյն
իրագործումները եղան Հայաստա-
նի մէջ: 5-րդ դարու պատմիչներ՝
Կորիւնի, Մովսէս Խորենացիի եւ
Ղազար Փարպեցիի համաձայն,
հայերէն թարգմանութիւնը երկու
հանգրուան ունեցած է: Առաջին
թարգմանութիւնը կատարուած է
գիրքերու գիւտէն անմիջապէս ետք
(405-406), մի քանի տարիներու ըն-

ՀԱՅԵՐԷՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ



թացքին: Մեսրոպ Մաշտոց, իր եր-
կու աշակերտներուն հետ եւ Սա-
հակ Ա. Պարթեւի համագործակցու-
թեամբ թարգմանած է Աստուածա-
շունչը, սկսելով Առակաց Գիրքի ա-
ռաջին գլխու երկրորդ համարի
«Ճանաչել զիմաստութիւն եւ զխը-
րատ, իմանալ զբանս համճարոյ»
խորհրդանշական տողէն: Այս
թարգմանութիւնը «փութանակի»,
այսինքն՝ հապճեա, արագ նկատ-

ուած է:

Երկրորդ թարգմանութիւնը սկսած
է Եփեսոսի Տիեզերական ժողովին
(431) յաջորդող տարիներուն, Սա-
հակ-Մեսրոպեան աշակերտներու
համագործակցութեամբ: Թարգմա-
նութիւնը կատարուած է Աստուա-
ծաշունչի Կեսարական բնագրին
վրայէն որուն Հին Կտակարանային
բնագիրը Եօթանասմից թարգմա-
նութիւնն էր:

Թարգմանութիւնը կը պարտինք
Սահակ-Մեսրոպեան աշակերտ-
ներ՝ Եզնիկ Կողբացիին, Յովսէփ
Պաղնացիին, Յովհան Եկեղեցա-
ցիին, Ղեւոնդ Վանանդեցիին, Կո-
րիւնի եւ Արծան Արծրունիին: Սա-
հակ-Մեսրոպեան այս բնագիրը ե-
ղած է Հայ Եկեղեցւոյ գործածած
կանոնական բնագիրը:

Աստուածաշունչի հայերէն թարգ-
մանութիւնը իր ճշգրտութեան, բը-
նագրային հարազատութեան, լեզ-
ուի ու ոճի գեղեցկութեան ու վեհու-
թեան պատճառաւ արժանացած է
«Թագուհի Թարգմանութեանց» կո-
չումին:

Հին Կտակարանի գիրքերէն մէկը՝ Սաղմոսագիրքը, հայերէն լեզուով առաջին անգամ տպուած է 1565 թուա-
կանին Վենետիկի մէջ, Արգար Թոխաթեցիի ջանքերով: Սուրբ Գիրքի հայերէն առաջին ամբողջական հրատա-
րակութիւնը, շատ դժուար պայմաններու մէջ, կատարուած է 1666-1668 թուականներուն, Ամսթերտամի մէջ
(Մեծն Կիւթենպէրկի կողմէ տպագրութեան գիւտէն եւ Աստուածաշունչի հրատարակութեան 212 տարի ետք):
Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի թելադրութեամբ այս հրատարակութիւնը յաջողցուցած են Ոսկան Երեւան-
ցիին եւ Մատթէոս Ծառեցիին: Հետագային Աստուածաշունչը հայերէն լեզուով բազմաթիւ հրատարակութիւն-
ներ ունեցած է, որոնցմէ կարեւորագոյններն են Յովհաննէս Վրդ. Զօհրապեանի (Վենետիկ, 1805), Արսէն Բագ-
րատունիի (Վենետիկ, 1860), Ս. Էջմիածնի Արեւելահայերէն (1994) եւ Անթիլիասի (Նոր Կտակարան, 1996,
2001) հրատարակութիւնները, ուրկէ առնուած են սոյն դասագիրքին Ս. Գրային հատուածներուն մէջերուն-
ները, որ համեմատուած է յունարէն բնագրին ու գրաբար թարգմանութեան հետ:

Աստուծոյ աւերած յուրը ինչպէ՞ս հաղորդուած է ամբողջ մարդկութեան


Օգտագործելով այստեղ դրուած բառերը, տուեալ նկարին տակ համապատասխան բառը դրէ՛ք:

Ընտրեցէ՛ք այս բառերուն մէջէն.— Հին Կտակարան, Նոր Կտակարան, Կիւթենպէրկ, Ոսկան Երեւանցի,
Եօթանասմից, քարէ, կաւէ, ապակեայ, մետաղեայ, մարդիկ, հրեշտակներ:



Աստուած անմիջապէս կը դիմէ

1



Հին Կտակարանը գրուած է

աղիւսներու եւ պապիրոսի վրայ:

2



Հին Կտակարանը հին եբրայերէնէն թարգմանուած է յունարէնի:

Այս թարգմանութիւնը կը կոչուի



Տպագիր Աստուածաշունչը, հայերէն լեզուով
տպուած առաջին տպագիր գիրքերէն է:

ՓՐԿԻՉԸ ԾՆԱԻ

Աւետարանին մէջ կը կարդանք Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին մասին, որ իբրեւ մարդ երկիր իջաւ, որպէսզի մեզ փրկէ մեր մեղքերէն ու մահէն: Ամէն մարդ չ'ուզեր հաւատալ, որ Աստուած ինք եկած է ու մեզի հետ կ'ապրի: Աւետարանիչները յստակօրէն նկարագրած են այն տեղը եւ ժամանակները ուր ծնած, ապրած ու գործած է Փրկիչը:

Կարդացէ՛ք Դուկասու Աւետարանը.

«Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիայի կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայր քաղաքը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ, Դաւիթի ցեղէն եւ ազգատոհմէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Զրէաստանի Բեթղեհէմ քաղաքը, Դաւիթ թագաւորին ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր»:

Սուրբ Գիրքը եւ պատմութիւնը

1. Ուշադրութեամբ կարդացէ՛ք բնագիրը եւ ընդգծեցէ՛ք այն մարդոց անունները, որոնք այդ ժամանակ կը կառավարէին Զոմէական Կայսրութիւնը եւ նահանգները:
2. Տարբեր գոյնի մատիտով ընդգծեցէ՛ք վերոյիշեալ շրջաններուն անունները, իսկ ուրիշ գոյնով մըն ալ՝ քաղաքներուն անունները որոնց մասին կը խօսուի:
3. Այդ ժամանակաշրջանին ո՞վ էր Զոմի կայսրը: Զանազան տարաբան մտքներ տեղի ունեցան: Կրնաք նաեւ Զոմէական Կայսրութեան պատմութիւնը ներկայացնող գիրքերուն մէջէն գտնել զայն: Ապա կարդացէ՛ք Աւետարանը (Մտ 2.1), որպէսզի գիտնաք այն անձին անունը, որ Յիսուսի ծննդեան օրերուն Յուդայի մէջ թագաւոր էր:



Փրկչին Ծնունդը

ԽՈՍՏԱՅՈՒԱԾ ՓՐԿԻՉԸ ԾՆԱԾ Է

«Եւ իրեշտակը անոր ըսաւ. **“Մի՛ վախճաք, ձեզի աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է”**» (Ղկ 2.10-11):

Հարիւրամեակներ շարունակ իրեաներ կը սպասէին Տիրոջ կողմէ խոստացուած Փրկիչը: Եգիպտական երկարատեւ ստրկութենէ եւ անապատին մէջ թափառելէ յետոյ, Տէրը իր ժողովուրդը տարաւ Աւետեաց երկիրը: Սակայն մարդիկ դարձեալ մոռցան զԱստուած, որու հետեւանքով ալ գերի տարուեցան ասորիներու եւ բաբելացիներու կողմէ: Եօթանասուն տարիներ Բաբելոնի մէջ գերի մնալէ ետք, Տէրը դարձեալ թոյլ տուաւ որ վերադառնան այն երկիրը, ուր ծնաւ աշխարհի Փրկիչը: Անոնք Նոր Տաճար կառուցանեցին եւ անոր շուրջ պարսպ քաշեցին: Սակայն վերջին մարգարէն՝ Մաղաքիայէն մինչեւ Փրկչին ծննդեան չորս հարիւր տարուան միջոցին, Պաղեստին դարձեալ ինկաւ, սկիզբը՝ յոյներուն, յետոյ՝ հռովմէացիներուն ձեռքը: Նուաճողները անուղղակիօրէն ճամբայ պատրաստեցին Աստուծոյ Բարի Լուրին տարածման: Կայսրութեան խօսակցական լեզուն յունարէնն էր, իսկ հռոմէացիները զբաղած էին ճամբաներ շինելով, որպէսզի դիւրութեամբ երթային մինչեւ կայսրութեան ծայրամասերը գտնուող երկիրները: Եւ ահա հասաւ ժամանակը ու Փրկիչը ծնաւ:

Փրկչին Ծնունդը

Յիսուս Քրիստոս ծնած է այն ժամանակաշրջանին, երբ Զրէաստանի բարձրագոյն իշխանութեան գլուխը կը գտնուէին հռոմէացիները: Անոնք տեղացի Զերովդէսին արտօնեցին որ կառավարէ իսրայէլացիները: Զերովդէսի նախորդները արդէն քանի մը սերունդ կառավարիչ եղած էին Պաղեստինի մէջ: Այդ իսկ պատճառով ան արդէն հպարտօրէն ինքզինք կը կոչէր Զերովդէս Մեծ: Զոմէացիները մարդահամար կազմակերպեցին, որպէսզի աւելի կանոնաւորութեամբ հաւաքեն տուրքերը եւ գիտնան թէ ինչքա՞ն հարկատուներ ունին: Իւրաքանչիւր անձ պիտի արձանագրուէր իր ծննդավայր քաղաքին մէջ: Աստուծոյ նախախնամութեամբ՝ Կոյս Մարիամը անուսնացած էր Յովսէփի հետ, որպէսզի ան հոգ տանէր անոր: Յովսէփ լսելով մարդահամարի հրահանգը, ընտանեօք ճամբայ ելաւ դէպի «Զրէաստան՝ Դաւիթի քաղաքը, որ Բեթղեհէմ կը կոչուէր», որովհետեւ ան Դաւիթի տունէն եւ ցեղէն էր: Զոմէական օրէնքներուն համաձայն՝ հոն պիտի արձանագրուէին իրենք: Գամբորդութիւնը շատ երկար եւ յոգնեցուցիչ էր մանաւանդ Մարիամի համար, որ ծննդաբերութեան կը պատրաստուէր: Երբ Սուրբ Կոյս Մարիամ եւ բարեպաշտ Յովսէփ Բեթղեհէմ հասան, քաղաքը խճողուած էր, որոնք բոլորն ալ մարդահամարին արձանագրուելու եկած էին: Այդ միջոցին ծննդաբերութեան օրերը ամբողջացած էին: Պանդուկներուն մէջ իրենց համար տեղ չգտնուեցաւ: Անոնք ստիպուեցան քարայրի մը մէջ գիշերել, ուր կենդանիներ դրած էին: Եւ ան որդի մը ծնաւ եւ զայն խանձարուրի մէջ փաթեւով մտուրին մէջ դրաւ:

Զրեշտակները կը փառաբանեն ծնունդը

Այդ գիշերը հովիւներ բացօթեայ հսկողութիւն կը կատարէին իրենց հօտերուն. «Եւ Տիրոջ իրեշտակը երեւցաւ անոնց, Տիրոջ փառքը ծագեցաւ անոնց շուրջ ու անոնք շատ վախճան: Եւ իրեշտակը անոնց ըսաւ. **“Մի՛ վախճաք, ձեզի աւետիս մը պիտի տամ, որ ամբողջ աշխարհին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ Օծեալ Տէրն է: Զետեւեալը ապացոյց ըլլայ ձեզի. ի՞նչ մանուկ մը պիտի գտնէ խանձարուրով փաթուած եւ մտուրին մէջ դրուած”**»:

Եւ յանկարծ այդ իրեշտակին միացաւ երկնաւոր զօրքերու բազմութիւն մը, որ կ'օրհնաբանէր զԱստուած ըսելով. «**Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն**»:

Հազիւ իրեշտակը երկինք բարձրացած՝ հովիւները իրարու ըսին. «**Եկէ՛ք Բեթղեհէմ երթանք եւ տեսնենք պատահածը, այն ինչ որ Տէրը մեզի յայտնեց**»:

Անոնք աճապարանքով զացին եւ հոն գտան Մարիամն ու Յովսէփը, ինչպէս նաեւ մանուկը՝ մտուրին

մէջ դրուած:

Զովիւները այս բոլորը մարդոց պատմեցին: Իսկ Կոյսը այդ բոլոր ըստածները իր մտքին մէջ կը պահէր ու կը խորհէր անոնց մասին: Ապա հովիւները տուն դարձան եւ կը փառաւորէին ու կ'օրհնէին զԱստուած իրենց տեսած հրաշքին համար:

Սիմէոն Ծերունին

Տաճարին մէջ կը դիմաւորէ մանուկ Յիսուսը

Երբ մանուկը 8 տարեկան եղաւ՝ զայն թլփատեցին եւ անոր տունին այն անունը, զոր իրեշտակը ըսած էր Կոյսին: Ամիս մը վերջ, Մարիամը եւ բարեպաշտ Յովսէփ, Մովսէսի Օրէնքին համաձայն մանուկը Երուսաղէմ տարին, Տիրոջ ընծայելու համար, ինչպէս գրուած էր Օրէնքին մէջ. «**Ամէն արու զաւակ, որ իր մօր անդրանիկն է՝ Տիրոջ պիտի ընծայուի**»:

Եւ Տիրոջ Օրէնքին մէջ ըստածին համաձայն՝ ընծայ պէտք է տանիլ զոյգ մը տատրակ կամ աղանձի երկու ծագ: Սիմէոն Ծերունին զանոնք դիմաւորեց Տաճարին մէջ: Սիմէոնը արդար ու աստուածավախ մարդ էր: Ան սուրբ գիրքերը կ'ուսումնասիրէր եւ կը սպասէր Աստուծոյ կողմէ Իսրայէլին շնորհուելիք մխիթարութեան: Սուրբ Զոգիէն ան հրաման ստացած էր չմեռնիլ, մինչեւ տեսնէ Օծեալը: Աստուծոյ նախախնամութեամբ ծերունին այդ օր Տաճար գնաց: Մանուկը տեսնելով՝ Սիմէոն զայն իր գիրկը առաւ եւ փառք տուաւ Աստուծոյ:

Սիմէոն օրհնեց սուրբ ընտանիքը եւ Աստուածամօր ըսաւ. «**Այս մանուկը Իսրայէլի ժողովուրդէն շատերու անկումին եւ շատերու փրկութեան պատճառ պիտի ըլլայ**»:

Անիկա նաեւ հակառակութեան նշան պիտի ըլլայ եւ շատերու սրտերուն խորհուրդները պիտի յայտնէ: **Գալով քեզի, քու ալ սրտդ սուր մը պիտի անցնի**»:

Սակայն Տաճարին մէջ Սիմէոն առանձին չէր որ մանուկին մէջ տեսաւ խոստացուած Փրկիչը: Աննա Մարգարէտիւին՝ բարեպաշտ կին մը, որ Տաճարէն չէր հեռանար եւ ծոմապահութեամբ եւ աղօթքով կը ծառայէր Աստուծոյ, Յիսուս Մանուկը տեսնելով, փառք տուաւ Տիրոջ: Եւ մանուկին մասին կը խօսէր բոլոր անոնց, որոնք կը սպասէին Երուսաղէմի փրկութեան:

Սոգերը այցելութեան կու տան մորածին թագաւորին

Մանուկին ծնունդէն քանի մը օր յետոյ, Արեւելքէն (հաւանաբար Պարսկաստանէն կամ Միջագետքէն) իմաստուն մոգեր եկան Երուսաղէմ: Անոնք բոլորին կը հարցնէին. «Ո՞ր է իրեաներու արքան, որ ծնաւ, որովհետեւ անոր աստղը տեսանք արեւելքի մէջ եւ եկանք անոր երկրպագելու»:

Այս մասին լսելով՝ Զերովդէս եւ Երուսաղէմի բնակիչները վախճան: Ան իր մօտ կանչեց թահմայապետներն ու դպիրները, որպէսզի անոնցմէ

հասկնայ թէ ո՞ր պիտի ծնի Փրկիչը: Անոնք պատասխանեցին. «Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքին մէջ, որովհետեւ մարգարէն այսպէս գրած է. “Եւ դուն, Բեթղեհէմ, Յուդայի երկիր, Յուդայի քաղաքներուն մէջ փոքրագոյն չես, քեզմէ իշխան մը պիտի ելլէ, որ իմ ժողովորդս՝ Իսրայէլը, պիտի հովուէ”»:

Հերովդէս գաղտնի իր մօտ կանչեց մոգերը եւ անոնց հարցուց թէ ե՞րբ տեսնուած է այն աստղը, որ զիրենք Յուդա բերած էր: Իսկ յետոյ զանոնք Բեթղեհէմ դրկեց՝ ըսելով. «Գացէ՛ք, ստուգեցէ՛ք նորածին մանուկը եւ երբ

գտնէք՝ զիս ալ տեղեակ պահեցէ՛ք, որպէսզի ես ալ երթամ ու երկրպագեմ անոր»: Անոնք թագաւորին խօսքը մտիկ ընելով՝ գացին: Իսկ այն աստղը որ իրենք Արեւելքի մէջ տեսած էին՝ զիրենք կ'առաջնորդէր, մինչեւ որ եկաւ ու կանգ առաւ իոն ուր մանուկ Յիսուսը կը գտնուէր: Անոնք շատ ուրախացան: Սոգերը քարայր մտնելով երկրպագեցին եւ Աստուածորդիին նուէրներ տուին՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Յետոյ երագի մէջ Աստուծմէ պատուէր ստացան չվերադառնալ Հերովդէսի մօտ եւ ուրիշ ճամբով վերադարձան իրենց երկիրը:

Կանոն Ծննդեան եւ Աստուածայայտութեան Երրորդ Օր (Տէր Յերկնից ԴԿ.)

Այսօր Բեթլեհէմի այրին մէջ ծնաւ Քրիստոս եւ երկինքի հրեշտակները սոսկումով զարմացած էին, որովհետեւ մարմնով ծնած տեսան Բանն Աստուածը:

Աստղը կը տեղեկացնէր մոգերուն, ընծաներ նուիրել աստուածութեանը. եւ հովիւները հրեշտակներուն հետ կ'երգէին ըսելով. Փառք Բարձրեալ Աստուծոյ, որ մեր փրկութեան համար Բանն Աստուածը ղրկեց:

Սոգերուն նուէրները

Ոսկի.— Աստուածաշնչական ժամանակներէն սկսեալ մինչեւ մեր օրերը ամէնէն թանկարժէք մետաղը կը համարուի: Հմուտ վարպետներու համաձայն, 30 կրամ ոսկին այնքան կրնան բարակցնել, որ 18 քառակուսի մեթր մակերես ունենայ: Այնքան բարակ կը դառնայ, որ մէջէն լոյս կը սկսի թափանցել:

Կնդրուկ.— Խե՛ծ, որ Արաբիոյ եւ Եթովպիոյ մէջ կնդրուկի ծառերէն կը հաւաքեն: Ծառի կեղեւը կը վիրաւորէին եւ դէպի վար ճեղք կը բանային: Շուրջ 3 ամսուան ընթացքին ծառին հիւթը դանդաղօրէն կը հոսէր եւ կը պնդանար: Կնդրուկ խե՛ծը ունէր գոց դեղին գոյն եւ փոշիով խառնուած կ'ըլլար: Երբ այրէր՝ սպիտակ ծուխ դուրս կու տար եւ սքանչելի բուրմունք:

Զմուռս.— Հարաւային Արաբիոյ մէջ աճող ծառի խե՛ծ, զոր կարելի է ունենալ ծառին վրայ ճեղքեր բանալով: Լաւագոյն տեսակը նուիրական իւղի բաղադրիչներէն մէկն է: Հին ժամանակ եգիպտացիները այս խե՛ծը կը գործածէին փարաւոններն ու ազնուականները զմռսելու համար:

Ձախ կողմի նշուածներուն մէջ կարդացէ՛ք հաստուածներ՝ ոսկիի, կնդրուկի եւ զմուռսի մասին: Գիծերով իրարու միացուցէ՛ք անոնց համապատասխանող ամփոփ նախադասութիւնները:

ՂԼ 2.1-2 Աստուծոյ կողմէ հաստատուած օրէնքին համաձայն, ոսկին կ'օգտագործուէր հոգեւորականներու տօնական զգեստաւորման մէջ:

Առ 25.11-12 Զմուռուած ննջեցեալներու մարմինները փաթող պատամք:

Մր 15.23 Կնդրուկի բոյրը հաճելի է Աստուծոյ:

Եր 6.19-20 Զմուռսը մեռնողին ցաւերը կը մեղմէ:

Ել 39.1-5 Տիրոջ բերուած երկու ընծաներուն մասին մարգարէութիւն:

Ես 60.6 Աստուած կ'ըսէ, որ կնդրուկի ընծայաբերումը ոչինչ կ'արժէ, եթէ մարդիկ կը մերժեն Անոր ուսուցումները:

Յհ 19.39-40 Զմուռս բառը ծագում առած է «մարա» (դառնութիւն) բառէն:

Ել 15.22-23 Իմաստուն խօսքերը այնքան թանկագին են, որ հեղինակը զանոնք ոսկիի կը նմանցնէ:

ԻՒՐ ՀԱՐՏԵՐ ԽՐԺԷԼ



Տեստընդառաջ (մանրամկար)

Տիրոջ ընծագութեան ՏԱԾԱՐԻՆ

Այս դասին մէջ պիտի սորվինք Տաճարին մէջ մանուկ Յիսուսին, Սիմէոն Ծերունիին եւ Աննա մարգարէուհին հանդիպման մասին:

Մովսէսին տրուած Օրէնքին համաձայն, ծնողները իրենց անդրանիկ զաւակը կը բերէին Տաճար՝ հազիւ լրացած անոնց քառասուներորդ օրը: Մանուկը Աստուծոյ կը ներկայացնէին եւ զոհ կը մատուցանէին, իբրեւ նշան մաքրութեան: Հարուստները գառնուկ կը զոհէին, իսկ աղքատները՝ երկու տատրակ կամ աղանիի ձագ: Սուրբ Հոգին Սիմէոնին ըսած էր, որ պիտի չմեռնի մինչեւ տեսնէ Փրկիչը: Այդ օր Սիմէոն կ'աճապարէր Տաճար գալ. ան կը զգար որ խոստումը պիտի կատարուի: Երբ Յովսէփ եւ Սուրբ Կոյսը Տաճար բերին մանուկը, Աստուած Սիմէոնը արժանացուց մեծ պատիւի: Ան իր զիրկը առաւ Յիսուսը, օրհնեց Տէրը եւ յետոյ ըսաւ. «Հիմա, Տէր, խաղաղութեամբ արձակե՛ք ձառնդ քու խօսքիդ համաձայն, որովհետեւ աչքերս տեսան փրկութիւնդ, զոր պատրաստեցիր բոլոր ժողովուրդներուն լոյս ըլլալու, հեթանոսներուն՝ յայտնութիւն եւ փառք՝ Իսրայէլին, քու ժողովուրդիդ համար»:

8 – Տիրոջ ընծայումը Տաճարին

Աննա մարգարէուհին 84 տարեկան էր: Անոր ամուսինը մեռած էր իրենց ամուսնութեան 7-րդ տարին եւ այդ օրէն ան Տաճարէն դուրս չէր ելած: Աննան միշտ կ'աղօթէր՝ Աստուծոյ եւ ծնապահութեամբ կ'ապրէր առաքինի ու խոնարհ կեանք մը: Եւ ան, մօտենալով Յիսուս մանուկին, օրհնեց զԱստուած եւ մանուկին մասին կը պատմէր բոլոր անոնց, որոնք երուսաղէմի փրկութեան կը սպասէին:

Տեսանընդառաջը, կամ Քրիստոսի Քառասներորդ Տաճար գալստեան տօնը կը տօնենք Ս. Ծնունդէն եւ Աստուածայայտնութենէն (Յունուար 6) ետք եկող 40-րդ օրը (Փետրուար 14-ին): Ահա շարական մը Տեսանընդառաջի Կանոնէն.

Այսօր կենարարը տաճար եկաւ եւ Սիմէոնի գիրկին մէջ զգուցեալ. երուսաղէմը ցնծութեամբ ընդունեց զայն:

Լոյս հօրմէ լոյս իբրեւ ղրկուեցար եւ մարմնացար Սուրբ Կուսէն, որպէսզի վերանորոգես Ադամի ապականութիւնը:

Դուն իբրեւ Աստուած երկրի վրայ երեւցար եւ մարդոց մէջ շրջեցար, եւ ամբողջ տիեզերքը փրկեցիր Ադամի անէծքէն:

(Օրհնութիւն ԴԶ)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Եկեղեցին քանի մը տարբեր առիթներով կ'օրհնէ նորածին երեխաները, երբեմն յատուկ աղօթքներով:

- 40-րդ օրը, կամ երբ մայր ու երեխայ առաջին անգամ Տաճար կ'երթան:
- Երբ մանուկը կը մկրտուի ու կը հաղորդուի, յաւիտեական կեանքի ժառանգորդ դառնալով:
- Մկրտութենէն ութ օր ետք, երբ կը վերցնեն նարօտը եւ կը լուան մանուկին միւռնաօծ մարմինը:
- Մկրտութենէն ու դրոշմէն ետք, երբ առաջին անգամ հաղորդութիւն կը ստանայ

ՔԱՆԱՍՈՒՆՔԷ ՀԱՆՆԼՈՒ ԱՂՕԹԷ

(Քառասներորդ օրը, կամ երբ մանուկը եւ մայրը առաջին անգամ եկեղեցի կը մտնեն): — Քահանային աղօթքը —:

Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ծնունդէդ քառասուն օրեր ետք մօրդ՝ Մարիամի հետ Տաճար եկար Աստուծոյ ընծայուելու Մովսէսական Օրէնքին համաձայն եւ Սիմէոնի գիրկին մէջ զգուցեար: Կ'աղաչենք եւ կը խնդրենք քեզմէ, պահպանէ՛ այս մանուկը եւ շնորհներով մեծցուր՝ քու անտեսանելի զօրութեամբդ: Ձայն արժանի ըրէ՛ մը՝ կըրտութեան, որպէսզի վերստին ծնի սուրբ աւազանէն եւ մարմինիդ ու արեանդ հաղորդուելով եւ Աստուծոյ որդեգրութեան գրաւական Սուրբ Հոգին ստանալով՝ մարմին եւ անդամ դառնայ սուրբ եկեղեցիիդ: Արժանի ըրէ՛ նաեւ քու ընտրեալներուդ վերապահուած ժառանգութեան հասնելու սուրբ աջիդ հովանիին պահպանութեամբ: Եւ Հօր ու Սուրբ Հոգիին հետ քեզի՛ կը վայելեն փառք, իշխանութիւն ու պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՓԻՆԻՉԻՆ ՊԱՏԱՆԵԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Այս դասագիրքին մեջ Սուրբ Գրային պատմությունները ամփոփ ձևով ներկայացրած են, սակայն կ'ուզենք որ դուք ձեզի երթաք ու կարդաք եւ սորվիք Աստուածաշունչը: Ահա քանի մը ուղղութիւններ ձեզի, որպէսզի կարենաք սկսիլ ձեր ընթերցումներուն եւ աւելի լաւ սորվիք այն ինչ որ կը կարդացուի եկեղեցւոյ մէջ:

Ինչպէ՞ս կարդալ Սուրբ Գիրքը

Լաւ պիտի ըլլար որ չափ մը դնէիք: Մի՛ ջանաք կարդալ այնքան ինչքան կարդալու ախորժակ ունիք: Նախընտրելի է կարճ հատուած մը ընթերցելով սկսիլ, քան թէ մեծ հատուածներ կարդալով սկսիլ եւ յետոյ ձանձրանալ ու ամէն ինչ մէկդի ձգել:

Այս տարի մեր ուսումնասիրութեան նիւթը Նոր Կտակարանն է, ուստի սկսինք Մարկոսի Աւետարանէն: Ամէնէն կարճն է այս Աւետարանը եւ նախնական բոլոր ծանօթութիւնները կու տայ մեզի Աստուծոյ Որդիին՝ մեր Յիսուս Քրիստոսի կեանքին ու վարդապետութեան մասին: Ամէն օր մէկ կամ երկու գլուխ կարդացէք: Փորձեցէ՛ք գրի առնել կարեւորագոյն գաղափարները կամ դէպքերը, ինչպէս նաեւ ձեր մտածումները կամ խորհրդածութիւնները: Որպէսզի կարելի ըլլայ աղօթքի մթնոլորտ ստեղծել, խորհրդածեցէք Աստուծոյ մասին, ամէն օր մէկ կամ երկու սաղմոս կարդացէք: Միշտ նոյն ժամուն մի՛ կատարէք ձեր ընթերցումը:

Ինչպէ՞ս մտիկ ընել եկեղեցւոյ մէջ ընթերցուած Սուրբ Գիրքը

Ուշի ուշով հետեւեցէք Սուրբ Գիրքի ընթերցումին:



Յիսուս Տաճարին մէջ


ՓՈՔՐԻԿ ՄԱՆՈՒԿ ՄԸ . ԱՍՏՈՒԱԾ ՅԱՒՏԵՆԱԿԱՆ

«Եւ մանուկը մեծցաւ, զօրացաւ եւ իմաստութեամբ լեցուեցաւ: Աստուծոյ շնորհքը կար անոր վրայ» (Ղկ 2.40):

Մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, իրապէ՛ս Աստուծոյ Որդին է: Ան ունի Աստուծոյ ամբողջ զօրութիւնն ու փառքը: Աստուած կ'ուզէ, որ մենք ապիկա լաւապէս գիտնանք: Ուրիշ ճշմարտութիւն մը եւս կայ, զոր Աստուած կ'ուզէ որ մենք լաւ հասկնանք. այն՝ որ Աստուծոյ Միածին Որդին մարդեղացաւ: Յիսուս Քրիստոս մեզի եկաւ իբրեւ մանուկ, սակայն Ան միաժամանակ յաւիտենական Աստուած էր: Սուրբ Ծննդեան շարականը կ'ըսէ. «Մանուկ անժամանակ ի հօրէ անսերմն ի կուսէ. ի գիրկս մօր զգուեցաւ այսօր արարիչն երկնի եւ երկրի» (Աստուածայայտնութեան Բ. Օր. Օրհնութիւն ԴԿ.): Աստուած մարդկային բնութիւն զգեցաւ այնպէս ինչպէս մենք ալ, մեր կեանքի սկզբնաւորութեան անօգնական մանուկ կ'ըլլանք: Սակայն մենք գիտենք, որ ան սովորական երեխայ մը չէր բնաւ: Տասներկու տարեկանին՝ Տէրը արդէն Տաճարին մէջ Օրէնքի մեծամուն ուսուցիչներուն հետ նստած կը զրուցէր: Ան միայն մտիկ չէր ըներ, այլ՝ հարցումներ կը հարցնէր անոնց ու կը զարմացնէր բոլոր զինք լսողները: Մանուկը կը մեծնար, Սուրբ Զոգիով կը զօրանար եւ իմաստութեամբ կը լեցուէր:

1. Սուրբ Պատարագի ընթերցումները ընդհանրապէս քաղուած կ'ըլլան Զին Կտակարանի մարգարէութիւններէն եւ կամ Առակաց Գիրքէն, յետոյ Նոր Կտակարանի Գործք Առաքելոցէն, առաքելական մատակներէն եւ Աւետարաններէն: Ամէն անգամ աշխատեցէ՛ք ձեր միտքը պահել գէթ մէկ գաղափար:
2. Ուշադրութեամբ հետեւեցէք նաեւ ճաշու Աւետարանէն առաջ երգուող սաղմոսներուն, որոնք ամէն շաբաթ եւ տօներու համաձայն փոփոխութեան կ'ենթարկուին:

Երկար ճանապարհ դէպի փրկութեան տունը



1. Յիսուս մանուկ ծնած է Զրէաստանի մէջ, սակայն անոր ընտանիքը կ'ապրէր քաղաքին մէջ, որ կը գտնուէր _____:

Տե՛ս Ղկ 2.4: Գրեցէ՛ք քաղաքին կամ շրջանին անունը: Քարտէսին վրայ գիծերով իրարու միացուցէք այն քաղաքը, ուր Յովսէփ կ'ապրէր եւ այն քաղաքը ուր Փրկիչը ծնաւ:

2. Աստուծոյ հրեշտակը երազի մէջ Յովսէփը զգուշացուց եւ ան ամբողջ ընտանիքով փախաւ _____ եւ հոն մնաց միմեծի Դերովղէսի մօտը: Իսկ յետոյ Աստուծոյ տնօրինումով վերադարձաւ _____ երկիր, սակայն կը վախճար, որովհետեւ շատ ապահով չէր:

Տե՛ս Մտ 2.13-15 եւ 19-21: Դետեւեցէ՛ք այդ ճամբորդութեան:

3. Վերջապէս Յովսէփ ճամբորդեց որպէսզի բնակի _____, այդ պատճառով ալ Յիսուս Քրիստոս հետագային անուանուեցաւ _____:

Տե՛ս Մտ 2.22-23: Յոյց տուէք Յիսուս մանուկին ուխտագնացութեան ճամբան դէպի Երուսաղէմի Տաճար (Ղկ 2.41):

Մանուկ Յիսուս կը մեծնայ եւ իմաստութեամբ կը լեցուի

Մոգերուն այցելութենէն ետք Յովսէփ երազին մէջ տեսաւ Աստուծոյ հրեշտակը, որ իր մօտ եկաւ: Գրեշտակը ըսաւ. «Ոտքի՛ ելիր, առ մանուկը ու իր մայրը եւ Եգիպտոս փախչիր. եւ այնտեղ մնա՛ մինչեւ որ քեզի ըսեմ, որովհետեւ Դերովդէս մանուկը կը փնտռէ սպաննելու համար զայն»: Եւ Յովսէփ առնելով Մարիամն ու մանուկը, գիշերով փախաւ Եգիպտոս: Ընտանիքը այնտեղ մնաց, հեռու բոլորէն, մինչեւ Դերովդէս թագաւորին մահը (հաւանաբար քանի մը տարի):

Դերովդէս կը հրամայէ մանուկները քարդել

Դերովդէս շատ բարկացաւ, երբ տեսաւ որ մոգերը խաբեցին զինք: Մոգերէն իմանալով Նոր Թագաւորին մասին, ան աւելի հետաքրքուեցաւ Անով: Ան մոգերը հարցուփործեց աստղին ու անոր երեւումին մասին: Դերովդէս կ'ուզէր մանաւանդ գիտնալ թէ ե՞րբ ծնած էր Նոր Թագաւորը: Ան նաեւ հարցուփործեց հրեայ իմաստունները, հասկնալու համար թէ մարգարէներու կանխասացութեան համաձայն, ո՞ր պիտի ծնէր Մանուկը:

Դերովդէս շատ խիստ մարդ էր: Ան շատերը սպաննած էր, նոյնիսկ իր ընտանիքի անդամներէն ոմանք եւ հռովմէացիները յաճախ կը կաշառէր, որպէսզի ինք դառնայ տիրակալ: Իսկ հիմա, ամէն միջոցի դիմելով կ'ուզէր գտնել եւ սպաննել մանուկը, որ իր դիրքին, ու դժուարաւ ձեռք ձգած փառքին կը սպառնար: Տեսնելով որ մոգերը չվերադարձան Երուսաղէմ եւ իրեն չըսին թէ ո՞ր կը գտնուի Մանուկը, որուն երկրպագութեան զացած էին, Դերովդէս սաստիկ բարկացած, հրամայեց սպաննել Բեթղեհէմի սահմաններէն ներս գտնուող բոլոր երեխաները՝ մինչեւ երկու տարեկան:

Վերադարձ Նազարէթ

Երբ Դերովդէս մեռաւ՝ Տիրոջ հրեշտակը երազի մէջ դարձեալ երեւցաւ Յովսէփին եւ ըսաւ. «Ոտքի՛ ելիր, առ այդ մանուկը եւ իր մայրը եւ վերադարձիր Իսրայէլի երկիրը, որովհետեւ մեռան անոնք, որոնք այդ մանուկին մահը կ'ուզէին»: Եւ Յովսէփ առաւ իր ընտանիքը ու եկաւ Իսրայէլ: Լսելով որ Զրէաստանի մէջ իր հօր՝ Դերովդէսի փոխարէն թագաւոր եղած է Արքեղայոս, Յովսէփ վախցաւ այնտեղ երթալու եւ երազին մէջ հրաման ստանալով, զմաց Գալիլիոյ կողմերը եւ իր տունը հաստատեց Նազարէթի մէջ: Այսպիսով իրականացաւ մարգարէներուն խօսքը, թէ՛ Փրկիչը Նազովրեցի պիտի

կոչուի: Մանուկը կ'աճէր ու կը զօրանար, իմաստութեան լեզուն եւ Աստուծոյ շնորհքները իր վրայ էին:

Անոր մանկական տարիներուն մասին շատ քիչ բան գիտենք: Ուրիշ հրեայ մանուկներու նման Ան ալ կը սորվէր Զին Կտակարանը եւ Սուրբ Գիրքի շատ մը մասերը գոց կը սորվէր: Բարեպաշտ Յովսէփ ատաղձագործ էր, այդ իսկ պատճառով մանուկ Յիսուս եւս սորվեցաւ այդ արհեստը:

Տաճար այցելութիւն

Ամէն տարի Զատիկի տօնին Մարիամն ու Յովսէփը Երուսաղէմ կ'երթային յիշելու թէ՛ դարեր առաջ ինչպէ՞ս Տէրը իրենց հայրերը դուրս բերաւ Եգիպտոսէն: Անոնք կը ճամբորդէին դէպի Սուրբ Քաղաք զացող իրենց ազգականներուն ու բարեկամներուն հետ:

Երբ մանուկը 12 տարեկան եղաւ, իրենց հետ առին զայն: Տօնակատարութիւնը վերջանալէ ետք անոնք տուն վերադարձան, նոյնիսկ չմտածելով որ Յիսուս կրնար քաղաքը մնացած ըլլալ: Անոնք այնպէս կը խորհէին, որ Յիսուս իրենց մօտերը, ուխտաւորներու բազմութեան մէջ է: Սակայն քիչ ետք սկսան մտահոգուիլ եւ հարցնել բոլորին, թէ արդեօք մէկը տեսա՞ծ էր զինք:

Մանուկը եւ Օրէնքի վարդապետները

Մարիամի եւ Յովսէփի մտահոգութիւնը զուր տեղը չէր եւ անոնք դարձեալ Երուսաղէմ վերադարձան: Երեք օրեր անոնք իրենց զաւակը փնտռեցին: Ի վերջոյ զինք գտան Տաճարին մէջ, վարդապետներուն հետ նստած. Ան մտիկ կ'ընէր զանոնք ու հարցումներ կը հարցնէր: Բոլոր ներկաները կը զարմանային անոր իմաստութեան եւ տրուած հարցումներուն Իր տուած պատասխաններուն վրայ:

Երբ Աստուածամայրն ու Յովսէփը տեսան Յիսուսը, շատ զարմացան: Սուրբ Կոյս Աստուածամայրը հարցուց. «Տղա՛ս, այն ի՞նչ ըրիր դուն մեզի. ահաւասիկ հայրդ եւ ես իրար անցած քեզ կը փնտռէինք»: Իսկ Ան պատասխանեց. «Ինչո՞ւ համար զիս կը փնտռէիք. չէի՞ք գիտեր որ ես Դօրս տան մէջ պիտի ըլլամ»: Սակայն անոնք չանդրադարձան, թէ Ան ինչո՞ւ իր Զայրը կոչեց զԱստուած: Մանուկը ծնողներուն հետ Նազարէթ վերադարձաւ եւ հնազանդ եղաւ անոնց: Իսկ մայրը իր սրտին մէջ կը պահէր Անոր բոլոր ըսածները: Յիսուս կը զօրանար իմաստութեամբ, կ'աճէր տարիքով եւ Աստուծոյ ու մարդոց առջեւ շնորհք կը գտնէր:

ՎԱԽԻ ԶԳԱՅՈՒՄ

Ամէն մարդ ալ բանէ մը վախցած կ'ըլլայ ու այդ միջոցին վախի ազդեցութեան տակ բան մը ըրած: Ասոր մէջ սխալ բան չկայ: Սակայն երբ վախը ստիպէ մեզ որ խաբենք ուրիշները եւ անոնց վնաս պատճառենք, այն ատեն սխալ ըրած կ'ըլլանք: Յիշենք այն մարդիկը, որոնց մասին այս եւ նախորդ դասերուն ընթացքին խօսեցանք: Անոնցմէ ոմանք վախի ազդեցութեան տակ կարգ մը սխալներ գործած են: Սակայն վախը կը ստիպէ՞ր արդեօք իրենց որ սուտ խօսին ու վնաս հասցնեն ուրիշներուն:

Ճշգրիտ պատասխանները գտնելով, ծախ սիւնակի ճիշդ ամունը կամ տառը գրեցէք աջ կողմի երեք սիւնակներէն որեւէ մէկուն մէջ: Եթէ դժուար ըլլայ ձեզի համար, նայեցէ՛ք այս եւ նախորդ դասերու բովանդակութեանց:

Ամուն	Իմ(մեր) վախը կախեալ էր	Ի՞նչ կ'ընէի եւ (կ'ընէինք) վախի ազդեցութեան տակ	Ի՞նչ պատահեցաւ ապա
Ա. Մարիամ	1. Աստուծոյ հրեշտակին փայլուն, կուրցնող լոյսին տեսքով:	1. Մենք շուտով ըրինք այն ինչ որ հրեշտակը հրամայեց մեզի:	1. Թէեւ ես իմ զաւակիս մասին ըստածներէն շատ բան չէի հասկնար, սակայն մեր ընտանիքին մէջ սէրն էր իշխողը եւ իմ զաւակս բարի, խօսք մտիկ ընող ու բոլորին նկատմամբ սէր ունեցող տղայ էր:
Բ. Դերովդէս	2. Մտահոգութեամբ, որ իմ զաւակս կորսուած է:	2. Ես կը փաթթուեցայ զաւակիս:	2. Ի վերջոյ հասկցանք որ այդ մանուկը Փրկիչն նախակարապետը պիտի ըլլայ:
Գ. Դովիւները դաշտին մէջ	3. Իմ ընտանիքին համար մտահոգութեամբ: Ի՞նչ պիտի ըլլայ եթէ նոր կառավարիչը իր հօր նման անգութ ըլլայ:	3. Ընտանիքիս հետ ուրիշ տեղ գացի:	3. Ես դարձեալ խօսելու կարողութիւն ունեցայ եւ կը փառաբանէի զԱստուած: Սքանչելի է, որ զաւակ ունեցայ այդքան տարիներ սպասելէ ետք:
Դ. Ջաքարիա	4. Տարօրինակ հրաշքներով, զորս տեսած ենք մեր ազգականներուն կեանքին մէջ:	4. Ես բազմաթիւ երեխաներ սպաննեցի, որպէսզի վստահ ըլլայի, որ անոնցմէ ոչ մէկը պիտի փոխարինէ զիս:	4. Անձնասպանութեան փորձս ապարդիւն եղաւ, կասկածելով զաւակներուս վրայ, մի քանիս սպաննեցի ու վերջապէս խղճալի կեանք մը ունեցայ:
Ե. Յովսէփ	5. Անով, որ թագաւորութիւնս կը կորսնցնեմ:	5. Դրացիներու հետ կը խօսէիք, թէ ի՞նչ պիտի ըլլայ այս մանուկը ապագային:	5. Մարիամի եւ Յիսուսի համար ես կրցայ իսկական տուն մը ստեղծել եւ տեսայ անոր մեծնալը ու չափաւաս դառնալը:
Զ. Մարդիկ, որոնք Ջաքարիայի եւ Եղիսաբէթի հետ կը սպասէին, թէ ե՞րբ պիտի ծնի Յովհաննէս Սկրտիչ:	6. Տաճարի խնկարկութեան սեղանին մօտ հրեշտակին յայտնութեամբ:	6. Ես կասկածի տակ առի հրեշտակին ըսածը եւ այդ պատճառով պատժուեցայ:	6. Մարդիկ ապշեցան լսելով հրեշտակին մեզի տուած այցելութեան մասին: Զըպարտ էինք որ անապատի մէջ այսպիսի փորձառութիւն ունեցանք, որովհետեւ ատիկա օգտակար եղաւ ուրիշներու հաւատքի ամրապնդման համար:

Այս մարդիկը ի՞նչ վախեր ապրած են: Անոնք բոլորն ալ վախի ազդեցութեան տակ գործած են: Անոնց արարքները բարիքի՞ թէ չարիքի պատճառ դարձած են: Վախի ազդեցութեան տակ անոնցմէ մէկը ուրիշին չարիք պատճառա՞ծ է արդեօք: Որո՞նք բարիք գործած են ուրիշներուն, իրենց վախին հետեւանքով: Մեր արարքներուն մասին կը խորհի՞նք արդեօք: Վստա՞հ ենք արդեօք որ վախի ազդեցութեան տակ ուրիշին չարիք պիտի չհասցնենք: Ուրիշներուն բարիք կ'ընե՞նք արդեօք:

Բնաւ մտածա՞ծ էք ձեր նախահայրերուն կամ անոնց նախնիներուն մասին: Ո՞ր ապրած են անոնք եւ ե՞րբ: Քանի՞ զաւակ ունեցած են անոնք: Ի՞նչ գործ աշխատած են: Անոնց կեանքէն որեւէ պատմութիւն գիտե՞ք արդեօք: Թերեւս անոնցմէ ոմանք բանակի մէջ ծառայած են ու պաշտպանած իրենց հայրենիքը: Իսկ ուրիշներ կրնան քահանայ եղած ըլլալ ու Աստուծոյ ծառայած, որոնց կողքին եղած են սքանչելի սուրբեր: Մեր ընտանիքին անցեալը իմանալը շատ կարեւոր է: Անիկա կ'օգնէ մեզի աւելի լաւ հասկնալ թէ ո՞վ ենք մենք, ի՞նչ բանի կը հաւատանք եւ մանաւանդ ի՞նչ բանի պէտք ունինք:

Մենք միայն մեր ընտանիքին չենք պատկանիր: Իւրաքանչիւր քրիստոնեայ, որ եկեղեցւոյ կը պատկանի, ե-

ՑԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Դաւիթի որդիին,
Աբրահամի որդիին՝
Յիսուս Քրիստոսի
ազգաբանութիւնը

Աբրահամ ծնաւ Իսահակը, Իսահակ՝ Յակոբը, Յակոբ՝ Յուդան եւ անոր եղբայրները, Յուդա իր Թամար կնոջմէն՝ Ֆարէսն ու Զարան, Ֆարէս ծնաւ Եզրոնը, Եզրոն՝ Արամը, Արամ՝ Ամինադարը, Ամինադար՝ Նաասոնը, Նաասոն՝ Սալոմը, Սալոմ՝ իր Ռախաբ կնոջմէն ծնաւ Բոոսը, Բոոս իր Դուբ կնոջմէն՝ Օթեղը, Օթեղ՝ Յեսսէն, Յեսսէ՝ Դաւիթ թագաւորը: Դաւիթ թագաւոր ծնաւ Սողոմոնը Ուրիայի կնոջմէն, Սողոմոն ծնաւ Րոբոամը, Րոբոամ՝ Աբիան, Աբիա՝ Ասաֆը, Ասաֆ՝ Եոսաֆատը, Եոսաֆատ՝ Եորամը, Եորամ՝ Ոզիան, Ոզիա՝ Եոթամը, Եոթամ՝ Աքազը, Աքազ՝ Եզեկիան, Եզեկիա՝ Մանասէն, Մանա-

սէ՝ Ամոսը, Ամոս՝ Եոսիան, Եոսիա՝ Եբոնիան եւ անոր եղբայրները, Բաբելոնեան գերութեան շրջանին:

Բաբելոնեան գերութենէն ետք՝ Եբոնիան ծնաւ Սադաքիէն, Սադաքիէ՝ Զորաբաբէլը, Զորաբաբէլ՝ Աբիուղը, Աբիուղ՝ Եղիակիմը, Եղիակիմ՝ Ազորը, Ազոր՝ Սադոկը, Սադոկ՝ Աքինը, Աքին՝ Եղիուղը, Եղիուղ՝ Եղիազարը, Եղիազար՝ Մատթանը, Մատթան՝ Յակոբը, Յակոբ ծնաւ Յովսէփը, որ Մարիամի նշանածն էր եւ Մարիամէն ծնաւ Յիսուս, որ կոչուեցաւ Քրիստոս:

Արդ, Աբրահամէն մինչեւ Դաւիթ, կայ տասնեւչորս սերունդ, Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն՝ տասնեւչորս սերունդ եւ Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոս՝ տասնեւչորս սերունդ:

Կեղեցւոյ միւս բոլոր անդամներուն համար Յիսուս Քրիստոսով եղբայր ու քոյր կը դառնայ: Իսկ Աստուած կը դառնայ մեր երկնաւոր Դայրը: Սուրբ Գիրքին մէջ կը կարդանք մեր մեծ ընտանիքին՝ Եկեղեցւոյ ծագման մասին: Երբ կը տօնենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի Ծնունդը, կը յիշենք նաեւ Անոր երկրաւոր նախահայրերը: Կարդացէ՛ք այն մարդոց անունները, որոնք Յիսուս Քրիստոսի նախահայրերը եղած էին: Անոնց մէջէն զըտէ՛ք այն անունները, որոնց հանդիպած էիք նախորդ ընթերցումներուն մէջ: Նախահայրերու անուանացանկը կը կոչուի **ազգաբանութիւն**: Մատթէոսի Աւետարանը կը սկսի Յիսուս Քրիստոսի ազգաբանութեամբ: Դետեւէ՛ ցուցնուցներուն, գտնելու համար անունները:

Կրնա՞ք գտնել Յիսուս Քրիստոսի նախնիներէն նշանաւորները.

1. Աստուածաշունչը կ'ըսէ, որ Յիսուս Քրիստոս երկու նշանաւոր անձերու «որդին» (այսինքն՝ սերունդ) է: Այստեղ գրեցէ՛ք նահապետներուն անունները _____ եւ _____
2. Գտէ՛ք Դին Կտակարանեան նահապետներու անունները: Անոնց անունները բնագրին մէջ կ'լորի մէջ առէք:
3. Գտէ՛ք Դաւիթ թագաւորին անունը: Փնտռեցէ՛ք անունները՝ անոր հօր _____ անոր մեծ հօր _____ անոր մեծ հօր ծնողներուն _____ եւ _____
4. Ո՞վ էր Դաւիթի որդին: _____
5. Աբրահամէն մինչեւ Դաւիթ քանի՞ սերունդ անցած է _____ եւ Դաւիթէն մինչեւ Բաբելոնեան գերութիւն _____
6. Բաբելոնեան գերութենէն մինչեւ Քրիստոսի Ծնունդը քանի՞ սերունդ անցած է _____

Մատթէոս 3.1-6	Մարկոս 1.1-6	Դուկաս 3.1-8
Այդ օրերուն Յովհաննէս Մկրտիչ սկսաւ քարոզել Զրեաստանի անապատին մէջ, ըսելով. Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ Երկինքի Արքայութիւնը մօտեցած է: Այս Յովհաննէսն էր, այն անձը, որուն համար Եսայի մարգարէ խօսեր էր ըսելով. տե՛ս 11.10 «Անապատին մէջ աղաղակողին ձայնը կ'ըսէ. Տիրոջ ճամբան պատրաստեցէք, հարթեցէք անոր շաւիղները»: Յովհաննէս ուղտի մազէ շինուած հագուստ մը ուներ եւ մէջքին՝ կաշիէ գօտի: Իր կերակուրը մարախ եւ վայրի մեղր էր: Երուսաղէմէն, ամբողջ Զրեաստանէն եւ Յորդանան գետի բոլոր շրջաններէն մարդիկ իրեն կ'երթային եւ իրենց մեղքերը խոստովանելով՝ անոր ձեռքով կը մկրտուէին Յորդանան գետին մէջ:	Այսպէս կը սկսի Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի Աւետարանը: տե՛ս 1.15 Եսայի մարգարէի գիրքին մէջ գրուած է. «Ահաւասիկ քու առջեւեղ կը զրկեմ իմ պատգամաբերս, որ քեզի համար ճամբայ պատրաստէ: Անապատին մէջ աղաղակողին ձայնը կ'ըսէ.՝ Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճամպարիդ, հարթեցէ՛ք անոր շաւիղները»: Եւ ահա Յովհաննէս անապատին մէջ կը մկրտէր: Անիկա կը քարոզէր ապաշխարել եւ մկրտուիլ, որպէսզի Աստուած մեղքերու թողութիւն տայ: տե՛ս 1.6 Իրեն կ'երթային ամբողջ Զրեաստանի եւ Երուսաղէմի բնակիչներէն շատեր եւ իրենց մեղքերը խոստովանելով կը մկրտուէին անկէ Յորդանան գետին մէջ: Յովհաննէս ուղտի մազէ շինուած հագուստ մը հագած էր եւ մէջքին կապած կաշիէ գօտի մը: Իր կերակուրը մարախ եւ վայրի մեղր էր:	Տիբերիոս կայսրին գահակալութեան 15-րդ տարին Պոնտացի Պիղատոս Զրեաստանի կառավարիչն էր, Զերովդէս Գալիլիոյ չորրորդապետն էր, Զերովդէսի եղբայրը՝ Փիլիպպոս Իսուրիայի եւ Տրաքոնիտիսի չորրորդապետն էր, իսկ Զաննա եւ Կայիափա այդ ժամանակուան քահանայապետներն էին: Այդ օրերուն Աստուած անապատին մէջ խօսեցաւ Զաքարիայի որդիին՝ Յովհաննէսի: Յովհաննէս Յորդանան գետին եզերքը գտնուող բոլոր շրջանները երթալով՝ կը քարոզէր ապաշխարել եւ մկրտուիլ, որպէսզի Աստուած մեղքերու թողութիւն տայ: Այս մասին Եսայի մարգարէի գիրքին մէջ գրուած է. տե՛ս 7.27 «Անապատին մէջ աղաղակողին ձայնը կ'ըսէ.՝ Պատրաստեցէ՛ք Տիրոջ ճամպարիդ, հարթեցէ՛ք անոր շաւիղները: Բոլոր ձորերը պիտի լեցուին եւ բոլոր լեռներն ու բլուրները գետնին պիտի հաւասարին. բոլոր ճամբաները ուղիղ պիտի ըլլան, ինչպէս նաեւ խորտուբորտ արահետները՝ հարթ հաւասար, եւ ամբողջ մարդկութիւնը պիտի տեսնէ Աստուծոյ զրկած Փրկիչը»:

1. Գծաքաշը լայնքին դնելով սիւնակներուն վրայ՝ իրարու համեմատեցէ՛ք տարբեր Աւետարաններէն մէջբերուած հատուածները: Գտէ՛ք խօսքերուն ու նախադասութիւններուն մէջ նոյնութիւնները: Տարբերութիւնները ընդգծեցէ՛ք տարբեր գոյնի մատիտներով:
2. Տարբեր հատուածներու մէջ գտնուող նոյն իրադարձութեան մասին եղող նախադասութիւնները գիծերով իրարու միացուցէք: Ուրիշ իմաստ արտայայտող նախադասութիւններուն համար տարբեր գոյնի մատիտ գործածեցէ՛ք:
3. Մէջբերումներուն համաձայն, Աստուածաշունչին մէջէն գտէ՛ք համապատասխանող տողերը: Կարդացէ՛ք զանոնք: Մէջբերումները եւ այս էջին մէջ դրուած անոնց համապատասխան տեղերը նոյն գոյնի մատիտով իրարու միացուցէ՛ք:
4. Այն արտայայտութիւնները, որոնք միւսներէն որեւէ մէկուն հետ կապ չունին, առանձին գոյնով նշեցէ՛ք:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ
ԵՒ ՀԻՆ
ԿՏԱԿԱՐԱՆԱՅԻՆ
ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՆԵՐ**

Արդեն ստրված էք, որ յատուկ գիրքեր կան՝ Աւետարանի Համադրական կոչուող, որոնք Սուրբ Գիրքի սրբազան պատմութիւններուն յաջորդականութիւնը գտնելու դիւրութիւն կու տան մեզի: Այդ գիրքերուն մէջ կան զուգահեռ սիւնակներ, որոնցմէ իւրաքանչիւրին մէջ Աւետարանէն հատուած մը դրուած կ'ըլլայ եւ անոր զուգահեռ սիւնակներուն մէջ միւս Աւետարաններուն մէջէն անոր համապատասխանող հատուածը: Հիմնականին մէջ իրարու նման հատուածներ ունեցողները առաջին երեք Աւետարաններն են, որոնք կը կոչուին Համատեսական Աւետարաններ: Եթէ քով-քովի տպենք Մատթէոսի, Մարկոսի եւ Դուկասոս Աւետարանները՝ շատ քիչ տարբերութիւններ կը նկատենք անոնց միջեւ:

Համատեսական Աւետարաններ

Սառաթեսի, Մարկոսի եւ Ղուկասու Աւետարանները ձեւի, բովանդակութեան մոյնութեան պատճառով կը կոչուին «Ջամատեսական» (synoptic — syn - մոյն, նման, optics - նայուածք, տեսողութիւն):

Մատթեոս, Մարկոս եւ Դուկաս Աւետարանիչները գրեթէ նոյն դէպքերը կը պատմեն, եւ մեծ չափով նոյնութեամբ մեզի կը փոխանցեն Քրիստոսի խօսքերը: Մեր օրերուն ալ, եթէ երեք տարբեր անձեր նոյն դէպքին ներկայ գտնուին, իրենց կատարած նկարագրութիւնը նոյնանման կ'ըլլայ, սակայն ոչ թէ նոյնը: Անոնց գործածած բառերը, թէկուզ շատ քիչ, սակայն կը տարբերին իրարմէ եւ միշտ անհատական դրոշմ կը կրեն: Իրարու հետ ունեցած այս շատ նմանութիւնները կ'օգնեն մեզի հաւատալու Աւետարաններու ճշմարտութեան, որովհետեւ իւրաքանչիւր վկայող կը ներկայացրնէ մեր Փրկչի կեանքին միեւնոյն դէպքը:



Յովհաննէս Մկրտիչ անապատին մէջ կը քարոսէ՝

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

**«Աստուծոյ խօսքը անապատին մէջ լսուեցաւ Ձաքարիայի որդիին՝
Յովիաննէսին: Եւ ան եկաւ. Յորդանանի կողմը ապաշխարութեան
մկրտութիւն քարոզելու՝ մեղքերու թողութեան համար»:**

Ձաքարիայի մարգարեությունը իր որդիին՝ Յովհաննեսի մասին, կատարուեցաւ: Երբ Յովհաննէս ծնաւ, Ձաքարիա Սուրբ Դոգիով լեցուած՝ ըսաւ. «Եւ դուն, մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, որովհետեւ Տիրոջ առջեւէն պիտի երթաս Անոր ճամբան պատահաստելու ու անոր ժողովուրդին տալու փրկութեան գիտութիւնը՝ անոց մեղքերուն թողութեան համար...»: Անապատին մէջ երկար ժամանակ ճգնողական կեանքով ապրելէ ետք, Յովհաննէս եկաւ Աստուծոյ ծառայելու: Ան մարդոց կ'ըսէր, որ դարձի պէտք է գտնուէ խոստովանիմ իրեց մեղքերը: Ան մարդոց կոչ կ'ուղղէր մկրտուելու, ցոյց տալու համար որ Յորդանանի ջուրերուն նման Աստուծոյ բարեգթութիւնը եւ ներողամտութիւնը կը մաքրեն մարդկային բոլոր մեղքերը:

Ոմանք այնպես կը մտածէին, որ Յովհաննէսն է Իսրայելի ժողովուրդին խոստացուած Մեսիան, սակայն Յովհաննէս կը մերժէր այդ: Ինք ալ կը սպասէր Փրկչին եւ անպայման կ'ուզէր տեսնել Յիսուս Զրիստոսը, որպէսզի ժողովուրդին ցոյց տայ Տէրն ու Փրկիչը, որ պիտի գար Աստուծոյ ժողովուրդը փրկելու մեղքէն ու մահէն:

Մեջբերումներ՝ համադրելու համար

- Դկ 1.76, 7.26-27, Սղ 4.5
- Ստ 11.13-14, Սր 1.2, Սղ 3.1
- ԹԼ 6.2-5, Դկ 1.13-15, Յհ 7.33
- Դկ 1.77, Դկ 3.2-6, Ես 40.3-5
- Յհ 1.6-8, 19-28
- Յհ 1.29-34
- Դկ 7.24-28:

ՍՈՒՐԲ ԶՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ

Յովհաննէս Սկրտիչ իր կեանքին մեծ մասը ամապատի առանձնութեան մէջ անցուցած է, Աստուծոյ ծառայութեան նախապատրաստուելով: Երբ ան ամապատէն վերադարձաւ Աստուծոյ նախասահմանած առաքելութիւնը կատարելու համար, ամոր մասին ոչ ոք լսած էր: Սկսան ամոր հարցումներ հարցնել: Շատեր որոնք ջերմեռանդութեամբ Սուրբ Գիրքը կը կարդային, տեսան որ Յովհաննէսի խօսքերն ու գործերը շատ կը յիշեցնեն մարգարէներուն կանխասացութիւնները:

Այս դասէն սկսեալ դուք ալ պիտի սկսիք «ուսումնասիրել» Աստուածաշունչը: Աստուածաշունչին մէջ ի՞նչ կրնաք գտնել Յովհաննէս Նախակարապետին մասին: Կարդացէ՛ք այս հարցումները եւ փորձեցէ՛ք պատասխանել անոնց: Ձեր պատասխանները գրեցէ՛ք: Յետոյ ձեր ընթերցումներուն հիման վրայ փոքրիկ պատմութիւն մը գրեցէ՛ք իր մասին, կամ այդ հրաշալի մարդուն կեանքէն դրուագ մը գծեցէ՛ք: Կրնաք առանձին աշխատիլ, կամ ընկերովի:

Մուրբ Յովհաննէս Մկրտիչ

Հաղցումներ

1. Աստուծաժաշուհը ի՞նչ անուաններ կամ տիտղոսներ կու տայ Յովհաննեսին:
2. Ո՞վ էր Յովհաննես Մկրտիչ: Ինչպիսի՞ կեանք կ'ապրեր:
3. Աստուած Յովհաննեսին համար ինչպիսի՞ առաքելութիւն սահմանեց:
4. Ո՞ր կ'ապրեր ու մարգարէութիւն կ'ըներ Յովհաննէս:
5. Ի՞նչ կատարեց Յովհաննէս եւ ինչի՞ մասին մարգարէացաւ:
6. Ի՞նչ պետք էր ընէին մարդիկ, ի՞նչ կը պահանջէր անոնցմէ:
7. Ի՞նչ կը խորհիք, ինչո՞ւ համար ոմանք եղիա մարգարէն կարծեցին զինք: Իսկ ուրիշներ ինչո՞ւ համար կարծեցին թէ ան Քրիստոսն է՝ Աստուծոյ Օծեալը:
8. Յովհաննէս ի՞նչ անուաններ տուաւ Փրկչին:
9. Յովհաննէս ինչպէ՞ս ինքզինք համեմատեց Փրկչին հետ:
10. Տէրը ի՞նչ ըսաւ Յովհաննէս Մկրտիչի մասին:

Հրեաներուն կեանքը

հռոմէական տիրապետութեան ժամանակաշրջանին

Փրկիչը իր կեանքին առաջին երեսուն տարիները ապրեցաւ Իր ընտանիքին հետ: Այդ տարիներուն Պաղեստինի քաղաքական վիճակը ծանր ու դժուար էր: Մարդիկ կասկածով ու անվստահութեամբ կը նայէին զիրենք ծանր տուրքերու տակ դնող հռոմէացի կառավարիչներուն: Հռոմէացիները կը ծգտէին բոլոր ժողովուրդները հռոմէական ապրելակերպին վարժեցնել: Իրենց օրէնքները կը կիրարկէին խստութեամբ: Երբ մարդիկ ըմբոստանային, հռոմէացիները անգթութեամբ կը ճնշէին որեւէ դիմադրութիւն:

Հրեական աղանդները

Հրեաները հռոմէական տիրապետութիւնը կը համարէին Աստուծոյ պատիժը, սակայն տարբեր մօտեցում կը ցուցաբերէին կացութեան: Ոմանք, օրինակ Հերովդէս թագաւորը եւ անոր ընտանեկան պարագաները, որոնք հռոմէացիներու կողմէ նշանակուած էին ժողովուրդը կառավարելու համար, հռոմէացիներու կամքը կը կատարէին պարզապէս: Անոնք հաւատարմօրէն հռոմէացիներուն կը ծառայէին եւ տակաւին, իրենց ունեցած իշխանութեամբ ու հեղինակութեամբ զինով-ցած՝ կը հարստահարէին ժողովուրդը:

Հրեաներուն միւս մասը, որոնք փարիսեցիներ կը կոչուէին, բարեպաշտ կեանք մը կ'ապրէին եւ ճշդապահութեամբ կը կիրարկէին Մովսէսի Օրէնքը: Անոնց կողքին կային նաեւ հարիւրամեակներու ընթացքին սահմանուած բազմաթիւ այլ օրէնքներ եւ յամառօրէն կը մերժէին ենթարկուիլ Հռոմին: Ժողովուրդը կը յարգէր օտարներու նկատմամբ անոնց մերժողական, բացառապէս ու հերոսական յանդուգն անհնազանդութիւնը եւ միւս կողմէ հաւատարմութիւնը՝ իրեական սովորութիւններուն նկատմամբ: Սակայն «բարեպաշտ» փարիսեցիները կ'ընդգէին անոնց դէմ, որոնք Օրէնքը իրենց նման՝ տառացիօրէն չէին գործադրեր: Անոնց համար Օրէնքին ամենէն փոքրիկ տառը ամէն բանէ վեր էր:

Կային նաեւ Եսսենացիները, որոնք կը հաւատային թէ հռոմէական տիրապետութիւնը Աստուծոյ կողմէ տրուած այնպիսի պատիժ է ժողովուրդին, որուն մասին գրուած է Հին Կտակարանի մարգարեութիւններուն մէջ: անոնք կը պնդէին, որ դժուար պահերը կարելի էր, որոնցմէ ետք սակայն պիտի գայ այն ժամանակը, երբ Աստուած պիտի պատժէ Իսրայէլի թշնամիները եւ իր ժողովուրդին համար պիտի հաստատէ յաւերժական սիրոյ ու խաղաղութեան թագաւորութիւն մը: Եսսենացիները առհասարակ քաղաքականութեան չէին

խառնուեր, ոչ ալ հետաքրքրուած էին, թէ ի՞նչ կ'ընեն հռոմէացիները: Անոնք առանձնացած էին Հրեական անապատին մէջ եւ վանականներու նման կ'ապրէին ժողովուրդէն մեկուսացած համայնական կեանքով: Անոնք Սուրբ Գիրքը կ'ուսումնասիրէին եւ կը ջանային մաքրել իրենց միտքն ու սիրտը, որպէսզի նախապատրաստուին Աստուծոյ թագաւորութեան:

Յովհաննէսի առաքելութիւնը անապատին մէջ

Փրկիչէն տարբեր, Յովհաննէս Սկրտիչ իր կեանքին կանուխ տարիները տան մէջ չանցուց: Զաքարիան եւ Եղիսաբէթը մահացան, երբ ինք տակաւին մանուկ էր: Եսսենացիներուն նման, սակայն վստահաբար ոչ անոնց հետ, Յովհաննէս առանձնացաւ Հրեական անապատին մէջ: Այնտեղ անոր լսուեցաւ Աստուծոյ ձայնը եւ ան սկսաւ իր առաքելութեան:

«Յովհաննէս ուղտի մազէ հագուստ կը հագնէր եւ կաշիէ զօտի կապած էր մէջքին, իսկ իր կերակուրն էր մարախ եւ վայրի մեղր: Այն ժամանակ իր մօտ կու գային բոլոր Երուսաղէմացիները, ամբողջ Հրեաստանն ու Յորդանանի շրջակայքը գտնուող ժողովուրդը, անկէ կը մկրտուէին Յորդանան գետին մէջ եւ կը խոստովանէին իրենց մեղքերը»:

Հարիւրաւոր տարիներ առաջ Եսային մարգարեացած էր. *«Անապատին մէջ կանչողին ձայնն է, պատրաստեցէ՛ք Տիրոջ ճամբան եւ հարթեցէ՛ք անոր ճակատները»:* Յովհաննէս կը քարոզէր, որ մարդիկ դարձի գան իրենց մեղքերէն, այսինքն հրաժարին իրենց մեղքերէն, «փոխեն իրենց մտածելակերպը», ապրին Աստուածահաճոյ կեանքով: «Ճամբան պատրաստել» կը նշանակէ, որ մարդիկ ամէն տեղ պէտք է հետեւին միակ ճշմարիտ Աստուծոյ՝ խուսափելով սխալ ճամբաներէ, որոնք զիրենք պիտի հեռացնէին Տիրոջմէ:

Յովհաննէս կը մկրտէր զղջացող եւ իրենց մեղքերը Աստուծոյ խոստովանող մարդիկը: Մկրտութիւնը անոնց համար, ինչպէս նաեւ մեզի համար, Աստուծոյ մօտ կեանքի մը սկիզբը կը խորհրդանշէ: Ասիկա այնպիսի կեանք է, երբ իւրաքանչիւր օր մենք Աստուծոյ պատուիրաններով կը սնանինք եւ բնաւ չենք մոռնար Աստուծոյ անսահման սէրը:

Եղիա՞, թէ՞ Քրիստոս

Շատեր այնպէս կը կարծէին, թէ Յովհաննէս ի՞նք է Քրիստոսը, սակայն Նախակարապետը միշտ կը ժխտէր այդ ենթադրութիւնը: Ուրիշներ ալ կը խորհէին, թէ ան Եղիան է, սակայն Յովհաննէս դարձեալ ժխտական պատասխան կու տար: Իսկ երբ անոր հարցնէին թէ ինչո՞ւ



Զուրը կեանք է: Առանց ջուրի չենք կրնար ապրիլ, որովհետեւ մեր մարմինը մեծ մասամբ ջուրէ կը բաղկանայ: Զուրը կարելի է մեր կեանքի գոյատեւման համար: Զուրը մեզ միշտ կը յիշեցնէ, որ Աստուած մեզի կեանք կու տայ եւ Իր Կեանքով կը կենդանացնէ մեզ: Զուրը նաեւ մեզ կը յիշեցնէ մահուան գաղափարը: Գիտենք, որ ջուրը նաեւ իր մէջ կը խեղդէ մեզ: Յաճախ տեղատարափ անձրեւները ջրհեղեղ կը յառաջացնեն ու աղէտ կը պատճառեն: Այդ աղէտներուն հետեւանքով կենդանիներ, ծառեր եւ նոյնիսկ մարդիկ կրնան բնաջնջուիլ:

Զուրը մաքրութիւն է: Զուրով կը լուացուին իրերը եւ մաքուր ու թարմ կը մնան: Զուրի կարիք ունինք ո՛չ միայն մեր տուները եւ հագուստները լուալու համար, այլ որպէսզի ջրենք հողը, որ մնայուն կարիք ունի կենսատու խոնաւութեան: Մկրտութեան ժամանակ մեր մեղքերէն կը մաքրուինք. մենք «կը մեռնինք» հին կեանքին համար եւ «յարութիւն» կ'առնենք Քրիստոսով՝ մոր կեանքի համար:

համար կը մկրտէ մարդիկը, Յովհաննէս անոնց կ'ըսէր. *«Ես ձեզ ջուրով կը մկրտեմ որպէսզի դարձի գաք, սակայն ան որ ինձմէ վերջ պիտի գայ, ինձմէ աւելի զօրաւոր է եւ ես արժանի չեմ անոր կօշիկներուն կապերը քակելու...»:*

Երբ կը կարդանք Յորդանանի մէջ մկրտուիլ փափա-

ԶՐՕՐՀՆԷՔ

Զրօրիների արարողութիւնը կը կատարուի Սուրբ Ծննդեան պատարագէն անմիջապէս ետք: Անիկա Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը կը խորհրդանշէ: Նախապէս միայն Երուսաղէմի եկեղեցւոյ յատուկ արարողութիւն մը եղած է այդ, որ կատարուած է Յորդանան գետի ափին: Հետագային քրիստոնեայ միւս եկեղեցիներն ալ որդեգրած են զայն: Ուղղափառ եկեղեցիները սովորութիւն ունին զայն կատարել գետի, լիճի կամ ծովու ափին: Հայ եկեղեցին ջուրի օրհնութիւնը կը կատարէ եկեղեցւոյ մէջ:

Զրօրիների արարողութեան ընթացքին Սուրբ Գրային ընթերցումներ կը կատարուին, ինչպէս նաեւ աղօթքներ կ'արտասանուին եւ հանդիսաւորապէս խորան կը բերուի Սրբալոյս Միւռնի՝ Աղանին: Պատարագիչ եկեղեցականը «Առաքելոյ Աղանոյ» շարականի երգեցողութեամբ Միւռն կը կաթեցնէ ջուրին մէջ: Ապա ջուրին մէջ դրուած խաչը «Պահպանիչ»ի պահուն դուրս կը բերեն եւ կը յանձնեն օրուան խաչի կնքաօր: Արարողութենէն ետք հաւատացեալները կը համբուրեն Սուրբ խաչը, կը խմեն օրհնուած ջուրէն եւ իրենց հետ նաեւ տուն կը տանին:

Ինչպէ՞ս պէտք է վարուիմք ջուրին հետ

Զուրի սրբագործումը մեզի կը յիշեցնէ, որ ջուրը Աստուծոյ ամենէն թանկագին պարգեւներէն մէկն է, որ մեզի տրուած է մեր կարիքները բաւարարելու եւ անոր հոգ տանելու համար:

Ձեր ընտանիքի անդամներուն հետ մտածեցէ՛ք թէ ինչպէ՞ս կրնաք վարուիլ ջուրին հետ, որ հաճոյ ըլլայ Աստուծոյ առջեւ:

Ձեր ընտանիքի անդամները կրնա՞ն արդեօք՝

- Այնպէս ընել, որ ջրամբարներուն մէջ մաքուր ջուր մնայ:
- Խուսափին ջուրը վատնելէ:
- Այնպէս ընել, որ մարդիկ խնայողութեամբ գործածեն ջուրը:
- Միշտ յիշեցնել իրարու, որ այս աստուածային պարգեւին՝ ջուրին համար միշտ փառք պէտք է տալ Աստուծոյ:

քող մարդոցմով շրջապատուած Յովհաննէս Սկրտիչի մասին, հետզհետէ կը սկսիմք հասկնալ, որ ջուրը Մկրտութեան Խորհուրդին մէկ անբաժան մասնիկն է: Սակայն անիկա անհրաժեշտ է ոչ միայն մկրտութեան, այլ նաեւ մեր ամբողջ կեանքի ընթացքին՝ գոյատեւման համար:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՄԿՐՏՈՒԵԼՈՒ ԿՈՒ ԳԱՅ

Հարիւրամեակներէ ի վեր Աստուծոյ ժողովուրդը կը սպասէր Մեսիային՝ Փրկչին գալուստին, որ զիրենք պիտի ազատագրէր թշնամիներէն: Սակայն Մեսիային անծին մէջ անոնք կը տեսնէին Աստուծոյ եւ իր ժողովուրդին միջեւ իրական ու արդար յարաբերութիւններ պահպանողի ու վերականգնողի տիպարը, որ մարդոց առջեւ ճանապարհ պիտի հարթէր դէպի Աստուծոյ թագաւորութիւն: Շատ մը հրեաներ այնպէս կը խորհէին, որ նոր թագաւոր մը պիտի գայ, որ հրեական հզօր պետութիւն կամ թագաւորութիւն պիտի հիմնէ:

Նոր թագաւորութիւն

Աստուած մարդոց դրկեց Փրկիչը ոչ թէ երկրաւոր հզօր թագաւորութիւն հաստատելու համար: Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ, որպէսզի մեզ փրկէ մեր մեղքերէն: Ան եկաւ, որ մարդիկը դարձեալ տանի Աստուծոյ՝ անով նոր կեանք, յաւիտեական ու անվախճան կեանք պարգեւելու համար անոնց: Աստուծոյ թագաւորութիւնը կը պարգեւուի բոլոր մարդոց ու բոլոր ազգերուն, որոնք խորապէս կը հաւատան ու հաստատ կերպով կը դաւանին, որ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Միածին Որդին է, բոլորին Թագաւորը ու Տէրը: Աստուծոյ Թագաւորութիւնը սիրոյ, խաղաղութեան, բարեգործութեան, արդարութեան ու բարեգթութեան թագաւորութիւնն է:



Տիրոջ մկրտութիւնը Յովհաննէսէն, Յորդանան գետին մէջ (մանրանկար)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

«Եւ Սուրբ Դոգին աղանձի կերպարանքով իջաւ Անոր վրայ. եւ երկինքէն ծայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. Դո՛ւն ես իմ սիրելի որդիս, քեզի հաճեցայ»:

Յովհաննէս Մկրտիչ երբ կը քարոզէր անապատին մէջ, քահանաներն ու պարզ ժողովուրդը բազմաթիւ հարցումներ կ'ուղղէին անոր: Անոնք ուղղակի կը հարցնէին, թէ Ինք Քրիստոսը չէ՞, կամ եղիա մարգարէն չէ՞: Յովհաննէս անոնց կը պատասխանէր թէ ինք միայն Նախակարապետ է, որ Տիրոջ ճամբան կը պատրաստէ:

Յովհաննէս տեսնելով որ Յիսուս դէպի իրեն կը մօտենայ, ըսաւ. «Ահա՛ Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը իր վրայ առած է»: Յովհաննէս ժողովուրդին դառնալով ըսաւ. «Այս է այն անձը, որուն մասին կ'ըսէի թէ իմ ետեւէս մէկը կու գայ, որ ինձմէ աւելի մեծ եղաւ, որովհետեւ ինձմէ առաջ կար: Եւ ես չէի ճանչնար զայն, բայց որպէսզի Իսրայէլը իմանայ, ես եկայ ջուրով մկրտելու»: Ապա Յովհաննէս վկայեց եւ ըսաւ. «Դոգին տեսայ, որ երկինքէն կ'իջնէ որպէս աղանձի եւ կը հանգչի Անոր վրայ: Եւ ես զինք չէի ճանչնար. սակայն ան որ զիս ուղարկեց ջուրով մկրտելու, Ան ըսաւ ինձի. "Որո՞ւ վրայ տեսնես Դոգին կ'իջնէ եւ կը հանգչի, Ան է, որ սուրբ Դոգիով պիտի մկրտէ": Եւ ես տեսայ ու վկայեցի, թէ այս է Աստուծոյ Որդին»:

Վերոյիշեալ հատուածը գտէք Աստուածաշունչին մէջէն: Գտէք համապատասխան հատուածները (ընտրեցէ՛ք մէկը, կամ աւելի), որպէսզի նկարագրէք Աստուծոյ Թագաւորութիւնը գծագրութեամբ: **Ես 9.6-7, Ամ 5.14, Մք 6.8, Սղ 33.4-5, 82.1-3, 85.8-10, 89. 1-4, 103.3-5, 103.3-5, 103.8, 17, Ստ 23.23, Եփ 4.34:**

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ



Սուրբ Յովհան Ոսկեբերան Ընդհանրական Եկեղեցւոյ նշանաւոր հայրապետներէն է, Հայ Առաքելական Եկեղեցւոյ համաքրիստոնեական տօնելի սուրբ հայրերէն մին, որոնք ծանօթ են «Տասներկու վարդապետներ» անունով:

Սուրբ Յովհան Ոսկեբերան ծնած է Անտիոքի մէջ, շուրջ 347 թուականին, ազնուական ընտանիքի մէջ: Ան ծագումով ասորի էր, բարեպաշտ ընտանիքի զաւակ: Յովհաննէս նախնական կրթութիւնը ստացած էր Անտիոքի մէջ, ապա իր ուսումը շարունակած Աթէնքի մէջ, ուր իր ուշիմութեան շնորհիւ գերազանցած է ժամանակի հելլէն քրիստոնեայ իմաստունները: Անտիոքի Մելիտոս հայրապետը, որ ծագումով հայ էր, նախ Յովհաննէսը եւ ապա անոր ծնողները քրիստոնեայ կը մկրտէ:

Երիտասարդ հասակէն ան կ'ուզէր ամբողջութեամբ Աստուծոյ նուիրուիլ եւ ճգնողական կեանքով ապրիլ: Թէեւ տունէն չհեռացաւ մօրը աղաչանքներուն ակամջ տալով, սակայն տան մէջ ճգնաւորի կեանք կ'ապրէր, իր օրերը անցընելով աղօթքով եւ Սուրբ Գիրքի ընթերցումով:

380 թուականին ձեռնադրուեցաւ սարկաւագ, ապա՝ վեց տարի ետք՝ քահանայ, իսկ 398-ին Կոստանդնուպոլսոյ պատրիարք եղաւ:

Սեօ քարոզիչը

Սեօ քարոզիչը

Ս. Յովհան Ոսկեբերան, իր հայրապետութեան տարիներուն բազմաթիւ մոլորածներ եւ աղանդաւորներ դարձի բերաւ: Ան բազմաթիւ գեղեցիկ քարոզներ գրած է, որոնք հռետորական բարձր արուեստով պատրաստուած են եւ հոգեբանական մօտեցում ունին: Իր հոգեշունչ քարոզներուն եւ պերճախօսութեան համար

կոչուած է «Ոսկի Բերան»: Ոսկեբերան հայրապետ Անտիոքի եկեղեցւոյ մէջ ամէն օր շուրջ երեք հազար որբեր, այրիներ եւ բանտարկեալներ կերակրած է: Իբրեւ անաչառ հովիւ, շատ թշնամիներ ունեցաւ, որոնք սուտերով ու զրպարտութիւններով կրցան սուրբին դէմ հանել կարգ մը եպիսկոպոսներ, ինչպէս նաեւ թագաւորն ու թագուհին:

Եւդոքսիա կայսրուհին սաստիկ զայրոյթով լեցուեցաւ, երբ Յովհան դատապարտեց զինք Կոստանդնուպոլսոյ մէջ իր արձանները կանգնեցնել հրամայելուն համար:

Սուրբ Յովհանը քսորեցին Բիւթանիա (Կոստանդնուպոլսոյ մօտ): Այդ քսորը սակայն քանի մը օր տեւեց: Ժողովուրդի բռն փափաքին անսալով՝ թագաւորը զայն ետ կանչեց Կոստանդնուպոլիս, ուր շուրջ 60 եպիսկոպոսներ ժողով գումարելով, հաստատեցին անոր անմեղութիւնը: Սակայն դարձեալ արքունիքի զորպարտութիւններուն զոհ դառնալով՝ կ'աքսորուի Փոքր Հայքի Կոքսիոն քաղաքը: Այդ միջոցին ուխտաւորներու անվերջ շարան մը ուղղուած է Անտիոքէն մինչեւ Կոքսիոնի հայոց եկեղեցին: Տեսնելով Յովհան Ոսկեբերանի ժողովրդականութիւնը, թշնամիները Արքատիոս կայսրէն խնդրած են զայն քսորել Սեւ Ծովու մօտիկ Պիթիոս անմարդաբնակ վայրը:

Ի վերջոյ քսորի երկար տարիները, քսորականի դժուարութիւնները, իր սիրելի հօտէն բաժանումը, քայքայեցին Յովհաննէսի առողջութիւնը եւ ան իր մահկանացուն կնքեց Պոնտոսի Կոնստան քաղաքին մօտ, 407 թուականին: Անոր վերջին խօսքերը եղան. «Փառք քեզ Աստուած, ամէն բանի համար փառք քեզ»:

Յովհան Ոսկեբերան մատենագիտական հարուստ ժառանգութիւն թողած է, որոնց մեծ մասը հայ վարդապետներ թարգմանած են 5-րդ դարուն՝ գրերու գիւտէն եւ Աստուածաշունչի թարգմանութենէն անմիջապէս յետոյ:

Հայ Առաքելական Եկեղեցին Սուրբ Յովհան Ոսկեբերանի յիշատակը կը տօնէ տարին երկու անգամ՝ Խաչվերացի 6-րդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը՝ «Տասներու վարդապետներ»ուն հետ (Երկոտասան վարդապետք) եւ Գիւտ Խաչի տօնին յաջորդող Շաբաթը, տօն է «Սրբոյ Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին»:

Յիսուս Քրիստոս Յովհաննէսի մօտ կու գայ

Յովհաննէս Մկրտիչ իր քարոզներուն եւ Յորդանան գետի մէջ մկրտելու ընթացքին բազմաթիւ մարդոց կը համոզիպէր: Սակայն անոր քարոզները բոլորին ալ հաճելի չէին թուեր: Մարգարէին ըսածները մտիկ ընելու եւ անկէ մկրտուելու եկողներուն մէջ կային փարիսեցիներ ու սադուկեցիներ: Սադուկեցիները հին քահանայական տոհմի կը պատկանէին, անոնք միայն Սովսէսի Օրէնքին կը հաւատային եւ չէին ընդունիր Օրէնքի վրայ նոր յաւելումներ, որոնք կը կատարուէին փարիսեցիներուն կողմէ: Յովհաննէս կը դատապարտէր թէ՛ սադուկեցիները եւ թէ՛ փարիսեցիները: Ան կ'ըսէր, որ երկինքի Թագաւորութիւն մտնելու համար չի բաւեր միայն «Աբրահամի զաւակներ» ըլլալը: Ամէն բանէ առաջ Աստուած մեզմէ կը պահանջէ որ մեր նմաններուն նկատմամբ սէր ունենանք, այնպէս ինչպէս ան մեզ կը սիրէ: Յովհաննէս կ'ըսէր, որ մեր մեղքերը անկեղծօրէն զղջալէ ետք միայն կրնանք յուսալ, որ Աստուած մեզի հետ պիտի ըլլայ միշտ:

Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է երկինքի Թագաւորութիւնը

Մկրտուելու համար իր մօտ եկողներուն Յովհաննէս կ'ըսէր. «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է երկինքի Արքայութիւնը»: Կարգ մը մարդիկ կ'ուզէին անմիջապէս գիտնալ, թէ ի՞նչ պէտք է ընեն: Անոնց պատասխանելով՝ Յովհաննէս կ'ըսէր. «Ով որ երկու ըզգեստ ունի, մէկը թող տայ անոր՝ որ չունի: Եւ ով որ ուտելիք ունի, նոյնը թող ընէ»: Մաքսաւորներուն կ'ըսէր. «Ձեզի հրամայուածէն աւելի մի՛ գանձէք»: Զինուորներուն ալ կը սորվեցնէր. «Ոեւէ մէկուն նեղութիւն մի՛ տաք, ոեւէ մէկը մի՛ զրպարտէք, ձեր վարձքով բաւարարուեցէք»:

Մարդիկ զանազան հարցումներ կ'ուղղէին Յովհաննէսին: Ոմանք կը հաւատային, որ երբ եղիա մարգարէն գայ, աշխարհը պիտի կործանի: Անոնք կը հարցնէին Յովհաննէսին թէ արդեօք ինքը չէ՞ եղիան (տե՛ս Դ. Թգ 1.8 եւ մտածէ՛ թէ անոնք ինչո՞ւ այդպէս կը խորհէին): Ուրիշներ ալ կը կարծէին, որ Յովհաննէս խոստացուած Մեսիան է: Յովհաննէս անոնց կը պատասխանէր. «Ես ձեզ ջուրով կը մկրտեմ ապաշխարութեան համար, բայց ան որ ինձմէ վերջ պիտի գայ, ինձմէ աւելի զօրաւոր է եւ ես արժանի չեմ անոր կօշիկներուն կապերը քակելու. Ան ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգիով եւ կրակով. ան, որ հեծանոցը ձեռքին ունի, իր կալը պիտի

մաքրէ, ցորենը պիտի հաւաքէ շտեմարանին մէջ եւ յարողը կրակով պիտի այրէ»:

Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը

Եւ ահա որոշ ժամանակ յետոյ, Փրկիչը ձգեց Գալիլիոյ Նազարէթ քաղաքը՝ իր տունը, եւ եկաւ այնտեղ, ուր Յովհաննէս կը մկրտէր: Ան Յովհաննէսէն խնդրեց որ զինք ալ մկրտէ:

Յովհաննէս ընդդիմացաւ եւ ըսաւ. «Ե՛ս պէտք է քեզմէ մկրտուիմ, դո՞ւն ինձի կու գաս»: Սակայն Յիսուս պատասխանեց եւ ըսաւ. «Թոյլ տուր հիմա, որովհետեւ այսպէս կը վայելէ, որ մենք Աստուծոյ ամբողջ արդարութիւնը ի գործ դնենք»: Այն ատեն Յիսուս մտաւ Յորդանանի ջուրերուն մէջ եւ Յովհաննէս մկրտեց զԱյն:

Մկրտուելէ ետք Տէրը շուտով դուրս եկաւ ջուրէն: Այն ատեն երկինքը բացուեցաւ եւ Յովհաննէս տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի կերպարանքով կ'իջնէր Անոր վրայ: Եւ երկինքէն ձայն մը լսուեցաւ. «Այս է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ»:

Եկեղեցական արարողութիւններու ժամանակ Յովհաննէսը ընդհանրապէս Մկրտիչ կը կոչուի, որովհետեւ ան արժանի եղաւ Փրկչին Մկրտիչը ըլլալու պատիւին: Զայն կը կոչեն նաեւ «Նախակարապետ», որովհետեւ ան կարեւոր աշխատանք կատարեց եւ ժողովուրդը նախապատրաստեց Յիսուս Քրիստոսի գալուստին: Ի՞նչ՝ Յիսուս Քրիստոս, անոր համար ըսած էր, որ ան «մարգարէ» է աւելի է, եւ թէ՛ «Կնոջմէ ծնածներուն մէջ Յովհաննէս Մկրտիչէն աւելի բարձր մէկը չկայ»:

ԿԱԼԸ ՄԱՔՐՈՂՆԵՐԸ

Երբ ցորենը հնձած են դաշտերէն ու խուրձերը կապած, զայն կը լեցնեն կալի մէջ, որ կարծր ու հարթ գետին հրապարակ մըն է: Եղջերաւոր անասունները կալը կը քաշեն: Ցորենի հատիկները հասկերէն կը զատուին: Հեծանոցը փայտէ թի է, որով ցորենը օդին մէջ կը բարձրացնեն եւ կը թափեն գետին, որպէսզի հովը թեթեւ յարող տանի եւ ցորենը գետին իյնայ:

Սուրբ գիրքը որո՞նք կը նմանցնէ յարդին որ պիտի այրուի եւ որո՞նք՝ ցորենի, որ Տիրոջ կողմէ պիտի հաւաքուի:

ՄԵՐՏՈՒԻԼ ՅԻՍՈՒՄԻ ԱՆՈՒՆՈՎ

Իւրաքանչիւր հաւատացեալ կը մկրտուի «Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Փորձենք համառօտ կերպով նկարագրել եւ բացատրել Եկեղեցւոյ Խորհուրդներէն առաջինը՝ Մկրտութեան Սուրբ Խորհուրդը: Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ Մկրտութիւնը կը կատարուի երեք անգամ ջուրին մէջ ընկղմամբ՝ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն:

- Ա. **Սատանայէն հրաժարումը.**՝ Մկրտուողը դէպի արեւմուտք կը դառնայ եւ կը հրաժարի սատանայէն ու անոր բոլոր ծրագիրներէն:
- Բ. **Հաւատքի խոստովանութիւն.**՝ Մկրտուողը դէպի արեւելք կը դառնայ եւ կը խոստովանի Հաւատոյ Հանգանակը՝ քրիստոնէական հաւատքի հիմնական սկզբունքները:
- Գ. **Ջուրի օրհնութիւն.**՝ Ծիսակատար քահանան ջուրը կը լեցնէ աւազանին մէջ, կ'օրհնէ զայն աղօթքով եւ Սրբալոյս Միւռոն կը հեղու անոր մէջ:
- Դ. **Ջուրի մէջ ընկղմում.**՝ Մկրտութեան գլխաւոր բաժինը: Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ մկրտութիւնը կը կատարուի երեք անգամ ջուրին մէջ ընկղմամբ՝ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն:
- Ե. **Դրոշմ.**՝ Մեր եկեղեցւոյ մէջ մկրտութեան խորհուրդին կը յաջորդէ Դրոշմը. քահանան կը կնքէ մկրտեալին մարմնի ինն մասերը, որոնք են՝ ճակատը, աչքերը, բերանը, քիթն ու ականջները, սիրտը, կռնակը, ձեռքերն ու ոտքերը:
- Զ. **Երկրպագութիւն եւ ընծայում.**՝ Քահանան մկրտեալ երեխան գիրկը կ'երկրպագէ երեք անգամ եւ խորանի շուրջ կը դարձնէ զայն երեք անգամ:

Իւրաքանչիւր նկարի մօտ գրեցէք համապատասխան նկարագրութեան թուանշանը:



Ձեր տան անդամներուն հետ խօսեցէք Յովհաննէս Մկրտիչի տուած օրհնակին մասին, երբ ան խոնարհութեան ու հնազանդութեան ոգիով իր տեղը տուաւ անոր՝ որուն կը վայելէր այդ։

Փորձեցէ՛ք երեւակայել Յովհաննէս Մկրտիչը, որու կը հետեւէր բազմութիւն մը Յորդանանի ափերուն, ուր մարդիկ ուշադիր կերպով մտիկ կ'ընէին անոր խօսած իւրաքանչիւր խօսքը։ Անոնք նոյնիսկ կը հարցնէին, թէ ի՞նչ էր արդեօք խոստացուած Մեսիան, կամ արդեօ՞ք ինք եղիան չէր, որ երկինք գնաց եւ հիմա թերեւս վերադարձած է նոյն մարմնով։ Անոնք զանազան հարցումներ ալ կը հարցնէին, զայն նկատի ունենալով իբրեւ հոգեւոր մեծ դաստիարակ։ Յովհաննէս թերեւս փորձուէր ընկալելու ժողովուրդի տուած փառքն ու պատիւը։ Հաւանաբար իրեն համար դժուար էր հրաժարիլ այդ փառքէն։ Ինչքա՞ն արդար ու խոնարհ պէտք է եղած ըլլայ ան, որ ճանչցաւ Յիսուս Քրիստոսը՝ իբրեւ Մեսիա։ Անոր խոնարհութիւնը մղեց զինք մատնանշելու թէ Քրիստոս շատ աւելի մեծ է քան ինք։ Ան կ'ուզէր որ բոլորը երթային Քրիստոսի եւ ինք բնաւ փառքի հասնելու փափաք չուներ։

Մենք հաւանաբար Յովհաննէսին ունեցած փորձառութիւնը չենք ունեցած եւ երբեք չունենանք։ Սակայն կըրնայ պատահիլ նաեւ որ մենք ալ նման փորձառութիւն մը ունենանք, երբ պէտք ըլլայ ուրիշ մը բարձրացնել։

11 – «...Ինծմէ վերջ պիտի գայ մէկը, որ ինծմէ աւելի մեծ է որովհետեւ ինծմէ աւելի առաջ կար»


Այդ պահուն պիտի կարենա՞նք արդեօք խոնարհ ըլլալ։

Մտածեցէ՛ք կարգ մը արարքներու մասին.

- Երբ ուրիշի մը հետ միասնաբար ձեր կատարած աշխատանքին համար գովասանք լսէք, ձեր կողմէ ձեր գործընկերոջ կատարած այս կամ այն բաժնին ծառայութիւնը յատուկ կերպով ընդգծեցէ՛ք։
- Մասնաւոր հոգածութիւն ցոյց տուէք անձի մը, որ նոյն վերաբերմունքը չունի ձեր նկատմամբ (օրինակ՝ շնորհաւորեցէ՛ք անոր ծննդեան տարեդարձը, վստահ ըլլալով հանդերձ որ ան չի գիտեր ձեր ծննդեան տարեդարձի օրը)։
- Թոյլ տալ որ փոքրերը կարեւորութեան ինքնագգացում ունենան, թոյլ տալով որ առաջինը ըլլան քաղցրեղէն համտեսելու եւ կամ թոյլ տալ որ իրենք որոշեն խմբական խաղի մը ընտրութիւնը։
- Միշտ ամչկոտ ու աւելի վախկոտ մարդոց հնարաւորութիւն տուէք ըսելու ինչ որ դուք շուտով ու անվարան կրնաք ըսել։
- Մտածեցէ՛ք այլ կացութիւններու մասին, երբ խոնարհութիւնը էական կրնայ նկատուիլ։


ՕՐԱՑՈՅՑ

Ա. Օր		Բ. Օր		Գ. Օր		Դ. Օր		Ե. Օր		Զ. Օր		Է. Օր	
Հայ առաքելական եկեղեցւոյ մէջ Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը կանխող շաբաթը պահեցողութիւն կը կատարուի: Այստեղ ներկայացուած օրացոյցը կրնաք դիւրութեամբ պատրաստել խաւաքարտի վրայ: Սուրբ Ծննդեան շաբաթապահքին մախորդող շաբաթներուն ընթացքին օրացոյցէն գտէք սուրբերու յիշատակութեան օրերը եւ կազմեցէ՛ք ձեր անձնական օրացոյցը: Դասագիրքին վերջաւորութեան կրնաք այդ օրերուն վերաբերող մանրանկարներ եւ սրբապատկերներ գտնել: Դուք կրնաք զանոնք ներկել, կտրել եւ օրացոյցին վրայ փակցնել: Կարդացէ՛ք եկեղեցական օրացոյցին ամփոփ նկարագրութիւնը, որ տրուած է յաջորդ էջով:												Նոյեմբեր 21 1	
22	2	23	3	24	4	25	5	26	6	27	7	28	8
29	9	30	10	1	11	2	12	3	13	4	14	5	15
6	16	7	17	8	18	9	19	10	20	11	21	12	22
13	23	14	24	15	25	16	26	17	27	18	28	19	29
20	30	21	31	22	32	23	33	24	34	25	35	26	36
27	37	28	38	29	39	30	40	31	41	1	42	2	43
3	44	4	45	5	46	6	47						



1. Սրբոցն Գրիգոր Աքանջեւագործ, Նիկողայոսի Հայրապետին եւ Միւռնայ Եպիսկոպոսին:
2. Սրբոց Կուսանացն՝ Յովհաննայ եւ Բասիլուիւոյ, Ինտոսի, Դոմնայի, Գղերիկէսի քահանային եւ երկուց բիւրուցն, որ այրեցան յեկեղեցին Նիկողիմացւոց:
3. Սրբոյն Դունկիանոսի քահանային, Տարագրոսի, Պրօպոսի, Անդրոնիկոսի, Ոնեսիմեայ եւ այլոց աշակերտացն Սրբոյն Պօղոսի:
4. Սրբոյն Կղեմայ հայրապետին եւ Բագարատայ Տոռոմենոյ Եպիսկոպոսին:
5. Տօն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարթողիմէոսի:
6. Սրբոցն Գենարիոսի Եպիսկոպոսին եւ Մերկերիոսի զինաւորին, Յակովկայ եւ Իրաւափառայ:
7. Սրբոցն հարց եգիպտացւոց՝ Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գբեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Արապիոնի, Մակարիոսի, Պիմէնի եւ այլոց սրբոց հարցն:
8. Սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ Աքանջեւագործ հայրապետին:
9. Սրբոցն Մինասայ, Երմոգիմեայ, Գրաբոսի եւ կանաւոր աղքատացն՝ Յովհաննու եւ Ալեքսիանոսի:
10. Սրբոցն Կուռմելիոսի հարիւրապետին եւ Շմաւոնի ազգականին Քրիստոսի՝ որ խաչեցաւ յերուսաղէմ, Պօղիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ եւ սրբոց վկայիցն, որք յարելւս կատարեցան:

11. Սրբոցն Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգինէոսի, Ովրեստէսի եւ Մարդարիոսի:
12. Սրբոցն Յակովբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի ճգնաւորին եւ Մելիտոսի Եպիսկոպոսին:
13. Սրբոց հայրապետացն Իգնատիոսի, Ադդէի, Եպիսկոպոսացն՝ Մարութայի եւ Թէոպոմպայ, եւ Թէոմայ վկային եւ չորից զինուորացն՝ Բասոսի, Եւսեբի, Եւսիքի եւ Բասիլիդեայ:
14. Սրբոյն Աբգարու ճախավկայ եւ ի Քրիստոս հաւատացեալ թագաւորին մերոյ:
15. Սրբոցն Դաւթի մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղբայր Առաքելոյն:
16. Սրբոյն Ստեփանոսի ճախավկային եւ առաջին մարտիրոսին:
17. Սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի:
18. Սրբոց որդւոցն Որոտման՝ Յակովբայ առաքելոյն եւ Յովհաննու աւետարանչին:



Դաս 12

ՓՐԿԻՉԸ ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

Եկեղեցական օրացոյց

Եկեղեցական օրացոյցը Հայ Առաքելական Եկեղեցւոյ հաւատացեալներուն հոգեւոր կեանքին ուղեցոյցն է: Ամբողջ տարուան ընթացքին ան մեզի կ'օգնէ, որ յիշենք բոլոր սուրբերը, առաքելները, մարտիրոսները, ճգնաւորները եւ եկեղեցւոյ հայրերը, որոնք առաջնորդ եղան մարդոց ճանչնալու մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնը եւ ընդունելու զայն: Քրիստոնէական եկեղեցւոյ այս նուիրեալները յիշելով՝ մեր կեանքի ընթացքին կը պարտաւորուինք հետեւիլ անոնց օրինակին:

Նախապատրաստութեան առիթ

Ամեն տարի Նոյեմբերի վերջաւորութեան (Նոյեմբեր 15-21) կը սկսինք պատրաստուելու Յիսուս Քրիստոսի Ճննդեան եւ Աստուածայայտութեան տօնին, Աստուծոյ Որդիին մարդեղացման եւ գալուստին: Շատ մը սուրբերու եւ մարգարէներու կեանքը մեզի օգտակար կը հանդիսանայ աւելի լաւ հասկնալու Յիսուսի պահքի իմաստն ու նպատակը: Յատկապէս վերջին շաբաթը՝ Ճննդեան շաբաթապահքին, աւելի կը կեդրոնանանք այս սուրբ Խորհուրդին վրայ: Այդ օրերուն տօն չ'ըլլար եւ վեց օրերն ալ պահքի օրեր են: Սուրբ Ճննդեան եւ Աստուածայայտութեան ճրագալոյցին կը լսենք նաեւ հետեւեալ շարականը.

Շարական ԲԶ.

Ուրախացիր Սրբուհի
Ուրախացիր Սրբուհի Գաբրիէ-



Յիսուսի փորձութիւնը (մանրանկար)

ՓՐԿԻՉԸ ԿԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ

«Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. “Ետիս գնա՛, սատանայ. որովհետեւ գորւած է՝ պիտի երկրպագես քու Տէր Աստուծոյդ ու միայն զԱյն պիտի պաշտես”»:

Երբ Աստուած ստեղծեց մարդը, արտօնեց որ դրախտին մէջ գտնուող բոլոր պտուղներէն ուտէ, բացի չարի ու բարիի գիտութեան ծառէն, որ պարտէզին կեդրոնը կը գտնուէր: Եթէ ուտէր այդ պտուղէն՝ պիտի մեռնէր: Սակայն օձը (սատանան)՝ խաբեց Ադամն ու Եւան, ըսելով որ անոնք ոչ թէ պիտի մեռնին, այլ՝ աստուածներ պիտի դառնան, չարն ու բարին իրարմէ զանազանել կարենալով: Անոնք կերան պտուղը եւ յետոյ պահուղտեցան Աստուծոյ աչքէն: Տէրը գիտնալով անոնց ըրածը, վտարեց զանոնք պարտէզէն. անկեալ մարդը այլեւս չէր կրնար ապրիլ Աստուծոյ հետ: Հազարաւոր տարիներ ետք, Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ մարդու կերպարանքով եւ Իր ուսերուն առաւ մեր բոլորին մեղքերը, որպէսզի վերջնականապէս կործանէ մեղքն ու մահը: Ան մոյճիսկ մկրտուելու եկաւ Յովհաննէս Մկրտիչի քով, թէւ ինք անմեղ էր եւ սրբուելու կարիք չունէր: Իսկ Աստուած մոյճիսկ սատանային թոյլ տուաւ որ փորձէ Քրիստոսը:

Այսօրուան դասը Փրկչի փորձութիւններուն մասին է:

Լի աւետօքն. որ քարոզեաց զգալուստ արքային տեառն ի յերկնից:
Ողջոյն ընդ քեզ Մարիամ, ի քեզ սուրբ Հոգին եկեացէ. եւ զօրութիւն բարձրելոյն ի վերայ քո հովանացի:
Որ ծնանելոցն է ի քէն իսրայէլի առաջնորդ. եւ ընդհանուր քարոզի Աստուած Հզօր անմահ բանն:

Թրգմ.

Ուրախացիր Սրբուհի Գաբրիէլի տուած աւետիսով, որ երկինքի Տէր արքային գալուստը աւետեց:

Ողջոյն քեզ Մարիամ, Սուրբ Հոգին քու վրադ պիտի գայ եւ Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի:

Ան որ քեզմէ պիտի ծնի՝ Իսրայէլի առաջնորդ եւ հզօր Աստուած ու անմահ բան պիտի ճանչցուի:

Հայոց 'մեծ սպարապետը՝ Վարդան Մամիկոնեան, երկու աղջիկ ունէր՝ Վարդենի եւ Վարդանոյշ: Վարդենի ամուսնացած էր Աշուշայի զաւակին՝ Վազգէնի (Վարսգէնի) հետ: Շուշան կամ Շուշանիկ էր անոր փաղաքական անունը եւ այդ անունով ալ ճանչցուած է պատմութեան ու սուրբերու կեանքը ներկայացնող գիրքերուն մէջ: Ան քրիստոնէական դաստիարակութիւն ստացած էր եւ կրթուած՝ Ս. Սահակ Հայրապետի աղջկան՝ Սահականոյշի ձեռքին տակ, ազնուական ընտանիքի մէջ: Նոյն տան մէջ կրթուած էր նաեւ իր հայրը՝ Վարդան Մամիկոնեան:

Ո՛չ ոք կրնար գիտնալ, որ ամուսնական կեանքը ինչպիսի դժբախտութիւն պիտի բերէր այս առաքինի աղջկան զխում: Շուշանիկը երեք զաւակներու մայր էր՝ երկու տղայ եւ մէկ աղջիկ: Իր հօր՝ Աշուշա բղջիւսին մահէն ետք անոր որդին՝ Վազգէն, ուրացաւ քրիստոնէութիւնը եւ իբրեւ զրադաշտական, պարսիկ աղջկայ մը հետ ամուսնացաւ: Շուշանիկ չէր կրնար հանդուրժել նման երեւոյթի: Ան մերժեց իր հաւատուրաց ամուսինը, զրկուեցաւ իր զաւակները տեսնելու իրաւունքէն եւ մտաւ Յուրտաւի եկեղեցւոյ մօտ գտնուող խոնաւ ու մութ խուցի մը մէջ: Ապարդիւն կ'ըլլան զինք զրադաշտական դարձնելու բոլոր փորձերը՝ ծեծ, սպառնալիք,

պաղատանք, աղաչանք եւ բանտարկութիւն: Շուշանիկ անխախտ մնաց նոյնիսկ բանտին մէջ. այս տառապանքներուն մէջ իրեն մխիթարութիւն էր փոքրիկ Աւետարան մը, որ Սուրբ Սահակ Հայրապետ նուիրած էր իրեն Ս. Խաչափայտէն առնուած մասունքի մը հետ միասին:

Անտանելի չարչարանքներու եւ տառապանքներու մէջ, որոնք եօթ տարի տեւեցին, Շուշանիկ մարտիրոսացաւ 475 թուականին:

Հայ եկեղեցին Սուրբ Շուշանիկի տօնը կը կատարէ Խաչվերացի երկրորդ Կիրակիին յաջորդող Երեքշաբթի օրը՝ Ս. Բեքրոնէ եւ Ս. Մարիանէ կոյսերուն տօնին հետ:

Ընտրելու ձեւ

Շատեր կը բամբասեն ձեր ծանօթներէն մէկուն մասին: Այն ինչ որ կը խօսին՝ սուտ է, տգեղ է ու բնաւ չ'արդարանար: Եթէ պաշտպանէք զայն, ձեր ընկերները կրնան խումբէն դուրս ձգել ձեզ: Նման կացութեան մէջ ի՞նչ կ'ընէք:

1. Ասոր նման ուրիշ ի՞նչ վիճակներու մէջ կրնաք գըտնուիլ:
2. Կրնա՞ք ընել այնպէս ինչպէս ըրաւ Սուրբ Շուշան:

ԹԻՒ 40-Ը ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՅՈՒՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՒԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Սուրբ Գիրքին մէջ շատ մը դէպքերու կը հանդիպինք, որոնք թիւ 40-ի հետ կապուած են:

Ջրհեղեղ եւ Եգիպտոսէ ելք

Նոյ տապանին մէջ մնաց ամբողջ Ջրհեղեղի միջոցին, որ երկիրը ծածկեց 40 օր եւ 40 գիշեր անձրեւելէ ետք: Սովսէս երբ իր ժողովուրդը Եգիպտոսէն դուրս բերաւ, Իսրայէլի որդիները 40 տարի թափառեցան անապատին մէջ, մինչեւ հասան Աւետեաց երկիր՝ Քանան:

Փրկիչը ծառայութեան կը պատրաստուի եւ կ'աւարտէ զայն

Քրիստոս 40 օր ու 40 գիշեր անապատին մէջ ծոմ պահեց, նախապատրաստուելով Աստուծոյ ծառայութեան: Մահէն ու Յարութենէն ետք, այս երկրի վրայ մնաց 40 օր, մինչեւ մարմնով երկինք բարձրացումը:

Պահոց եւ եկեղեցական տօներու ժամանակաշրջանները

Եկեղեցւոյ օրէնքին համաձայն, Ս. Ծննդեան շաբաթապահը 7 օր կը տեւէ: Ծննդեան պահքէն մինչեւ Տեառնընդառաջ եղած միջոցը դարձեալ 40 օր է: Մեծ պահքը եւս 40 օր է, որուն կ'աւելնան Յիսուսի չարչարանաց, մահուան ու յարութեան 7 օրերը: Ձատիկէն մինչեւ Համբարձում եղած քառասնօրեայ շրջանին, յարութեան շարականները կը շարունակենք երգել, Քրիստոսի Հրաշափառ Յարութեան ուրախ տօնը շարունակելով:



Յիսուս Քրիստոսի փորձութիւնը

Հին Կտակարանին մէջ կը կարդանք շարք մը անձերու մասին, որոնք անմարդաբնակ անապատին մէջ ծանր փորձութիւններու ենթարկուած են: Աբրահամ Տիրոջ ձայնին անսալով՝ իր ամբողջ ընտանիքով քաղաքային կեանքէն դուրս եկաւ եւ անջրդի անապատէն անցնելով ուղղուեցաւ դէպի Քանան: Իսահակն ու իր որդին՝ Յակոբն ալ անապատին մէջ ապրեցան ու անակրնկալօրէն Աստուծոյ հանդիպեցան եւ Աստուծոյ ժողովուրդին մասին լսելով՝ անոր նկատմամբ Աստուծոյ կամքը իմացան:

Սովսէս Եգիպտոսի արքունիքէն անապատ փախաւ, երբ հրեայ ստրուկը ծեծող Եգիպտացին սպաննեց: Ան զԱստուած ճանչցաւ եւ իմացաւ թէ Տէրը ի՞նչ կ'ուզէ իրմէ: Յովհաննէս Սկրտիչ իր քարոզութենէն ու մարդոց մկրտութեան սկսելէ առաջ, երկար ատեն անապատի մէջ ապրեցաւ:

Փրկիչը անապատին մէջ

Յիսուս Քրիստոս թէւ Աստուծոյ կատարեալ եւ ամենը Որդին էր, մարդոց նման մկրտուեցաւ եւ անոնց հետ անապատին մէջ կրեց փորձութիւններու ծանր լուծը: Մկրտութենէն ետք Յիսուս վերադարձաւ Յորդանանէն եւ Սուրբ Հոգին զԱյն առաջնորդեց դէպի անապատ: Քրիստոս 40 օր ու 40 գիշեր մնաց անապատին մէջ՝ խոկալով, աղօթելով ու ծոմապահութեամբ նախապատրաստուելով Տիրոջ՝ Հայր Աստուծոյ կողմէ իրեն վերապահուած առաքելութեան:

Առաջին փորձութիւնը

Յիսուս 40 օր անապատին մէջ մնալէ ետք՝ անօթեցաւ: Սատանան մօտեցաւ որպէսզի խաբէ զայն եւ ըսաւ. «Եթէ Աստուծոյ Որդին ես, ըսէ՛ որ այս քարերը հաց դառնան»: Ան պատասխանեց եւ ըսաւ. «Գրուած է, որ մարդ միայն հացով չ'ապրիր, այլ նաեւ այն խօսքերով որոնք Աստուծոյ բերնէն դուրս կու գան»: Ան գիտէր, որ աւելի կարելոր է հնազանդիլ Աստուծոյ, քան՝ կշտանալ, մանաւանդ սատանային առաջարկը ընդունելով:

Երկրորդ փորձութիւնը

Սատանան իր առաջին ձախորդութենէն ետք չհեռացաւ. ան փորձեց Փրկիչը խաբել ուրիշ կերպով: Այս անգամ ան Յիսուսը տարաւ Երուսաղէմ եւ զԱյն հանեց Տաճարի աշտարակին վրայ ու ըսաւ. «Եթէ Աստուծոյ Որդին ես, ինքզինքդ այստեղէն վար նետէ, որովհետեւ

գրուած է՝ հրեշտակներուն պատուիրած է քեզի համար, որ իրենց ձեռքերուն վրայ բռնեն քեզ, որպէսզի ոտքդ երբեք քարին չգարնուի»: Երուսաղէմի Տաճարը 120 մետր բարձրութիւն ունէր եւ կառուցուած էր ծորի մը եզրին: Կրնա՞ք երեւակայել այն յուզումը որ Յիսուս պիտի ստեղծէր եթէ Տաճարին բարձունքէն ցատկէր մարդոցմով լեցուն փողոցի մը մէջ:

Եւ Յիսուս դարձեալ մտիկ չըրաւ Սատանային: Այդպիսի վտանգաւոր տեղէն վար նետուելէ եւ ողջ մնալէ յետոյ սատանային տալիք կասկածելի փառքը մէկդի դնելով, Յիսուս սաստեց սատանան, ըսելով որ ինք բնաւ չի՛ պարտադրեր որ Աստուած հրաշք մը գործէ, պարզապէս որովհետեւ մէկը յիմարութիւն կ'ուզէ ընել: Սատանային պատասխանելով, Փրկիչը ըսաւ. «Գրուած է՝ քու Տէր Աստուածդ չփորձես»:

Երրորդ փորձութիւնը

Սակայն սատանային յաղթելը այնքան ալ դիւրին չէ: Այս անգամ ան տարաւ Յիսուսը բարձր լեռան մը վրայ, ցոյց տուաւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ անոնց փառքը ու ըսաւ. «Այս բոլորը քեզի կու տամ, եթէ գետին իյնալով երկրպագես ինձի»:

Սատանան կը փորձէր Յիսուսը, որպէսզի դիւրին ճամբայ մը ընտրէ: Ան այդ պահուն, ուղղակիօրէն երկրի վրայ թագաւորութիւն կը խոստանար Տիրոջ: Սակայն Յիսուս գիտէր, որ աստուածային կամքը զինք պիտի տանէր ոչ թէ երկրաւոր փառքի, այլ՝ խաչի վրայ անարգական ու տառապալից մահուան: Բոլոր մարդոց համար հաստատուող Աստուծոյ թագաւորութիւնը շատ աւելի մեծ է, քան՝ այն թագաւորութիւնը, զոր սատանան կրնայ ստեղծել: Եւ Տէրը անգամ մը եւս մերժեց սատանային փորձութիւնը, ըսելով. «Ետի՛ս գնա, սատանայ, որովհետեւ գրուած է, թէ քու Տէր Աստուծոյդ պիտի երկրպագես եւ միայն զինք պաշտես»:

Այն ատեն սատանան հանգիստ ձգեց զինք ու հեռացաւ եւ հրեշտակներ եկան Անոր երկրպագելու: Չափաւաս դառնալէ ետք Յիսուս Քրիստոս լքեց իր հայրենի քաղաքը՝ Նազարէթը: Ան գիտէր որ մօտեցած է ժամանակը եւ Երկնաւոր Հայրը իր ծառան պիտի դրկէ: Ան մկրտուեցաւ եւ Աստուծոյ սիրոյ վաւերացումը ստացաւ:

Անապատային աղօթքներէ եւ ծոմապահութենէն յետոյ, անմախքնաբար փորձութիւններու ենթարկուեցաւ: Հիմա ան ամբողջութեամբ պատրաստ էր եւ ուսուցանելու եւ ծառայելու Աստուծոյ ժողովուրդին:

Ձեր ընտանիքի բոլոր անդամները հրաւիրելով տօնական ընթրիք մը ունեցէք: Ամէն մէկուն գործ մը տուէք, սկիզբէն մտածելով որ իւրաքանչիւրը ի՞նչ ճաշ կը սիրէ: Շուկայ գացէք եւ գնում կատարելով ընթրիքը պատրաստեցէք: Սեղանին վրայ ծածկոց դրէք, գեղեցիկ ամանեղէն եւ ծաղիկներ: Կրնաք նաեւ բարեկամներ ալ հրաւիրել:

Ընթրիքը պատրաստած պահուն կրնաք խօսիլ կեանքի մէջ անակընկալներ դիմագրաւելու պատրաստ ըլլալու մասին: Մենք երբ կը պատրաստուինք բանի մը, անհրաժեշտ գոյքերը կը հաւաքենք: Իսկ կեանքին կը պատրաստուինք ուսանելով: Ուսում կը ստանանք, որպէսզի ապագային մասնագիտութեան մը նուիրուինք: Ամէն առաւօտ աղօթքով կը նախապատրաստուինք օրուան ընթացքին պատահելիք դէպքերուն: Ճամբորդութեան ժամանակ պայուսակ ու քարտէս կ'առնենք մեզի հետ: Դպրոց երթալէ առաջ, տան պարտականութիւնները կը կատարենք եւ չենք մոռնար մեզի հետ դպրոց տանելու տետրակներ, մատիտներ եւ անհրաժեշտ գրեմական պիտոյքներ:



րեւոր իրադարձութեան: Իւրաքանչիւր տարուան Մեծ Պահքը (Քառասնօրեայ պահեցողութիւնը) ներամփոփ աղօթքի եւ «ամապատ»ին մէջ պահեցողութիւն կատարելու առիթ է, նախապատրաստուելու համար Ս. Ջատկուան տօնին: Պահքի ընթացքին մենք զմեզ կը զրկենք սովորական դարձած հաճոյքներէ: Միւս պահքերն ալ նոյն ձեւով, մեզ կը պատրաստեն տօներուն՝ Քրիստոսի Ս. Ծնունդին եւ Աստուածայայտնութեան, Պետրոս եւ Պօղոս առաքելներու տօնին եւ այլ տօներու: Տարուան միւս օրերուն ընթացքին ալ պահքի օրեր կը հանդիպին: Այսպէս՝ ամէն Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, որոնցմէ առաջինին ընթացքին կը յիշենք Տիրոջ մատնութիւնը, իսկ երկրորդին՝ Ամոր մահը խաչին վրայ:

Ընթրիքը պատրաստելու միջոցին աղօթեցէք ընտանիքի իւրաքանչիւր անդամին համար, որպէսզի Աստուած ամոր տայ ոյժ եւ իմաստութիւն, կարենալու համար դիմագրաւել իր ամենօրեայ հոգերը եւ անկանխատեսելի մարտահրաւերները այս կեանքին:

Սուրբ Աստուածածնի Տաճար ընծայումը

Սուրբ Աստուածածնի Տաճար ընծայման տօնը կը կատարուի Նոյեմբեր 21-ին: Տօնին հաստատումը առնչուած է այն տաճարին, զոր Յուստինիանոս կայսրը կառուցել տուաւ Ս. Կոյսի յիշատակին: Տաճարի օրինութեան արարողութիւնը կատարուած է 543 թուականի Նոյեմբեր 21-ին: Սուրբ Մարիամի ծերունի ծնողքը՝ Յովակիմն ու Աննան, խոստացած էին որ իրենց ապագայ զաւակը Աստուծոյ պիտի նուիրէին: Ուստի, կատարելով իրենց ուխտը, երեք տարեկան Մարիամը Տաճարին ընծայեցին, ուր ամոր հոգ տարին բարեպաշտ կիներ: Կային կիներ եւ աղջիկներ, որոնք Տաճարին ներքին բակին մէջ գտնուող սենեակներուն մէջ կ'ապրէին եւ հոգ կը տանէին Տաճարին մաքրութեան ու յարգարանքին: Տաճարի քահանայապետը դիմաւորեց Ս. Կոյսը եւ տարաւ զայն Սրբութիւն Սրբոց բաժինը, ուր միայն ինք կրնար մտնել տարին անգամ մը:

Աստուածորդին ու Ամոր աշակերտները աղօթքով ու ծոմապահութեամբ առաքելութեան կը նախապատրաստուին

Աստուծոյ Որդին մեր փրկութեան համար մարդացաւ: Յիսուս Քրիստոս մարդոց պէս աղօթեց եւ ծոմ բռնեց անապատին մէջ: Իսկ Յովհաննէս Մկրտիչ յատուկ առաքելութիւն ունէր՝ պատրաստել մարդիկը Տիրոջ գալուստին համար: Յովհաննէս ինք ալ իր կարգին պատրաստուեցաւ, որպէսզի կարենար ուրիշները պատրաստել: Մինչեւ Փրկչին գալուստը, իսրայէլացի մարգարէները անապատին մէջ աղօթքով ու ծոմապահութեամբ կը կատարէին այն ինչ որ Տէրը սորվեցուցած էր իրենց:

Աղօթքը եւ պահքը մեր կեանքին մէջ

Եկեք խօսինք այն ճամբաներուն մասին, որոնց միջոցաւ եկեղեցին մեզ կը նախապատրաստէ ամենէն կա-

Տէրը Իր Առաքելները Կը Կանչէ

Աշակերտներ

Քրիստոսի աշակերտ դառնալ կը նշանակէ լսել ու գործադրել Մեծ Ուսուցիչին՝ Յիսուսի պատուէրները: Անցնող դարերու ընթացքին եւ գալիք ժամանակներուն, անոնք որոնք կը հաւատան Յիսուսի եւ քրիստոնեայ կը մկրտուին, Յիսուսի աշակերտ կը դառնան: Անուանական պէտք չէ ըլլայ մեր աշակերտութիւնը Յիսուսի, այլ՝ ամբողջական հոգիով, ամբողջական սրտով: Այսինքն ոչ թէ միայն սորվիլ Մեծ Ուսուցիչին պատուէրները, այլ մանաւանդ հետեւիլ Ամոր կեանքի օրինակին:

Ուսուցիչը

Լաւ ուսուցիչը այն է, որ կը յաջողի իր գիտելիքները ամբողջութեամբ հաղորդել ուրիշներուն: Ան աշակերտներուն կը բացատրէ, թէ այդ գիտելիքները ինչքա՞ն կարելոր են կեանքին համար եւ ցոյց կու տայ, թէ անոնք ինչպէս պէտք է գործադրուին կեանքի մէջ:

Յիսուս քրիստոսի աշակերտները զինք Ռաբբի՝ Ուսուցիչ կը կոչէին: Հրեաներ «Ռաբբի» կոչումով կը պատուէին Օրէնքի հմուտ ուսուցիչները եւ հոգեւոր առաջնորդները: Փրկիչը երբ աշակերտներուն կոչ ուղղեց իրեն հետեւելու, անոնք անյապաղ հետեւեցան, որովհետեւ Ամոր մէջ տեսան եւ զգացին բան մը, որ զինք կը զատորոշէր ուրիշներէ եւ ամբողջական սրտով հաւատացին, որ Ան Աստուծմէ զրկուած մէկն է: Յիսուս Քրիստոս իսկապէս ուսուցիչ (վարդապետ) էր: Ան իր աշակերտներուն կը սորվեցնէր ճշմարտութիւնը Աստուծոյ մասին: Ան անձնուիրաբար ինքզինքն զոհեց իր աշակերտներուն եւ մեր բոլորին համար, որպէսզի կարենանք միշտ Աստուծոյ հետ ըլլալ Ամոր թագաւորութեան մէջ:



Յիսուս իր աշակերտներուն հետ

Փրկիչը ԱՇԱԿԵՐՏՆԵՐ Կ'ԸՆՏՐԷ

«Ոչ թէ դուք զիս ըմտրեցիք, այլ ես ձեզ ըմտրեցի եւ յանձնարարեցի, որ երթաք ու պտղաբեր դառնաք եւ ձեր պտուղը մնայ ու ինչ որ իմ անունովս խնդրէք Հօրմէն, պիտի տայ ձեզի: Այս պատուէրը կու տամ ձեզի՝ որ սիրէք զիրար»:

Յիսուս Քրիստոս սովորական մարդիկ՝ ձկնորսները ըմտրեց, որպէսզի իր մտերիմ ու վստահելի աշակերտները դառնան: Կարճ ժամանակամիջոցի՝ երեք տարուան մէջ, Փրկիչը Իր աշակերտներուն սորվեցուց եւ միշտ ցոյց տուաւ, թէ մարդիկ ինչպէս Աստուծոյ կամքին համաձայն պէտք է ապրին: Ան պատգամեց նաեւ թէ ինչպէս մարդիկ պէտք է սիրեն զիրար. «Աւելի մեծ սէր ոչ ոք ունի, քան այն որ իր կեանքը կու տայ իր ընկերներուն համար»: Քրիստոս ինք մահացաւ, որպէսզի մեզ փրկէ մեղքէն ու մահէն: Ան իր աշակերտներուն ըսաւ. «Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր, որովհետեւ ծառան չի գիտեր թէ իր տէրը ի՞նչ կ'ընէ. այլ ձեզ բարեկամներ կը կոչեմ, որովհետեւ ինչ որ Հօրմէն լսեցի, ձեզի պատմեցի» (Յհ 15.15):

ԳԱԼԻԼԻՈՅ ԾՈՎ

(Տարբեր ժամանակներ նույն ծովը կոչուած է նաեւ Գեն-նեսարէի կամ Տիբերական լիճ):

Յիսուս Քրիստոսի օրով Պաղեստինի մէջ Գալիլիոյ ծովու ափերուն խիտ բնակչութիւն կար: 21 քլմ. երկայնք եւ 13 քլմ. լայնք ունէր ան, այսինքն բաւական մեծ էր եւ ամպոտ օրերուն՝ հովը մեծ ալիքներ կը յառաջացնէր անոր մակերեսին վրայ:

Գալիլիոյ ծովուն ափերը արեւմուտքէն շրջապատուած են ցած բլուրներով: Մարդիկ այդ շրջանին մէջ հողա-մշակութեամբ եւ այգեգործութեամբ զբաղած են:

Օր մը Յիսուս Նազարէթէն Գալիլիոյ ծով եկաւ, որպէս-գի ձկնորսներուն մէջէն առաքեալներ ընտրէ իրեն հա-մար: Ան ըսաւ անոնց. «Ես ձեզ մարդոց որսորդներ պի-տի դարձնեմ»: Աշակերտները կանչելով՝ Փրկիչը գնաց



Կափառնայում քաղաքը, ուր կը մնար Գալիլիոյ շրջա-նին մէջ քարոզած միջոցին:

Փրկչին ու Գալիլիոյ ծովուն մասին կարդացէք Ղկ 5.1-11, Մտ 14.22-33, Մր 4.35-41 եւ Յհ 21.1-14:

ԿԸ ՀԱՆՉՆԱՔ ԱՐԴԵՕՔ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ

Նոր Կտակարանին մէջ 12 առաքեալներէն միայն ոմանց մասին տեղեկութիւններ կան:

Աջ կողմը դրուած առաքեալներուն անուններուն համար, ծախ կողմի սիւնակէն ընտրեցէք անոնց համապատաս-խանող նկարագրութիւնը եւ իրարու միացուցէք: Յաւելեալ տեղեկութիւններ կրնաք գտնել այս դասի վերջին բա-ժիններուն մէջ:

1. Ես հարցուցի. «Նազարէթէն ալ մարդ կ'ելլէ՞»:

Յակոբ

2. Հայրս՝ Ջեբեդիոս, ինձի հետ ձկնորսի ուռկանները կը շտկաւորէ, երբ Յիսուս կանչեց զիս:

Փիլիպպոս

3. Ես էի որ պիտի մատնէի Տէրը:

Նաթանայէ (Բարթողիմէոս)

4. Ես տուրք կը հաւաքէի, սակայն Յիսուս հրամայեց իրեն հետեւիլ:

Անդրէաս

5. Եղբայրս՝ Անդրէասը, ըսաւ որ երթամ Փրկիչը դիմաւորեն:

Սիմոն Պետրոս

6. Ես Նաթանայէին ըսի որ երթայ ու Փրկիչը դիմաւորէ:

Մատթէոս

7. Ես առաջինն էի, որուն ըսաւ Տէրը. «Եկէ՛ք ու տեսէ՛ք»:

Յուդա

Փրկիչը իր աշակերտները կը կանչէ

Օր մը, քարոզած պահուն, Յովհաննէս Մկրտիչ տեսնե-լով իրեն մօտեցող Յիսուս Քրիստոսը, իր աշակերտնե-րուն ըսաւ. «Ահա՛ Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը շալկած է ուսերուն... Եւ ես զինք չէի ճանչնար, բայց որպէսզի Իսրայէլ ճանչնայ զայն, ես եկայ ջուրով մկրտելու»: Ապա Յովհաննէս անոնց ըսաւ, թէ ի՞նչ լսեց ու տեսաւ Յիսուսը մկրտած պահուն. «Հոգին տեսայ, որ երկինքէն կ'իջնէր աղաւնիի պէս եւ կը հանգչէր Անոր վրայ: Եւ ես զԱյն չէի ճանչնար. սակայն ան որ զիս դըռ-կեց ջուրով մկրտելու, ան ըսաւ ինձի. “Որո՞ւ վրայ որ տեսնես թէ Հոգին կ'իջնէ, Ան է որ Սուրբ Հոգիով կը մկրտէ”: Եւ ես տեսայ ու վկայեցի, թէ Ան է Աստուծոյ Որ-դին»:

Առաջին աշակերտները

Յաջորդ օր, Յովհաննէս դարձեալ ցոյց տուաւ Փրկիչը եւ Յովհաննէսի երկու աշակերտները հետեւեցան Ա-նոր: Յիսուս անոնց դառնալով հարցուց. «Ի՞նչ կ'ու-զէք»: Անոնք պատասխանեցին. «Ռաբբի, ո՞ւր կը բնա-կիս դուն»: Տէրը ըսաւ անոնց. «Եկէ՛ք եւ տեսէ՛ք»: Երկու աշակերտները զացին ու ամբողջ օրը Անոր հետ եղան: Յետոյ, անոնցմէ մէկը՝ Անդրէաս, գնաց իր եղբայ-րը՝ Սիմոն Պետրոսը փնտռելու եւ յուզուած ըսաւ ա-նոր. «Գտանք Մեսիան»: Ան Սիմոնը տարաւ Յիսուսի մօտ, իսկ Տէրը անոր նայելով ըսաւ. «Դուն, Սիմոնն ես, Յովնանի որդին. դուն Կեփաս (այսինքն՝ Պետրոս, քար) պիտի կոչուիս»: Յաջորդ օրը, Յիսուս որոշեց Գա-լիլիա երթալ. Փիլիպպոսը տեսաւ եւ անոր ըսաւ. «Ինձի հետեւէ՛»: Եւ Փիլիպպոս Բեթսայիդայէն էր, Անդրէասի եւ Պետրոսի քաղաքէն:

Փիլիպպոս գնաց իր ազգականին Նաթանայէին քով եւ անոր ըսաւ. «Անոր մասին որ Մովսէսի Օրէնքին ու մարգարէութիւններուն մէջ գրուած է, գտանք՝ Յիսուսն է, Յովսէփի որդին, Նազարէթ քաղաքէն»: Իսկ Նաթա-նայէ անոր ըսաւ. «Միթէ Նազարէթէն նշանաւոր մէկը կրնա՞՞ լիլլել»: Նազարէթ փոքրիկ եւ անմշան գիւղ մըն էր եւ կը թուի թէ Բարթողիմէոս զարմացած էր, թէ ինչ-պէ՞ս կրնայ ըլլալ որ նշանաւոր մէկը, եւ աւելին՝ Մեսի-ան այդպիսի անմշան վայրէ մը ելլէ: Իսկ Փիլիպպոս անոր ըսաւ. «Եկո՛ւր եւ տես»:

Երբ Յիսուս տեսաւ իր կողմը եկող Բարթողիմէոսը (Նա-թանայէին), անոր համար ըսաւ. «Ահաւասիկ իսրայէլա-ցի մը, որուն մէջ նենգութիւն չկայ»: Բարթողիմէոս Անոր ըսաւ. «Իսկ դուն զիս ուրկէ՞ կը ճանչնաս»: Յիսուս պա-տասխանեց. «Դե՛ռ Փիլիպպոսը քեզ չկանչած, տեսայ քեզ երբ թզնիին տակ նստած էիր»: Այն ատեն Բարթո-ղիմէոս հասկցաւ, որ Յիսուս զինք կը ճանչնայ եւ ըսաւ

անոր. «Ռաբբի՛, Դուն ես Աստուծոյ Որդին, Դուն ես Իս-րայէլի Թագաւորը»: Պատասխանելով անոր, Յիսուս ը-սաւ. «Անոր համա՞ր հաւատացիր, որ քեզի ըսի թէ՛ թզե-նիին տակ նստած էիր եւ քեզ տեսայ. անկէ աւելի մեծ հրաշքներ պիտի տեսնես»:

Անդրէաս ու Սիմոն Պետրոս ձկնորսներ էին: Փրկիչը ա-նոնց ըսաւ. «Ետեւէս եկէք եւ ես ձեզ մարդոց որսորդ-ներ պիտի դարձնեմ»: Յիսուս կանչեց երկու այլ ձրկ-նորսներ եւս՝ Յովհաննէսն ու Յակոբոսը՝ Ջեբեթիոսի որդիները, որոնք Գալիլիոյ ծովագերքն էին: Անոնք ի-րենց ուռկանները կը վերանորոգէին: Երբ Յիսուս կան-չեց զիրենց, անոնք շուտով ձգեցին իրենց ուռկանները եւ հետեւեցան Անոր:

Տուրք հաւաքող Մատթէոս

Յաջորդ անձը, զոր Յիսուս աշակերտութեան հրաւի-րեց, մաքսաւոր Մատթէոսն էր: Օր մը, ճամբայէն ան-ցած ժամանակ, Յիսուս տեսաւ մաքսատան մէջ նըս-տած Մատթէոսը: Երբ Յիսուս զայն կանչեց, ան շուտով ամէն ինչ ձգեց եւ հետեւեցաւ Անոր:

Ցասներկու աշակերտները

Յիսուս Քրիստոս բազմաթիւ հրաշքներ եւ բժշկութիւն-ներ կատարեց: Օր մը, առաւօտուն, ամբողջ գիշերը լե-րան վրայ աղօթքով անցընելէ ետք, Փրկիչը իր մօտ կանչեց Իրեն հետեւող տասներկու մարդիկը: Անոնք Տիրոջ աշակերտները դարձան: Անոնց անուններն են՝ Սիմոն Պետրոս, անոր եղբայրը՝ Անդրէաս, Ջեբեդիոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բար-թողիմէոս (Նաթանայէ), Թովմաս եւ մաքսաւոր Մատ-թէոս, Ալփիէոսի որդին Յակոբոս եւ Թադէոս, Սիմոն Կա-նանացի եւ Յուդա Իսկարիոտացի՝ որ մատնեց զԱյն:

ԱՆԴՐԷԱՍ ԱՌԱՔԵԱՆ

Անդրէաս առաքեալ բոլոր առաքեալներուն անդ-րանիկն էր, այսինքն՝ բոլորէն առաջ կանչուողը: Նախապէս ան աշակերտ եղած էր Յովհաննէս Մկրտիչին: Աւանդութեան համաձայն, ան քարո-զած է Սկիւթիոյ, Յունաստանի եւ Փոքր Ասիոյ մէջ: Խաչելութեամբ նահատակուած է (ըստ կարգ մը աղբիւրներու՝ Յունաստանի մէջ). ըստ աւանդու-թեան՝ զայն խաչած են լատինական X տառի ձե-ւով, որ ծանօթ է «Անդրէասի Սուրբ Խաչ» անու-նով: Հայ եկեղեցին Անդրէասը կը յիշէ Փիլիպպոս առաքեալին հետ, Խաչվերացի 9-րդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:


Մեր կեանքին մէջ անձեր կան, որոնք մեզի ուսուցումներ կը կատարեն՝ հայր, մայր, մեծ մայրեր, մեծ հայրեր, հօրեղբայր, մօրեղբայր, դպրոցի մէջ՝ դաստիարակներ, մարզիչը, երաժշտութեան դասատուն, պարուստյցը եւ ուրիշներ: Դուք իսկ կրնաք այս ցանկը երկարել: Այն անձերը որոնք աւելի շատ կ'օգնեն մեզի, կը դառնան մեր բարեկամները: Մենք ոչ միայն կը յարգենք զանոնք, այլ նաեւ կը փորձենք հետեւիլ անոնց օրինակին: Ուրիշ խօսքով՝ անոնց աշակերտները կը դառնանք: Սակայն ասիկա չի նշանակեր, որ զանոնք պէտք է պաշտենք Աստուծոյ պէս, ոչ ալ ընդօրինակենք զանոնք կապելու աստիճան, ինչպէս կ'ընեն ոմանք, այսինչ կամ այնինչ դերասանին խօսելաձեւը կամ հագուածքը ընդօրինակելով: Մեզի համար կարեւոր է գիտնալ, որ ինչպիսի՞ արժեքներով ու սկզբունքներով կ'առաջնորդուին մարդիկ այս կեանքին մէջ եւ այդ սկզբունքները ինչպէ՞ս ազդեցութիւն կ'ունենան մեր յարաբերութիւններուն վրայ: Մեր հասունացման ու զարգացման ընթացքին պէտք է

այդ մարդոց բարոյական նկարագիրն ու արժեքները ներարկեն մեզի, որոնք մեր հիացումին ու սիրոյն առարկաներն են: Սուրբերը մարդոց համար այն տիպար օրինակներն են, որոնք փորձած են ապրիլ Աստուծոյ պատուիրաններուն համաձայն: Եթէ մեր շուրջը մայիմք, կը տեսնենք որ կան նաեւ իսկական քրիստոնեաներ, որոնք թէեւ չեն փառաբանուիր, սակայն իրենց կեանքով բոլորին օրինակ կը հանդիսանան: Իսկ մենք յաճախ անտարբեր ենք անոնց նկատմամբ ու չենք նկատեր այն անձերը, որոնք բարիք կը գործեն շրջապատին մէջ, հոգ կը տանին ծերերուն եւ անտէրներուն եւ առանց խնդրանք սպասելու՝ օգտակար կը հանդիսանան կարիքաւորներուն: Անոնք կը ձգտին յաղթահարել վատը եւ յատկապէս անարդարութիւնները, որոնք կրնան ցաւ պատճառել մարդոց: Միջոցներ չեն պակսիր մեզի բարիք գործելու համար եւ այդպիսով Յիսուսի հետեւորդ դառնալու: Մենք կրնանք օրինակ առնել սուրբերէն, որոնք Յիսուսի ծամբուն կը հետեւին:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՈՒ ԾԱՌԱՆԵՐ ԴԱՐՁԷՔ

Աստուած մեզմէ իւրաքանչիւրը տաղանդով մը օժտած է, որպէսզի իրեն եւ մարդկութեան ծառայենք: Ստորեւ դրուած ցանկէն երկու աշխատանք ընտրեցէք, որոնք աւելի լաւ կըրնաք կատարել, քան՝ միւսները: Կրնաք նաեւ ձեր մախաւիւրած աշխատանքները կամ բարի գործերը աւելցնել այս ցանկին վրայ: Մտածեցէ՛ք թէ ձեր այդ շնորհքով որո՞նց կըրնաք օգնել (ծնողներ, քոյր, եղբայր, ընկեր, ուսուցիչ, եւ այլն): Պիտակներուն վրայ «Որո՞ւ» բառէն յետոյ գրեցէ՛ք անոնց անունները, իսկ ձեր անունը գրեցէ՛ք՝ «Որո՞ւ կողմէ» բառէն ետք: Գրեցէ՛ք թէ ինչպիսի՞ շնորհք կամ տաղանդ կրնաք ցուցաբերել, որպէսզի օգնէք այդ մարդոց եւ կամ ինչպէս կրնաք իրագործել այդ օգնութիւնը:

- Կը սիրեն հոգ տանիլ փոքրիկներուն:
- Կը սիրեն մրցումներ կազմակերպել:
- Լաւ ասմունքող են:
- Համբերատար են:
- Մաքրասէր են եւ կարգապահ:
- Երաժշտական բացառիկ շնորհք ունին:
- Լաւ մարզիկ են:
- Գծելու բացառիկ շնորհք ունին:
- Շատ կը խղճամ մարդոց:
- Եւ այլն...:




ԺՐԿԻՉԸ Կ'ՈՒՍՈՒՑԱՆԵ ԵՒ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ ԿԸ ԲԺՇԿԷ

Ժողովարան (Սինակոկ)

Ժողովարանը այն վայրն է, ուր մարդիկ կը հաւաքուին աղօթելու եւ Աստուծոյ Օրէնքը սորվելու համար (յունարէնով «սինակոկ» բառը կը նշանակէ ժողով, հաւաքոյթ): Հրեաներ ժողովարան կառուցանելու սկսան Ն.Ք. 587 թուականին, Երուսաղէմի Տաճարի կործանումէն ետք: Բաբելոն եւ այլ երկիրներ աքսորուելով ու հեռու ըլլալով Պաղեստինի հարազատ միջավայրէն՝ հրեաներ այլեւս չունէին Աստուծոյ Տուն մը, ուր կարենային հաւաքուիլ եւ աղօթել Աստուծոյ ու զԱյն պաշտել: Ուստի ժողովարանը փոխարինեց Տաճարը: Շաբաթ օրերուն հրեաներ կը հաւաքուէին Աստուծոյ աղօթելու, Սուրբ Գիրքի ընթերցումը լսելու, մեկնութիւններ ու քարոզներ ունկնդրելու, ինչպէս նաեւ սաղմոսներ երգելու: Իսկ երբ հըրեաներ Պաղեստին վերադարձան ու վերանորոգեցին Տաճարը, հրեական ժողովարաններ կային իւրաքանչիւր քաղաքի եւ գիւղի մէջ:

Երուսաղէմի Տաճարը

Խորքին մէջ, հրեաներ միայն մէկ Տաճար ունէին: Վկայութեան Խորանին նմանութեամբ, զոր ամապատի թափառումներու ընթացքին իր հետ կը տանէր, Իսրայէլի ժողովուրդը զայն կառուցեց Աստուծոյ պատուէրով: Տաճարը սուրբ տեղ մըն էր, ուր մարդիկ կու գային իրենց մեղքերուն համար զոհ մատուցանելու: Դաւիթի որդին՝ Սողոմոն, Ն.Ք. 10-րդ դարու կիսուն կառուցել կու տայ Երուսաղէմի նշանաւոր Տաճարը (Սողոմոնի Տաճար), ուր դրուած էր Տապանակ Ուխտին: Երուսաղէմը այդ օրէն սկսեալ, այդ Տաճարին պատճառաւ, դարձած է սրբավայր: Տաճարին կը ծառայէր քահանայապետը, որ կրնար Սրբութիւն Սրբոց՝ Աստուծոյ ներկայութեան մտնել, տարին անգամ մը միայն:



Յիսուս կը քարոզէ Երուսաղէմի մէջ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱՄԲՈՂՋԱՅՈՒՄՆ Է ՕՐԷՆՔԻՆ

«Տիրոջ Հոգին իմ վրաս է, ամոր համար ալ օծեց զիս, որկեց աղքատներուն աւետարանը քարոզելու, սրտաբեկները բժշկելու, գերիներուն ազատութիւն քարոզելու, կոյրերուն տեսողութիւն շնորհելու եւ Տիրոջ ընդունելու տարին հռչակելու»:

Յիսուս Քրիստոս Յորդանանի մէջ մկրտուելէ եւ ամապատին մէջ փորձուելէ ետք, մախ Գալիլիա վերադարձաւ եւ ապա եկաւ Նազաթ, ուր դաստիարակուած էր Ս. Կոյս Մարիամի եւ Յովսէփի ծեռքին տակ: Նազաթի բնակիչները ուրախացան երբ տեսան Յիսուսը եւ տօնական օրը՝ Շաբաթ օր, հրաւիրեցին զինք որ Սուրբ Գիրքը կարդայ ժողովարանին մէջ եւ քարոզէ: Սակայն Քրիստոս բոլորը կը զարմացնէ, երբ կը կարդայ Եսայիի մարգարէութեան հետեւեալ տողերը եւ կ'ըսէ. «Այսօր այս գրութիւնը կատարուեցաւ, երբ ձեր ականջներով կը լսէք կարդացուածը»: Եւ իրապէս ալ Եսայի մարգարէին խօսքերը իրականացան: Փրկիչը բոլոր մտիկ ընողներուն ըսաւ. Տիրոջ Հոգին իմ վրաս է եւ Ինք՝ Օծեալ Քրիստոսն է՝ Մեսիան: Ան է, որ իշխանութիւն ունի մարդոց ազատութիւն շնորհելու, բժշկելու եւ Աւետարանը՝ Աստուծոյ Բարի Լուրը քարոզելու:

Փրկիչը կը քարոզէ եւ կ'ուսուցանէ

1. Աստուածաշունչին մէջէն գտէք վարը որուած համարները եւ ըսէք թէ ի՞նչ պատահեցաւ երբ Յիսուս սկսաւ քարոզել:
2. Աջ սիւնակի հինգ բաժիններուն նայեցէ՛ք եւ ըսէք թէ անոնցմէ ո՞ր մէկը աւելի շատ կը յարմարի ձեր կարդացած տողերուն:
3. Բաց մնացած մասերը ամբողջացուցէք այնպիսի բառերով, որոնք ամբողջական կը դարձնեն Աստուածաշունչէն քաղուած հատուածները:
4. Պատասխանեցէ՛ք Աստուածաշնչական իւրաքանչիւր հատուածէն բղխող հարցումներուն:

Մատթէոս 4.23-25

Մատթէոս 3.4

Մատթէոս 4.17-20

Մատթէոս 4.6

Մատթէոս 3.11

- Ա.** Ան ըսաւ. «Եթէ Աստուծոյ Որդին ես, ինքզինքդ այստեղէն վար նետէ, որովհետեւ գրուած է՝ _____ պատուիրած է քեզի համար, եւ _____ վրայ պիտի շալկեն քեզ, որպէսզի բնաւ ոտքդ քարին չգարնուի:
- Ո՞վ է այս նախադասութիւնը ըսողը: _____
- Որո՞ւն կ'ըսէ այդ խօսքը: _____
- Բ.** Ան _____ մազէ պատրաստուած զգեստ հագած էր եւ մէջքին կաշիէ գօտի կապած, իսկ իր կերակուրն էր _____ ու _____:
- Ի՞նչ էր այդ մարդուն անունը: _____
- Գ.** Ան սկսաւ քարոզել եւ ըսել. «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է _____:
- Գալիլիոյ ծովեզրին քալած պահուն, Ան տեսաւ երկու եղբայրներ՝ _____ եւ անոնց ըսաւ. «Ինձի հետեւեցէք եւ ես ձեզ _____ պիտի դարձնեմ:
- Ի՞նչ ըրին անոնք, երբ այս խօսքերը լսեցին: _____
- Ո՞վ էր քարոզողը: _____
- Դ.** Յովհաննէս ըսաւ. «Ես ձեզ ջուրով կը _____
- ապաշխարութեան համար, սակայն ան որ ինձմէ ետք պիտի գայ, Ան _____ ձեզ _____ եւ կրակով:
- Որո՞ւ մասին կը խօսէր Յովհաննէս: _____
- Որո՞նց կ'ըսէր ան այդ խօսքը: _____
- Ե.** Ան ամէն հիւանդութիւն կը բժշկէր: Եւ Անոր համբաւը տարածուեցաւ ամբողջ _____ եւ Անոր կը հետեւէին _____ էն, Դեկապոլիսէն, եւ _____ Զրեաստանէն ու Յորդանանի միւս կողմէ:
- Ո՞վ նշանաւոր էր իր բժշկող գորութեամբ: _____
- Որո՞նք կը հետեւէին Անոր: _____

Փրկիչը կ'ուսուցանէ ժողովուրդին եւ հիւանդները կը բժշկէ

Երբ Յիսուս անապատին մէջ դիմադրեց սատանային փորձութիւններուն, Սուրբ Դոգիով լեցուեցաւ եւ եկաւ Իր հայրենի Նազարէթ գիւղը, ուր արդէն ժողովուրդը լսած էր Իր զարմանալի եւ արտասովոր խօսքերուն եւ գործերուն մասին, զորս Ան կատարած էր Գալիլիոյ մէջ:

Փրկիչը կը քարոզէ Նազարէթի մէջ

Յիսուս Քրիստոս Նազարէթ քաղաքը եկաւ, ուր պատանութիւնը անցուցած էր: Երբ Շաբաթ եղաւ, ընկալեալ սովորութեան համաձայն, ժողովարան գնաց: Իբրեւ հիւր, իրմէ խնդրեցին կարդալ Սուրբ Գիրքը: Տիրոջ տըլին Եսայի մարգարէի ուղորուն մատենանը: Ան բացաւ գիրքին այն հատուածը, ուր գրուած էր. «*Տիրոջ Դոգին իմ վրաս է, ամոր համար ալ օծեց զիս, դրկեց աղքատներուն Աւետարանը քարոզելու, սրտաբեկները՝ բժշկելու, գերիներուն ազատութիւն քարոզելու, կոյրերուն տեսողութիւն շնորհելու եւ Տիրոջ ընդունելու տարին հռչակելու*»:

Երբ ան աւարտեց ընթերցումը, հաւաքեց ուղորուն մատենանը եւ զայն պաշտօնեային վերադարձնելէ ետք ընդտաւ, ինչպէս կ'ընէին ժողովարանին վարդապետները, ժողովուրդին հետ խօսելէ ետք: Իսկ ժողովարանին մէջ բոլոր ներկաները իրենց աչքերը սեւեռած էին Իր վրայ:

Ահա իրականացաւ այս մարգարէութիւնը

Յիսուս Քրիստոս ըսաւ ժողովուրդին. «*Այսօր այս գրութիւնը իրականացաւ, երբ ձեր ականջներով կը լսէիք զայն*»: Անոր մասին դրական կարծիք ունեցող մարդիկ զարմացան ու ապշած մնացած էին այն շնորհալի խօսքերուն համար, որոնք Անոր բերնէն կ'ելլէին: Անոր քարոզման հիացող մարդիկ կ'ըսէին. «*Ասկա Յովսէփի որդին չէ՞*»:

Փրկիչը գիտէր, որ անոնք շատ լսած էին, որ Ինք կ'ուսուցանէ ու կը բժշկէ Կափառնայումի մէջ եւ կ'ուզէին որ նոյն բաները նաեւ Նազարէթի մէջ ընէ: Բայց Յիսուս անոնց ըսաւ. «*Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ մարգարէն իր քաղաքին մէջ արժէք չունի: Արդարեւ, կ'ըսեմ ձեզի, որ Եղիայի օրով Իսրայէլի մէջ շատ այրիներ կային, երբ երկինքը փակուեցաւ երեք տարի ու վեց ամիս եւ ամբողջ երկրի մէջ մեծ սով տիրեց: Սակայն անոնցմէ ոչ ոքի մօտ դրկուեցաւ Եղիան, բացի այն այրի կնոջմէն, որ կ'ապրէր Սիդոնացիներու Սարեփթա քաղաքին մէջ: Նաեւ, Իսրայէլի մէջ, Եղիսէ մարգարէին օրով բազմաթիւ բորոտներ կային եւ սակայն անոնցմէ ոչ մէկը մաք-*

րուեցաւ, բացի Նէեման ասորիէն»: Այս լսելով՝ Նազարէթ քաղաքի բնակիչներէն շատեր բարկացան, որովհետեւ Յիսուս յիշեցուց անոնց, որ Աստուած գթասիրտ է ո՛չ միայն հրեաներուն, այլ նաեւ հեթանոսներուն նըկատմամբ, ինչպէս՝ Սարեփթացի այրիին եւ Նէեման ասորիին: Ի յայտ կու գայ, որ ընտրեալ ազգին պատկանիլը ինքնին փրկուած ըլլալ չի՝ նշանակեր: Կեանքի եւ սրտի վերանորոգումը անհրաժեշտ է: Մարդիկ բարկանալով ոտքի ելան, Փրկիչը վտարեցին իր հայրենի գիւղէն եւ մինչեւ ծորին բերանը տարին, որու լանջին կառուցուած էր Նազարէթը: Անոնք հոնկէ վար պիտի նետէին Յիսուսը, սակայն ան հրաշքով փախաւ ամբոխին մէջէն եւ հեռացաւ:

Յիսուս Քրիստոս դէւեր կը հաճէ

Փրկիչը Գալիլիոյ Կափառնայում քաղաքի ժողովարանը գնաց: Մարդիկ կը զարմանային Անոր ուսուցումներուն վրայ, որովհետեւ Անոր իւրաքանչիւր խօսքին մէջ հեղինակութիւն կար: Քրիստոս չար դէւէ բռնուած մարդ մը բժշկեց, հրամայելով որ դուրս ելլէ անկէ: Դաւածուած դէւը բարձր ծայնով խօսեցաւ, ըսելով. «*Չգէ՛մեզի, Յիսուս Նազովրեցի, ի՞նչ կ'ուզես մեզմէ, մեզ մեռցնելո՞ւ եկար. գիտե՞մք ով ես, Աստուծոյ Սուրբն ես*»: Սակայն Յիսուս լռեցուց դէւը եւ ըսաւ. «*Լռէ՛ եւ դուրս ելիր անկէ*»: Եւ դէւը ժողովարանին մէջ գետին զարկաւ զայն ու դուրս եկաւ մարդէն առանց վնասելու անոր: Մարդիկ ապշած էին այս տեսարանին դիմաց եւ կ'ըսէին իրարու. «*Ի՞նչ հեղինակութեամբ կը խօսի այս մարդը, որ իր գօրութեամբ կը սաստէ պիղծ ոգիներուն եւ անոնք դուրս կու գան*»:

Ժողովարանէն ելլելով՝ Փրկիչը գնաց Սիմոնի տունը, որուն զոքանջը տաքութիւն ունէր: Անոր մօտենալով՝ սաստեց տաքութեան եւ արգիլեց անոր որ տանջէ հիւանդը, ու տաքութիւնը շուտով հեռացաւ անկէ: Սիմոնի զոքանջը առողջացաւ եւ ոտքի ելլելով կը սպասարկէր անոնց:

Դէւերը կը ճանչնան Աստուծոյ Որդին

Փրկիչը զանազան հիւանդութիւններէ կը բժշկէր մարդիկը եւ դէւերը բարձրաձայն կ'ըսէին. «*Դու՛ն ես Աստուծոյ Որդին*» ու դուրս կու գային անոնց մէջէն: Սակայն Ան կը սաստէր զանոնք եւ չէր ձգեր որ խօսին, որովհետեւ անոնք գիտէին թէ Ան է Քրիստոսը: Երբ լոյսը բացուեցաւ, Յիսուս առանձնացաւ եւ միմակ մնաց: Ժողովուրդին ըսաւ. «*Աստուծոյ արքայութիւնը ուրիշ քաղաքներու մէջ ալ պիտի քարոզեմ, որովհետեւ այդ նըպատակին համար դրկուեցայ*»:

Յիսուս Քրիստոս մեզի ալ կը պատգամէ որ Ինքն է Տէրը

Փրկիչը իր քարոզութեան ընթացքին զանազան միջոցներ կ'օգտագործէր, որպէսզի մարդիկ հասկնան, որ Ինք իսկապէս Աստուծոյ Որդին է եւ Դօր Յաւիտեանական Խօսքը: Ան Ինք Իր մասին կը խօսէր այն բառերով, որ Մովսէս լսած էր Աստուծմէ. «Ես այն Աստուածն եմ որ է» («Ես եմ որ էմն»): տե՛ս Ել 3.13-15):

Հրեաները մեծ յարգանք ունէին այդ անուան նկատմամբ: Ոչ ոք այդ անունը չէր համարձակեր արտասանել: Աստուածաշունչի առաջին՝ Ծննդոց Գիրքէն գիտենք, որ Աստուծմէ առաջ ոչ մէկ բան գոյութիւն ունէր: Աստուած միշտ եղած է, կայ ու յաւիտեանս յաւիտենից պիտի ըլլայ: Աստուած այս աշխարհը իր Խօսքով ստեղծեց: Յովհաննու Աւետարանին մէջ Փրկիչը այդ բառերը կը փոխանցէ մարդոց:

1. Սուրբ Գիրքէն գտեք աջ սիւնակին մէջ դրուած հատուածները եւ գիծերով իրարու միացուցէք անոնց համապատասխանող նախադասութիւնները ձախ սիւնակին մէջէն:
2. Ուր որ Աստուծոյ անունին հանդիպիք, շրջանակի մէջ առէք:
3. Ընդգծեցէք այն բառերը, զորս Տէրը կը գործածէ, երբ Ինք Իր մասին կը խօսի:
4. Քառակուսի փակագիծերու մէջ առէք այն բառերը, որոնք մեզի կ'ըսեն թէ Քրիստոսի հետեւիլը շատ կարեւոր է:

Յհ 6.35	«Ես եմ աշխարհի լոյսը, ով որ ինծի կը հետեւի՝ խաւարի մէջ չի քալեր, այլ կեանքի լոյսը կ'ունենայ»:
Յհ 8.12	«Ես եմ դուռը, ան որ ինծմէ անցնի՝ կը փրկուի»:
Յհ 8.58	«Ես եմ կեանքի հացը: Ան որ ինծի կու գայ չ'անօթեմար եւ ան որ ինծի կը հաւատայ չի ծարաւնար»:
Յհ 10.9	«Ես եմ յարութիւնը եւ կեանքը: Ով որ ինծի կը հաւատայ, թէպէտ մեռնի՝ սակայն պիտի ապրի»:
Յհ 15.5	«Ես եմ ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը: Ոչ ոք Դօրս չի կրնար գալ առանց ինծմէ անցնելու»:
Յհ 14.6	«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ես Աբրահամէն առաջ եմ»:
Յհ 14.6	«Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճիւղերը: Ով որ իմ մէջ կը բնակի, ես անոր մէջն եմ եւ ան շատ պտուղ պիտի տայ»:

ԴԻ՛ ՀԱՄԵՔ ԿՐԾԻ՛Մ

Լաւ չէ նոյնիսկ կարդալ, որ Փրկչին ըսածը այդքան բարկացուց մարդիկը, որոնք պատրաստուեցան զԻնք ժայռէն վար նետել: Տէրը նոր կերպերով կ'ուսուցանէր: Ան եկաւ ո՛չ միայն իբրեւ Սեսիա, այլ նաեւ՝ Աստուծոյ Որդի: Յիսուս Քրիստոսի ուսուցումները կը վախճանէին ու շփոթի կը մատնէին ոմանց: Սակայն Յիսուսի խօսքերը լաւ մտիկ ընողները կը զգային, կ'ընկալէին հրաշալի ու նոր եւ անմախքնթաց Յայտնութիւնը Աստուծոյ: Մարդիկ հասկցան որ Աստուած այնքան սիրեց զիրենք, որ Ինք երկիր իջաւ ու իրենց հետ ապրեցաւ: Յիսուս յաճախ ինքզինք կը նմանցնէր ժողովուրդին ծառօթ առարկաներու հետ՝ դուռ, լոյս, հաց, խաղող, որպէսզի աւելի յստակացնէ, թէ ո՛վ է Ինք: Կարդացէ՛ք Յովհաննու Աւետարանին 15.1-8 համարները եւ պատասխանեցէ՛ք հետեւեալ հարցումներուն:

14 – Քրիստոսի բերած բարիքները


1. Ո՞վ է մշակը:
2. Եթէ Տէրը որթատունկն է, ի՞նչ են իրեն հետեւողները:
3. Ի՞նչ կը պատահի անոնց, որոնք հաւատարիմ կ'ըլլան Քրիստոսի:
4. Ի՞նչ պիտի պատահի Յիսուսին անհաւատարիմ գտնուողներուն:
5. Աստուած ինչպէ՞ս կը փառաւորուի:

Յիսուս Քրիստոս կ'ըսէ, որ եթէ մենք Անոր աշակերտները ըլլանք, այն ատեն շատ պտուղ կու տանք: Ինչպիսի՞ պտուղներու մասին կը խօսի Ան (պատասխանները գտնելու համար բացէ՛ք Պօղոս առաքեալի Գաղատացիներուն ուղղած նամակին 5.22-23 համարները):

Շարունակեցէ՛ք վարը գծուած նկարը: Գծեցէ՛ք խաղողի բազմաճիւղ որթատունկ ու ողկոյզներ: Այդ ճիւղերուն վրայ փակցուցէ՛ք ձեր ընտանիքի անդամներուն կամ ընկերներուն փոքրիկ լուսանկարները: Պատմեցէ՛ք կամ գծեցէ՛ք թէ ինչպէ՞ս կրնաք հոգեւոր բարիքներ ձեռք ձգել:



Յիսուս Քրիստոսի քարոզչությունը եւ ուսուցումը Փալիլիոյ մէջ



1. Գտէ՛ք Փալիլիոյ, Սամարիոյ, Դեկապոլսոյ եւ Յուդայի տեղերը: Իւրաքանչիւր երկիր թեթեւ գոյնով ներկեցէ՛ք:
 2. Նշեցէ՛ք Փրկչին ճամբան Մկրտութեան տեղէն մինչեւ տուն, ուր Իր առաքելները կանգնեց:
 3. Նախքան այս պարտականութիւնը, կրնա՞ք կարդալ Աւետարանին հետեւեալ հատուածները. Մտ 3.1, 4.1-2, Դկ 4.16, 28-30, Մտ 4.12-25, Մր 1.21-28:
- Աստղանիշ դրէ՛ք Յիսուս Քրիստոսի հայրենի քաղաքին վրայ եւ այն քաղաքին մէջ ուր ծնաւ Ան:

Դաս 15

**ՄՕՏԵՑԱԾ Է
ԱՍՏՈՒԾՈՅ
ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ**

Երկրաւոր թագաւորութիւններ

Ներկայիս շատ քիչ կը խօսուի թագաւորութիւններու մասին: Այսօր հազուագիւտ են այն երկիրները, որոնք տակաւին թագաւորութիւն ունին: Նոյնիսկ այդ երկիրներուն մէջ կառավարութիւնները ամբողջութեամբ չեն ենթարկուիր թագաւորին կամ թագուհիին: Լիազօրութիւն ունեցողները ուրիշ անձեր են, խորքին մէջ՝ նախագահը, վարչապետը, խորհրդարանը: Ժողովուրդն է որ զանոնք կ'ընտրէ, իսկ անոնք իրենց ծառայութիւնը կը մատուցանեն զիրենք ընտրողներուն: Եթէ անոնք ալ ծառայութիւն չցուցարեւեն, չեն վերընտրուիր ժողովուրդէն:

Արքայութիւն՝ «ո՛չ այս աշխարհէն»

Յիսուս Քրիստոս կ'ըսէ, որ Աստուծոյ Արքայութիւնը ուրիշ թագաւորութիւններու չի նմանիր, ոչ ալ աշխարհի կառավարման կերպերուն: Անոր Արքայութիւնը վախճան չունի եւ անոնք որոնք պիտի մտնեն այդ թագաւորութեան մէջ, միշտ Աստուծոյ հետ պիտի ըլլան: Աստուծոյ Որդին պիտի թագաւորէ իբրեւ Տէր եւ Թագաւոր, բայց Անոր իշխանութիւնը սիրոյ, գթասրտութեան եւ արդարութեան իշխանութիւն է: Այդ իրականացած է Անոր անսահման սիրով եւ խաչելութեամբ: Մեզի նոր եւ շնորհքի կեանք կը պարգեւոյն Յիսուս Քրիստոսի միջոցաւ՝ Սկըրտութեան ընթացքին: Տէրը մեզմէ իւրաքանչիւրին կոչ կ'ուղղէ ապրիլ այնպիսի կեանքով, որ Ի՛նք ուսուցանած է, անսահման սէր ունենալով, գթասրտութեամբ, խոնարհութեամբ, հաւատարմութեամբ: Մենք կոչուած ենք ապրելու Աստուծով եւ յարգանքով վարուելու իրարու հետ: Իսկական երջանկութիւնը կ'ապրինք եթէ այս աշխարհի վրայ եղած միջոցին գիտնանք յախտեմական կեանքի խօսքերը եւ քալենք Փրկչին ցոյց տուած ճանապարհէն դէպի Աստուծոյ Արքայութիւն:



Փրկիչը Երանինները կ'ուսուցանէ իր աշակերտներուն լեռան վրայ

**ՓՐԿԻՉԸ ԿՄԵՏԷ
ԻՐ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԼՈՒՐԸ**

«Յիսուս Փալիլիա եկաւ. Աստուծոյ Աւետարանը կը քարոզէր ու կ'ըսէր. «Մօտեցած է ժամանակը եւ հասած՝ Աստուծոյ Արքայութիւնը, ապաշխարեցէ՛ք եւ Աւետարանին հաւատացէ՛ք» (Մր 1.14-15):

Տէրը իր քարոզութեան կը սկսի՝ ըսելով որ մօտեցած է Աստուծոյ Արքայութիւնը: Աշխարհի պատմութեան անկիւնադարձային պահը հասած էր: Աստուած որպէս Թագաւոր եւ բոլոր էակներու Տիրակալ Իր Միածին Որդին աշխարհ ղրկեց, որպէսզի Ան մարդոց փոխանցէ Աստուծոյ Արքայութեան Աւետիսը: Սակայն Յիսուս Քրիստոս, Յովհաննէս Մկրտիչ եւ անկէ առաջ եկած բոլոր մարգարէները համամիտ էին, որ Երկինքի Արքայութեան գալուստէն առաջ անպայմանօրէն մարդիկ պէտք է մէկ բան կատարեն. — Դարձի գան եւ հաւատան Աւետարանի Բարի Լուրին: Այս դասի ընթացքին միասնաբար պիտի սորվինք, թէ ո՞վ կրնայ ժառանգորդ ըլլալ Երկինքի Արքայութեան: Մեր Փրկչին խօսքերը պիտի լսենք, թէ ինչպէ՞ս կրնանք փոխել մեր կեանքը, որպէսզի իբրեւ վարձատրութիւն արժանանանք Աստուծոյ անվախճան Արքայութեան: Տէրը մեզի կը յիշեցնէ, որ Իր Արքայութիւնը բնաւ երկրաւոր չէ: Ան իսկապէս որ «աշխարհէն չէ», այլ՝ «գալիք աշխարհէն»: Յիշենք Տէրունական աղօթքը, ուր կ'ըսենք՝ «Եկեցդ Արքայութիւն քո»:

Հետեւեալը պատկերացուր


Յիսուս երբ լերան վրայ կը քարոզէր ժողովուրդին, կը ջա-
նար որ բոլորն ալ, նոյնիսկ պարզ մարդիկ, հասկնան ինչ որ
կ'ըսէր: Այդ պատճառով ալ մարդոց հետ կը խօսէր անոնց ա-
ռօրեայէն քաղելով իր նիւթերը, կարծէք իրական կեանքը կը
գծագրէր անոնց դիմաց: Ան կ'ըսէր, որ Աստուած Ինք կը հո-
գայ իրենց ամենօրեայ պէտքերը, կը բաւէ որ իրենք միայն
հաւատան Աստուծոյ ու փորձութեան պահուն չշեղին: Կար-
դացէ՞ք Աստուածաշունչի հետեւեալ հատուածները եւ ամ-
բողջացուցէք բաց ձգուած տեղերը: Մտ 6.25-34, 7.7-11, Ղկ
12.6-7, 22-31:

1. Նայեցէք երկինքի _____, ո՛չ _____
ո՛չ _____, եւ ո՛չ ալ շտեմարաններուն մէջ
_____ եւ ձեր Երկնաւոր Հայրը կը
կերակրէ զանոնք: Չէ՞ որ դուք _____
աւելի կ'արժէք (Մտ 5.26):

2. Եւ ինչո՞ւ կը մտահոգուիք _____ համար.
օրինակ առէք _____, եւ տեսէք թէ ինչպէ՞ս
կ'աճին _____: Եթէ ուրեմն դաշտի խոտին
այդպէս աղուոր կը հագցնէ Աստուած, _____
թէ _____ (Մտ 6.28-30):

3. Ո՛չ մէկը Աստուծոյ կողմէ մոռցուած է, նոյնիսկ _____
բոլոր _____: Մի՛ վախճաք, որովհետեւ դուք
շատ աւելի կ'արժէք, քան _____
(Ղկ 12.7):

4. Ձեր մէջ կա՞յ հայր մը, որուն զաւակը _____
ուզէ եւ ինք _____ տայ անոր, եւ կամ օծ տայ
անոր երբ զաւակը _____ խնդրէ: Արդ, եթէ դուք
որ չար էք, գիտէ՞ք ձեր _____ լաւ պարգեւներ
տալ, ձեր Երկնաւոր _____ որքա՞ն աւելի լաւ
պարգեւներ պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն (Մտ
7.9-11):



Տէրը կ'աւետէ Իր Արքայութեան գալուստը

Յիսուս Քրիստոս ամբողջ Գալիլիոյ մէջ շրջեցաւ եւ քա-
րոզեց ժողովարաններուն մէջ, աւետելով Երկինքի Ար-
քայութեան Բարի Լուրը: Ան բժշկութիւններ կը կատա-
րէր եւ ֆիզիքական թերութիւններ կը բուժէր: Անոր
համբաւը տարածուած էր Պաղեստինի սահմաններէն
դուրս: Ժողովուրդը Անոր մօտ կը բերէր անդամաւործ-
ներ, դիւահարներ եւ լուսնոտներ ու Յիսուս բոլորը կը
բժշկէր: Գալիլիայէն ու Դեկապոլսէն (Գալիլիոյ հարա-
ւակողմը գտնուող մաս), Երուսաղէմէն, Յուդայէն եւ
Յորդանանի միւս կողմէն մարդիկ շարան-շարան Իրեն
կու գային:

Երանիմերը իբրեւ պատուիրաններ

Օր մը Փրկչին շուրջ հաւաքուած էր հսկայ բազմութիւն
մը, երբ Ան իր աշակերտները առած լեռ բարձրացած
էր: Ուստի նստաւ եւ սկսաւ քարոզել:

Կրնաք կարդալ Մատթեոսի Աւետարանին 5.3-12 հա-
մարները, ուր կը գտնէք այն հրաշալի խօսքերը, զորս
Յիսուս ըսաւ ժողովուրդին: Անոր պատգամները մեզի
կը յիշեցնեն, թէ ինչպէ՞ս պէտք է ապրինք: Անոնց մէջ
կան քրիստոնէական կեանքի հիմքերը: Այդ իսկ պատ-
ճառով այդ հատուածները յաճախ կը կարդացուին ե-
կեղեցական արարողութիւններու ժամանակ:

Փրկիչը ի՞նք կը մեկնէ իւրաքանչիւր պատուիրանին ի-
մաստը եւ կ'օգնէ մարդոց որ հասկնան թէ ինչպէ՞ս
պէտք է մօտենան Աստուծոյ: Քրիստոս մեզի կը սոր-
վեցնէ հոգեւոր բարձրագոյն վիճակը ապրելու կերպը,
այնպէս ինչպէս Աստուած կ'ուզէ որ ապրինք: Տէրը կ'ու-
զէ որ մենք խոնարհ ըլլանք, գթասիրտ ու կարեկից՝ ու-
րիշներու նկատմամբ: Կ'ուզէ որ պատրաստ ըլլանք
հաշտեցնելու կռուողները եւ հանդուրժող ըլլանք տա-
ռապանքի մէջ, յանուն ճշմարտութեան ու բարութեան
արհամարհելով սուտն ու զրպարտութիւնը: Աստուծոյ
պատուիրաններուն համաձայն ապրելով, մենք կը նը-
մանինք ու առաւել կը մօտենանք Անոր եւ կը հասնինք
գեղեցիկին ու մեծ երջանկութեան՝ Քրիստոսի սիրով
լեցուն մեր սիրտը բանալով մեր նմաններուն առջեւ:

Երկրի աղը եւ աշխարհի լոյսը

Յիսուս Քրիստոս մեզի ցոյց տուաւ, թէ ինչպէ՞ս կրնանք
նոր կեանքով ապրիլ: Այս կարելի է, ըսաւ Ան, որովհե-
տեւ կարելի չէ ամբողջ աշխարհը փոխել անձնական
օրինակով: Տիրոջ հետեւորդները, Իր իսկ բառերով,

«Երկրի աղը» ու «աշխարհի լոյսն» են: «Դուք էք երկրի
աղը, սակայն եթէ աղը իր համը կորսնցնէ, ինք ինչո՞ւ
պիտի աղուի. այլեւս ոչ մէկ բանի կը ծառայէ եւ միայն
փողոց կը թափուի ու մարդոց ոտքին կոխան կը դառ-
նայ: Դուք էք աշխարհի լոյսը. այն քաղաքը որ լերան
վրայ շինուած է՝ կարելի չէ պահել: Իսկ ճրագը վառե-
լով կաթսայի տակ չեն դներ, այլ աշտանակի վրայ, որ-
պէսզի տան մէջ եղողներուն լոյս տայ: Ձեր լոյսն ալ
այդպէս թող փայլի մարդոց առջեւ, որպէսզի տեսնեն
ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր երկնաւոր Հայ-
րը»:

Հին Ուխտի ամբողջացումը

Փրկիչը մարդոց ըսաւ, որ ինք չէ եկած ջնջելու Հին
Ուխտի Օրէնքը, այլ եկած է ամբողջացնելու զայն: Ա-
նոնք գիտէին «Մի՛ սպաններ» պատուիրանը: Սակայն
Քրիստոս անոնց ցոյց տուաւ, որ ուրիշներուն հանդէպ
անարդար բարկութիւնը, վիրաւորանքը եւ հայիո-
յանքն ալ սպանութեան ձեւեր են, միայն թէ այս պարա-
գային սպաննուողը մարմինը չէ, այլ՝ մարդուն հոգին:
Ան կ'ըսէր նաեւ, որ ծանօթներուն հանդէպ սիրոյ եւ թըշ-
նամիին հանդէպ հատուցումի հին օրէնքը ամբողջա-
ցած է նոր օրէնքով: Մենք պէտք է սիրենք մեր թշնամի-
ները եւ աղօթենք անոնց համար, այնպէս ինչպէս Աստ-
ուած մեզմէ իւրաքանչիւրը կը սիրէ:

Յիսուս Քրիստոս իր ունկնդիր հաւատացեալներուն յի-
շեցուց, թէ ի՞նչ կ'ըսէ Հին Օրէնքը հատուցման մասին.
«Աչքի դէմ՝ աչք եւ ակռայի դէմ՝ ակռայ»: Սակայն Ան իր
հետեւորդներուն ըսաւ, որ բնաւ չարիքին չարիքով
չպատասխանեն: Ան կ'ըսէ. «Եթէ մէկը քեզմէ բան մը
խնդրէ՝ տո՛ւր անոր եւ եթէ փոխ ուզէ, երես մի՛ դարձը-
նէր: Եթէ մէկը քեզի ստիպէ իր հետ մղոն մը երթալ,
երկու մղոն գնա» (Մտ 5.41-42):

Կեանքի վերանորոգուած ճամբան

Յիսուս կոչ կ'ուղղէր իր ունկնդիրներուն որ նոր մօտե-
ցումով դիտեն ամէն ինչ, նոր կերպով ապրին կեանքը:
Սա չի՛ նշանակեր որ Աստուած փոխուած է: Աստուած
միշտ ալ ուզած է որ մարդիկ գիրար սիրեն:

Իսկ հիմա, երբ Աստուծոյ Որդին Երկրի վրայ ներկայ է,
կարելի է տեսնել զԱյն, դպնալ անոր ու լսել զինք, որ
իսկական աստուածային սիրոյն կենդանի մարմնա-
ցումն է:

ՍՈՒՐԲ ՄԱՐԳՐԿ ԵՒ ԵՐԱՆԻՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

Դեկտեմբեր ամսուան ընթացքին այլ սուրբերու շարքին կը կատարենք նաեւ Ս. Յակոբ Մծբնացի հայրապետին, Արգար Թագաւորին եւ Ստեփանոս Նախավկային տօները, որոնք տարբեր ծելով ապրած են, սակայն Աստուծոյ ու մարդոց հանդէպ իրենց սէրը իրենց ամբողջ կեանքին իմաստ տուած է: Անոնց ճակատագիրները տարբեր եղած են, սակայն անվերապահօրէն հետեւած են Յիսուսի տուած Երանիներուն ու իրենց կեանքը սիրոյ եւ անձնագոհութեան օրինակ դարձուցած:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄՇԲՆԱՅԻ

Սուրբ Յակոբ Մծբնացի հայրապետ ճգնաւոր եղած է ու սուրբ նկատուած մարդ մը: Ըստ աւանդութեան՝ տարուած է Կեսարիա, ուր դաստիարակուած է Քրիստոնէական կրթութեամբ: Յակոբ նախընտրած է ճգնաւորական կեանքը եւ Սուրբ Դոգիին ներգործութեամբ մեկնած է Մծբնի վանքերէն մին՝ Մարուգէ ճգնաւորին մօտ:

Ամենօրեայ աղօթքներու շընորհիւ Ս. Յակոբ կը հասնի սրբութեան կեանքի ու մարգարէական շնորհք կը ստանայ Տիրոջմէ:

Յակոբ Մծբնացին, Եղիա մարգարէին նման, իր վերարկուն ցուրին վրայ փռելով՝ Սաթիթմա անունով գետին միւս ափը կ'անցնի:

Ասիկա սուրբին գործած առաջին հրաշքն էր: Երբ Սուրբ Յակոբ լեռնէն իջաւ, իմացաւ որ Մծբն քաղաքի ժողովուրդը դարձի եկած է, սակայն չի հաւատար Զրհեղեղի իրականութեան եւ Նոյեան Տապանի Սուրբ Գրային պատմութեան: Սուրբը կ'որոշէ Արարատ լեռ բարձրանալ ու Նոյեան Տապանը գտնել, որպէսզի ժողովուրդին անհաւատութիւնը փարատէ: Սուրբը դէպի Մասիս բարձրանալու ճամբուն վրայ, ամբողջ օրը քալելէն յոգնած՝ կը քնանայ: Դէպի վեր բարձրանալով երբ հանգիստ առնելու համար կը քնանայ օրուան աւարտին՝ յաջորդ օր ինքզինք նախկին օրուան տեղը վերադարձուած կը գտնէ: Երեք անգամ կրկնուելէ ետք դէպքը, ըստ աւանդութեան, հրեշտակ

մը կու գայ ու իրեն կու տայ Նոյեան Տապանէն մասունք մը: Դոն ուր մասունքը կը ստանայ, Սուրբ Յակոբ կը հիմնէ Ակոռի գիւղի Ս. Յակոբ վանքը: Դոն կը պահուէր այդ մասունքը, ինչպէս նաեւ Ս. Յակոբի մատի ոսկորներէն մէկը, շղթայով իրարու կապուած (այժմ այս սրբութիւնները կը գտնուին Էջմիածնի թանգարանին մէջ): Ս. Յակոբի մասունք կը գտնուի նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանին մէջ, Անթիլիաս):

Երբ Մծբնի եպիսկոպոսը կը վախճանի, ժողովական հայրերը կը սկսին մտածել, թէ ո՞վ պիտի ըլլայ անոր յաջորդը: Եւ մինչ անոնք հաւաքուած էին Մծբն քաղաքին մէջ եւ կը պատրաստուէին ընտրութեան, Աստուած տեսիլքի մէջ կը յայտնուի Մարուգէ ճգնաւորին, ըսելով թէ միակ արժանի յաջորդը այդ աթոռին համար Ս. Յակոբն է: Եւ զայն կ'ընտրեն եպիսկոպոս:

Մեծ սուրբը երբ կը մահանայ՝ անոր մարմնէն անուշահոտութիւն կը բուրէ ու անոր աճիւններուն վրայէն լոյս կը ճառագայթէ: Դետագային անոր գերեզմանին վրայ եկեղեցի մը կը կառուցուի:

ՍՈՒՐԲ ԱՐԳԱՐ ԹԱԳԱՎՈՐ

Սուրբ Արգար, ըստ աւանդութեան, առաջին դարու անդրանիկ քրիստոնէայ թագաւորն է՝ պարթեւ Արշակունի Արշամի որդին: Ան թագաւոր եղած է Եղեսիոյ մէջ:

Ըստ աւանդութեան, Արգար լսելով Փրկչի հրաշագործութիւններուն համբաւը, հաւատացած էր որ «անոնք մարդկային ոյժով իրականանալի երեւոյթներ չեն, այլ



Աստուծոյ զօրութեամբ, որովհետեւ մարդոցմէ ոչ ոք կրնար մեռելներու յարութիւն տալ, այլ միայն Աստուած»: Ան հաւատացած էր, որ Յիսուս ճշմարիտ Աստուծոյ Որդին է եւ դեսպաններու միջոցաւ նամակ ղըրկած է Երուսաղէմ, որպէսզի Փրկիչը գայ եւ զինք եւս բժշկէ, «որովհետեւ անոր մարմինը կը տառապէր զանազան ցաւերով»՝ բորոտութեամբ: Թովմաս առաքելին ձեռքով Փրկիչը պատասխան կը գրէ Արգարին, որուն մէջ կ'ըսուի, որ ինք տակաւին առաքելութիւն ունի Երուսաղէմի մէջ, սակայն Իր աշակերտներէն մէկը կը ղրկէ, որպէսզի զինք բժշկէ «եւ կեանք շնորհէ քեզի եւ քեզի հետ եղողներուն»: Արգարի դեսպանները ուզեցին նաեւ Փրկչին նկարը իրենց հետ տանիլ, սակայն գծագրիչները ճշգրտօրէն չէին կրցած գծել զԱյն: Այն ատեն Փրկիչը գթաց անոնց եւ մաքուր թաշկինակ մը առնելով իր երեսին վրայ դրաւ եւ այդ թաշկինակին վրայ ելաւ իր պատկերը: Այդ թաշկինակը կամ սուրբ դաստառակը բերին Արգար թագաւորին, որ մեծ երկիւղածութեամբ ու երկրպագութեամբ առաւ զայն:

Փրկչին համբարձումէն ետք, Թովմաս առաքել Եղեսիա կը ղրկէ Թաղէոս առաքելալը, որ ո՛չ միայն Արգարը կը բժշկէ, այլ նաեւ՝ քաղաքի բոլոր հիւանդներն ու ախտացեալները: Թաղէոս նաեւ Աւետարանը կը քարոզէ ու Եղեսիոյ եպիսկոպոս կը ձեռնադրէ Ադոլ մետաքսագործը եւ ապա կը մեկնի հայոց Սամատրուկ թագաւորին մօտ:

Սուրբ Արգար թագաւոր Քրիստոսի սիրով վառուած, նամակներ կը ղրկէ Դոմի Տիրերիոս կայսրին, Ասորեստանի Ներսէս թագաւորին, Պարսիկներու Արտաշիր թագաւորին, որպէսզի անոնք ալ ընդունին Յիսուս Քրիստոսը իբրեւ Աստուծոյ Որդի եւ Փրկիչ: Ան մահացած է «երեսուն եօթ տարի թագաւորելէ ետք», հաւանաբար Ք.թ. 37 կամ 50 թուականին:

Դայ եկեղեցին Սուրբ Արգար թագաւորին յիշատակը կը տօնախմբէ Յիսնակի (Աստուածայայտնութեան նախորդող յիսուն օրերու պահք) չորրորդ Կիրակիէն ետք եկող առաջին Շաբաթ օրը:

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅ

Սուրբ Ստեփանոս, պսակ եկեղեցւոյ եւ անդրանիկը մարտիրոսներուն, առաքելներուն կողմէ ընտրուած եօթը սարկաւազներէն մէկն էր. հաւատքով ու շնորհքներով լեցուն մարդ մը:



Աստուածաշունչը Ստեփանոս Նախավկային մասին կը վկայէ ըսելով, որ ան լեցուն էր աստուածային շնորհքներով ու զօրութեամբ. «...Ձարմանալի գործեր եւ հրաշքներ կը կատարէր ժողովուրդին մէջ» (Գրծ 6.8): Սուրբ Դոգիին ներշնչումով Յիսուս Քրիստոսը քարոզած է, որուն պատճառով ալ հրեաներ ու օրէնսգետներ զինք յանձնած են բարձրագոյն ատեանին: «Եւ բերին սուտ վկաներ, որոնք կ'ըսէին. Այս մարդը չի՛ դադրիր հայտնելէ այս սուրբ տեղին ու Օրէնքին դէմ...: Եւ բոլոր ամոնք որոնք նստած էին ատեանին մէջ, անոր նայելով տեսան, որ անոր երեսը հրեշտակի երեսին նման էր» (Գրծ 6.13-15):

Այս զրպարտութեան պատասխանելով՝ Ստեփանոս Նախավկան ատեանին մէջ Սուրբ Դոգիէն ներշնչուելով Դին Կտակարանը կը մեկնաբանէ, թէ՛ բոլոր մարգարէները նախապէս վկայած են Արդարին՝ Մեսիային՝ Յիսուս Քրիստոսի գալստեան մասին եւ ատեանին մէջ կ'եզրափակէ իր խօսքը, ըսելով. «Ձեր հայրերը մարգարէներէն ո՞ր մէկը չհալածեցին: Եւ սպաննեցին անոնց, որոնք նախապէս յայտնեցին Արդարին գալուստը, որուն մատնողն ու սպանողները եղաք դուք: Դուք՝ որ հրեշտակներու հրամաններուն միջոցաւ Օրէնքը ստացաք ու չպահեցիք զայն» (Գրծ 7.52-53):

Ստեփանոս Նախավկան քարկոծելով սպաննած են Երուսաղէմի մօտերը, իսկ այդ պահուն ան բացազանչած է. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած եւ Մարդու Որդին, որ կանգնած է Աստուծոյ աջ կողմը» (Գրծ 7.55): Մեռած պահուն Աստուծոյ թողութիւն խնդրած է զինք քարկոծողներուն համար:

Ըստ աւանդութեան՝ զայն թաղած են Գամաղիէլ (Պողոս առաքելի ուսուցիչը) եւ Յիսուսի գաղտնի աշակերտողներէն՝ Նիկողեմոս, իր պարտէզին մէջ, ուր նաեւ հետագային իրենք թաղուած են:

Փրկիչը օր մը իր աշակերտներուն ըսաւ. «*Դո՛ւք էք աշխարհի լոյսը*»: Լերան վրայ տուած Քրիստոսի քարոզը յաճախ կը կոչուի «Լերան Քարոզ» եւ «Փոքրիկ Աւետարան»: Հակառակ անոր որ մենք այդտեղ չենք եղած եւ ուղղակի Յիսուսէն չենք լսած այդ քարոզը, թէ՛ ինչպէ՞ս նստած էր ու կը սորվեցնէր անոնց, սակայն, այդ քարոզը մեզի՝ քրիստոնեաներուն համար կեանքի ուղեցոյց է:

Ձեր ընտանիքի անդամներէն խնդրեցէք որ մտածեն, թէ ինչպէ՞ս կրնան «աշխարհի լոյս» դառնալ ուրիշներու համար: Իւրաքանչիւրին տուէք հինգ հատ մամակի թուղթ եւ զամբիւղ մը պատրաստեցէք, որուն մէջ դնէք իրենց տուած մամակները:

Իւրաքանչիւրը թող փորձէ հինգ տարբեր միւթեր գրել, թէ ի՞նչ ձեւով կրնայ աշխարհի լոյսը դառնալ ուրիշներուն համար (գաղափարները պէտք է ըլլան ընդհանուր, որպէսզի ռեւէ մէկուն համար կարելի ըլլայ կիրարկել):

Ահա քանի մը օրինակներ, որոնք կ'օգնեն ձեզի հասկընալու այս պարտականութիւնը.

- Երեխային ժպտիլ:
- Մեծերուն խօսքը մտիկ ընել:

- Ամբողջ օրուան ընթացքին համբերող ըլլալ ու չբարկանալ:
- Մէկու մը օգնել՝ աւարտելու համար երկար ատեն ձգձգուած տան պարտականութիւն մը:
- Գոց սորվիլ աղօթք մը կամ Աւետարանի հատուած մը եւ զայն ըսել ընտանիքի անդամներուն:
- Մէկու մը ըրածին կամ ըսածին համար շնորհակալական մամակ մը գրել եւ դրկել:
- Բարոյալից պատմութիւն մը սորվիլ ու զայն պատմել:

Երբ աճարտէք աշխատանքը, ծալլեցէք բոլոր թուղթերը եւ լեցուցէք զամբիւղին մէջ: Իսկ հիմա ձեզմէ իւրաքանչիւրը ըստ բախտի հինգ հատ թուղթ թող քաշէ: Կարելոր չէ եթէ ուրիշի մը գրածը ընտրած են: Միասնաբար մտածեցէ՛ք թէ ինչպէս կարելի է համաձայնիլ այդ գաղափարները կեանքի կոչելու համար: Այս պարտականութեան համար մէկ շաբաթ ժամանակ տուէք իրենց: Ապա շաբաթավերջին կրնաք հանդիպիլ, որպէսզի տեսնէք թէ ո՞ր հասած են աշխատանքները: Մտածեցէ՛ք նաեւ թէ փոքր բարի գործեր ինչպէ՞ս կրնաք սովորական դարձնել ձեր առօրեայ կեանքին մէջ:

ԿԵԱՆՔԸ՝ ԵՐԱՆԻՆԵՐՈՒՆ ՀԱՍԱԶԱՅՆ

Սուրբ Յակոբ Մօբնացի Հայրապետի, Սուրբ Աբգար Թագաւորի եւ Սուրբ Ստեփանոս Նախավկայի կեանքերէն թուեցէ՛ք Երանիներուն համաձայն եղող 3 եւ անհամաձայն եղող տուեալներ կամ փաստեր: Ո՞ր Երանիներուն մէջ անոնք արտայայտութիւն կը գտնեն միասնաբար:

	Համաձայն	Անհամաձայն
Սուրբ Յակոբ Մօբնացի Հայրապետ		
Սուրբ Աբգար Թագաւոր		
Սուրբ Ստեփանոս Նախավկայ		

Փրկիչը երկու պատմութիւններ պատմեց, ըսելու համար թէ ինչքա՛ն հոգ կը տանի Ինք քեզի: Անոնք կորսուած եւ ապա գտնուած բաներու մասին երկու առակներ են: Դուկասու Աւետարանէն (Ղկ 15.1-10) կարդացէք այդ առակները եւ ապա՝ «յայտարարութիւններուն տախտակ»ին համար ընտրեցէ՛ք հարցումներուն պատասխանները:

ԿՈՐՍՈՒԱԾԸ

1. Ղկ 15.4

Ի՞նչ պատահեցաւ կորսուած ոչխարին:

ԳՏՆՈՒԱԾԸ

4. Ղկ 15.9

Ի՞նչ ըրաւ կինը, որպէսզի կորսուածը գտնէ:

ԿՈՐՍՈՒԱԾԸ

3. Ղկ 5.8

Ուրիշ առակի մը մէջ ի՞նչ էր կնոջ կորսնցուցածը:

ԳՏՆՈՒԱԾԸ

2. Ղկ 15.5,6

Ի՞նչ ըրաւ հովիւը, երբ գտաւ ոչխարը:

ԿՈՐՍՈՒԱԾՆ ՈՒ ԳՏՆՈՒԱԾԸ

Երբ մենք կը մոռնանք զԱստուած կամ կը մտածենք եւ կ'ըմենք այնպիսի բաներ, որոնք մեզ կը հեռացնեն Աստուծմէ, մենք ալ «կորսուած» կ'ըլլանք: Փրկիչը մեզ միշտ կը փնտռէ ու կ'ուզէ օգնել մեզի: Ան կ'ըսէ. «*Ինձի հետ ուրախացէ՛ք, որովհետեւ գտայ իմ կորսուած ոչխարս...* Երկինքի մէջ ուրախութիւն կ'ըլլայ մէկ մեղաւորի համար որ դարձի կու գայ, քան իննըսուն իննը՝ արդարներու համար...»:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՆ Է ՄԵՁ ՎԵՐԱԳՏՆԵԼՈՒ ՃԱՄՐԱՆ

Ապաշխարութիւն կը նշանակէ զղջալ մեր գործած մեղքերուն համար, ինչ որ կեանքի փոփոխութիւն յառաջ կը բերէ: Երբ մեր մեղքերը խոստովանինք՝ Աստուծմէ ներում կը խնդրենք եւ կը խոստանանք փոփոխութեան ենթարկել մեր կեանքը: Այլեւս վճռականօրէն կը մերժենք այն երեւոյթները, որոնք մեզ կը հեռացնեն Աստուծմէ եւ կը ջանանք ընել այն՝ ինչ որ մեզ կը վերադարձնէ Աստուծոյ: Խոստովանանքը առաջին քայլ է դարձի:

ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՎՆԵՐԸ

Աչքեր՝ որպեսզի տեսնեն

Շատ կը պատահի՞ երբ կը նայինք ու չենք տեսներ. օրինակ՝ ծերերն ու հաշմանդամները չենք նկատեր, սակայն անոնք կարիք ունին մեր օգնութեան: Կը պատահի՞ որ յաճախ կը մոռնանք անոնց օգնելու, երբ ծեռքերնին ծանր զանաւոր մը շալկած են, կամ հանրակառք կը բարձրանան: Չտեսնելու կու գա՞ք զիրենք, վախճալով որ մեր օգնութեան պիտի դիմեն: Վստահաբար դուք ալ համդիպած էք փողոցի չար պատանիներու, որոնք ծերունիի մը կամ խեղճի մը ձեռքէն բան մը կը խլեն ու կը փախչին: Դուք բնաւ պաշտպանա՞ծ էք ճնշուածները, կամ պահանջա՞ծ էք որպէսզի չարեր ետ վերադարձնեն ինչ որ առած են: Յաճախ ուշադրութիւն կ'ընենք այն բաներուն, զորս կ'ուզենք տեսնել, իսկ մեր չուզածները՝ չենք տեսներ:

Ականջներ՝ որպէսզի լսեն

Յաճախ լսած պէտք է ըլլաք նման արտայայտութիւններ. «Յրա՛կ, աղբը կը տանի՞ս, հաճիս», կամ՝ «Անի՛, մամային օգնէ՛ սեղանը պատրաստելու»: Թերեւս այդ միջոցին դուք ձեր դասերը կը սորվէիք, կամ ալ հեռատեսիլ կը դիտէիք եւ կամ երաժշտութիւն մտիկ կ'ընէիք եւ չէիք ուզեր որ մէկը խանգարէ ձեզ: Շատ դիւրին է խնդրանք մը արհամարհել՝ բնաւ ակամջ չտալով ըստածին: Երբեմն բնաւ չենք ուզեր լսել ինչ որ մեր ծնողները կամ ուսուցիչները եւ կամ մեծեր մեզի կ'ըսեն: Իսկ երբ մենք կը տեսնենք, կը լըսենք ու կը հասկնանք ըստածները, ուրեմն մեր ապրելակերպը փոխենք: Աստուած կ'ուզէ որ մենք գիտակցինք մեր տեսածներուն ու լսածներուն եւ խղճմտաբար եւ արդարութեամբ վարուինք մեր նմաններուն հետ:



Մերմնացանին առակը

ՓՐԷԻՉԸ ԱՌԱՎՆԵՐՈՎ ԿՈՒՍՈՒՅԱՆԷ

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ մարգարէներն ու արդարները շատ փափաքեցան տեսնել ինչ որ դուք կը տեսնէք, բայց չտեսան եւ լսել՝ ինչ որ դուք կը լսէք ու չլսեցին»:

Քրիստոսի աշակերտները օր մը Անոր հարցուցին, թէ ինչո՞ւ համար Ան առակներով կը խօսի ժողովուրդին հետ. շատեր չէին հասկնար, հակառակ անոր որ առաջին իսկ հայեացքով անոնք շատ պարզ կը թուին ըլլալ: Փրկիչը անոնց պատասխանեց. «*Ռոպիւնտեւ ձեզի տրուած է հասկնալ երկինքի Արքայութեան խորհուրդները, իսկ անոնց չէ՛ տրուած...*»: Եւ բացատրեց, որ բոլոր նայողները չէ՛ որ կը տեսնեն, իսկ բոլոր լսողներն ալ չեն հասկընար ըստածները: Ապա Ան իր առաքելներուն ըսաւ. «*Բայց երանի՛ այն աչքերուն, որոնք կը տեսնեն ու ձեր ականջներուն, որոնք կը լսեն: ...Շատ մարգարէներ ու արդարներ փափաքեցան տեսնել ինչ որ դուք կը տեսնէք, բայց չտեսան եւ լսել ինչ որ դուք կը լսէք, բայց չլսեցին*»:

Յիսուս կ'ըսէր, որ մենք միշտ պէտք է բանանք մեր աչքերը, մեր սրտերը ու մեր բանականութիւնը, որպէսզի ստանանք այն, ինչ որ Աստուած կը շնորհէ մեզի եւ իմաստութեամբ գործածենք մեզի շնորհուածը:

Մերմնացանին առակը

ՄԱՏԹԵՈՍ 13.3-8

Մերմնող մը սերմ ցանելու ելաւ: Մերմնած ատեն՝ հատիկներէն ոմանք ինկան ճամբուն եզերքը եւ թռչուններ եկան ու կերան զանոնք:

Ուրիշներ՝ ժայռոտ տեղ ինկան, ուր շատ հող չկար, քանի հողը խորունկ չէր՝ անմիջապէս բուսան, բայց երբ արելը ելաւ՝ այրեցան եւ որովհետեւ արմատ չունէին՝ չորացան:

Ոմանք ինկան փուշերու մէջ եւ փուշերը ելան եւ խեղդեցին զանոնք:

Իսկ ուրիշներ ալ ինկան աւելի լաւ հողի մէջ եւ պտուղ տուին, ոմանք մէկի տեղ հարիւր, ուրիշներ՝ վաթսուն եւ կամ երեսուն:

Համեմատեցէ՛ք աջ եւ ձախ սիւնակներուն մէջ դրուած աւետարանական զուգահեռ հատուածներու խօսքերը:

1. Առաջին հատուածին մէջ ի՞նչ տեսակ թռչուններու ու սերմերու մասին կը խօսուի: _____
2. Ի՞նչ տեսակ մարդու մասին կը խօսուի երկրորդ հատուածին մէջ: Ո՞վ է որ «արմատ չունի»: Կրնա՞ք օրինակ մը տալ, ըսելով թէ այդպիսի մարդիկը ինչպէ՞ս կրնանք ճանչնալ այսօր: _____
3. Երրորդ հատուածին մէջ ի՞նչ ըսել կ'ուզէ «փուշ» ըսելով: Ինչո՞ւ համար փուշերը խոչընդոտ կ'ըլլան մեզի եւ չեն ձգեր որ Աստուծոյ խօսքը մտիկ ընենք: _____
4. Աստուծոյ խօսքը մտիկ ընող ինչպիսի՞ մարդոց մասին կը խօսուի չորրորդ հատուածին մէջ: Թուեցէ՛ք անոնց տուած «պտուղները»։ _____

ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՎՆԵՐ

Համեմատութիւնները եւ փոխաբերութիւնները երբեմն կ'օգնեն, որպէսզի աւելի լաւ հասկնանք կարգ մը մըտքեր եւ իրադարձութիւններ: Մենք յաճախ կ'ըսենք. «Այնքան նեղուեցայ, որ սիրտս արագ-արագ կը զարնէր»: Աստուծոյ արքայութեան ինչ ըլլալը մարդոց բացատրելու համար, Յիսուս Քրիստոս համեմատութիւններ ու փոխաբերութիւններ կը գործածէ, զանոնք առնելով բնութենէն կամ մեր կեանքէն ու առակաւոր խօսքերով զանոնք կը ներկայացնէ:

Փրկիչը առակներով կ'ուսուցանէ

Յիսուս Քրիստոսի պատմած առակներէն շատերը կը սկսին հետեւեալ բառերով. «Երկինքի Արքայութիւնը

ՄԱՏԹԵՈՍ 13.19-23

Ճամբուն եզերքը գտնուող հողը, ուր կ'իյնայ սերմը, կը նմանի այն մարդուն, որ Աստուծոյ Արքայութեան քարոզութիւնը կը լսէ ու չի՝ հասկնար. չարը կու գայ եւ կը յափշտակէ անոր սրտին մէջ ցանուածը:

Ժայռոտ հողը կը նմանի այն մարդուն, որ հազիւ Աստուծոյ խօսքը լսած՝ ուրախութեամբ կ'ընդունի զայն: Սակայն սերմը արմատ չունի իր մէջ, այսինքն ժամանակուան մը համար կը հաւատայ եւ երբ նեղութեան ու Աստուծոյ խօսքին համար հաւածանքի ենթարկուի՝ անմիջապէս իր հաւատքը կը կորսնցնէ:

Փուշերով ծածկուած հողը կը նմանի այն մարդուն, որ Աստուծոյ խօսքը կը լսէ, սակայն երկրաւոր կեանքի հոգերը եւ հարստութեան հրապոյրը կը խեղդեն Աստուծոյ խօսքը, որ անպտուղ դառնայ իր մէջ:

Իսկ լաւ հողը կը նմանի այն մարդուն, որ կը լսէ Աստուծոյ խօսքը եւ կը հասկնայ ու պտուղ կու տայ մէկի փոխարէն հարիւր, ուրիշ մը՝ վաթսուն եւ ուրիշ մը՝ երեսուն:

կը նմանի...»: Որպէսզի զիմք լսողները գիտնան, թէ ինչի՞ մասին կը խօսի, Յիսուս օրինակ կ'առնէ հովիւներն ու ոչխարները, թթմորը, ցանուած սերմերը եւ առօրեայ կեանքի սովորական դարձած այլ առարկաներ: Աստուածաբանական խորիմաստ ճշմարտութիւնները պարզացնելու եւ մարդոց փոխանցելու համար, Ան կ'օգտագործէ այնպիսի նիւթեր, որոնք բոլորին ծանօթ են: Ահաւասիկ քանի մը պատմութիւններ կամ առակներ, զորս Յիսուս կը պատմէ, որպէսզի ամէնէն կարեւոր ճշմարտութիւնը յայտնէ մեզի:

Մերմնացանին առակը

Առիթով մը, հսկայ բազմութիւն հաւաքուած էր Փրկչին

շուրջ եւ Ան պատմեց սերմնացանին առակը, որ ելած էր սերմ ցանելու: Սերմերէն ոճանք ինկան ճամբուն ե-
զերքը եւ թռչուններ եկան եւ կտցեցին զանոնք: Ուրիշ-
ներ ինկան ժայռերու վրայ եւ աճեցան, սակայն շուտով
չորցան, որովհետեւ ջուր չտեսան: Մաս մը ինկաւ փու-
շերու մէջ, որոնք աճելով խեղդեցին զանոնք: Սակայն
ոճանք ալ ինկան լաւ հողի մէջ եւ հարիւրապատիկ
բերք տուին: Առակը պատմելէ ետք, Քրիստոս ըսաւ.
«Ով որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

Աշակերտները Փրկչին հարցուցին թէ ի՞նչ է նշանակու-
թիւնը այդ առակին: Ան պատասխանեց. «Ձեզի տըր-
ուած է զիտնալ երկնքի արքայութեան խորհուրդները,
իսկ անոնց չէ՝ տրուած... Այդ պատճառով ալ անոնց
հետ առակներով կը խօսիմ, որովհետեւ կը նային եւ
չեն տեսներ, կը լսեն բայց չեն իմանար ու չեն հասկը-
նար»:

Բացատրութիւնը

Յիսուս Քրիստոս անոնց բացատրեց, որ առակին մէջ
«սերմ»ը՝ «Աստուծոյ խօսքն» է: Ճամբուն եզերքը ին-
կած սերմերը անոնք են, որոնք կը լսեն Աստուծոյ խօս-
քը եւ չեն ըմբռներ զայն: Սատանան կու գայ եւ անոնց
սրտէն կը յափշտակէ Աստուծոյ խօսքը, այդ պատճա-
ռով ալ չեն հաւատար ու չեն կրնար փրկուիլ: Ժայռե-
րուն վրայ ինկած սերմերը անոնք են, որոնք կը լսեն
Աստուծոյ խօսքը եւ ուրախութեամբ կ'ընդունին զայն:
Սակայն այդ մարդոց հաւատքը խոր արմատներ չունի,
այդ պատճառով ալ անոնք կը հաւատան այնքան ա-
տեն որ հալածանք ու նեղութիւն չկայ իրենց հաւատ-
քին համար: Սակայն վախի հետեւանքով անոնք կը
կորսնցնեն իրենց հաւատքը՝ Աստուծոյ մեծագոյն
պարգեւը իրենց տրուած: Փուշերու մէջ ինկած սերմե-
րը անոնք են, որոնք կը լսեն, սակայն իրենց նախկին
կեանքը կը շարունակեն, որու պատճառով ալ իրենց
ամէնօրեայ հոգերը, հարստութիւն դիզելու փորձու-
թիւնները, կեանքի հաճոյքները անոնց հոգիին մէջ կը
խլացնեն Աստուծոյ խօսքը եւ հաւատքի հիմնալի պը-
տուղը չի հասուննար: Սակայն լաւ հողին մէջ արմատ
նետող սերմերը այն մարդիկն են, որոնք իրենց բարի
սրտին մէջ ամուր կը պահեն այդ խօսքերը: Անոնք հաս-
տատուն նկարագրով ու համբերատարութեամբ հա-
րիւրապատիկ պտուղ կու տան Աստուծոյ խօսքին տա-
րածման ի խնդիր:

Առակին իմաստը

Այս առակը մեզի կը բացատրէ, որ Աստուծոյ խօսքը
լսող բոլոր մարդիկը չէ որ իսկապէս կ'ունենորեն զայն:
Բոլորն ալ կեանքին ուրախութիւն եւ իմաստ տուող հո-
գեւոր պտուղներ չեն տար: Սենք պէտք է ջանանք ամ-

րացնել մեր հաւատքը եւ միշտ պատրաստ ըլլանք լսե-
լու Աստուծոյ խօսքը:

Փորձութիւններ, անիմաստ հաճոյքներ, հալածանքներ
ու դժուարութիւններ բոլորիս ալ կը պատահին, սա-
կայն անոնք որոնք հաւատարիմ են Քրիստոսի, կը յաղ-
թահարեն ամեն դժուարութիւն: Անոնք կ'աճին ու բարի
պտուղ կու տան Տիրոջ:

Մանանիսի հատիկը

Քաջալերելու համար ժողովուրդը, անոնց պատմեց ու-
րիշ առակ մըն ալ, Աստուծոյ Արքայութիւնը համեմա-
տելով մանանիսի հատիկին հետ, «որ հակառակ սեր-
մերուն մէջ ամէնէն փոքրը ըլլալուն, կ'աճի եւ ծառ կը
դառնայ այնքան մը, որ երկնքի թռչունները կու գան ու
անոր ծիւղերուն վրայ կը նստին»: Աստուծոյ նկատ-
մամբ փոքրիկ հաւատարմութիւն մը, կրնայ ծաղկիլ եւ
դառնալ Անոր Արքայութեան մեծ վկայ մը:

Թանկագին մարգարիտը

Տէրը անոնց պատմեց նաեւ հետեւեալ առակը. «Դարձ-
եալ, երկնքի Արքայութիւնը կը նմանի վաճառականի
մը, որ գեղեցիկ մարգարիտները կը փնտռէ եւ թանկա-
գին մարգարիտ մը գտնելով՝ կ'երթայ ու կը վաճառէ իր
ամբողջ ունեցածը եւ այդ մարգարիտը կը գնէ»: Այս ա-
ռակը մեզի կը սորվեցնէ, որ Աստուծոյ Արքայութիւնը
շատ անելի թանկագին է քան մեր կեանքի բոլոր գոր-
ծերը: Դայ եկեղեցին թանկագին մարգարիտի այս ա-
ռակին բառերը շարականներու մէջ ալ օգտագործած
է: Օրինակ՝ Սրբոց Դոկիսիմեանց նուիրուած շարակա-
նի կանոնին հետեւեալ հատուածին մէջ կը կարդանք.

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ԴՈԿՍԻՍԵԱՆՑ ԴԿ. ԴՐՁ.

*Մենան կուսանք ազգըս բազումս, եւ մարք ման-
կունք զհրապարակս ծերոց. ի դիրկս սրբութեան
աղօթից եւ պահոց աճեցին հաւատով զարգացեալք
ի Քրիստոս:*

*Կանայք պատուականք քաղաքաւ եւ ազգաւ, վա-
ճառականք առատք անյայտ մարգարտին. եղին
զանձինս գրաւականըս բազմաց, եւ եղեն փրկանք
անծանօթ աշխարհին:*

Թրգմ.

Կոյսերը ժողովուրդներու մայր դարձան եւ սուրբ ա-
ղօթքի ու պահեցողութեան նուիրուելով՝ Քրիստոսի
զօրութեամբ հաւատքի մէջ աճեցան:

Պատուական կիները, յայտնի՝ իրենց եկած քաղաքէն
ու ազգութենէն, անյայտ մարգարիտին վաճառական-
ներ իբրեւ, իրենց անձերը գրաւ դրին շատերու փոխան
եւ անծանօթ աշխարհի մեկնումի փրկագինը դարձան
անոնց:

ԻՄ ԿԱՆՏԻ ԿԻՇԻԼ

*Սերմնացանին առակը՝ Աստուծոյ խօսքը լսելն ու գործադրելը կը համադրէ բնութեան երեւոյթներուն հետ:
Փրկիչը հողագործութեան հետ կապ ունեցող օրինակներ կու տայ՝ սերմնացան, հողի տեսակ, սերմերու աճ
ու սնուցում, ինչպէս նաեւ անոնց արդիւնքները:*



Բոյսերը՝ վերակենդանացում
եւ գեղեցկութիւն

Ձեր տան անդամներուն հետ խօ-
սեցէ՛ք բոյսերու եւ անոնց աճման
մասին: Թերեւս ձեր տան բակին,
կամ ամառանոցի տան մօտիկ
պարտէզի մը մէջ պտղատու ծա-
ռեր տեսած ըլլաք: Անոնցմէ ո՞ր մէ-
կը անելի շատ սիրած էք: Անոնցմէ
պտուղ կը ստանա՞ք արդեօք: Ա-
նոնք բուրմուռը կու տա՞ն, կամ
գեղեցիկ՞ են: Ծաղիկներ դրէք
ծաղկամանին մէջ եւ պիտի տես-
նէք որ ձեր տունը տարբեր տեսք
պիտի ստանայ: Ամբողջ օրը գա-
ցէք ու պտըտեցէ՛ք, դիտեցէք ու
հիացէք՝ պարտէզի գեղեցկու-
թեամբ, որ մէկու մը հոգածու ձեռ-
քերուն արդիւնքն է վստահաբար:
Ի՞նչ բան կ'ազդէ բոյսերուն աճ-
ման եւ ի՞նչ բան անհրաժեշտ է որ
անոնք առողջ ըլլան (լոյս, ջուր,
լաւ հող, պարարտացուցիչ): Տէրը
ինչպէ՞ս կը նմանցնէ զանոնք մար-
դուն աճման հետ: Ի՞նչ պէտք է ը-
նել որ մարդիկ աճին ու պտուղ-
ներ տան: Մարդիկ հոգեւոր ինչ-
պիսի՞ պտուղներ կրնան տալ:
Փոքրիկ սերմ մը առէք ու զայն ցա-
նեցէ՛ք: Ամէն օր խնամեցէ՛ք ծիւղը,
որպէսզի բոյսը առողջ կերպով ա-
ճի ու ծաղկի: Կրնաք այդ սերմը
ցանել տան մօտիկ պարտէզին,
կամ թաղարի մէջ: Այս մէկը ձեզի
պիտի յիշեցնէ Տիրոջ պատմած
սերմնացանին առակը:

16 – Գեղեցիկը աճեցուցէք

Ձեր տան մօտ եկեղեցի մը կա՞յ արդեօք
որուն շուրջ խոտ ու թուփ աճած ըլլան,
ինչպէս նաեւ ծաղիկներ: Կրնա՞յ ձեր ըն-
տանիքը փափաք յայտնել զայն խնա-
մելու կամաւոր կերպով: Հաւատացեալ-
ները կրնան միասնաբար աշխատիլ եւ
գեղեցիկ ծաղիկներ աճեցնել այնտեղ:
Եթէ կարենաք լքուած մասերը գեղեցկա-
ցնել ու զարդարել, մարդոց կեանքն ալ
փոխած կ'ըլլաք: Տեսնելով բնութեան
գեղեցկացումը, թերեւս մարդիկ անելի
երջանիկ զգան իրենք զիրենք:



Մեր զգայարաններուն
եւ զգացումներուն մասին

Մեր հինգ զգայարանները աշխարհին մասին միշտ «նորութիւն» կը հա-
ղորդեն մեզի: Ծօշափելիքի, տեսողութեան, լսողութեան, հոտոտելիքի եւ
ճաշակելիքի միջոցաւ մենք կը ճանչնանք շրջապատին մէջ եղածները: Մեր
փորձառութեամբ կը ծանօթանանք աշխարհին եւ անով կ'ուրախանանք:
Մեր զգայարաններու միջոցաւ մենք կը մասնակցինք Աստուծոյ ստեղծա-
գործութեան:

Եկեղեցւոյ մէջ, աղօթքի պահուն, Աստուծմէ կը խնդրենք «մաքրել մեր զգա-
յարանները», որպէսզի անոնք միայն բարի եւ տրամաբանական գործերու
ծառայեն: Մաքուր զգայարանները բոլոր բարի գործերուն օգտակար կը
հանդիսանան: Օրինակի համար, որոշ երաժշտութիւններ լսելը մեզ կ'ա-
ռաջնորդէ Աստուծոյ ստեղծագործութեան սքանչելիքն ու գեղեցկութիւնը
տեսնելու եւ զգալու: Դժբախտաբար կայ նաեւ տգեղ երաժշտութիւն, ան-
ներդաշնակ, որ վայրագութեան կ'առաջնորդէ մարդը եւ մեր կեանքէն ներս
կը մտցնէ չարիքը:

Հարցուցէ՛ք ձեր ընտանիքի անդամներուն, որպէսզի յիշեն այնպիսի զգա-
ցում մը, որուն համար երախտապարտ են Աստուծոյ: Կը յիշե՞ս արդեօք
բնական տեսարան մը, ծաղիկի մը բոյրը, սքանչելի երաժշտութիւն մը: Կա՞յ
բան մը իրենց հոգւոյն մէջ զոր չեն կրնար մոռնալ:

Եկէք մտածենք, որ մեր զգայարաններուն միջոցաւ ինչպէ՞ս կարելի է այս
աշխարհը դարձնել անելի գեղեցիկ ու կատարեալ: Թերեւս ձեր տան մուտ-
քին կամ դրացիներուն մօտիկ թափուած աղբեր կան, որոնցմէ զարշափո-
տութիւն կու գայ ձեզի: Կրնա՞յ ձեր ընտանիքը օր մը որոշել եւ այդ աղբերը
մաքրել: Կան նաեւ «լեզուի աղբանոցներ»: Լաւ պիտի ըլլար, որ մենք բնաւ
չգործածենք որոշ բառեր (անտեղի քննադատութիւն, բամբասանք, հայի-
յանք):

Համաձայնեցէ՛ք որ նման բառեր վերցնէք ձեր հարազատներու բառարա-
նին մէջէն:

Ձեր մէջ հաւանաբար ըլլան տաղանդաւոր պատանիներ՝ երաժշտական
շնորհք ունեցող, բանաստեղծութիւն գրող, գծող, լաւ խօսող: Ամէն մէկը
տարբեր շնորհք ունի: Ջանք թափեցէ՛ք որ աշխարհին նոր գեղեցկութիւն մը
բերէք:

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ

Խորհրդանշաններում իմաստը

«Խորհրդանշան» բառը հոմանիշ է «նշան» բառին: Կեանքի մեջ մենք շատ նշաններով կը հանդիպինք: Ճամբուն վրայ նշաններ կան, որոնք երթելի կանոններ կը յուշեն եւ մեզի կ'ըսեն, թէ ե՞րբ պէտք է քալել, երբ կանգ առնել եւ ուրկէ՞ փողոցը անցնիլ, եւ այլն: Կան նաեւ «Ելք»ի նշաններ, որոնք ցոյց կու տան թէ ինչպէ՞ս կարելի է շէնքէն դուրս գալ, մանաւանդ արկածներու՝ հրդեհի կամ երկրաշարժի ժամանակ: Նշաններու խումբին կը պատկանի նաեւ ծանուցումը՝ որ մեզի կը ներկայացնէ թէ ո՞ր փողոցներուն վրայ ինչպիսի՞ խանութներ կը գտնուին եւ ի՞նչ առարկաներ կը վաճառեն, կամ ի՞նչ գործ կը կատարեն:

Նշաններ ալ կան, որոնք այդքան դիւրութեամբ կարելի չէ ճանչնալ: Օրինակ՝ բնութեան նախանշաններու զըծով ժողովուրդին կատարած կանխատեսումները, որոնք մեզ կը զգուշացնեն վաղուան օդին մասին, որպէսզի գիտնանք թէ ինչպիսի՞ հագուստ պէտք է հագնինք եւ թէ պէ՞տք է հովանոց առնենք այդ օր, կամ՝ ոչ: Պէտք է սորվինք նաեւ մարդոց վարուեցողութեան նշանները ճանչնալ: Կարգ մը մարդիկ երբ անտրամադիր ըլլան, յաճախ բառերով չեն արտայայտուիր: Կամ երբ անհամգիստ ըլլան, մեր օգնութեան կարիքը կ'ունենան: Մենք պէտք է ճանչնանք նաեւ այդ իրավիճակները, երբ կենսական կարիքը կ'ունենանք Աստուծոյ օժանդակութեան եւ այն պահերը երբ վայելած ենք Ամոր օգնութիւնը, որպէսզի չմոռնանք շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ եւ երախտապարտ ըլլալ Ամոր:



Հայի եւ ձուկի բնականորէն

ՓՐԿԻՉԸ ԵՐԿՆՔԻ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԿԸ ԶԱՐՈՋԷ ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐՈՎ

«Գացեք ըսէք Յովհաննէսին, ինչ որ տեսաք ու լսեցիք. կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլները կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն եւ Աւետարանը աղքատներուն կը քարոզուի» (Մտ 11.4-5):


Այս խօսքը Փրկիչը ըսաւ Յովհաննէս Նախակարապետի աշակերտներուն: Յովհաննէս բանտին մէջ էր երբ լսեց Յիսուսի կատարած գործերուն մասին եւ իր աշակերտները Ամոր մօտ ղրկեց. անոնց բերնով ըսաւ Ամոր. «Դո՛ւն ես որ պիտի գայիր, թէ՞ ուրիշի մը սպասենք»: Եւ անոնք գացին Տիրոջ մօտ: Փրկիչը բազմաթիւ հրաշքներ կը գործէր: Ան կը բժշկէր մարդիկը, հովն ու փոթորիկը կը հանդարտեցնէր եւ նոյնիսկ դեւեր կը հանէր: Անոնք որոնք իր մօտ կու գային հաւատքով՝ կը բժշկուէին: Նոյնիսկ դեւերը գիտէին, թէ ո՞վ է Ան: Անոնք է որ առաջին անգամ զԱյն կոչեցին «Աստուծոյ Սուրբը», Քրիստոս: Պիղծ ոգիները, ամէն տեղ, ուր տեսնէին զինք, գետին կ'իյնային ու բարձրաձայն կ'ըսէին. «Դո՛ւն ես Աստուծոյ Որդին»: Տէրը խիստ կերպով կը հրամայէր որ այս գաղտնիքը չտարածեն: Յիսուս Քրիստոս բնաւ երկրային սին փառք փնտռող չէր: Ան ինքզինք կը յայտնէր միայն անոնց, որոնք պատրաստ էին հաւատալու, որ Ինք Աստուծոյ կողմէ ուղարկուած է:

ՀԱՅԸ՝ ՄԵՈՒՆԴԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՆՇ

«Ջհայ մեր հանապազորդ տուր մեզ այսօր»

Իր աշակերտներուն սորվեցուցած մեր Տիրոջ Տէրունական Աղօթքին մէջ կը կարդանք, որ հացն է միակ նիւթական խնդրուածքը որ պատուիրուած է խնդրել Աստուծոյ: Տէրունական Աղօթքին վերջաւորութեան, մենք Աստուած կը փառաւորենք եւ կը խնդրենք Իրմէ մերել մեր յանցանքները եւ հեռու պահել մեզ չարէն ու փորձութիւններէն. սակայն միայն մեր հանապազօրեայ հացին համար է որ խնդրանք կը ներկայացնենք Աստուծոյ: Տէրունական Աղօթքին մէջ «հաց» բառը փոխաբերական իմաստով կը նշանակէ այն սնունդը, որ մեզի անհրաժեշտ է, ապահովելու համար մեր կեանքը: Հացը Արեւելքի հին ժողովուրդներուն համար հիմնական սնունդն էր: Տարբեր մշակոյթներու մէջ հիմնական սնունդը կը տարբերի երբեմն: Ծայրագոյն Արեւելքի մէջ հիմնական սնունդը բրինձն է: Ուրիշ ազգերու մօտ՝

ծուկը: Սակայն ինչ ալ ըլլայ հիմնական սնունդը, մենք զայն խնդրած կ'ըլլանք Աստուծոյ, երբ աղօթենք «զիհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»: Հացը կեանք կու տայ: Անիկա կենսական է մեր կեանքին համար եւ Սուրբ Հաղորդութեան ժամանակ ճիշդ այդ հացի (Նշխարի) խորհրդանշանով մեր մէջ կ'ընդունինք Տէրը: Հացը մեր ամբողջ կեանքին նուիրական երեւոյթն է եւ այդ պատճառով մինչեւ այսօր մարդիկ յատուկ յարգանք ունին հացին նկատմամբ: Հացի նկատմամբ պէտք է լրիւ ուշադրութիւն: Հացի աւելցումները կարելի չէ աղքատանին մէջ նետել, այլ զայն պէտք է տալ թրջուցներուն, որպէսզի զանոնք ալ՝ իբրեւ Աստուծոյ ստեղծած արարածներ՝ կերակրենք: Բնաւ մի՛ մոռնաք Աստուծոյ շնորհակալութիւն յայտնել մեզի հաց պարգեւելուն համար:



Ձախ կողմի պատկերը խճանկար մըն է, որ շինուած է 4-5-րդ դարերուն, Երուսաղէմի մէջ կառուցուած «Հացի Բազմացում» վանքի գետնին վրայ: Խճանկարին մէջ կը տեսնենք հացով լեցուն զամբիւղ մը, իսկ անոր երկու կողմերը՝ ծուկ, որ կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսի կողմէ հինգ հազարի կերակրման հրաշքը: Այդ վանքը կը գտնուի Թապղա, Կափառնա-յումէն դէպի Արեւմուտք՝ Գալիլիոյ ծովուն մօտերը, ճիշդ այնտեղ ուր երկու հազար տարիներ առաջ այդ հրաշքը կատարեց Փրկիչը: Յիսուս Քրիստոսի գործած այս հրաշքին նուիրուած այլ վանքեր ալ գոյութիւն ունին:

ՀԱՅԻ ԲԵԿԱՆՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային Առաջին Պատերազմի ժամանակ, Հայկ անունով հայ զինուոր մը պատերազմի գնաց: Մեկնելէ առաջ իր կոյր մեծ հայրը պատուիրեց իրեն ըսելով. «Ամէն անգամ երբ ճաշի նստիս, գետնէն հացի փշրանքները հաւաքէ: Անոնք իմ կոյր աչքերուս համար դեղ կ'ըլլան»: Հայկը խոստացաւ մեծ հօր խնդրանքը կատարել:

Երբ հայ զինուորները վերադարձան ճակատէն, Հայկ անոնց մէջ չկար: Մեծ հայրը իր վիշտին պատճառով ո՛չ կ'ուտէր, ոչ կը խմէր ու միայն անմխիթար կու լար: Եւ երբ ան կը պատրաստուէր սպաննուածին համար հոգեհանգիստ կատարել, յանկարծ Հայկը վերադարձաւ:

«Մեծ հայրիկ,– ըսաւ ան ծունկի գալով,– մերէ՛ ինծի: Ինչպէս որ ըսած էիր, բոլոր փշրանքները հաւաքեցի: Սակայն կոյրի ընթացքին ծանրօրէն վիրաւորուելով, չէի կրնար քալել: Հոն ուր ինկած էի, գետակ մը կար, որուն ջուրով ծարաւս յագեցուցի: Սակայն ուտելիք չունէի: Այն ատեն յիշեցի որ գրպանիս մէջ հացի փշրանքներ ունիմ: Եօթ օր այդ փշրանքները ուտելով անօթութիւնս փարատեցի եւ ոյժերս վերագտնելով հոս հասայ: Եթէ այդ փշրանքները չունենայի՝ անօթութենէ կը մեռնէի: Սակայն հիմա դեղ չունիմ աչքերուդ համար...»:

Ծերուկը անոր պատասխանեց. «Ես գիտէի, որ դուն կրնայիր ուտելիք չունենալ, եթէ իմ խրատս մտիկ չընէիր: Սակայն փառք Աստուծոյ, ահա ողջ մնացիր: Ես դեղի պէտք չունիմ: Դո՛ւն ես իմ աչքերուս լոյսը...»:

Հինգ հազարին կերակրումը

Աստուծոյ Որդին մէկ այլ նշանը

Հրաշխացուն Եւ ծուխելով

Որդին եւս»:

Չորս հազարի կերակրումը

Աստուծոյ Կարգադատ,
որոնք մենք կախեման Աստուծանայ



Հինգ հազարին կերակրումը, թե՛ մենք տուրիւն

Տիեզերական Աստուծոյ Ժողովը Եւ ինչ, ՅՔ. 325-ին

սուցումներուն
երգէին մաւա-
սէն եկող վա-
նը ի յայտ բե-
նեց Տիեզերա-
նոր շրջան-

արքին մաւեւ Ս.
թողիկոս Ս. Ա-
ռնցմէ շատեր
իծ էին եւ հաշ-
կային վանա-
տոսի համար
ներու մէջ: Ա-
ռնցն բարձրա-
ամայնքներու
բացումը կա-
ններ հազած:
Մերկայացու-
րեսակետը եր-
թողովորդին
լայրացան եր-
սս սարկաւա-
սին: Ան համ-
մերկայացուց
լեցոյ համար
րեսակետները
ուս Զրիստոս

ով մերժեցին
մտոր կողմնա-
նգանակ մը.

Ամենակալ
եւ աներե-
չը: Եւ մէկ
Որդիին, որ
ընդին հու-
ոյսէն՝ Լոյս,
ւած, ծնունդ

ի մենք այսօր

Ձեր ընտանիքի անդամներուն հետ խօսեցէք հինգ հազարի կերակրման հրաշքին մասին: Ասիկա Աստուծոյ հրաշքներէն մէկն է միայն: Տէրը ցոյց տուաւ բնութեան վրայ իր իշխանութիւնը եւ քիչ քանակութեամբ կերակուրը այդքան բազմացուց ու հինգ հազար մարդ կերակրեց: Մեր աղօթքներուն մէջ մենք յաճախ Աստուծոյն կը խնդրենք. «Տէ՛ր, եթէ կ'ուզես՝ մեր կեանքը փոփոխութեան ենթարկէ»:

Հացի ու ձուկերու բազմացումը Աստուծոյ ամենակարողութեան նշաններն են: Մարդկութեան ամենէն կարեւոր կարիքներէն մէկուն՝ մեր մարմինը կերակուրով սնուցանելու նկատմամբ Տիրոջ հոգածութեան վերաբերմունքը մեզի կը յիշեցնէ, որ Ան իրապէս կը հասկնայ մեր բոլոր կարիքները եւ մեր կեանքի կարեւոր խնդիրները: Ան եկաւ, որպէսզի մեզի հետ կիսէ մարդկային կեանքի բոլոր դժուարութիւնները եւ դժբախտութիւնները (բացի մեղքէն): Ան այնքան սիրեց իր անկեալ արարածները (մեղաւորները), որ նոյնիսկ հաճեցաւ անոնց մօտ մարդ դառնալ:

Բնութեան փոքրիկ հրաշքները

Ինչպիսի՞ փոքրիկ հրաշքներ կրնանք գտնել եւ տեսնել բնութեան մէջ: Ձեր մտերիմներուն հետ պտոյտի գացէք. արդեօք Աստուծոյ նշանները պիտի կարենա՞ք տեսնել: Ծննդեան օրերուն ցուրտ կ'ըլլայ: Կեանքի շարունակումի նշաններ կրնա՞ք տեսնել. տեսնել՝ թէ կենդանիները եւ բոյսերը ինչպէ՞ս կը շարունակեն ապրիլ ծնրան երկար ամիսներուն տոկալով: Գարնան աւելի

դիրին է նոր կեանքի նշաններ տեսնել: Հետաքրքրական պիտի ըլլայ նաեւ աշնան ընթացքին հետեւիլ բնութեան, տեսնելու համար թէ ինչպէ՞ս կը պատրաստուի ան ձմրան եղանակը դիմաւորելու:

Ուրախացէ՛ք տարուան եղանակներուն հրաշալի գեղեցկութեամբ

Ձեր ընտանիքի անդամներուն հետ գունաւոր քարտեր պատրաստեցէ՛ք, անոնց վրայ գծելով բնութեան նոր կեանքի նշանները: Աստուածաշնչական քանի մը տողեր գրեցէք անոր վրայ՝ Աստուծոյ ստեղծագործութեան գեղեցկութեան մասին: Կարելի է տողեր գտնել 103-րդ, 8-րդ, 148-րդ, կամ ձեր գիտցած այլ սաղմոսներէն: Կրնաք նաեւ Ս. Ծննդեան շարականէն ալ օգտուիլ, որ ներքեւը դրուած է:

Լաւ կ'ըլլայ նաեւ, եթէ փոքրիկներու համար մետաղեայ լարով խաղալիքներ պատրաստէք: Հաստ մետաղեայ թելով կիսալուսին մը շինեցէք: Իրարմէ հեռու չորս թելեր կապեցէք անոր վրայ, որոնց վերի մասերը իրարու միացուցէք (եթէ մատանի մը ունիք, անով կրնաք միացնել իրարու): Թերթերու մէջէն թիթեռնիկներ կտրեցէք կամ գծեցէք տերեւներ, թռչուններ, ծաղիկներ ու այլ պատկերներ ու զանոնք կախեցէք այս թելերէն: Ձեր պատրաստածը երեխային նուիրեցէք: Կրնաք նաեւ ծերունիի մը նուիրել, որ տան մէջ հիւանդ պառկած է:

Մի՛ մոռնաք ձեր քարտերուն մէջ ձեր բարեմաղթութիւնները գրել անոր որ պիտի դրկէք զայն:

Կանոն Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուծայայտութեան (Ա օր, Օրհ. ԴԿ)

*Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետ-
հօք. եւ արարածք ամենայն զգեցան Հանդերձ փրկու-
թեան:*

*Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ. եւ
Հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ:*

*Այսօր Հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն. եւ
ընդ Հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:*

Թրգմ.

Այսօր երկինքը վերէն կը ցնծայ մեծապայծառ աւետիսով եւ բոլոր արարածները փրկութեան հանդերձ հազան:

Այսօր քարայրին մէջ ընծայուեցաւ Քրիստոս՝ Աստուծոյ Որդին եւ հրեղեններու բազմութիւնը երկինքէն երկիր իջաւ:

Այսօր հովիւները տեսան Արդարութեան Արեգակը եւ հրեշտակներուն հետ երգեցին փառք ի բարձունս Աստուծոյ:



Տիրոջ Ս. Ծննդեան վայրը Բեթղեհէմի մէջ

Տէրը աշակերտներուն սորվեցուց, որպէսզի անոնք վկայեն իր մասին: Կարդացէ՛ք Աստուածաշունչի իւրաքանչիւր համար՝ հետեւելով զամբիւղի մէջ հաւաքուելիք ցորենի հասկերու ուղիին: Ճիշդ պատասխանները շրջանակի մէջ առէք եւ ամբողջացուցէ՛ք նախադասութիւններուն բաց մնացած մասերը:



1. Սր 6.8-9

Փրկիչը առաքելներու ի՞նչ առնել պատուիրեց ճամբուն համար:

Կերակուր, դրամ, գաւազան, տոպրակ, վերարկու:



3. Սր 6.12


Առաքելները ի՞նչ ըսին մարդոց որպէսք է ընեն:

Դասաւանդել, ուրախանալ, ապաշխարել, ճամբորդել, ներել:

2. Սր 6.10

Իւրաքանչիւր քաղաքի մէջ առաքելներ ո՞ւր պէտք է իջեւանէին:



Վրան, պանդոկ, քարայր, տուն, պարտէզի տուն:



4. Սր 6.13

Առաքելները ի՞նչ ըրին:

Բժշկեցին մարդիկը, հիւանդներ օժեցին, տուն գացին, մարդիկը կերակրեցին, դէւեր հանեցին:



5. Ղկ 10.17

Ամբողջացուցէ՛ք բաց մնացած բաժինները, որպէսզի գիտնաք թէ ի՞նչ ըսին վկաները երբ վերադարձան:


«Տէ՛ր, _____ ալ մեզի կը հնազանդին _____ անունով»:

6. Ստ 28.19,20

Ամբողջացուցէ՛ք տողերը, որպէսզի կարենաք պատմել, թէ Տէրը համբառնալէ առաջ ի՞նչ յանձնարարութիւններ տուաւ իր աշակերտներուն:

Գացէք ուրեմն եւ աշակերտ դարձուցէք բոլոր _____, _____ զանոնք _____ եւ _____, _____ անունով:

Սորվեցուցէ՛ք անոնց պահել այն, ինչ որ ձեզի պատուիրեցի: Եւ ահա ես _____ հետ եմ ամէն օր, մինչեւ _____ վախճանը:



ՏԵՐԸ ԿՈՒՂԱՐԿԷ ԻՐ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Առաքելական ուղերձ

Ձեր ծնողները կամ ուսուցիչը բնաւ ձեզ առաքելութեան մը դրկա՞ծ են արդեօք: «Առաքելութիւն» բառը կը նշանակէ ոչ թէ միայն «յանձնարարութիւն», «պատուէր», այլ նաեւ՝ «կարեւոր գործ, դերակատարութիւն, գործունէութիւն» (միսիոն): Ատիկա կրնայ պարզ աշխատանք մը ըլլալ, ինչպէս՝ նամակ մը տեղ տանիլ, կամ որեւէ յանձնարարութիւն կատարել: Սակայն, կրնայ նաեւ շատ աւելի լուրջ հարց մը ըլլալ, որ առանց ծրարագրումի կարելի չէ կատարել: Ձեզի տրուած յանձնարարութիւններուն մասին մտածեցէք պահ մը. ի՞նչ էր աշխատանքային ծրագիրը եւ նախապատրաստական ի՞նչ ծրագիրներ կատարեցիք: Առաքելութեան այլ կերպեր ալ կան. օրինակ՝ դիւանագիտական, երբ տարբեր կողմեր դեսպաններ կը դրկեն իրարու, որպէսզի անհրաժեշտ պարագաներուն կարենան իրարու հետ հաղորդակցիլ եւ լուծել հրատապ հարցեր: Առաքելութիւնը երբ կարելոր է, պէտք է նախապատրաստուիլ զայն յաջողապէս իրագործելու համար:

Առաքելներուն գործունէութիւնը

Աւետարանին մէջ դուք կարդացած էք, թէ առաջին անգամ Փրկիչը ի՞նչ առաքելութեան դրկեց իր աշակերտները: Ատիկա նկատեցէք «փորձ»ի կամ «սկըսնակ»ի առաքելութիւն, որ Տիրոջ կողմէ նախապատրաստական աշխատանք մըն էր Աստուծոյ Արքայութեան քարոզչութեան: Ան աշակերտներուն պարզեւեց հիւանդութիւններ բժշկելու եւ դեւեր հանելու կարողութիւն: Բայց անոնք տակաւին տեղեակ չէին այն մեծ առաքելութենէն, որ զիրենք կը սպասէր Քրիստոսի մահէն, Յարութենէն ու Համբարձումէն ետք: Քրիստոսի աշակերտները տակաւին շատ բան պէտք էր սորվէին, մինչեւ իրենց մեծ եւ տիեզերական ծառայութեան սկսիլը:



Փրկիչը իր աշակերտները ծառայութեան կը դրկէ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ


«Եւ Ան իր մօտ կանչեց իր տասներկու աշակերտները, իշխանութիւն տուաւ անոնց պիղծ դեւեր հանելու եւ հիւանդութիւններ ու ամէն ցաւ բժշկելու»:

Տէրը շրջագայեցաւ Գալիլիոյ գրեթէ բոլոր քաղաքներն ու գիւղերը, ուսուցանեց ժողովարաններուն մէջ, քարոզեց Արքայութեան Աւետարանը եւ բժշկեց ամէն տեսակ հիւանդութիւն եւ ֆիզիքական թերութիւն: Առիթով մը Ան նայեցաւ զինք շրջապատող տառապած ժողովրդային բազմութեան եւ խղճաց անոնց: Մարդիկ անխղճօրէն կը վարուէին ֆիզիքական թերութիւն ունեցող մարդոց հետ. այդ խեղճերը երբեմն այնքան անտէր մնացած կ'ըլլային, որ նոյնիսկ իրենց օգնող մը չէր գտնուեր: Անոնք նման էին առանց հովիւի մնացած ոչխարներու: Այն ատեն Փրկիչը իր աշակերտներուն դառնալով ըսաւ. «**Հունձքը առատ է, իսկ մշակները քիչ: Արդ, աղաչեցէ՛ք Տիրոջ, որ մշակներ հանէ իր հունձքին համար**»: Տէրը իր առաքելներուն շնորհք եւ ոյժ տուաւ, որպէսզի իր բացակայութեան կարենան քարոզել եւ բժշկել: Ան պատուիրեց անոնց կատարել ինչ որ Ինք ըրաւ՝ աւետարանել Աստուծոյ Արքայութիւնը եւ սէրը ամբողջ աշխարհին նկատմամբ:

«ՄԱՐԴՈՅ ՈՐՄՈՐԴՆԵՐ» ԴԱՌՆԱՆՔ

Տէրը մեզմէ իւրաքանչիւրին կոչ կ'ուղղէ իր աշակերտը դառնալու: Ան մեզի պատուիրեց «մարդոց որսորդներ» դառնալ: Ինչպէ՞ս կրնանք կատարել իր ըսածը: Մեզմէ ամէն մէկը ունի մասնաւոր տաղանդ մը եւ կարողութիւններ, որոնք պէտք է օգտագործենք մարդոց օգնելու համար: Յիսուս Քրիստոս իր աշակերտներուն ըսաւ, որ իջեւանին միայն այն տուններուն մէջ, որոնց տները զիրենք կը հրաւիրեն ներս մտնել: Ան կ'ուզէր որ իր աշակերտները զիրար լաւ ճանչնան եւ սորվին սիրով ու մտերմաբար իրենց ունեցածը բաժնել իրենց միջեւ: Այդպիսով միայն զիրար լաւ պիտի կարենային ճանչնալ, փոխադարձ վստահութիւն պիտի շահէին եւ ամբողջ սրտով պիտի հաւատային Աստուծոյ Որդիին եւ Անոր Արքայութեան մասին ըսուածներուն:

Մտածեցէ՛ք այն մարդոց մասին, որոնք լաւ կը ճանչնանք: Անոնց անունները գրեցէք ձկնորսներուն գլուխներուն գտնուող գիծերուն վրայ: Ապա գտէք անոնցմէ իւրաքանչիւրին բռնած ծուկը: Իսկ ծուկին վրայ գրեցէք, ինչ որ այդ մարդուն կրնաք տալ իբրեւ օժանդակութիւն՝ այս շաբթուան ընթացքին, որպէսզի աւելի եւս մտերմանաք անոր հետ:



ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

Ինչպես որ Տէրը Իր առաքեալներուն ըսաւ որ Իրեն հետեւող 5000 բազմութիւնը կերակրեն, նոյնպէս եւ հետագային զանոնք ղրկեց՝ աւետարանելու փրկութեան մասին, ըսելով որ մօտեցած է Երկնքի Արքայութիւնը:

Փրկչը 12 աշակերտներ կ'ըմտրէ. «Գացէ՛ք եւ քարոզեցէ՛ք»

Տէրը կանչեց 12 աշակերտները եւ անոնց բացատրեց թէ ի՞նչ պիտի ըլլայ իրենց առաքելութիւնը: Անոնք միայն պիտի «Իսրայէլի Տան կորստած ոչխարներուն երթալին», որովհետեւ Տէրը տակաւին զիրենք չէր ղրկած հեթանոսներու կամ սամարացիներու մօտ: Անոնց իշխանութիւն տրուած էր քարոզելու Աստուծոյ Արքայութիւնը եւ Տիրոջ տուած ոյժով բժշկելու մարդիկը ու դեւեր հանելու:

Յիսուս Քրիստոս գիտէր, որ Իր աշակերտները հետագային դժուարութիւններ պիտի ունենան: Աշակերտները ղրկելէ առաջ, Յիսուս անոնց չար ոգիներուն վրայ ալ իշխանութիւն տուաւ: Աշակերտները իբրեւ մարդիկ, առանց այդ ոյժին չէին կրնար օգնել մարդոց ու բժշկել զանոնք: Ժողովուրդը կը հաւատար Քրիստոսի պատգամած ճշմարտութիւններուն եւ Քրիստոսի ոյժով կը հաւածուէին չար ոգիները:

Խրատներ՝ աշակերտներուն

Աշակերտները օրերով պիտի ճամբորդէին առանց հանգիստ առնելու եւ լայն տարածութիւններ պիտի կտրէին: Կրնաք մտածել, որ անոնք պատրաստուած էին այդ ճամբորդութիւններուն, նախապէս որոշելով թէ ի՞նչ բաներու կրնան պէտք ունենալ ճամբու ընթացքին: Սակայն ծառայութեան ղրկուելէ առաջ, Տէրը անոնց շատ զարմանալի խրատներ տուաւ: Անոնց պատուիրեց որ ճամբուն համար գաւազանէ մը զատ ուրիշ բան չառնեն. ո՛չ պարկ, ո՛չ հաց, ո՛չ դրամ գօտիներուն մէջ, այլ՝ հողաքափ հագնին եւ ըսաւ՝ փոխմորդ հագուստ ալ մի առնէք: Եւ անոնց ըսաւ՝ այն տունը որ մտնէք, հոն զիշերեցէք: Յիսուս Քրիստոս կ'ուզէր, որ անոնք միշտ մարդոց հետ ըլլան, անոնց տան մէջ մնան, անոնց հետ ուտեն ու խմեն: Այդպիսով անոնք աւելի մօտէն տեղեակ պիտի ըլլային մարդոց կարիքներուն: Այնուհետեւ աշակերտները երկու-երկու գացին ու սկըսան ժողովուրդին մէջ ապաշխարութիւն քարոզել: Անոնք դեւերը կը հաւածէին եւ իւղով կ'օծէին հիւանդները՝ բժշկելու համար զանոնք: Երբ վերադարձան Յիսուսի մօտ՝ անոնք սքանչելի պատմելիք ունէին Անոր: Այսպիսով Տէրը անոնց շնորիք պարգեւեց եւ անոնք սկսան վկայել Իր մասին:

Քրիստոս 72 աշակերտները կը ղրկէ

Ղուկասու Աւետարանը մեզի կ'ըսէ, որ երբ 12 առաքեալները քարոզութենէն վերադարձան, որոշ ժամա-

նակ ետք Քրիստոս իր հետեւորդներէն 72 հոգիներ եւս ղրկեց, որպէսզի անոնք ալ Իր վկաները դառնան: Ինչպէս 12 աշակերտներուն, Քրիստոս ասոնց ալ պատուիրեց ըսելով. *«Ո՛չ քսակ առէք ձեզի հետ, ո՛չ մախաղ, ո՛չ կօշիկներ եւ ճամբու ընթացքին ռելէ մէկուն ողջոյն մի տաք: ...Այն տունը որ մտնէք, նախ ըսէք՝ խաղաղութիւն այս տան. եթէ այնտեղ գտնուող խաղաղասէր մարդ կայ՝ ձեր խաղաղութիւնը անոր վրայ թող համզչի...: Այդ տան մէջ զիշերեցէք, կերէք ու խմեցէք անոնց կերակուրէն, որովհետեւ մշակը արժանի է իր վարձքին»:* Տէրը նաեւ պատուիրեց վկայել Աստուածային սիրոյն մասին, զոր Իր մէջ տեսան անոնք:

Եւ Յիսուս Քրիստոս Իր աշակերտներուն հոգեւոր ոյժ եւ հրաշքներ գործելու իշխանութիւն տուաւ: Ան նաեւ զգուշացուց, որ բոլոր մարդիկ բարի լուրը լսելու փափաք կրնան չունենալ եւ կրնան չհաւատալ անոր: Սակայն, այդ պատճառ պէտք չէ ըլլայ որ իրենք չփոթի մատնուին, բարկաման կամ նեղաման: Անոնք միայն ճիգ պէտք է թափեն աշխարհի մէջ Աւետարանը քարոզելու: Իսկ իրենց մօտիկ ընողները՝ ազատ են հաւատալու կամ չհաւատալու, ինչ որ կ'ըսեն առաքեալները: Աշակերտները դարձեալ քաղաքներ ու գիւղեր գացին: Անոնք կատարեցին ինչ որ Տէրը ըսած էր՝ քարոզել մարդոց Փրկչին մասին: Երբ վերադարձան՝ ոգեւորուած կը պատմէին իրարու, ըսելով որ նոյնիսկ չար ոգիները կը ճանչնային այն իշխանութիւնը, զոր իրենց տրուած էր Քրիստոսի անունով:

Վերջին յորդորներ

Յիսուս Քրիստոս մահանալէն ու մեռելներէն յարութիւն առնելէ յետոյ 40 օր մնաց երկրի վրայ: Վերջին օրը Ան ըսաւ, որ Իր աշակերտներուն փոխանցեն, որպէսզի անոնք *«Երթան Գալիլիա եւ այնտեղ տեսնեն զիս»:* 11 աշակերտները (մատնիչ Յուդան արդէն մեռած էր) լեռան վրայ հանդիպեցան Փրկչին, որպէսզի անոր վերջին յորդորները լսեն: Եւ Ան ըսաւ անոնց. *«Գացէ՛ք եւ աշակերտ դարձուցէք բոլոր ժողովուրդները, մկրտեցէք զանոնք Զօր, Որդիին եւ Սուրբ Զոգիին անունով: Սորվեցուցէ՛ք անոնց պահել ինչ որ պատուիրեցի ձեզի: Եւ ահա ես ձեզի հետ եմ ամէն օր, մինչեւ աշխարհի վախճանը»:*

Յիսուս խոստացաւ նաեւ, որ ինչպէս Ինք Իր աշակերտներուն կարողութիւն տուաւ, նոյնպէս ալ Իր աշակերտները հետագային, իրենց յաջորդներուն պիտի փոխանցէին իշխանութիւնը:

Փրկիչը Երկնային Արքայութեան գալուստին Աւետիսը քարոզող առաքեալներուն համար սկիզբէն իսկ կանխատեսեց գալիք փորձութիւններն ու տառապանքները: Նոյնիսկ այն պարագաներուն երբ առաքեալները իրաւաքներ կը գործէին, միշտ չէ որ կը հանդիպէին մարդոց սիրոյն ու գնահատանքին: Եւ շատեր ուղղակի աւելութեամբ ու չարութեամբ կը վարուէին անոնց հետ:

Ի՞՞՞՞՛՛՛՛ ՀԱՆՏԵՒ ԽԻԾԵՐ

Փորձութիւններ եւ հաւածանքներ

Մատթեոսի Աւետարանէն միասնաբար կարդացէք եւ քննարկեցէք Քրիստոսի խօսքերը (5.10-12, 43-45): Կը ճանչնա՞ք մէկը որ ճշմարտութեան համար հաւածանքի ենթարկուած է: Կը ճանչնա՞ք արդեօք ռելէ մէկը, որ պարտադրած է ուրիշի մը, որ սիրով ու խղճմտանքով վարուի մարդոց հետ, որուն համար ծաղորուած ու վնասուած է, կամ ալ հաւածանքի ենթարկուած է:

1. Քննարկեցէք, թէ ինչպէս կրնաք հոգեպէս այնպէս զօրանալ, որ ատելու փոխարէն սիրէք անոնց՝ որոնք ձեզի դէմ չարիք կը խորհին: Որովհետեւ Տէրը ըսած է. *«Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հաւածեն»:* Ինչպէ՞ս կրնան մարդիկ այնպէս գօտեպնդել զիրար, որ ամէնէն ծանր փորձութիւններու մէջ իսկ չմոռնան զԱստուած, ապրին Տիրոջ պատուիրամներուն համաձայն եւ չհեռանան ճշմարտութենէն ու բարութենէն:

2. Ձեր ընտանիքի անդամները թող մտածեն, թէ առաքեալներուն համար ի՞նչ կը նշանակէր ամբողջ աշխարհ ղրկուիլը՝ Քրիստոսի մասին վկայելու համար: Քննարկեցէ՛ք այն կասկածները կամ դժուարութիւնները, որոնք կրնային յառաջանալ Քրիստոսի աշակերտներուն մօտ, որոնք անպայման պիտի պատահէին:

• Կասկածներ. պիտի կարենայի՞ն արդեօք աւարտել իրենց առաքելութիւնը:

• Տուն տեղ ձգել:

• Ճամբորդութեան դժուարութիւնները՝ Սուրբ Գրային ժամանակներուն, որոնք աւելի էին քան այսօր:

• Հաւանականութիւն՝ որ շատեր պիտի չուզէին լսել իրենց խօսքերը, կամ սխալ պիտի մեկնաբանէին զանոնք եւ անքաղաքավար վերաբերմունքի պիտի հանդիպէին: Շարունակեցէք նշել նոր հարցեր եւ պատասխաններ ձեր կողմէ:

Բարի Լուրը տարածողներ

Ի՞նչ յաջողութիւն կրնան ունենալ

Հիմա մտածենք, թէ Աստուծոյ խօսքը բերողներ ի՞նչ յաջողութիւններ կրնան ունենալ:

• Անոր կարիքը զգացող մարդոց ճշմարտութիւն եւ

18 – Ճշմարտութեան վկայութիւն

յոյս տալու հնարաւորութիւն:

• Նոր մարդոց հանդիպելու առիթ:

• Աշակերտներուն միջեւ նոր եւ իսկական ընկերութեան պատճառ:

• Նոր տեղեր տեսնելու եւ մտքի պաշարը հարստացնելու առիթ:

Փորձեցէք այս շարքը շարունակել այլ բարիքներով, որոնք կրնան ձեռք բերել Քրիստոսի ծառայելու քաջագործութիւնը ստանձնած մարդիկ:

Փորձառութիւն՝ ուրիշներու հետ

Պատմեցէ՛ք թէ ի՞նչ փորձառութիւն ձեռք ձգած էք երբ ձեզ «ուղարկած» են մեծ աշխատանք մը կատարելու: Հոգեպէս բաւարարուա՞ծ էք արդեօք: Իւրաքանչիւրը թող քիչ մը խօսի այս մասին, թէ ի՞նչ փոփոխութիւններ ունեցած է եւ ինչո՞ւ համար: Ամէն մէկը իր հոգեւոր ապրումները թող բաժնէ միւսին հետ: Վերջապէս, ամէն մէկը թող մտածէ թէ իր դիմացը ելլող մարդուն ինչպէ՞ս կրնայ վկայել Քրիստոսի շնորհատու սիրոյն մասին:

Վարը թուեցէք թէ ձեր ընկերներուն կամ ազգականներուն հետ ի՞նչ կրնաք ընել ձեր քաղաքին կամ գիւղին մէջ այն մարդոց համար, որոնք տակաւին հաւատք չունին Աստուծոյ վրայ: Պիտի կարենայի՞ք խօսիլ անոնց հետ: Կ'արժէ՞ անոնց նկատմամբ մեծ սէր եւ բարութիւն ցուցաբերել: Արդեօք պէտք չէ՞ զանոնք եկեղեցի հրաւիրէք եւ աշխատանքներ տաք: Ինչպէ՞ս պէտք է ընել այդ: Միասնաբար մտածեցէ՛ք, թէ ինչպիսի՞ դժուարութիւններու կրնաք հանդիպիլ, կամ ի՞նչ յաջողութիւններ կրնաք արձանագրել:

Միասնաբար աղօթեցէ՛ք եւ ջանացէք իրարու օգնել տան մէջ, փոխանակ անիմաստ կերպով վիճաբանելու: Այնպէս ապրեցէք, որ Աստուած ձեզի յայտնէ թէ ի՞նչ կը սպասէ ձեզմէ: Աղօթեցէ՛ք որ Աստուած շնորիք ղրկէ երկինքէն, որպէսզի անոր ոյժով կարենաք կատարել ինչ որ Ան կը պահանջէ ձեզմէ: Աղօթեցէ՛ք որպէսզի Աստուած ձեզի տայ այնպիսի հաւատք ու հաստատակամութիւն որ ունէին առաքեալները, որոնք ամբողջ աշխարհին անձնագոհութեամբ վկայեցին Երկնքի Արքայութեան մասին:



Մարիամ Աստուածածնի
տաճար ընծայումը



Ս. Ստեփանոս նախավկայ
եւ առաջին մարտիրոսը



Դավթ մարգարէ



Ս. Թադէոս առաքեալ



Ս. Բարթողիմէոս առաքեալ



ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
ճաշոց, 1460 թ., նկարագրողուած Արծկէ քաղաքին մէջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սիրելի ծնողներ եւ պատանիներ _____	5
1. Աստուածաշունչի երկիրը _____	7
2. Ինչպե՞ս գրուած է Աստուածաշունչը _____	13
3. Իսրայելի ժողովուրդը _____	16
4. Իսրայելի դատաւորները եւ թագաւորները _____	22
5. Փրկութեան մարգարէները _____	26
6. Յովհաննէս Մկրտիչ _____	32
7. Ս. Կոյս Մարիամ կը հնազանդի Աստուծոյ կամքին _____	36
8. Փրկիչը ծնաւ _____	44
9. Փրկչին պատանութեան տարիները _____	48
10. Յովհաննէս Մկրտիչ եւ Հին Կտակարանի մարգարէութիւնները _____	54
11. Յիսուս Քրիստոս մկրտուելու կու գայ _____	58
12. Փրկիչը Իր առաքելութեան կը պատրաստուի _____	65
13. Տէրը Իր առաքեալները կը կանչէ _____	69
14. Փրկիչը կ'ուսուցանէ ու կը բժշկէ հիւանդները _____	73
15. Մօտեցած է Աստուծոյ Արքայութիւնը _____	79
16. Արքայութեան առակները _____	86
17. Աստուծոյ Արքայութեան խորհրդանշանները _____	90
18. Տէրը Իր առաքեալները կը ղրկէ _____	96